ՀՈԿՍԵՊՈՍ ՓԼԱՎԻՈՍ
ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍ

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

9

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ДРЕВНЕГРЕЧЕСКИЕ ИСТОЧНИКИ

I

ИОСИФ ФЛАВИЙ
ДИОН КАССИЙ

ПЕРЕВОД С ОРИГИНАЛА.
ПРЕДИСЛОВИЕ И ПРИМЕЧАНИЯ
С. М. КРКЯШАРЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1976

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա

ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍ
ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱԳՐԻՉ.
ՄՈՒՏՔԱՒԱՆ ԵՎ ՇԱԼՈՒՅԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ս. Մ. ԿԱՐԿՅԱՇԱՒՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1976

«Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարով հրատարակվել են.

1. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին։ Թարգմանություն թուրքերեն բնագրից, ներածությունով, ծանոթագրություններով, տերմինաբանական բառարանով և հավելվածով, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հատոր Ա, Երևան, 1961։

2. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին։ Թարգմանություն թուրքերեն բնագրից, ներածականով, անվանարկով, ծանոթագրություններով և հավելվածով, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հատոր Բ, Երևան, 1964։

3. Թուրքական աղբյուրներ. Էվլիյա Չելեբի, գիրք Գ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Խ. Սաֆրաստյանի, Երևան, 1967։

4. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին. կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965։

5. Բյուզանդական աղբյուրներ. գիրք Ա, Պրոկոպիոս Կեսարացի։ Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի։

6. Բյուզանդական աղբյուրներ. գիրք Բ, Կոստանդին Միրանածին։ Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970։

7. Թուրքական աղբյուրներ, Դ, թարգմանություն բնագրից Ա. Խ. Սաֆրաստյանի և Գ. Հ. Սանթուրջյանի։

8. Ասորական աղբյուրներ, Ա, թարգմանություն բնագրից, արաբական և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976։

902 (09)
Կ—85

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ս. ԵՐԵՄՅԱՆ (գլխ. խմբագիր), Ա. ՂԱՐԻԲՅԱՆ, Լ. ԽԱԶԻԿՅԱՆ, Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ (գլխ. խմբագրի տեղակալ), Հ. ԻՆՃԻԿՅԱՆ, Հ. ՓԱՓԱԶՅԱՆ, Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ (գիտական քարտուղար)։

Հատորի խմբագիր
Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ 10604 / 703 (02)—75 22—75

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976։

ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍ

ԸՆԴԴԵՄ ԱՊԻՈՆԻ

(հատվածներ)

ՀՐԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

(հատվածներ)

ՀՐԵԱԿԱՆ ՀՆԱԽՈՒԹՅՈՒՆ

(հատվածներ)

ՀՈՎՍԵՊՈՍ ՓԼԱՎԻՈՍԸ ԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մ. թ. ա. I—մ. թ. I դարերում Հռոմեական տերության քաղաքական ու տնտեսական հզորությունը հասավ իր գագաթնակետին։ Օգոստոս կայսեր ժամանակ (մ. թ. ա. 31—մ. թ. 14 թթ.) արդեն Միջերկրական ծովի ամբողջ ավազանն իր առափնյա երկրներով գտնվում էր Հռոմի գերիշխանության տակ, ուստի և հռոմայեցիները Միջերկրականը կոչում էին mare nostrum—*մեր ծովը։ Տիրակալ Հռոմն իր ճիրանները տարածել էր արևմուտքից արևելք՝ Պիրենյան թերակղզուց մինչև Եփրատ գետը, իսկ հյուսիսից հարավ՝ Բրիտանական կղզիներից ու Հռենոսից մինչև Նումիդիան, իր սահմաններում ընդգրկելով մի ժամանակ հզորագույն այնպիսի պետություններ, ինչպիսիք Հաննիբալի հայրենիքն էր՝ Կարթագենը, տնտեսական և մշակութային բարձր զարգացման հասած այնպիսի երկրներ, ինչպիսիք Հունաստանը, Պտղոմեոսյանների Եգիպտոսը, Սելևկյանների պետությունը, Պերգամոնը, Պոնտոսը և այլն։ Միակ տերությունը, որը փոքրիշատե կարողանում էր հակադրվել Հռոմին, Պարթև Արշակունիների պետությունն էր, որը, սակայն, բվկտվելով ներքին երկպառակություններից, հիմնական ուշադրությունը դարձնում էր իր սահմանների անձեռնմխելիության վրա։ Մինչդեռ Հռոմը Օգոստոսի կայսրության ժամանակ դուրս գալով երկարատև քաղաքացիական կռիվներից, որոնք ուղեկցվում էին ականավոր գործիչների պրոսկրիպցիաներով, հողերի և հարստության բռնագրավումներով, ճնշելով ստրուկների ապստամբությունները և սանձելով զինվորականության կամայականությունները, ձգտեց իրագործել «*Pax Romana*» (*Հռոմեական խաղաղություն*) կարգախոսը, որի դրոշի տակ միանում էին Հռոմեական տերության ստրկատիրական վերնախավի տարբեր խմբակցությունները։*

Քաղաքական և տնտեսական այդ հզորության ժամանակա-

շրջանում էլ իր զարգացման բարձրակետին հասավ հռոմեական մշակույթն ընդհանրապես: Ստեղծվեցին գրականության և արվեստի այնպիսի կոթողներ, որոնք ստացան համաշխարհային պատմական նշանակություն: Եթե Վերգիլիոսը, Հորատիոսը և Օվիդիոսը շքեղ բարձրության հասցրին լատինական պոեզիան, ապա Տիտոս Լիվիոսը, Պլինիոս Ավագը և Կորնելիոս Տակիտոսը հռոմեական պատմագրությունը և գիտական գրականությունը բարձրացրին դասական աստիճանի: Նրանց, ինչպես նաև հռոմայեցի այլ մատենագիրների գործերում Հռոմի պատմությունն արտացոլված է այդ ժամանակ հռոմայեցիներին հայտնի աշխարհի պատմության ընդհանուր հետնախորքի վրա: Պատմագրությունը զարգանում է ոչ միայն բուն Հռոմում, այլև հռոմեական տերության հեռակա արևելյան երկրներում, որտեղ մինչ այդ բարձր զարգացման էր հասել հելլենիստական մշակույթը: Եթե Հռոմում մատյաններ գրվում էին լատիներեն, ապա Արևելքում Դիոդորոս Սիկիլիացին, Ստրաբոնը, Դիոն Ոսկեբերանը և ուրիշներ դեռևս շարունակում էին հելլեն դասական պատմագրության լավագույն ավանդները: Արևելքի հունալեզու ականավոր հեղինակներից է նաև հրեա Հովսեպոս Փլավիոսը, որը հայտնի է նաև Հովսեպոս Եբրայեցի անունով:

Հովսեպոս Փլավիոսի (Հովսեփ բեն Մաթաֆիա) գործունեությունը վերաբերում է մ. թ. I դարի երկրորդ կեսին: Նրա կենսագրությունը մեզ լավ հայտնի է իր իսկ գրած ծավալուն ինքնակենսագրությունից, որը բովանդակում է պատմական արժեք ներկայացնող մեծաքանակ տվյալներ, ինչպես նաև նրա մյուս երկերում հանդիպող կենսագրական տեղեկություններից: Նա ծնվել է Երուսաղեմում, Գայոս Կալիգուլա կայսեր իշխանության առաջին տարում (37/38 թ.), հրեա քահանայապետի ընտանիքում, որտեղ և ստացել է անբասիր ռաբբիական դաստիարակություն: 64 թ., 26 տարեկան հասակում, նա մեկնում է Հռոմ, որտեղ և ականատես է լինում կայսրության մայրաքաղաքի հրկիզմանը Ներոնի ձեռքով: Հովսեպոսի Հռոմ ճանապարհվելու նպատակն էր պաշտպանել մի խումբ մեղադրվող հրեա քահանաների: Նա իր այդ առաքելությունը կատարում է մեծ հաջողությամբ՝ կայսրուհի Պոպեայի միջոցով, որից հետո, նրանից առատ պարգևներ ստանալով, վերադառնում է Երուսաղեմ:

Բայց շատ ժամանակ չէր անցել, երբ 66 թ. ծագեց Հրեական կոչված պատերազմը, որն ըստ էության հրեաների ապստամբու-

թյունն էր հռոմեական տիրապետության դեմ, հետևյալ պայմաններում։ I դարում Պաղեստինը ենթարկվել էր Հռոմին և կառավարվում էր Հռոմի նշանակած կուսակալների միջոցով, որոնցից մեկն էր Պոնտացի Պիղատոսը։ Սա 37 թ. ետ կանչվեց Պաղեստինից, և նոր կայսր Կալիգուլան Հրեաստանի թագավոր կարգեց Հռոմում դաստիարակված Հերովդես Ագրիպպասին, որը հլու գործիք էր լինելու Հռոմի ձեռքին։ Հրեաները մինչ այդ ազատված էին կայսեր պաշտամունքին մասնակցելու պարտավորություններից։ Սակայն, Կալիգուլայի կամքով, Երուսաղեմի տաճարում պետք է կանգնեցվեր կայսեր հսկայական արձանը։ Եհովայի երկրպագուների կրոնական նախանձախնդրությունն արհամարհող կայսերական այս հրամանը հանգեցնելու էր հրեաների բացարձակ ապստամբության, սակայն Կալիգուլայի սպանությունը 41 թ. կանխեց դեպքերի հախուռն զարգացումը։

Հրեաստանի Հերովդես Ագրիպպաս թագավորի մահից հետո (44 թ.) Պաղեստինը միացվել էր պրովինցիա Սիրիային և կառավարվում էր հռոմեական պրոկուրատորի կողմից։ Այսուհանդերձ, հրեաները վայելում էին մի շարք առանձնաշնորհումներ. նրանք ազատված էին զինվորական ծառայությունից, և կայսրը հաշվի էր նստում նրանց կրոնական ավանդությունների հետ։ Սակայն հռոմեական իշխանությունների և տեղական բնակչության միջև տարբեր առիթներով ծագող վեճերն անպակաս էին։ Հրեաստանի բնակչությունը ևս, մյուս պրովինցիաներում ապրող ժողովուրդների նման, մեծապես տառապում էր հարկերից, որոնց հիմնական ծանրությունն ընկնում էր գյուղացիության վրա։ Պրովինցիայի հրեաները ճնշվում էին օտար լծի տակ և միաժամանակ երկյուղ էին կրում իրենց կրոնական հավատալիքների ոտնահարման համար, հավատալիքներ, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեին ուրիշ ժողովուրդների ավանդությունների հետ։ Այդ իսկ պատճառով հրեաները չէին հանդուրժում այլակրոնների միջամտումը իրենց պաշտամունքային ծիսակատարություններին, մինչդեռ Հռոմի նշանակած պրոկուրատորները և Հրեաստանում տեղակայված հռոմեական զորքերը հաճախ էին ոտնահարում հրեաների կրոնական առանձնաշնորհումները։

Ինչ վերաբերում է հրեական համայնքի ներքին կյանքին, ապա այն ևս խաղաղ չէր ընթանում։ Հրեաստանում ծայր առած ներքին պայքարը արտացոլումն էր հրեա ազգաբնակչության սոցիալական խորը շերտավորման։ Քաղաքական գլխավոր խմբակցու-

թյունները հրեաների մոտ առաջացել էին դեռևս հռոմեական նվաճումից առաջ, իսկ ավանդական տարաձայնություններն ու ներհակությունները նրանց միջև գնալով ավելի խորացան հռոմեական տիրապետության հանդեպ այդ խմբակցությունների ունեցած տարբեր վերաբերմունքով:

Սադուկեցիները՝ Հերովդեսի թագավորական գերդաստանի կողմնակիցները, հռոմեական տիրապետության հենարանն էին Հրեաստանում: Սրանց գլխավորում էր հրեական բարձր հոգևորականությունը, որի ականավոր ներկայացուցիչները խոշորագույն հողատերեր էին: Սադուկեցիները բնակչության լայն խավերի մեջ ժողովրդականություն չէին վայելում: Դեռևս մ. թ. ա. I դարում Պաղեստինում նշանակալից հեղինակություն էին ձեռք բերել փարիսեցիները, որոնք մեծ նախանձախնդրությամբ պահպանում էին կրոնական ավանդությունները և բծախնդիր կերպով հետևում ծիսական արարողություններին ու սովորություններին: Սրանք, ընդհանրապես, հենվում էին քաղաքային բնակչության բարձր և միջին խավերի վրա: Փարիսեցիների հանդեպ բացասաբար էին տրամադրված գյուղացիական լայն զանգվածները: Վերջիններս հարել էին մասամբ զելոտների դեմոկրատական խմբավորմանը, մասամբ էլ հակված էին դեպի հեսսեյականները, որոնք կազմած լինելով կրոնական հատուկ մի կազմակերպություն, ընդհանրապես հեռու էին մնում քաղաքական շարժումներից:

Այս խմբակցությունների առկայության պայմաններում էլ Պաղեստինի հռոմեական իշխանությունների և տեղի հրեա ժողովրդի միջև հարաբերությունները գնալով սրվում էին: Դեպքերը զարգանում էին մեծ արագությամբ, և արդեն 66 թ. զինված ընդհարումը դարձավ անխուսափելի: Դրա առիթը եղավ այն, որ Հրեաստանի Կեսարիա քաղաքում հելլենականացված բնակչության առանձնաշնորհյալ խավերի օգնությամբ հրեաները հեռացվեցին քաղաքային ինքնավարության օրգաններից: Գործի դրվեց զենքը: Շուտով ապստամբություն բռնկվեց նաև բուն Երուսաղեմում, որի սանձազերծմանը նպաստեցին Հրեաստանի կուսակալ Գեսսիոս Ֆլորոսի կամայականությունները: Հռոմեական ոչ մեծաթիվ կայազորը անկարող եղավ դիմադրել մոլեգնած ապըստամբներին ու ջախջախվեց: Ռազմաբեմ ուղարկվեց Սիրիայի հռոմեական կառավարիչ Կեստիոս Գալլոսը, որի պարտությունը Երուսաղեմի տակ ավելի ևս բորբոքեց ապստամբությունը և նպաստեց դրա ծավալվելուն ամբողջ Հրեաստանով մեկ:

Երիտասարդ Հովսեպոս Փլավիոսը, որը Հռոմում գտնված ժամանակ ականատես էր եղել նրա հարստության և հզորության և հռոմեական բանակը համարում էր անպարտելի, սկզբում ջանաց մեղմել զայրացած հրեաների տրամադրությունը և կանխել ապստամբությունը, բայց նրա բոլոր հորդորներն ու պատճառաբանությունները ապարդյուն մնացին։

Հանգամանքների բերումով, Հովսեպոսը ստիպված եղավ գործոն մասնակցություն ունենալ արդեն սկսված ապստամբությանը և հետագայում խաղաց նշանակալից դեր։ Քսաներեք հրեա հոգևորականը, ուրիշ երկու հոգու հետ, որպես զորահրամանատար ուղարկվեց Գալիլեա և իր ձեռքը վերցրեց այդ շրջանում գտնվող Յոտապատա բերդի պաշտպանությունը։ Այդ պաշտպանության դրվագների նկարագրությունը լցնում է Հովսեպոսի գրած «Կենսագրության» բազմաթիվ էջերը, ինչպես նաև «Հրեական պատերազմի» որոշ մասերը։ Թեկուզև միևնույն գրչով գրված այդ նկարագրությունները մի շարք մասերում իրարից տարբերվում են։ Նման փաստը պայմանավորված է նրանով, որ «Կենսագրության» մեջ հեղինակը վիճում է հակառակորդ մի հրեա հեղինակի դեմ, որը Հովսեպոսին և գալիլեացիներին մեղադրում էր ապստամբությունը սանձազերծելու գործում, մինչդեռ «Հրեական պատերազմը» տալիս է դեպքերի կարճառոտ շարադրանքը, գրված հռոմեական հովանավորության տակ։

Հովսեպոսի գործունեությունը, սակայն, որպես զորահրամանատարի, երկար չտևեց, քանի որ հռոմայեցիները շուտով գրավեցին Յոտապատան և Հովսեպոսին էլ գերի վերցրին։ Այս դեպքը վճռական նշանակություն ունեցավ Հովսեպոսի համար երկու տեսակետից։ Նախ, որ նրա զինակիցները, կասկածելով նրան դավաճանության մեջ, դավադրություն էին նյութել իր դեմ, սակայն գերի ընկնելը ֆիզիկապես փրկեց Հովսեպոսին։ Այնուհետև, գերի ընկած Հովսեպոսը, առաջնորդվելով հրեական ապստամբությունը ճնշելու համար Ներոնի կողմից Պաղեստին ուղարկված հռոմեական զորավար Վեսպասիանոսի մոտ, կանխագուշակեց նրա բարձրանալը Հռոմի կայսերական գահին։ Եվ իրոք, երկու տարի անց իրականացան Հովսեպոսի խոսքերը։ Վեսպասիանոսը դարձավ Հռոմի կայսր և, հիշելով ապագա մատենագրի մարգարեությունը, ազատեց նրան գերությունից։ Որպես երախտագիտության նշան իր բարերարի հանդեպ, Հովսեպոսը իր անվանն ավելացրեց Վեսպասիանոսի մականունը՝ Փլավիոս։

Հովսեպոսի կենսագրության այս տվյալները զարմանալիորեն նման են մ. թ. ա. II դարի խոշորագույն հույն մատենագիր Պոլիբիոսի կյանքի ուղուն։ Ե՛վ Պոլիբիոսը, և՛ Հովսեպոսը նախապես եղել են հռոմեական նվաճման դեմ կռվող իրենց հայրենակիցների զորահրամանատար, իսկ հետագայում, գերության մեջ շվ.վելով Հռոմի տիրող դասերի ներկայացուցիչների հետ, դառնում են հռոմեական քաղաքականության ջատագովներ։ Այս մատենագիրների հռոմեական կողմնորոշումը բոլորովին էլ պատահական չէր. այն պայմանավորված էր երկու կողմերի դասակարգային շահերի ընդհանրությամբ։ Հանուն իր ազատության զենքի դիմած ժողովրդական զանգվածներին զսպելու ամենահուսալի երաշխիքը հռոմեական զորքն էր։

Երբ զորքի կողմից կայսր հռչակված Վեսպասիանոսն արդեն մեկնում էր Հռոմ իշխանությունը վերցնելու համար, նրա ճամբարում գտնվող Հովսեպոսը ևս ուղեկցեց նրան մինչև Ալեքսանդրիա, որտեղից և նոր կայսեր որդի Տիտոսի հետ, որը նշանակվել էր Հրեաստանում պատերազմ մղող հռոմեական զորքերի գլխավոր հրամանատար, վերադարձավ Պաղեստին, որտեղ և մինչև հրեական պատերազմի վերջը, այն է՝ մինչև Տիտոսի կողմից Երուսաղեմի գրավումը և ավերումը, մնաց նրա ռազմական ճամբարում։ Երուսաղեմ քաղաքի պաշարման ընթացքում, իր իսկ Տիտոսի թելադրանքով, Հովսեպոսը բազմիցս փորձեց համոզել պաշարված հրեաներին դադարեցնել դիմադրությունը և անձնատուր լինել, դարձյալ միևնույն պատճառաբանությամբ, թե անօգուտ է պայքարել ամենազոր Հռոմի դեմ։ Նրա այդպիսի դիրքորոշումը ավելի ևս բորբոքեց ապստամբ հրեաների ատելությունը, որոնք մի անգամ չէ, որ նրան սպանելու փորձ արեցին, բայց անհաջող։ Ապստամբության վերջնական ճնշումից հետո Հովսեպոսը կայսերորդի Տիտոսի հետ միասին մեկնեց Հռոմ, որտեղ արժանացավ կայսեր ջերմ ընդունելությանը։

Որպես վարձատրություն Հռոմին մատուցած ծառայությունների, Հովսեպոսին թույլատրվեց բնակվել կայսերական արքունիքում, նրան շնորհվեց հռոմեական քաղաքացու իրավունք, միաժամանակ նա կայսրից ստացավ դրամական թոշակ, ինչպես նաև «ոչ փոքր հողակտոր Հրեաստանում»։ Նման հովանավորություն նրա հանդեպ ցուցաբերեց նաև Վեսպասիանոսի հաջորդ Տիտոսը, իսկ Դոմիտիանոսի մասին կխոսենք քիչ հետո։

Ավելի քան հավանական է, որ այդ ժամանակ էլ Հովսեպոսը

հնարավորություն է ունեցել անձամբ ծանոթանալու հռոմեական պատմագրության խոշորագույն ներկայացուցչին՝ Կոռնելիոս Տակիտոսին, քանի որ երրայեցի մատենագրին հովանավորող նույն այդ Փլավիոսների օրոք, «Տարեգրություններին» հեղինակը վարել է մի շարք բարձրագույն պետական պաշտոններ հռոմեական կայսրության մեջ։ Հովսեպոսի կյանքի հետագա տարիների մասին մենք ոչինչ չգիտենք։ Մեզ անհայտ է մնում նույնիսկ նրա մահվան թվականը։ Այնուամենայնիվ, իր իսկ գրած ծավալուն կենսագրությունից հետևում է, որ նա մ. թ. II դարի առաջին տասնամյակում դեռևս կենդանի էր։

Հռոմում, վայելելով Վեսպասիանոսի և Տիտոսի հովանավորությունը և բազմապիսի աջակցությունը, Հովսեպոսը ձեռնամուխ եղավ մինչև մեր օրերը հասած իր հետևյալ երկերի շարադրմանը՝ «Հրեական պատերազմի մասին», «Հրեական հնախոսություն», «Կյանքը» (Βίος) — Հովսեպոսի ինքնակենսագրությունը և «Ընդդեմ Ապիոնի»։

«Հրեական պատերազմի մասին» մատյանը երրայեցի մատենագրի վաղագույն և առավել հռչակավոր աշխատությունն է։ Պատերազմից հետո Հռոմում նրա գրած հանգստի որպես առաջին արդյունք, այն գրված էր իրազեկ մարդուն և ականատեսին հատուկ բոլոր առավելություններով, որը հիմա հովանավորություն էր գտել Վեսպասիանոսի պալատում, իր տրամադրության տակ ունենալով իր կայսերական տերերի՝ տվյալ արշավանքների անմիջական հրամանատարների զեկուցագրերը և բացատրությունները։

Հեղինակն իր երկը վերնագրել է «Հրեական պատերազմի մասին» (Περὶ τοῦ ἰουδαϊκοῦ πολέμου)։ Այս վերնագիրն ինքնին մատնում է հրեական ապստամբության մասին հռոմեական կողմի տեսակետը։ Հովսեպոսի գրած նախաբանից պարզվում է, որ մեզ հասած հունարեն բնագիրը աշխատության առաջին շարադրանքը չէր։ Դրան նախորդել էր արամեերեն գրված և «վերին բարբարոսներին» ուղղված շարադրանքը։ Հաջորդ պարբերության մեջ «վերին բարբարոսներ» ասելով հեղինակը նկատի ունի Պարթիայի, Բաբելոնիայի և Արաբիայի բնիկներին, Միջագետքի հրեական գաղութը, ինչպես նաև Ադիաբենեի բնակիչներին, այն իշխանության, որի թագավորական տունը, ինչպես հպարտորեն նշում է Հովսեպոսը, հարել էր հրեականությանը։ Հունարեն բնագիրը, հեղինակի բնորոշմամբ, արամեերեն սկզբնօրինակի տարբերակն

է տոսկ, և գրված է հռոմեական կայսրության հպատակների, այսինքն՝ հունա-հռոմեական աշխարհի համար։ Հիշյալ արամեերեն բնագիրը, որը, հավանաբար, պետք է գրված լիներ ավելի անկողմնակալ, դժբախտաբար, մեզ չի հասել։ Ինչ վերաբերում է «Հրեական պատերազմի» հունարեն բնագրին, ապա կարելի է ենթադրել, որ նախկին գործը նորից գրվել է հույն օգնականների մասնակցությամբ, որի մասին մի անգամ չէ, որ հիշատակում է Հովսեպոսն իր շարադրանքի մեջ։

Ի՞նչ նպատակ էր հետապնդում հեղինակն իր այդ գրքով։ Պիտի ենթադրել, որ գրված լինելով պատերազմից անմիջապես հետո՝ իր իսկ Վեսպասիանոսի հովանավորության տակ, այն պետք է որ պաշտոնապես ներշնչված կամ թելադրված լիներ կայսեր կողմից։ Դա ընդարձակ մի զեկույց էր, որի հիմնական նպատակն էր մի կողմից՝ նախազգուշացնել Արևելքի ժողովուրդներին այն բանում, որ հետագա դիմադրությունը Հռոմին անմիտ է, մյուս կողմից՝ մեղմել պատերազմից հետո հրեաների միջավայրում նկատվող վրեժխնդրության ծարավը, որն ի վերջո Տրայանոսի և Ադրիանոսի ժամանակ հանգեցրեց ընդվզումների։

Հռոմեական կողմի համար պարթևների ուժեղացման վտանգը մշտական սպառնալիք էր ներկայացնում, ուստի և պատահական չէ, որ պարթևները հիշատակված են Հովսեպոսի հավանական ընթերցողների ցուցակի սկզբում։

Հունարեն շարադրանքի առաջին հրատարակիչը գրված է եղել մաս առ մաս, որպես հետևանք հեղինակի և Հրեաստանի Ագրիպպաս թագավորի միջև եղած երկար նամակագրության։ Ագրիպպասը, հավանաբար, ծանոթ էր «Պատմության» արամեերեն տարբերակին։ Հովսեպոսն իր հունարեն գործերը ավարտուն վիճակով ներկայացրել է իրեն հովանավորող կայսրերին, ինչպես նաև արքունիքին մոտ կանգնած հեղինակավոր այլ մարդկանց և ստացել Տիտոսի արտոնությունը դրանք հրապարակելու համար։

Հովսեպոսի «Պատմության» հրապարակման ստույգ թվականը մեզ հայտնի չէ, բայց, անկասկած, այն ընկնում է Վեսպասիանոսի գահակալման վերջին կեսին, խաղաղության տաճարի կառուցումից հետո[1], Վեսպասիանոսի մահից առաջ, քանի

---

[1] Խաղաղության տաճարը Հռոմում կառուցվել է 75 թ. (հմմտ. Dio Cassius, LXVI, 15).

որ կայսրը ստացել էր մատյանի մի օրինակը: Հետևաբար, այն պետք է որ ավարտված լիներ 75—79 թթ. ընթացքում:

«Պատմության» կարճ նախաբանում շարադրված է ամբողջ աշխատության ոչ ճշգրիտ և անսիստեմ ամփոփումը: Նախաբանում հիշատակված հարցերը իր մի են կենտրոնացվել հավանաբար այն նկատառումով, որպեսզի հեղինակը գրավի կայսեր ուշադրությունը, ինչպես նաև հրապուրի սովորական ընթերցողին: Նախաբանին հետևում է չափազանց երկար մի ներածություն, որը կազմում է ամբողջ առաջին գրքի և երկրորդ գրքի մի մասի բովանդակությունը: Այնտեղ շարադրվում է Հրեաստանի պատմությունը, Սելևկյան Անտիոքոս Եպիփանես թագավորի կողմից Երուսաղեմի տաճարի գրավումից մինչև Հռոմի դեմ ապստամբության ծագելը մոտ 250 տարի հետո: Հետագայում, երբ Հովսեպոսը ձեռնարկեց իր ժողովրդի հանգամանալից պատմությունը գրելուն, այս դեպքերի շարադրանքը ծավալվեց «Հնախոսության» մեջ, կազմելով դրա 8 գրքի բովանդակությունը:

Առաջին գիրքն ընդգրկում է Անտիոքոս Եպիփանեսի ժամանակից (170 մ. թ. ա.) մինչև Հերովդեսի մահն ընկած ժամանակահատվածը: Երկրորդ գրքում շարադրված է հրեից պատմությունը մինչև ապստամբության սկիզբը (66 թ.), Կեստիոսի պարտությունը և Գալիլեա արշավելու համար Հովսեպոսի տեսած նախապատրաստությունները: Երրորդ գիրքը պատմում է Վեսպասիանոսի դեպի Գալիլեա կատարած 67 թ. արշավանքի մասին, ներառյալ Յոտապատա ամրոցի պաշարումը և Հովսեպոսի գերեվարումը: Չորրորդը՝ այդ արշավանքի ավարտը, Երուսաղեմի մեկուսացվելը և պատերազմական գործողությունների ժամանակավոր ընդհատումը Վեսպասիանոսի կայսր հռչակվելու կապակցությամբ (66—69 թթ.): Հինգերորդ և վեցերորդ գրքերում նկարագրվում են Երուսաղեմի պաշարումը և գրավումը Տիտոսի կողմից 70 թ., իսկ վերջին, յոթերորդ գրքում՝ նվաճողների վերադարձը Հռոմ, շքերթը, ապստամբների վերջին ամրությունների ոչնչացումը և մի շարք հետագա դեպքեր:

Հովսեպոսի «Հրեական պատերազմը» ամբողջությամբ վերցրած որպես գրական երկ ունի խոշոր արժանիքներ: Նրա ոճը գերազանց մի նմուշ է առաջին դարում արդեն լայնորեն տարածված ատտիկիստական[2] հունարենի, որի կրողները ձգտում էին կասեց-

---

2 Շշփոթել ատտիկյանի հետ: Ատտիկիստական կոչվում էր հելլենիզմի և

նել ալեքսանդրյան շրջանում տիրապետող դարձած լեզվի զարգացումը և վերածնել Պերիկլեսի ժամանակի ատտիկյան հունարենի ոճը։ Ճաշակով ընտրված բառամթերքը, դասական համաչափ ու շքեղ ոճը մեծապես պարտավորեցնում են թարգմանչին և դժվարին խնդիրներ հարուցում նրա առաջ։

Հելլենականացած ոչ շարքային ընթերցողների համար գրելու ձգտումը Հովսեպոսին ստիպել է խորամուխ լինել հույն գրականությանը։ Նա այդ մասին հպարտությամբ է նշում և ավելացնում, որ արտակարգ դժվարություններ է կրել իր ոճը մշակելու համար։ «Ընդդեմ Ապիոնի» երկում, որը, հավանաբար, գրել է «Հրեական պատերազմ»-ից քառորդ դար հետո, Հովսեպոսը երախտագիտություն է հայտնում այն օժանդակության համար, որ ստացել է հույն մտավորականներից իր նախորդ երկը շարադրելիս։ «Հրեական պատերազմի» վեց գրքերի վրա ուժեղ կերպով զգացվում է Հովսեպոսի հույն գործակիցների աշխատանքը, մինչդեռ վերջին՝ յոթերորդ գիրքն իր ոճով տարբերվում է նախորդներից։ Այստեղ նկատվում են «Հրեական հնախոսության» բնորոշ ոճական առանձնահատկությունները և թվում է, թե հեղինակն իր շարադրանքի այս մասում առավել չափով կախում ունի իր սեփական գրառումներից։ Հեղինակի անհատական ոճը նկատելի է նաև ինքնակենսագրական մի շարք հատվածներում։

Հովսեպոսն իր երկը հեղինակելուց առաջ ուսումնասիրել է հույն խոշորագույն մատենագիրներին՝ ոչ միայն նրանց գերազանց ոճին հաղորդակից դառնալու, այլև օգտվելու համար մեթոդաբանական այն սկզբունքներից, որոնք առկա էին հին հունական պատմագրության լավագույն ներկայացուցիչներ Հերոդոտոսի, Թուկիդիդեսի, Քսենոփոնի և Պոլիբիոսի մոտ։ Հովսեպոսի վրա նկատելի է նաև հունական պոեզիայի խոշորագույն վարպետների՝ Հոմերոսի, Սոփոկլեսի և մյուս ողբերգակների ազդեցությունը։ Դրա լավագույն վկայությունը Հրեաստանի թագավոր Հերովդես Մեծի ընտանեկան աղետները պատմելու եղանակն է։

«Հրեական պատերազմի» մեջ մենք չենք հանդիպում հեղինակների վկայակոչումների, մինչդեռ այդպիսիք ցրված են «Հնախոսության» մեջ։ Մատենագիրն իր առաջին աշխատության մեջ

Հռոմեական տիրապետության ժամանակ հունարենում տարածված այն ոճը, որի կրողները ձգտում էին արհեստականորեն վերականգնել մ. թ. ա. V դարի աթենական հեղինակների դասական լեզուն։

լուծյուն է պահպանում իր աղբյուրների նկատմամբ, ստիպելով մեզ պարզապես իր նախաբանից եզրակացնել, որ իր հաղորդած տեղեկությունները մեծ մասամբ առաջին ձեռքից են, հիմնված որպես ականատեսի և դեպքերին մասնակցի իր իսկ անձնական հիշողությունների վրա։ Նա նշում է, որ իր ձեռքի տակ ունեցել է բոլորովին նոր նյութեր և պատմության ուրվագիծը ինքն է կազմել և ինքն էլ բոլոր փաստերը հավաքել է մեծ խնամքով։

Այս ավելի քան ժլատ ակնարկությունները կարող են լրացվել իր կյանքի ուշ շրջանում հեղինակած երկերում («Ընդդեմ Ապիոնի», «Կենսագրություն») հանդիպող նշումներով։ Այստեղ հեղինակը կրկին շեշտում է անձնական այն մասնակցությունը, որ ունեցել է ապստամբության մեջ որպես հրամանատար Գալիլեայում։ Երուսաղեմի պաշարման ժամանակ Հովսեպոսը հարաբերություններ է հաստատում Տիտոսի հետ։ Նա պատմում է, որ այդ պաշարման ընթացքում, հռոմեական ճամբարում նստած, կատարել է դեպքերի մանրամասն գրառումներ, քանի որ իրազեկ է եղել քաղաքի իրադրությանը դասալիքների միջոցով, որոնց հաղորդումները մենակ ինքն էր ի վիճակի հասկանալու։

Հովսեպոսի վկայություններից հետևում է, որ թագավոր Ագրիպպասը, որը ապստամբության ճնշումից հետո Հռոմի կողմից հաստատված էր Հրեաստանի գահի վրա, միշտ ստացել է «Հրեական պատերազմը» մաս առ մաս և նամակագրական անընդմեջ կապ է ունեցել հեղինակի հետ երկի ամբողջ շարադրման ընթացքում, միաժամանակ պատրաստակամություն է հայտնել նրան տրամադրելու ընդհանուրին անհայտ փաստեր։

Բացի իր սեփական գրառումներից և հիշողություններից, ինչպես նաև Ագրիպպասից ստացած հետագա հաղորդումներից, իր երկը հեղինակելիս, Հովսեպոսն, ամենայն հավանականությամբ, օգտվել է նաև առաջնակարգ նշանակություն ունեցող այլ վավերագրերից, ինչպիսիք կարող էին լինել արշավանքը գլխավորող զորահրամանատարներ Վեսպասիանոսի և Տիտոսի հուշերը։ Պիտի ենթադրել, որ այդ հուշերը հիմնված էին պատերազմի դաշտում տեղի ունեցած դեպքերի անմիջական գրառումների վրա։ Հրեա մատենագիրը, սակայն, այս երկում ոչ մի անգամ չի հիշատակում այդ հուշերի մասին։ Այսպիսի վերաբերմունքը լիովին համապատասխանում է պատմագրի հետևողական այն պրակտիկային, ըստ որի, այդ երկում չի անվանվում օգտագործված և ոչ մի աղբյուր։ Այսուհանդերձ, այդ հուշերի օգտագործման մասին ակ-

նարկություններ կան Հովսեպոսի հետագա երկերում։ Բերենք մի օրինակ։ Պատասխանելով իր հասցեին արված տիբերիասցի Յուստոսի քննադատություններին, Հովսեպոսը հիշեցնում է նրան այն թշնամությունները, որոնց համար ինքը և իր համաքաղաքացիները պատասխանատու էին պատերազմը սանձազերծելու դործում՝ նախքան կժամաններ Վեսպասիանոսը, և ավելացնում. «Այս ամենը միայն ես չէ, որ ասում եմ, այլ նաև կայսր Վեսպասիանոսի հուշերում այդպես է գրված»[3]։

Կարելի է համարձակորեն ենթադրել, որ հրեական ապստամբության նախորդած ժամանակահատվածի համար, որի պատմությունը շարադրված է «Հրեական պատերազմի» I—II գրքերում, Հովսեպոսին որպես աղբյուր ծառայել է նաև մ. թ. ա. I դարի հույն հեղինակ Նիկողայոս Դամասկոսացին, որի անունը հաճախ է հիշատակվում եբրայեցի մատենագրի հաջորդ խոշոր երկի՝ «Հնախոսության» մեջ։ Նիկողայոս Դամասկոսցին եղել է Օգոստոս կայսեր և հրեից թագավոր Հերովդես Մեծի մտերիմը և հեղինակել 144 գրքից բաղկացած «Ընդհանուր պատմություն» և այլ գործեր։ Այս դեպքում ևս Հովսեպոսի վկայությունները պիտի համարել հավաստի, քանի որ նա օգտվել է դեպքերին ժամանակակից հեղինակի գործերից։

Այսպիսով, եթե նկատի առնենք, որ Հովսեպոսը ոչ միայն դեպքերի ժամանակակիցն է եղել ու մասնակիցը, այլև այն, որ նա օգտվել է հավաստի աղբյուրներից, ապա նա մեր առաջ կանգնում է իբրև հին աշխարհի բացառիկ արժանահավատ հեղինակներից մեկը։ Ուստի դժվար է գերագնահատել նրա վկայությունների պատմագիտական արժեքը և՛ այն դեպքում, երբ դրանք չեն հանդիպում այլ հեղինակների մոտ, և՛ այն դեպքում, երբ դրանք իրենց զուգահեռներն ունեն անտիկ պատմիչների մոտ, դրանով իսկ հնարավորություն ստեղծում ստուգելու վերջիններիս հավաստիությունը։

«Հրեական պատերազմ»-ից ավելի քան 16 տարի անց, 94 թ., հայտնվեց Հովսեպոսի հաջորդ մեծ երկը՝ «Հրեական հնախոսությունը», եբրայեցի հեղինակի magnus opus-ը՝ մեծ գործը։ Պատմական այս երկու աշխատությունների երևան գալու միջև նկատվող 16-ամյա ժամանակահատվածը, անկասկած, հեղինակը ծախսել է իր ծավալուն երկի շարադրանքին անհրաժեշտ նյութեր հա-

---

[3] Jos. Flav., Vita, 342.

վաքելու համար։ Այստեղ, իհարկե, պետք է դեր խաղացած լինի նաև այն, որ Հովսեպոսին հովանավորող Տիտոս կայսեր մահից հետո կայսերական գահին նստած դաժան բռնակալ Դոմիտիանոսը (81—96 թթ.) հետու էր գրականությունն ու գիտությունը հովանավորելուց, ուստի և նրա օրոք պատմագրի վիճակը անապահով էր։ Եվ պատահական պիտի չհամարել այն երևույթը, որ հռոմեական մշակույթի այնպիսի խոշոր ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Տակիտոսը, Պլինիոս Կրտսերը, Յուվենալը և ուրիշներ, Դոմիտիանոսի բռնատիրության տարիներին նախընտրել էին լռել և միայն նրա սպանությունից հետո մագաղաթին հանձնեցին իրենց ստեղծագործությունները։

Որպես փաստ հիշենք թեկուզ այն, որ Տակիտոսը, որը Փլավիոս կայսրերի ժամանակ պետական բարձր պաշտոններ էր վարել, իր անդրանիկ երկը՝ «Հռետորների զրուցադրությունը» գրել էր դեռևս 81 թ., բայց այն հրապարակ հանեց միայն 95 թ. հետո։ Տակիտոսը, Պլինիոս Կրտսերը և Յուվենալը եղել են մտերիմ բարեկամներ, ուստի բացառված չէ, որ Տակիտոսը, կանգնած լինելով կայսերական արքունիքին մոտիկ, շատ լավ ծանոթ էր Դոմիտիանոսի տրամադրություններին, հետևաբար և խորհուրդ էր տվել իր ընկերներին լռություն պահպանել դաժան կայսեր գահակալության տարիներին։

Դոմիտիանոսի սպանությամբ վերացվեց Փլավիոսների տոհմը, և Հովսեպոսը, զրկվելով Հռոմում կայսերական հովանավորությունից, գտավ նոր մեկենաս, հանձին ոմն Եպափրոդիտոսի, որն այդ ժամանակ քերականի համբավ էր վայելում, իր տրամադրության տակ ուներ մեծ գրադարան և զբաղվում էր Հոմերոսի ուսումնասիրությամբ։ Սրան էլ Հովսեպոսը նվիրում է իր հետագա բոլոր գործերը։

«Հրեական հնախոսությունը» բաղկացած է քսան գրքից։ Դրա հիմնական բովանդակությունը կազմում է հրեա ժողովրդի պատմությունը սկզբնավորումից մինչև հրեական պատերազմի ծագումը՝ այն է՝ 66 թվականը։ Հասկանալի է, որ այս աշխատությունը շարադրելիս Փլավիոսի հիմնական աղբյուրը եղել է Աստվածաշունչը, որին հետևելով, սակայն, Հովսեպոսը իր երկը հեղինակել է որպես պատմագիր և ոչ թե հրեա ժողովրդի զրույցները պարզապես գրի առնող։ Նրա նպատակն է եղել հռոմայեցիների և հույների, ինչպես նաև Արևելքի հունալեզու ընթերցողների աչքին բարձրացնել հրեաներին և նրանց պատմությունն ու մշակույ-

թը։ Ջատագովական այդ առաջադրանքին տուրք տալով, Հովսեպոսը իր երկը շարադրելիս զանց է առել հրեաների պատմությունից շատ իրողություններ, որոնք հազիվ թե նպաստեին իր առաջադրած նպատակին, ուստի և հաճախ փոփոխության է ենթարկել իրեն հասած զրույցները և պատումները դրանց առավել փայլ ու շքեղություն հաղորդելու միտումով։ Այդ է պատճառը, որ նրա «Հնախոսությունը» Աստվածաշնչի վերապատմությունը չէ սոսկ։ «Հնախոսության» հեղինակն օգտվել է իրենից առաջ ստեղծագործած տարբեր մատենագիրների երկերից, ինչպիսիք են Հերոդոտոսը, Պոլիբիոսը, Բերոսոսը, Նիկողայոս Դամասկոսցին և ուրիշներ։ Ինչպես հայտնի է, վերջին երկուսի աշխատությունները մեզ չեն հասել, և միայն հետագա հեղինակների գործերում պահպանված վկայությունների շնորհիվ ենք իմանում նրանց մասին։ Հավանաբար Հովսեպոսն օգտվել է նաև Ստրաբոնի մեզ չհասած «Պատմական հիշատակարաններ» (Ἱστορικὰ ὑπομνήματα) անփոխարինելի երկից, քանի որ նրա մոտ Ստրաբոնից բերված քաղվածքները չեն հանդիպում պոնտացի մատենագրի մեզ լրիվ հասած «Աշխարհագրություն» երկում։

Իրենց ընդհանուր նպատակադրման տեսանկյունից եթե համեմատելու լինենք Հովսեպոսի երկու ծավալուն գործերը, ապա դժվար չէ նկատել շատ էական մի տարբերություն։ Եթե «Հնախոսության» յուրաքանչյուր էջը ներծծված է հրեական բարքերի ու մշակույթի գերազանցությունը ցուցադրելու ձգտումով, ապա «Հրեական պատերազմը» տոգորված է Հռոմի ըստ ամենայնի գերազանցությանը տուրք տալու, հրեական ապստամբության ապարդյուն լինելու մեջ իր հայրենակիցներին համոզելու, ինչպես նաև ապստամբության ընթացքում որպես հրեաների զորահրամանատարներից մեկը իր անհետևողականությունն ու հռոմայեցիների կողմն անցնելը արդարացնելու միտումով։

Վերոհիշյալ երկու գործից բացի, Հովսեպոսի գրչին են պատկանում նաև լրիվ պահպանված, ծավալով համեմատաբար ոչ մեծ, բայց պատմական որոշակի արժեք ներկայացնող երկու շարադրանք՝ «Կենսագրություն» (Βίος) և «Ընդդեմ Ապիոնի»։ Իրենց բովանդակությամբ և ունեցած նշանակությամբ դրանցից առաջինը ձայնակցում է «Հրեական պատերազմ»-ին, իսկ երկրորդը՝ «Հրեական հնախոսությանը»։ Գրված լինելով հեղինակի առաջացած տարիքում, դրանք նրա վերջին ստեղծագործություններն են։ Գրված են I—II դարերի սահմանագծին, Տրայանոս կայսեր (98—117 թթ.)

գահակալման տարիներին։ «Կենսագրությունը» դեպքերի նկարագրությունը հասցնում է մինչև II դարի սկիզբը, քանի որ դրանում հիշատակություն կա Հովսեպոսին հակառակ դիրքերից հրեական ապստամբությունը շարադրած ոմն Յուստոսի դեմ, Հրեաստանի Ագրիպպաս Բ թագավորի մահից հետո, որը, ինչպես հայտնի է, տեղի էր ունեցել 100 թ.։

«Ընդդեմ Ապիոնի» հակաճառության շարադրանքը, համեմատաբար, պետք է սկսված լինի «Հնախոսությունը» ավարտելուց հետո (95 թ.)։ Բացառված չէ, որ այն ևս շարադրված է II դարի սկզբին, քանի որ դրանում ևս հիշատակություն կա Հովսեպոսի հակառակորդ պատմագրի մասին, որն անկասկած միևնույն Յուստոսն է։

Բովանդակությամբ ու շարադրանքի ոճով իրարից զգալիորեն տարբեր լինելով հանդերձ, այնքան տարբեր, որ դժվար է հավատալ, թե դրանք իրար ժամանակակից են և միևնույն ձեռքով գրված, Հովսեպոսի «Կենսագրությունը» և «Ընդդեմ Ապիոնի» երկերը իրենց բնույթով զարմանալիորեն նման են։ Դրանք ունեն շեշտված ջատագովական բնույթ։ Առաջինը հեղինակի անձնական կյանքի ջատագովությունն է, երկրորդը՝ հրեական ցեղի փառաբանությունը։

«Կենսագրությունը» իր բովանդակությամբ մի հավելված է «Հրեական հնախոսության», քանի որ վերջինիս մեջ Հովսեպոսը չի շարադրել հրեական պատերազմի պատմությունը, իսկ կենսագրության մեջ նա մեկ անգամ ևս հանգամանորեն անդրադառնում է դրան։ Այդ «հավելվածի» երևան գալը պայմանավորված էր նրանով, որ Հովսեպոսի հայրենակիցներից Յուստոսը հրապարակել էր հրեական պատերազմի պատմությունը, որի մեջ մեղադրում էր Հովսեպոսին Տիբերիաս քաղաքը Հռոմի դեմ ապստամբության մղելու մեջ։ Յուստոսի խիստ քննադատությունը նպատակ ուներ ոչ միայն արժեքազրկել Հովսեպոսի գործերը, այլև վտանգել նրա ապահովությունը Հռոմում։ Ուստի անհրաժեշտ էր անհապաղ պատասխանել։

Այդ նպատակադրումից մղված լինելով, Հովսեպոսի շարադրանքը չի կազմում հեղինակի լիակատար կենսագրությունը։ Իր ամբողջության մեջ այն հեղինակի ջանքն է արդարացնելու իր վարքագիծը կիսամյա այն ժամանակահատվածում, երբ ինքը Գալիլեայում հրեական զորքերի հրամանատարն էր։ Ուստի և Պաղեստինում անցկացրած իր պատանեկության տարիների և հետագա-

յում Հռոմում իր վարած կյանքի կարճառոտ ուրվագծումը կապ-
մում են ամբողջ շարադրանքի նախաբանն ու վերջաբանը: «Կեն-
սագրությունը» որպես գրական երկ միջակություն է և չի փայ-
լում իր ոճական արժանիքներով:

Որպես հակադրություն «Կենսագրության», երկու գրքից բաղ-
կացած «Ընդդեմ Ապիոնի» գործը Հովսեպոսի ամենահրապուրիչ
երկն է: Դրան հատուկ է խնամքով մշակված ծրագիր, գրական
մեծ հմտություն, հելլեն փիլիսոփայության և պոեզիայի լավ ծա-
նոթություն և այդ ամենին գումարած հեղինակի անկեղծ սերը իր
հայրենի բարքերի հանդեպ:

«Ընդդեմ Ապիոնի» վերնագիրը թերևս հեղինակի ընտրածը չէ,
քանի որ այն չի արտահայտում գրքի բովանդակությունը, որը ամ-
բողջապես նվիրված է հույների հարձակումներից իր հայրենա-
կիցներին պաշտպանելու հարցին: Իսկ ալեքսանդրիացի հույն
Ապիոնը պարզապես իսրայելացիների սովորական հակառակորդ-
ներից մեկն էր միայն: Ծրագրված լինելով իբրև պատասխան
«Հնախոսության» դեմ երևան եկած քննադատություններին, ինչ-
պես նաև նպատակ ունենալով հերքել տարածված կանխակալ
կարծիքները, Հովսեպոսի այս շարադրանքը համակված է հրեա-
կան օրենքները և ավանդությունները ջատագովելու և հրեաների
հնագույն ծագումը ցուցադրելու ոգով: Այդ իսկ պատճառով, այն
բացահայտում է I դարում լայնորեն տարածված հակասեմակա-
նության ներքին ծալքերը և հաջող կերպով վիճարկում հակասե-
մականների թշնամական և անմիտ հերյուրանքները հրեաների
դեմ: Այսուհանդերձ, «Ընդդեմ Ապիոնի» գիրքը մեծ նշանակու-
թյուն ունի Արևելքի երկրների պատմության հնագույն շրջանն
ուսումնասիրելու համար, քանի որ Հովսեպոսն իր դրույթներն ա-
պացուցելիս հարկադրված է եղել ընդարձակ վկայություններ բե-
րել (դրանով իսկ կորստից փրկել) մեզ չհասած այնպիսի պատմա-
գիրներից, ինչպիսիք են Եգիպտոսի պատմության հեղինակ Մա-
նեթոնը, Բաբելոնի պատմության հեղինակ Բերոսոսը և ուրիշներ:

* * *

Մեզ համար դժվար է գերագնահատել Հովսեպոսի պատմու-
թյան հատկապես այն հատվածները, որոնք վերաբերում են Տիգ-
րան Բ-ին, Արտավազդին (մ. թ. ա. I դար) և Տրդատ Արշակու-
նուն (մ. թ. I դար): Նրա վկայությունների բացառիկ նշանակու-

թյունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից նշենք թեկուզ միայն երկուսը։

1) Հովսեպոսը, Ստրաբոնից հետո, ժամանակով առավել մոտ է Տիգրանին և վերջին Արտաշեսյաններին։ Ինչ վերաբերում է Տրդատին, ապա Փլավիոսն այն պատմիչն է, որի քաղաքական գործունեության և գրական ստեղծագործության տարիները համընկնում են Հայաստանում Արշակունյաց հարստության հիմնադրի գահակալության տարիներին։

2) Ինչքան էլ Հովսեպոսի գործերում սուր կերպով զգացվում է նրա սուբյեկտիվ վերաբերմունքը նկարագրված դեպքերի նկատմամբ, որոնց հաճախ ինքը անմիջական մասնակցություն է ունեցել, այնուամենայնիվ, հայոց թագավորներին, առանձնապես Տիգրանին և Արտավազդին վերաբերող նրա վկայությունները առավել անհաշտ են։ Այսպես, եթե հույն հեղինակների, հատկապես Պլուտարքոսի, ուրվագծած Տիգրանը դաժան ու կամակոր միապետ է, ապա Հովսեպոսի գրչի տակ հայոց թագավորը պատկերված է մեղմաբարո և մարդկային։ Եբրայեցի պատմիչի՝ Տիգրանին տված այս գնահատականը առանձնապես արժեքավորվում է, եթե նկատի առնենք, որ հայոց թագավորը, հայ մատենագրության տվյալներով, մեծ թվով հրեաների գերեվարել ու տարել էր Հայաստան։ Գալով Արտավազդին, Պլուտարքոսը նրան ներկայացնում է իբրև նենգամիտ և հռոմեական շահերին դավաճանած մարդ, մինչդեռ Հովսեպոսի մոտ նա ներկայացված է իբրև զոհ Անտոնիոսի մեքենայությունների և փառասիրության։

Հովսեպոսը նոր անուն չէ հայ մատենագրության համար։ Դեռևս հայկական դպրության արշալույսին նրա անունը մուտք էր գործել մեսրոպատառ մատյանների մեջ։ Մովսես Խորենացին իր «Հայոց Պատմությունը» շարադրելիս, ի թիվս այլ հեղինակների, մեծապես օգտվել է նաև եբրայեցի հեղինակի երկերից։ Պատմահայրը երկակի է մոտեցել Հովսեպոսի մատյաններին։ Որոշ դեպքերում վկայակոչելով նրան, համարյա բառացի մեջ է բերում Հովսեպոսի խոսքերը, մինչև իսկ նշելով աղբյուրը։ Այլ դեպքերում, վերցնելով հրեա պատմիչի շարադրանքի ընդհանուր հենքը, Խորենացին վերաշարադրում է այն և հարմարեցնում իր պատմության ընդհանուր ոգուն, հաճախ փոխելով գործող անձերի անուններն ու ազգային պատկանելիությունը։

Վերոհիշյալ հարցին անդրադարձավ Գ. Սարգսյանն առանձին հոդվածով, փորձելով բացատրել Խորենացու մատյանում

հրեա պատմիչի վկայություններից կատարված շեղումները[4]։ Համառոտակի ծանոթանանք այդ հոդվածի էությանը։

Հայտնի է, որ մ. թ. ա. I դարում հայոց թագավորների մղած պատերազմները հրեաների գերեվարության երկու ալիք բերեցին Հայաստան. առաջինը և առավել նշանակալիցը՝ Տիգրան Բ-ի արշավանքների հետևանքով, երկրորդը՝ նրա որդի Արտավազդի թագավորության ժամանակ։ Այս երկուսն էլ հայտնի են Խորենացուն, երկրորդ գերեվարության նկարագրությունը պատմահայրը վերցրել է Հովսեպոսից, բայց իր շարադրանքի մեջ մտցրել է լուրջ փոփոխություններ և գործողությունը տեղափոխել Տիգրանի ժամանակաշրջանը։ Հովսեպոսի պատմածում հայերն ու Հայաստանը ընդհանրապես չեն հիշատակվում։ Իսկ մնացածը ընդհանուր է երկու հեղինակների մոտ։ Համընկնում են, մասնավորապես, թվական տվյալները և տեղանունները։ Գ. Սարգսյանը գտնում է, որ Խորենացու թույլ տված շեղումների մի մասը կարելի է բացատրել, հավանորեն, իր աղբյուրի անգիր օգտագործումով, իսկ թվերը կարող էին նախօրոք գրի առնված լինել[5]։

Հովսեպոսի պատմածից Խորենացու մյուս շեղումները Գ. Սարգսյանը բացատրում է նրանով, որ Հայաստանում արդեն այդ բոլոր դեպքերի մասին Տիգրանի կողմից փոխադրված հրեական հոծ զանգվածների ոլորտում ավանդություն էր առաջացել, որտեղ Արտավազդն ու պարթևները մոռացության են տրվել և ամեն ինչ վերագրվել է Տիգրանին։ Խորենացին իր ձեռքի տակ ունենալով մի կողմից՝ Հովսեպոսի, մյուս կողմից՝ հայկական ավանդության տարբերակները, նախապատվությունը տվել է հայերին դրվատող վերջին տարբերակին և Հովսեպոսի պատմածը հարմարեցրել այս մեկին։ «Դրանով պետք է բացատրել,— հետևցնում է Գ. Սարգսյանը,— այն հանգամանքը, որ Խորենացին, ընդհանուր առմամբ հետևելով Հովսեպոսի պատմածին, ամենուրեք, սակայն, պարթևներին փոխարինել է հայերով. ընդ որում, իրական պատմական դեմքերը ... վերածվել են ոչ ռեալ պերսոնաժների»[6]։

Սա լիովին հավանական է։ Պատմահոր շեղումների մի մասն էլ կարելի է վերագրել այն բանին, որ Խորենացին իր ձեռքի

---

4 Գ. Խ. Սարգսյան, Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ, «Բանբեր Մատենադարանի», № 3, 1956, էջ 31—42։

5 Նույն տեղում, էջ 33։

6 Նույն տեղում, էջ 33—34։

տակ ունեցել է Հովսեպոսի երկի մի այլ տարբերակը, քան այն, ինչ հասել է մեզ։ Այսպիսի հավանականության օգտին է հուշում իր իսկ Հովսեպոսի խոստովանությունը։ Ինչպես արդեն նշել ենք, «Հրեական պատերազմի» հեղինակը առաջին պարբերությունով հայտնում է, որ իր պատմությունն ինքը նախ գրել է արամեերեն, որպեսզի այն կարողանան կարդալ հրեաները, ինչպես նաև Եփրատից այն կողմ բնակվող իր ցեղակիցներն ու հավատակիցները։ Եթե մեր այս ենթադրությունը ճիշտ է, ապա սխալված չենք լինի, եթե ասենք, որ Խորենացու ձեռքի տակ եղել է մի ձեռագիր, որը առնվազն 500 տարով ավելի հին էր, քան Հովսեպոսի երկերի ներկա ձեռագրերը, որոնցից ամենահինը X դարից այն կողմ չի գնում։

Բացառված չէ այն, որ Բերոսոսից քաղված Մովսես Խորենացու վկայությունների հիմքում ընկած են դարձյալ Հովսեպոսի երկերի համապատասխան հատվածները։

Այս ամենից ակնհայտ է դառնում, որ Պատմահայրը շատ բարձր է գնահատել եբրայեցի մատենագրի երկերը։

Հովսեպոս Փլավիոսի երկերը թարգմանվել են մի շարք լեզուներով, առաջին հերթին՝ լատիներեն։ XVII—XVIII դարերում հայ մատենագրության մեջ ևս մեծ հետաքրքրություն է նկատվում այդ երկերի նկատմամբ։ Եվ ահա Ստեփանոս Լեհացին 1660 թ. լատիներեն թարգմանությունից հայերեն է թարգմանում եբրայեցու «Հրեական պատերազմի մասին» մատյանը, որը և տպագրվում է 1787 թ.[7]։ Այս թարգմանության մի քանի ձեռագրեր պահվում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում[8]։ 1760—1761 թթ. Տայի-Սիմոնյան Աթանաս վարդապետը ևս իտալերեն թարգմանությունից թարգմանում է Հովսեպոսի մյուս գործը՝ «Հրեական հնախոսությունը», որը մնում է ձեռագիր վիճակում[9]։

---

7 Գիրք Պատմութեանց Յովսեպոսի Երրայեցւոյ արարեալ ի լատինացւոյ բարբարոյ ի հայոց լեզուի, ի ձեռն ուրումն Իլովացւոյ Ստեփաննոսի։

8 Ձեռագրեր՝ 1489, 1728, 1729, 1909։ Այս ձեռագրերից վերջինի գրիչը ինքը Ստեփանոս Լեհացին է։ Ձեռագրի վրա կատարված են ուղղումներ, իր ձեռքի թարգմանչի ձեռքով։ Մյուս ձեռագրերը վերջինից կատարված արտագրություններ են։

9 Գիրք Մատենի հնագոյն պատմութեանց։ Շարադրեալ և արարեալ ի Յովսեպոսէ Փլափիանոսէ Երրայեցւոյ քահանայի Երուսաղէմացւոյ... Թարգմանութեամբ ի լոյս ածեալ յիտալացւոյ բարբարոյ, ի հայ լեզու, ի Կոստանդնուպոլսեցւոյ Տայի-Սիմոնեան Աթանաս վարդապետէ և եպիսկոպոսէ (ձեռագրեր 2720 և 2747)։

Ստեփանոս Լեհացու թարգմանությունը պիտի համարել առավել հաջող։ Բայց և՛ այս, և՛ Տայի-Սիմոնյանի թարգմանությունը, իրենց որոշ արժանիքներով հանդերձ, չեն կարող բավարարել ժամանակակից բանասիրության ու պատմագրության պահանջները։ Գրաբար այս թարգմանություններում կան ոչ քիչ անճշտություններ և աղավաղումներ, որոնք պայմանավորված են, ընդհանրապես, XVII—XVIII դդ. պատմա-բանասիրության մակարդակով, ինչպես նաև այն հանգամանքով, որ թարգմանությունները կատարվել են ոչ ուղղակիորեն բնագրից։ Նկատված շեղումների մի որոշ մասն էլ հետևանք է այն բանի, որ և՛ Ստեփանոս Լեհացին, և՛ Ա. Տայի-Սիմոնյանը Հովսեպոսին թարգմանելիս միշտ նկատի են ունեցել Խորենացու մատյանը, որտեղ Պատմահայրը ամեն անգամ չէ, որ ճշտությամբ է վերարտադրում հրեա մատենագրին։ Վերոհիշյալ թարգմանություններում մեր նկատած անճշտությունները կարելի է բաժանել երեք խմբի. 1) հատուկ անունների սխալ տառադարձումներ, 2) իմաստային աղավաղումներ և 3) բացթողումներ։

Ներկա թարգմանությունը կատարել ենք „Loeb Classical Library“ շարքով հրատարակված Հովսեպոս Փլավիոսի ամբողջական գործերի բնագրից, ընտրելով նրա բոլոր երկերից այն հատվածները միայն, որոնք վերաբերում են պատմական Հայաստանին և հարևան երկրներին, որոնց հետ հայերը հնագույն ժամանակներից ունեցել են քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններ։

Մեր թարգմանության մեջ փակագծերում առնված բառերը ընթերցվածը պարզ դարձնելու նպատակով մեր կատարած հավելումներն են։

Հատուկ անունները հայերեն տառադարձնելիս, մենք հավատարիմ ենք մնացել բնագրի ուղղագրությանը, մի սկզբունք, որին հետևել են դեռևս Ագաթանգեղոսը, Խորենացին և մեր մյուս պատմիչները։ Նկատվող հազվադեպ շեղումները վերաբերում են հայկական կամ արդեն հայկականացած անուններին, որոնք բուռ հունարենի փոխելը համարեցինք ոչ նպատակահարմար։

ԸՆԴԴԵՄ ԱՊԻՈՆԻ[1]

ԽՈՍՔ ԱՌԱՋԻՆ

37 Հիրավի, քանի որ ամեն մեկին իրավունք չի տրված
գրելու տարեգրությունները, և տարաձայնություններ չկան
գրվածների վերաբերյալ, այլ ընդհակառակը, քանի որ աստ-
վածային ներշնչման միջոցով ամենահեռավոր և հնագույն
պատմություններն իմանալը մարգարեներին է վիճակված,
38 որոնք հստակորեն գրել են նաև իրենց ժամանակակից դեպքե-
րի մասին, բնական է, որ մենք չունենք բյուրավոր գրքեր,
որոնք անհամաձայն լինեին իրար և վիճեին, այլ միայն քսան
և երկու, որոնք բովանդակում են բոլոր ժամանակների տարե-
39 գրությունը և իրավացի կերպով հավաստի են համարվում[2]:
Ու դրանցից հինգը Մովսեսի գրքերն են, որոնք բովանդակում
են օրենքները և մարդու ծագումից մինչև Մովսեսի մահը եղած
40 պատմությունը: Այդ ժամանակը փոքր ինչ պակաս է երեք հա-
զար տարուց: Իսկ Մովսեսի վախճանվելուց մինչև պարսից
արքա Քսերքսեսի հաջորդ Արտաքսերքսեսը[3] Մովսեսից հետո
եկած մարգարեներն են գրել տասներեք գրքում: Իսկ մնա-
ցած չորսը բովանդակում են օրհներգություններ առ աստ-
41 ված և կենցաղային խրատներ՝ առ մարդիկ: Իսկ Արտա-
քսերքսեսից մինչև մեր օրերի (պատմությունը) գրվել է լրիվ,
բայց չի համարվում նախորդ տարեգրություններին հավա-
սար հավաստի, որովհետև չի եղել մարգարեների ճշգրիտ
հաջորդականություն:

* * *

63 Փյունիկեցիները կանխավ հայտնի դարձան հույներին,
որովհետև իրենց նավերով լողացին դեպի հույները՝ առևտրի

նպատակով, և նրանց միջոցով (հայտնի դարձան) եգիպտացիներին. ու բոլոր նրանք, որոնցից բեռներ էին բերում հույ-
64 ներին, մեծ ծովեր անցնելով: Հետագայում մեդացիներն ու պարսիկները հայտնի դարձան, տիրելով Ասիային. պարսիկները մինչև իսկ մյուս մայր ցամաքը կատարած արշավանքներով[4]:

* * *

128 Իսկ այժմ ես արդեն կասեմ մեր մասին քաղդեացիների մոտ գրվածները և պատմվածները, որոնք շատ բաներում համաձայն են մեր սեփական գրքերին: Այս բոլորի վկան է
129 Բերոսոսը[5], ծագումով քաղդեացի, ստակյան ուսումնական շրջաններին հայտնի մի մարդ, որովհետև նա հույներին մատուցել է քաղդեացիների մոտ աստղագիտության և իմաս-
130 տասիրության մասին եղած երկերը: Ահա այս Բերոսոսը, հետևելով և՛ տեղի ունեցած ջրհեղեղի, և՛ դրա ժամանակ պատահած մարդկանց կործանման մասին եղած հնագույն տարեգրություններին, Մովսեսի նման ինքը ևս պատմել է տապանի մասին, որի մեջ Նոքոսը[6], մեր ցեղի նահապետը, փրկվեց, երբ այն քշվեց ու կանգ առավ Հայկական լեռների
131 բարձունքներում: Այնուհետև նա կարգավ թվարկելով Նոքոսի հետնորդներին և նրանց տարիները գումարելով, հասնում է մինչև Նաբուպալասսարը[7], Բաբելոնի և քաղդեացիների թագավորը և պատմելով նրա գործերի մասին, ասում է, թե ինչպես նա իր որդի Նաբուքոդոնոսորին[8] մեծ զորքով ուղար-
132 կեց Եգիպտոսի և մեր երկրի վրա, լսելով, որ այդ ժողովուրդներն ապստամբել են իր դեմ, բոլորին ճնշեց, հրկիզեց Երուսաղեմի տաճարը, իսկ մեր ամբողջ ժողովրդին տեղահանելով, վերաբնակեցրեց Բաբելոնում: Դրա հետևանքով իսկ քաղաքն ամայի մնաց յոթանասուն տարի, մինչև պար-
133 սից Կյուրոս թագավորը[9]: Բերոսոսը ավելացնում է, թե Բաբելոնացին[10] նվաճեց Եգիպտոսը, Սիրիան, Փյունիկեն, Արաբիան, իր գործունեությամբ գերազանցելով իրեն նախորդած քաղդեացիների և բաբելոնացիների բոլոր թագավորներին:
134 Այդ դեպքերը ես կշարադրեմ իր իսկ Բերոսոսի խոսքերով,
135 որոնք այսպիսին են. «Նրա հայր Նաբուպալասսարը, լսելով Եգիպտոսում և Կելե-Սիրիայում և Փյունիկեում իր իսկ նշանակած սատրապի ապստամբության մասին, և ինքն ի վի-

ճակի չլինելով դիմանալու արշավանքի դժվարություններին, իր որդի Նաբուքոդոնոսորին, որն ապրում էր իր կյանքի ծաղկուն շրջանը, հանձնարարելով զորքերի մի մասը, ուղարկեց
136 նրա դեմ: Նաբուքոդոնոսորը, հանդիպելով ապստամբին և ջախջախելով նրան, նվաճեց երկիրը և այն միացրեց Բաբելոնի թագավորի տիրությանը: Այդ ժամանակ պատահեց այնպես, որ Բաբելոն քաղաքում քսանմեկ տարի թագավորելուց հետո, նրա հայր Նաբոպալասարը հիվանդացավ ու մա-
137 հացավ: Ոչ շատ ժամանակ անց, Նաբուքոդոնոսորը, տեղեկանալով իր հոր մահվան մասին, կարգավորեց պետական գործերը Եգիպտոսում և մյուս երկրներում, հրեա, փյունիկեցի, սիրիացի և եգիպտական ժողովուրդներից վերցրած զերիներին հանձնելով իր մերձավորներից մի քանիսին, կարգադրեց ծանրագեն զորքերի և մյուս միավորումների հետ նրանց ևս առաջնորդել Բաբելոնիա: Իսկ ինքը փոքր հեծե-
138 լախմբով ճեղքեց անապատը և ժամանեց Բաբելոն: Այնտեղ նա պետության կառավարումը գտավ քաղդեացիների ձեռքին, և նրանցից լավագույնները թագավորական իշխանությունը պահել էին իր համար: Արդեն դառնալով իր հայրենական իշխանության տերը, գերվածներին բերվելուց հետո հրամայեց նրանցից գաղութներ հաստատել Բաբելոնիայի ամենատար-
139 բեր վայրերում, իսկ ինքը պատերազմից ձեռք բերած ավարներով Բելի տաճարը և մյուս տաճարները նախանձախնդրությամբ զարդարելով, հնում եղած քաղաքը վերակառուցեց և դրանից դուրս մի նորը ավելացրեց, և հետագայում քաղաքի պաշարման ժամանակ գետի հունի ուղղությամբ ներխուժման միջոցով քաղաքի գրավման ամեն մի հնարավորություն խափանելու նպատակով, ներքին քաղաքը պատեց երեք պարսպով, արտաքին քաղաքը ևս երեք պարսպով. դրանցից ներքին քաղաքի պարիսպները թրծած աղյուսից և կոպրից, իսկ արտա-
140 քին քաղաքի պարիսպները՝ հասարակ աղյուսից: Եվ քաղաքըն ինչպես հարկն է ամրացնելուց ու դարպասները սրբավայրին վայել ձևով զարդարելուց հետո, իր հոր պալատի շարունակությամբ կառուցեց մի երկրորդ պալատ, որի բարձրությունը և այլ շքեղությունները նկարագրելը գուցե ձանձրալի կլիներ. միայն ասենք, որ հակառակ իր հսկայական և
141 ահռելի չափերին, այն կառուցվել է տասնհինգ օրում: Այս պալատների մեջ քարե բարձր հենարաններ պատրաստելով

և լեռներին նմանվող տեսք տալով, բազմապիսի ծառեր տընկելով, զարդարեց ու կառուցեց կախյալ կոչված պարտեզը[11], որը ցանկացել էր Մեդիայում մեծացած և լեռնային վայրերին սովոր նրա կինը»[12]։

142 Այսպիսի բաներ է նա պատմում վերոհիշյալ թագավորի մասին ու դրանից բացի նաև շատ ուրիշ բաներ իր «Քաղդեականք»-ի երրորդ գրքում, որտեղ կշտամբում է հույն հեղինակներին[13] այն առնչությամբ, որ նրանք իզուր են կարծում, թե Ասորեստանի Սեմիրամիս (Թագուհու) կողմից է հիմնվել
143 Բաբելոնը և անճիշտ կերպով գրել են, որ նրա ձեռքով են կառուցվել քաղաքի հրաշալիքները։ Այս բոլորի կապակցությամբ քաղդեական տարեգրությունները արժանահավատ պիտի համարել։ Առավել ևս այն պատճառով, որ Բաբելոնի այս թագավորի մասին փյունիկյան մատյաններում գրվածները ևս համաձայն են Բերոսոսի պատմածներին այն մասին, թե ինչպես նա Սիրիան և ամբողջ Փյունիկեն ավե-
144 րեց։ Այդ դեպքերի մասին նույնպես գրել է Փիլոստրատոսն իր պատմության մեջ, հիշատակելով Տյուրոսի պաշարումը[14], նաև Մեգասթենեսը իր Հնդկաստանի պատմության չորրորդ գրքում, որտեղ փորձում է ապացուցել, որ բաբելոնացիների հիշյալ թագավորը իր քաջությամբ և արարքների մեծությամբ գերազանցել է Հերակլեսին[15]։ Որովհետև, ասում է, նա նվաճել է Լիբիայի մեծ մասը և Իբերիան[16]։

145 Այն, ինչ վերևում ասվեց Երուսաղեմի տաճարի մասին, թե այն հրկիզվեց արշավող բաբելոնացիների կողմից, ապա նրա վերակառուցումը սկսվեց, երբ Ասիայի գահն անցավ Կյուրոսին, այդ բոլորը պարզորեն ցույց կտանք Բերոսոսի խոսքերով։ Նա իր պատմության երրորդ գրքում հետևյալն
146 է գրում. «Այսպիսով Նաբուքոդոնոսորը, վերևում հիշատակված պարսպի (շինարարությունն) սկսելուց հետո, հիվանդացավ ու մահացավ, թագավորելով քառասուներեք տարի,
147 իսկ թագավորության տեր դարձավ նրա որդի Եվիլմարադուքոսը։ Սա անօրենությամբ ու անառակությամբ կառավարեց, որի համար էլ, երկու տարի թագավորելուց հետո, զոհ գնաց իր քեռայրի՝ Ներիգլիսարոսի կազմակերպած դավադրությանը։ Նրա կործանվելուց հետո գահի վրա նրան հաջորդեց դա-
148 վադիր Ներիգլիսարոսը, թագավորելով չորս տարի։ Սրա որդի Լաբորոսոարդոքոսը, որը դեռ պատանի էր, գրավեց իշխա-

նութիւնն ինն ամիս և շատ վատ բարքեր դրսևորելով, դավադրութեան գոհ գնաց. նա բրածեծ արվելով սպանվեց իր
149 մերձավորների կողմից: Նրան վերացնելուց հետո, դավադիրները խորհուրդ գումարելով, որոշեցին թագավորական իշխանութիւնը հանձնել բաբելոնացի Նաբոնիդոսին, որը դավադրութեան մասնակիցներից էր: Սրա թագավորութեան ընթացքում Բաբելոն քաղաքի գետամերձ պարիսպները վերաշինվեցին թրծված աղյուսով և կուպրով: Իսկ նրա թագավորու-
150 թեան տասնյոթերորդ տարում Կյուրոսը խոշոր բանակով առաջ շարժվեց Պերսիսից[17] և ամբողջ թագավորությունը նվաճե-
151 լուց հետո, արշավեց Բաբելոնիայի դեմ: Իսկ Նաբոնիդոսը, տեղեկանալով նրա հարձակման մասին, իր զորքով դուրս եկավ նրա դեմ, բայց ճակատամարտում պարտվելով, սակավ
152 մարդկանց հետ փախավ ու փակվեց Բորսիպա քաղաքում[18]: Իսկ Կյուրոսը Բաբելոնը նվաճելուց հետո հրամայեց քաղաքի արտաքին պարիսպները քանդել, որովհետև դրանք քաղաքը իսկապես դարձնում էին դժվարամատույց, առաջ շարժվեց դեպի Բորսիպա, Նաբոնիդոսին պաշարելու համար:
153 Մինչդեռ Նաբոնիդոսը, առանց պաշարման սպասելու, նախօրոք հանձնվեց, իսկ Կյուրոսը մարդասիրաբար վերաբերվելով, (Նաբոնիդոսին) հեռացրեց Բաբելոնիայից, բայց փոխարենը Կարմանիայում[19] նրան բնակավայր հատկացրեց, որտեղ և (Նաբոնիդոսը) անցկացրեց իր կյանքի մնացած տարիները, մինչև մահանալը»:

154 Այս բոլորը ճիշտ է և մեր մատյաններին համաձայն: Քանզի դրանց մեջ գրված է, որ Նաբուքոդոնոսորը իր գահակալության տասնութերորդ տարում ավերեց մեր տաճարը, որը և հիսուն տարի դադարեց գոյություն ունենալուց, իսկ Կյուրոսի թագավորության երկրորդ տարում հիմքերը նորից դրվեցին, ու Դարեհի թագավորության երկրորդ տարում կա-
155 ռուցումը ավարտվեց: Դրանց ես կավելացնեմ նաև փյունիկյան մատյաններում գրվածները. որովհետև պատշաճ չէ պիտանի ապացույցների առատության անտեսումը: Իսկ
156 դրանց մեջ տարիների հաշվումն այսպիսին է. Իթոբալոս թագավորի օրոք Նաբուքոդոնոսորը Տյուրոսը պաշարեց
157 տասներեք տարի: Նրանից հետո թագավորեց Բաալը տասը տարի: Նրանից հետո նշանակվեցին դատավորներ ու այդ

պաշտոնը վարեցին Եկնիբալոսը՝ Բասլեքոսի որդին, երկու ամիս, Քելբեսը՝ Աբդեոսի որդին, տասը ամիս, քրմապետ Աբբարոսը՝ երեք ամիս, Մյուտյունոսը և Աբդելիմոսի որդի Գերաստրատոսը դատավոր են եղել վեց տարի, դրանցից հե-
158 տո թագավորեց Բալատորոսը մի տարի: Երբ սա մահացավ, դեսպաններ ուղարկեցին և Բաբելոնից հրավիրեցին Մերբալոսին, որը և թագավորեց չորս տարի: Իսկ սրա մահանալուց հետո (հրավիրեցին) նրա եղբորը՝ Հեյրոմոսին, որը թագավորեց քսան տարի: Սրա ժամանակ էր, որ Կյուրոսը դարձավ
159 պարսից տիրակալը: Այսպիսով, ամբողջ ժամանակը կազմում է քառասուն և չորս տարի և երեք ամիս. որովհետև, իր գահակալության յոթերորդ տարում Նաբուքոդոնոսորը պաշարեց Տյուրոսը, իսկ պարսիկ Կյուրոսը Հեյրոմոսի թագավորության տասնչորսերորդ տարում էր, որ տիրացավ գահին:

* * *

168 Այնուհետև Հերոդոտոս Հալիկառնասեցին ևս անտեղյակ չի եղել մեր ազգին, այլ ինչ-որ առիթով հիշատակում է նրան: Քանզի խոսելով կոլխերի մասին իր պատմության երկրորդ
169 գրքում, այսպես է ասում[20]. «Բոլոր (ժողովուրդների) մեջ սկզբնապես միայն կոլխերի և եգիպտացիների և եթովպացիների մոտ էր թլփատությունն ընդունված: Իսկ փյունիկեցիները և Պաղեստինում ապրող ասորիները ընդունում են, որ
170 այդ բանը սովորել են եգիպտացիներից: Մինչդեռ Թերմոդոնտ և Պարթենիոս գետերի[21] եղերքին ապրող ասորիները և նրանց հարևան մակրոնները[22] ասում են, թե այն դեռ նորերս են սովորել կոլխերից: Համայն մարդկության մեջ միայն սրանք են, որ թլփատվում են, և պարզորոշ է, որ բոլորն էլ այս սովորությունը վերցրել են եգիպտացիներից: Ինչ վերաբերում է եգիպտացիներին ու եթովպացիներին, ապա չեմ կարող ա-
171 սել, թե նրանցից ո՞ր մեկն է մյուսից սովորել»: Այսպիսով, Հերոդոտոսը պատմում է, թե Պաղեստինի բնակիչներից միայն հրեաներն են, որ ունեն թլփատման սովորությունը: Հետևաբար նա այս բանին տեղյակ էր և նրա ակնարկությունը նրանց է վերաբերում:

172 Հնագույն բանաստեղծ Խոյրիլոսը[23] ևս հիշատակում է մեր ազգը այն կապակցությամբ, որ այն մասնակից է եղել

պարսից թագավոր Քսերքսեսի՝ Հունաստան կատարած արշավանքին։

* * *

205 Սակայն Հեկատեոսի[24] վկայություններից շատ հիշատակվեց։ Իսկ ով ցանկանում է ավելին իմանալ այդ մասին, կարող է հեշտությամբ ձեռք բերել նրա գիրքը։ Ու ես չեմ ծուլանա նաև Ագաթարքիդեսին[25] հիշատակելուց, թեկուզ և սա
206 հեգնում է մեզ իբրև անմիտների։ Նա պատմում է Ստրատոնիկեի[26] մասին, թե ինչպես նա, լքելով իր ամուսին Դեմետրիոսին[27], Մակեդոնիայից եկավ Սիրիա[28], իսկ երբ Սելևկոսը[29] հրաժարվեց իր հետ ամուսնանալ, ինչն ինքը ակնկալում էր, Անտիոքում ապստամբություն բարձրացրեց, երբ (Սե-
207 լևկոսը) արշավել էր Բաբելոնի վրա։ Այնուհետև, երբ թագավորը վերադարձավ ու վերցրեց Անտիոքը, (Ստրատոնիկեն) փախավ Սելևկիա, որպեսզի այնտեղից անմիջապես մեկնի, սակայն ինչ-որ երազի պատճառով նա ետ կանգնեց, բռնվեց և սպանվեց։

ԽՈՍՔ ԵՐԿՐՈՐԴ

269 Նույնիսկ սկյութացիները, որոնք զվարճանում են մարդկանց սպանելով և քիչ բանով են տարբերվում վայրի գազաններից, պարտք են համարում չհրաժարվել իրենց բարքերից, ուստի և Անաքարսիսին[30], որի իմաստությունը հիացրել էր հույներին, երբ սա վերադարձավ սկյութացիների մոտ, սպաննեցին, որովհետև նրանց թվում էր, թե նա ժամանել է հունական բարքերով համակված[31]։ Պարսկաստանում ևս կա-
270 րելի է գտնել շատերին, որոնք նույն պատճառով ոչնչացվել են։ Սակայն հայտնի է, որ Ապոլլոնիոսը[32] համակրում էր պարսկական օրենքները և հիացած էր պարսիկներով, որովհետև Հունաստանը ճաշակել էր նրանց քաջությունը և աստվածների նկատմամբ նրանց ունեցած համերաշխության արդյունքները. այս վերջինն այն ժամանակ, երբ նրանք հրկիզում էին սրբավայրերը, իսկ քաջությունը՝ երբ քիչ էր մնացել հույները դառնային նրանց ստրուկները[33]։ Ապոլլոնիոսը դարձավ պարսկական բոլոր սովորությունների ընդօրինակողը, անարգելով օտարների կանանց և ներքինացնելով նրանց երեխաներին[34]։

ՀՐԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

4 *Ինչպես ասացի, խոշորագույն ապստամբությունն սկըսվեց[35]. իսկ Հռոմում ներքին խռովություններ էին ծագել։ Ուստի հրեաների ապստամբ (կուսակցությունը), որը այդ խռովությունների ժամանակ արդեն աճել էր քանակապես և հարստացել, առիթից օգտվելով ապստամբեց։ Իբրև հետևանք Արևելքի խոշորագույն խռովության, ապստամբները հույս ունեին (ազատություն) նվաճելու, իսկ նրանց հակառակորդները վախենում էին այն կորցնելուց։ Քանի որ հրեա-*
5 *ները հուսով էին, որ Եփրատից այն կողմ բնակվող բոլոր իրենց ցեղակիցները կհարեն ապստամբությանը, մինչդեռ հռոմայեցիներին անհանգստացնում էին սահմանակից գալատները[36], իսկ կելտերը չէին խաղաղվում։ Ներոնի մահից հետո ամեն ինչ խռովությամբ էր համակված, և շատերը առիթը պատեհ էին համարում գահը (գրավելու) համար, իսկ պինվորականությունը ձգտում էր փոփոխությունների, ավար ձեռք բերելու նպատակով։*

6 *(Որոշեցի այդ մասին գրել) քանի որ հրեշավոր է տեսնել, թե այդպիսի դեպքերի նկատմամբ եղած ճշմարտությունը շեղվում է ճանապարհից, և որպեսզի պարթևներն ու բաբելոնացիները և հեռավոր Արաբիայում ապրողները և Եփրատից այն կողմ բնակվող մեր ցեղակից ադիաբենցիները իմ իսկ ջանասիրությամբ ճշմարտապես իմանան, թե որտեղից սկսվեց և ինչպիսի ընթացք և հետևանքներ ունեցավ պատերազմը, մինչդեռ այն հույներն ու հռոմայեցիները, որոնք չեն մասնակցել այդ արշավանքին, լսելով միայն կեղծիք ու հերյուրանքներ, անգիտակ են (իրական) դեպքերին։*

* * *

115 Իսկ Ալեքսանդրան[37] (Արիստոբուլոսի գլխավորությամբ) զորք ուղարկեց Դամասկոս այն պատճառով, որ Պտղոմեոսը[38] անդադար ճնշում էր քաղաքը, սակայն զորքը վերադարձավ
116 իր մոտ, առանց որևէ նշանակալից բան անելու: Մյուս կողմից հայոց թագավոր Տիգրանին, որը բանակել էր Պտղոմայիս քաղաքի առջև և պաշարել էր այնտեղ (փակված) Կլեոպատրային[39], դաշինքով ու նվերներով հեռացրեց: Իսկ Տիգրանը Լուկուլլոսի արշավանքների հետևանքով տանն սկսված անկարգությունների պատճառով վերացնում է պաշարումը և հասնում Հայաստան:

* * *

126 Պետրա քաղաքում Հյուրկանոսին[40] մատնելով Արետասի[41] ձեռքը, չքմեղանքի բազում խոսքերով ու շլացնող բազում նվերներով (Անտիպատրոսը) համոզում է (Արետաս) թագավորին զորք գումարել և հրամանատարությունը հանձնել իրեն: Այն կազմված էր հինգ բյուր հետևակից և հեծյալներից, որին չկարողացավ դիմադրել Արիստոբուլոսը, այլ առաջին իսկ ընդհարման ժամանակ պարտվելով, փախավ Երուսաղեմ, որտեղ և հարձակվողները նրան շուտով գերի կվերցնեին, եթե հռոմեայեցի զորավար Սկավրոսը ժամա-
127 նակին չհասներ ու չվերացներ պաշարումը: Սրան Հայաստանից ուղարկել էր Սիրիա Պոմպեոս Մեծը, որն այդ ժամանակ պատերազմում էր Տիգրանի դեմ: Հասնելով Դամասկոս, որը դեռ նոր էր նվաճվել Մետելլոսի և Լոլլիոսի կողմից, վերջիններից վերցրեց իշխանությունը և տեղեկանալով Հրեաստանում տիրող դրության մասին, շտապեց այնտեղ, խլելու այն, ինչ թվում էր նրան աստվածառաք պարգև[42]:

* * *

138 Իսկ (Պոմպեոսը) ուղղակի հետապնդում էր (Անտիպատրոսին), ժամանակ չտալով պատրաստություններ տեսնելու, և նրա թաքին առավել ուժեղացրեց Միհրդատի մահվան լուրը, որն ստացավ, երբ ինքը գտնվում էր Երիքովում[43], որտեղ առատորեն աճում են Հրեաստանի լավագույն արմավը և բալասանը:

* * *

175 Պարթևների դեմ արշավանքի պատրաստվող Գաբինիոսին[44] խանգարում է Պտղոմեոսը[45], որին վերադառնալով Եփրատից, տարավ Եգիպտոս և նորից վերականգնեց գահի վրա[46]: Այդ արշավանքի ժամանակ նա ամբողջապես օգտվեց Հյուրկանոսի և Անտիպատրոսի մատուցած ծառայություններից: Դրամ և զենք, ցորեն և օժանդակ զորք տրամադրելուց բացի, Անտիպատրոսը համոզեց Պելուսիոնի
176 սահմանամերձ մուտքը պահպանող հրեական կայազորին թույլ տալ Գաբինիոսին անցնելու: Մյուս կողմից, Գաբինիոսի մեկնելուց հետո Սիրիան ապստամբել էր. ուստի և Արիստոբուլոսի որդի Ալեքսանդրը նորից ոտքի հանեց հրեաներին և խոշոր բանակ հավաքելով, ձեռնամուխ եղավ երկրում
177 գտնվող բոլոր հռոմայեցիներին կոտորելու գործին: Այս բոլոր անկարգությունների պատճառով վախեցած Գաբինիոսը անհապաղ վերադարձավ Եգիպտոսից, ապստամբների մի մասի մոտ ուղարկելով Անտիպատրոսին, նրան համոզեց ետ կանգնել, սակայն Ալեքսանդրի հետ դեռևս մնաց երեք բյուր զորք, պատերազմի պատրաստ: Այսպիսով, դուրս եկան մարտի: Հրեաները դիմադրեցին Գաբինիոսին ու ճակատամարտ տալով Իտաբյուրիոն լեռան մոտ, մի բյուր մարդ կորցրին,
178 իսկ մնացածները փախուստի մատնվեցին: Եվ Գաբինիոսը Երուսաղեմ գալով, քաղաքի կառավարումը փոխեց Անտիպատրոսի խորհրդի համաձայն: Այնտեղից արշավելով, պատերազմում հաղթում է նաբաթեացիներին, և պարթև փախստականներ Միհրդատին ու Օրսանեսին[47] գաղտնաբար ազատելով, ետ ուղարկեց, մինչդեռ դինվորներին ասում էր, թե նրանց հաջողվել է փախչել:

179 Այդ ժամանակ նրան փոխարինեց Կրասոսը[48], որը գալով ստանձնում է Սիրիայի (կառավարումը): Սա պարթևների դեմ արշավանքի կարիքները հոգալու համար հափշտակեց Երուսաղեմի տաճարում մնացած ամբողջ ոսկին, վերցնելով նաև այն երկու հազար տաղանդը, որին ձեռք չէր տվել Պոմպեոսը: Այնուհետև նա, անցնելով Եփրատը, թե՛ ինքը կործանվեց և թե՛ իր բանակը[49]: Սակայն այդ մասին ժամանակը
180 չէ խոսելու: Կրասոսի (մահից) հետո պարթևներին, որոնք փորձեցին (Եփրատն) անցնելով ասպատակել Սիրիան, կասեցրեց Կասսիոսը[50], որն ապաստանել էր այդ պրովինցիա-

յում: Այդ երկիրն ապահովելուց հետո, նա շտապեց արշավել Հրեաստանի վրա և Տարիքեա (քաղաքը) գրավելով, մոտ ե-
րեք բյուր հրեաների գերեվարեց և սպանեց Պեյթոլաոսին,
որը փորձում էր Արիստոբուլոսի ապստամբներին վերահա-
181 վաքել: Այդ սպանության խորհրդատուն Անտիպատրոսն էր:
Սա ամուսնացել էր Արաբիայի մեծատոհմիկներից մեկի
աղջկա հետ, Կիպրոս անունով, որից ունեցավ չորս որդի:
Փասայելոսին, հետագայում թագավոր դարձած Հերովդեսին,
նաև Հովսեպոսին ու Փերորային և մի դուստր՝ Սալոմեին: Բո-
լոր վայրերի հզոր մարդկանց ծառայություններ մատուցելով
և նվիրատվությունների միջոցով սիրաշահելով, իսկ բոլորից
առավել Արաբիայի թագավորին, որին նա փեսայացել էր,
այդ իսկ պատճառով էլ Արիստոբուլոսի դեմ պատերազմ ձեռ-
նարկելիս, իր երեխաներին ուղարկել էր նրա մոտ պահպա-
182 նության: Իսկ Կասսիոսը, դաշնագրի միջոցով Ալեքսանդրին
հանգիստ մնալ պարտադրելուց հետո, վերադարձավ Եփրատ,
արգելելու համար պարթևների անցումը: Այս դեպքերի մա-
սին կխոսենք ուրիշ տեղում[51]:

* * *

248 Իսկ երկու տարի հետո պարթևների սատրապ Բար-
զափրանեսը, արքայորդի Պակորոսի հետ, նվաճեց Սիրիան:
Լյուսանիասը[52], որը մինչ այդ ժառանգել էր իր մահացած
հոր՝ Մեննայոսի որդի Պտղոմեոսի իշխանությունը, խոստա-
նալով սատրապին հազար տաղանդ և հինգ հարյուր կին,
համոզում է նրան գահը նորից հանձնել Անտիգոնոսին, իսկ
249 Հյուրկանոսին գահընկեց անել: Այս առաջարկը լսելով, Պա-
կորոսն ինքը առաջանում է ծովափով, իսկ Բարզափրանեսին
կարգադրում է միջնաշխարհով արշավել: Առափնյա բնակիչ-
ներից տյուրոսցիները Պակորոսին չընդունեցին, մինչդեռ
Պտղոմայիսի և Սիդոնի բնակիչներն ընդունեցին: Իսկ նա ի-
րեն անվանակից արքունի տակառապետին հեծելազորի մի
մասը հանձնելով, պատվիրեց արշավել Հրեաստան, ուսում-
նասիրել թշնամու դիրքերը և, ի պահանջել հարկին, օգնել
Անտիգոնոսին[53]:

* * *

253 Երբ վրա հասավ այն տոնը, որը կոչվում է պենտեկոս-
տե[54], տաճարի[55] ամբողջ շրջակայքը, ինչպես նաև ամբողջ

քաղաքը լցվել էր զորայից[56] եկած բազմությամբ, որի մեծ մասը սպառազինված էր: Փասայելոսը պահպանում էր պարիսպները, իսկ Հերովդեսը փոքրաթիվ զորքով՝ ապարանքը. և հարձակվելով քաղաքի արվարձանում գտնվող թշնամու անկազմակերպ ուժերի վրա, շատերին կոտորում է, մնացած բոլորին փախուստի մատնում, ոմանց փակում քաղաքում, ոմանց տաճարում, իսկ մյուսներին՝ արտաքաղաքային ճամ-
254 բարում: Դրանից հետո Անտիգոնոսը խնդրում է որպես (խաղաղության) միջնորդ ներս թողնել Պակորոսին[57]: Իսկ Փասայելոսը համոզվելով, հյուրընկալություն է կազմակերպում և քաղաքից ներս է ընդունում պարթևին հինգ հարյուր հեծյալներով, որն իբր ժամանել էր խռովությունը զսպելու նպատակով, սակայն իրականում Անտիգոնոսին օգնելու համար:
255 Որովհետև նա խորամանկորեն համոզեց Փասայելոսին, որպեսզի սա ուղևորվի Բարզափրանեսի մոտ, թշնամությունները դադարեցնելու համար բանակցություններ վարելու, թեև Հերովդեսը դիմադրում էր և խորհուրդ տալիս ոչնչացնել խարդախին և իրեն չմատնել խաբեությունների, քանի որ բարբարոսները բնականից անվստահելի են, սակայն նա մեկնեց, իր հետ վերցնելով Հյուրկանոսին: Եվ Պակորոսը, որպեսզի պակաս կասկածեն, Հերովդեսի մոտ թողեց այսպես կոչված ազատագունդ հեծյալներից[58] ոմանց, իսկ մյուսներին Փասայելոսի հետ դրեց որպես ուղեկից:
256 Ժամանելով Գալիլեա[59], նրանք տեսան, որ բնակիչներն ապստամբել էին ու սպառազինվել: Այնտեղ հանդիպեցին խիստ խորամանկ սատրապ (Բարզափրանեսին), որը սիրալիրության քողի տակ թաքցնում էր իր նենգությունը: Նախա-
257 պես նրանց նվերներ տալով, ծուղակ է լարում մեկնելիս նրանց ձերբակալելու համար: Մինչդեռ նրանք դավադրության մասին իմացան, երբ հասան առափնյա մի գյուղ, որը կոչվում էր Եկդիպոն, որովհետև այնտեղ լսեցին հազար տաղանդի խոստումը և այն, թե Անտիգոնոսը իրենց մոտ գտնվող կանանց մեծ մասին հինգ հարյուրի թվում խոստացել է պար-
258 գևել պարթևներին, և թե բարբարոսների կողմից գիշերները նրանք միշտ պաշարվում էին, և թե նրանք վաղուց կձերբակալվեին, եթե (դավադիրները) չսպասեին նախապես Երուսաղեմում գտնվող Հերովդեսին ձեռք գցելու, որպեսզի վերջինս նրանց ձերբակալության մասին լսելով, ապահովության

միջոցներ չձեռնարկի։ Այս բոլորն արդեն սոսկ խոսքեր չէին, քանի որ իրենք արդեն նկատում էին հեռվում նշանակված պահակներին։

259 Այսուհանդերձ, Փասայելոսը, թեպետև նրան համառորեն փախշել էր համոզում ոմն Օփելլիոս, որը դավադրության ամբողջ ծրագիրն իմացել էր այդ ժամանակի մեծատուն սիրիացի Սարամալլայից, որոշեց չլքել Հյուրկանոսին, այլ ընդհակառակը, գալով սատրապին դեմ հանդիման, նախատում էր նրան (կազմակերպված) դավադրության համար և հատկապես այն պատճառով, որ նա այդ ամենը արել էր հանուն փողի։ Ուստի խոստացավ իր փրկության համար ավելին տալ,
260 քան Անտիգոնոսը կտար իր թագավորության համար։ Այս բոլորից հետո պարթևը խորամանկորեն արդարանալով և երդումներով կասկածներն իր վրայից հեռացնելով, մեկնեց (արքայորդի) Պակորոսի մոտ։ Անմիջապես հետո, այնտեղ մնացած պարթևները, ինչպես իրենց հրամայված էր աներ, ձերբակալեցին Փասայելոսին և Հյուրկանոսին, որոնք անիծում էին նրանց, ցուցաբերած երդմնազանցության և անհավատարմության համար։

261 Նույն ժամանակ (այդ նպատակով) ուղարկված տակառապետը[60] դավեր էր նյութում Հերովդեսին ևս ձերբակալելու համար, իր ստացած հրահանգների համաձայն, խաբեությամբ նրան պարիսպներից դուրս բերելու։ Իսկ սա սկզբից ևեթ կասկածելով բարբարոսներին և հիմա էլ իմանալով, որ դավադրությունը բացահայտող իրեն ուղղված նամակներն ընկել են թշնամու ձեռքը, չէր ցանկանում դուրս գալ (պարիսպներից), թեև Պակորոսը ճարտար խոսքերով հավաստիացնում էր, թե նա պետք է ընդառաջ գա սուրհանդակներին, քանի որ նամակները չեն ընկել թշնամու ձեռքը և դրանք ոչ թե դավադրություն են բովանդակում, այլ Փասայելոսի ամբողջ
262 գործունեությունը։ Սակայն (Հերովդեսն) արդեն ուրիշներից լսել էր իր եղբոր ձերբակալման մասին, և նրա մոտ է գալիս Հյուրկանոսի դուստր Մարիամնեն, ամենախելամիտը կանանց մեջ, աղաչելով չգնալ ընդառաջ և իր անձը չվստահել արդեն բացահայտ (թշնամությամբ) գործող բարբարոսների ձեռքը։

263 Ու քանի դեռ Պակորոսն ու նրա մերձավորները խորհուրդ էին անում, թե ինչպե՞ս գաղտնաբար կազմակերպեն դավադրությունը, քանի որ անհնար էր այդպիսի ուժեղ մար-

դուն բացահայտ (պայքարում) գերազանցել, Հերովդեսն իր մերձավորագույն բարեկամների հետ գիշերով, թշնամուց
264 գաղտնի, հեռացավ Իդումեա[61]: Պարթևներն իմանալով այդ, սկսեցին հետապնդել նրան: Իսկ նա իր մորը և քույրերին և իր խոսեցյալ աղջկան նրա մոր և կրտսեր եղբոր հետ հրամայեց շարունակել իրենց ճանապարհը, մինչդեռ ինքը իր զինակիցների հետ կասեցնում էր բարբարոսներին: Եվ յուրաքանչյուր ընդհարման ժամանակ շատերին սպանելով, հասավ Մասադա բերդը:

* * *

268 Իսկ պարթևները Երուսաղեմում կողոպուտի ետևից ընկնելով, ներխուժում էին փախստականների տները և արքունի պալատը, ձեռք չտալով միայն Հյուրկանոսի դրամին, որը երեք հարյուր տաղանդից ավելի չէր: Մյուս վայրերում էլ նրանք իրենց ակնկալածից պակաս գտան: Որովհետև Հերովդեսը վաղուց ի վեր կասկածելով բարբարոսներին անհավատարմության մեջ, իր գանձերից ամենաշքեղները նախապես փոխադրել էր Իդումեա. այդպես էին վարվել նաև իր
269 մերձավորները: Կողոպուտից հետո պարթևների ամբարտավանությունն այն աստիճանի հասավ, որ նրանք ամբողջ երկրում տարածեցին չհայտարարված պատերազմի արհավիրքները, գերեվարեցին Մարիսա քաղաքը, և Անտիգոնոսին թագավոր հայտարարելը բավական չհամարելով, միաժամանակ պարտադրեցին Փասայելոսին և Հյուրկանոսին Անտիգո-
270 նոսի ձեռքը հանձնել շղթայակապ: Ու երբ գանահարված Հյուրկանոսն ընկավ Անտիգոնոսի ոտքերի առաջ, սա ատամներով պոկեց նրա ականջները, այն նպատակով, որ հետագայում եթե հանգամանքները փոխվեն իսկ (և նա ազատ արձակվի), չկարողանա զբաղեցնել քահանայապետության (պաշտոնը), որովհետև, (ըստ օրենքի) ողջանդամները միայն կարող են քահանայապետ լինել:

271 Իսկ համարձակ Փասայելոսը (թագավորի) չարամտությունը կռահելով, զլուխը խփում է ժայռին, քանի որ զրկված էր ձեռքերից և դաշույնից: Եվ նա իրեն դրսևորելով որպես Հերովդեսի հարազատ եղբայր, իսկ Հյուրկանոսին (ներկայացնելով) իբրև ամենից անտոհմիկ, մեռնում է քաջաբար, իր կործանումը դարձնելով իր իսկ կյանքի արարքներին արժա-
272 նի: Մեկ այլ զրույց ևս կա, որ իբր (Փասայելոսը) բուժվում

էր իր այդ վերքից, իսկ բժիշկը, որին ուղարկել էր Անտիգոնոսը իբրև թե նրան բուժելու, վերքի վրա լցրել էր թունավոր
273 դեղեր և սպանել նրան: Եվ նա մահանում է այդպես: Իսկ պարթևները, թեկուզ և հուսախաբվել էին իրենց համար առավել ցանկալի կանանց որպես պարգև ստանալու հարցում, Երուսաղեմում Անտիգոնոսին նստեցրին գահին, մինչդեռ Հյուրկանոսին շղթայակապ գերի տարան Պարթյուենե (երկիրը)[62]:

* * *

288 Մինչ այդ հռոմայեցի զորավար Բենտիդիոսը, որն ուղարկվել էր պարթևներին Սիրիայից դուրս վտարելու համար, նրանց հետ միասին ժամանեց Հրեաստան, խոսքով Հովսեպոսին ու նրա մերձավորներին օգնելու, մինչդեռ գործնականում Անտիգոնոսից արծաթ պոկելու (նպատակով): Ուստի
289 Երուսաղեմին շատ մոտիկ բանակելուց հետո, երբ արդեն հագեցավ փողից, ինքը ետ վերադարձավ իր զորքերի մեծ մասով, իսկ Սիլոնին զորքի մի մասի հետ թողեց այնտեղ, քանի որ ամբողջ զորքը (իր հետ) տանելու դեպքում կբացահայտվեր նրա շահադիտական հանցանքը: Իսկ Անտիգոնոսը դարձյալ հույս դնելով պարթևների օգնության վրա, միաժամանակ Սիլոնին ծառայում էր առաջվա նման (ինչպես Բենտիդիոսին), որպեսզի սա ոչնչով իրեն չխանգարի նախքան իր ակնկալությունների (իրականացումը)[63]:

* * *

320 Այս դեպքերի վրա Հերովդեսը զայրանալով, շտապեց հարձակվել Մաքայրասի վրա որպես թշնամու, բայց սանձելով իր զայրույթը, ուղևորվեց Անտոնիոսի մոտ[64], որպեսզի մեղադրի նրա առաջ (Մաքայրասին) կատարած անօրենությունների համար: Իսկ Մաքայրասը մտորելով իր հանցանքների մասին, հետևեց (Հերովդես) թագավորին և բա-
321 զում խնդրանքով հաշտվեց նրա հետ: Հերովդեսն, այսուհանդերձ, չընդհատեց իր արշավը դեպի Անտոնիոսը: Լսած լինելով, որ սա մեծ զորքով հարձակվել է Սամոսատայի վրա[65], որը ամրացած քաղաք է Եփրատի մոտ, արագացրեց իր ընթացքը, ժամանակը պատեհ համարելով իր քաջությունը ցուցադրելու, առավել ևս Անտոնիոսին հաճոյանալու հա-
322 մար: Նրա ժամանումից հետո վերջացավ պաշարումը: Բար-

բարոսներից[66] շատերին նա սպանեց և մեծ քանակությամբ ավար ապահովեց, որով և Անտոնիոսը, որը նախապես ևս նրա առաքինությամբ հիանում էր, այժմ ավելի է հարգում նրան և հուսադրում գահակալման մասին, մինչդեռ Անտիոքոս թագավորը[67] ստիպված եղավ հանձնել Սամոսատը[68]։

* * *

327 Սամոսատը նվաճելուց հետո Անտոնիոսը Սոսսիոսին Սիրիայի կառավարիչ նշանակելով, կարգադրեց նրան օգնել Հերովդեսին Անտիգոնոսի դեմ, իսկ ինքը մեկնեց գնաց Եգիպտոս։ Սոսսիոսը առջևից երկու լեգեոն ուղարկեց Հրեաստան, Հերովդեսին օգնելու, իսկ ինքը իր մնացած ուժերով ընդ-
հուպ հետևում էր[69]։

* * *

363 Ոչ շատ ժամանակ անց Անտոնիոսը վերադարձավ Պարթիայից։ Կլեոպատրայի համար որպես նվեր բերելով Տիգրանի որդի Արտաբազեսին, քանի որ դրամների և (պատերազմական) ամբողջ ավարի հետ միասին պարթևին նրան պարգևեց[70]։

* * *

445 (Իսկ Հերովդեսի) որդիները ժառանգում են իրենց մոր զայրույթը և տեղեկանալով կատարված անօրենությանը, իրենց հորը դիտում էին որպես թշնամի թե՛ նախկինում, երբ Հռոմում էին դաստիարակվում, առավել ևս հիմա, երբ վերադարձան Հրեաստան։ Նրանց թշնամանքը աճում էր իրենց տա-
446 րիքի հետ։ Ու քանի որ հասել էր նրանց ամուսնանալու ժամանակը, մեկը՝ Արիստոբուլոսը, ամուսնացավ իրենց մորը մեղադրող հորաքույր Սալոմեի դստեր, մյուսը՝ Ալեքսանդրը,
Կապպադովկիայի թագավոր Արքելաոսի[71] դստեր հետ. ուստի
447 նրանց ատելությանը ավելացավ նաև համարձակ խոսելը։ Նրանց հանդգնությունը պատեհ առիթ ընձեռեց զրպարտիչներին, և արդեն ոմանք ավելի բացահայտ էին թագավորի առաջ ակնարկում, թե երկու որդիները դավադրություն էին նյութում նրա դեմ, և թե Արքելաոսի փեսան, ապավինելով իր աներոջը, փախուստի էր պատրաստվում, որպեսզի հորը մեղադրի Կեսարի առաջ։

* * *

552 Քանզի Ալեքսանդրը Գլափյուրայից[72] ուներ երկու որդի՝ Տիգրան[73] և Ալեքսանդր, իսկ Սալոմեի դուստր Բեռնիկեից

Արիստոբուլոսի ունեցած որդիներն էին՝ Հերովդես և Ագրիպպաս և Արիստոբուլոս, իսկ դստերը՝ Հերովդիաս և Մարիամմե։ Ալեքսանդրին սպանելուց հետո Հերովդեսը Գլափյուրային իր օժիտի հետ միասին ետ ուղարկեց Կապպադովկիա, իսկ Արիստոբուլոսի այրուն ամուսնացրեց իր մորեղբայր Անտիպատրոսի հետ։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

144 Կարծում եմ, հիշատակության արժանի է նաև (Ալեքսանդրի) կնոջ՝ Գլափյուրայի երազը, որը Կապպադովկիայի թագավոր Արքելաոսի դուստրն էր և առաջին կինը Ալեքսանդրի. սա Արքելաոսի եղբայրն էր, որի մասին խոսել ենք, որդին Հերովդես թագավորի, որի կողմից սպանվեց, ինչպես արդեն ասել ենք։

* * *

221 Այս բոլորից հետո մահանում է նաև Քաղկիսի թագավոր Հերովդեսը իր զարմուհի Բեռնիկեի հետ ունեցած ամուսնությունից թողնելով երկու որդի՝ Բեռնիկիանոսին և Հյուրկանոսին, իսկ նախորդ կնոջից, Մարիամմեից՝ Արիստոբուլոսին։ Նրա մի ուրիշ եղբայրը (դարձյալ) Արիստոբուլոս (անունով) մահանում է որպես մասնավոր մարդ[74], թողնելով
222 Յոտապե անունով դուստր։ Ուրեմն սրանք էին, ինչպես նախկինում ասել եմ, Հերովդեսի որդի Արիստոբուլոսի զավակները. իսկ Արիստոբուլոսը և Ալեքսանդրը Հերովդեսի որդիներն էին՝ ծնված Մարիամմեից, որոնց սպանեց իրենց հայրը։ Եվ Ալեքսանդրի սերունդը թագավորեց Մեծ Հայքում[75]։

* * *

252 Այսպիսով, Փոքր Հայքի թագավորությունը (Ներոնը) տալիս է Հերովդեսի որդի Արիստոբուլոսին, իսկ Ագրիպպասի[76] թագավորությանը ավելացնում է ևս չորս քաղաք՝ Արբելան, Յուլիասը Պերեայում[77], Տարիքեան և Գալիլեայի Տիբերիասը իրենց շրջաններով, իսկ Փելիքսին նշանակում է մնացյալ Հրեաստանի պրոկուրատոր[78]։

* * *

363 Որովհետև հռոմայեցիներին չէր բավարարում Եփրատի սահմանն արևելքում, Իստրոսը[79] հյուսիսում, հարավում մինչև

անբնակ վայրերը հետախուզված Լիբիան և արևմուտքում Գադեյրան[80], այլ նրանք օվկիանոսից այն կողմ փնտրեցին մի այլ աշխարհ ևս և իրենց գենքը տարան մինչև նախապես պատմությանն անհայտ բրիտանացիները։ Ուրեմն ի՞նչ. դուք
364 գալլերից ավելի հարո՞ւստ եք, գերմաններից ավելի հզո՞ր. հելլեններից ավելի խելամի՞տ, ավելի մեծաթի՞վ, քան աշխարհի բոլոր մյուս ժողովուրդները։ Ի՞նչն է ձեզ հուսադրել
365 հռոմայեցիների դեմ ապստամբելու։ Ստրկությունը ծանր է կասեք դուք։ Ինչքա՞ն առավել (այն ծանր է) հելլենների համար, որոնք արևի տակ (ապրող) բոլոր մարդկանցից վեհագույն են իրենց աղնվականությամբ և բնակեցրել են այսքան ընդարձակ երկիր, ենթարկվում են հռոմայեցի (կառավարչի) վեց ձողիկներին[81]։ Նույնքան (ձողիկների ենթարկվում են) նաև մակեդոնացիները, որոնք, առավել քան դուք, իրավունք
366 ունեն ազատությունը վիճարկելու։ Ապա ի՞նչ ասել Ասիայի հինգ հարյուր պոլիսների մասին։ Մի՞թե նրանք, կայազոր չունենալով, չեն խոնարհվում մի միակ հեգեմոնի և հյուպատոսական ձողիկների առաջ։ Ի՞նչ պիտի ասել հենիոքների և կոլխերի և Տավրիկյան ցեղերի մասին, Բոսփորում և Պոնտոսի շրջակայքում և Մեյոտիսի լճի[82] մոտ ապրող ժողո-
367 վուրդների մասին։ Նրանք, որ նախկինում ոչ մի տիրակալի չէին ճանաչում նույնիսկ իրենց ցեղակիցներից, այժմ ենթարկվում են երեք հազար հոպլիտների և քառասուն երկար նավեր խաղաղության մեջ են պահում նախկինում աննավար-
368 կելի և վայրի ծովը։ Իսկ ազատության համար ինչպիսի՞ պահանջներ կարող են ներկայացնել Բյութանիան ու Կապադովկիան և պամփիլիական ազգը և լիկիացիներն ու կիլիկիացիները, որոնք (բոլորն էլ) առանց զենքի դիմելու, այժմ հարկ են վճարում։

* * *

379 Բայց ի՞նչ հարկ ավելին ասելու, երբ նույնիսկ պարթևները, բոլորից առավել ռազմունակ այդ ցեղը, այսքան շատ ազգերի տիրելով և այսքան մեծ զորք ունենալով հանդերձ, պատանդներ են ուղարկում հռոմայեցիների մոտ[83], և Արևելքի աղնվականությանը կարելի է հանդիպել Իտալիայում, խաղաղություն (պահպանելու) պատրվակով ծառայելիս։

* * *

388 Հետևաբար, անբնակ տարածություններից ո՞ւմ կարող եք դուք դաշնակից վերցնել այս պատերազմում։ Չէ՞ որ բնակեցված երկրի[84] բոլոր մարդիկ հռոմայեցիներ են[85]։ Գուցե ձեզանից որևէ մեկը իր հույսերը տարածում է Եփրատից այն կողմ և պաշտպանություն է ակնկալում Ադիաբենեի մեր ցեղակիցներից[86]։ Բայց նրանք ևս որևէ անմիտ առիթով իրենց գլխին այդպիսի պատերազմ չեն փաթաթի, իսկ եթե նրանք ցանկանան իսկ, պարթև (թագավորը այդ) թույլ չի տա նրանց։ Քանի որ նա մտածում է հռոմայեցիների հանդեպ ընդունած պայմանները պահպանելու, և եթե նրա հպատակներից որևէ մեկը հռոմայեցիների դեմ արշավի, ապա նա այդ բանը կդիտի որպես դաշինքի խախտում։

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

460 Այդ ընթացքում ժամանում է Անտիոքոս Եպիփանեսը[87], բերելով իր հետ բացի մեծաթիվ այլ զորքից, նաև իր թիկնապահ գունդը, որը կոչվում էր «մակեդոնացիներ», բոլորը տարեկից, բարձրահասակ, ավելի քան երիտասարդ, սպառազինված ու մարզված մակեդոնական եղանակով, որի համար էլ ստացել էին իրենց այդ անվանումը, նրանց մեծ մասը այդ
461 ցեղի հետ առնչություն չունենալով հանդերձ։ Քանի որ Հռոմին հպատակվող բոլոր թագավորներից Կոմմագենացին[88] ամենից առավել բարեբախտության հասավ, նախքան անհաջողություն ճաշակելը։ Ու սա ևս ծերության ժամանակ հայտարարեց, թե ոչ ոքի մասին մահից առաջ չի կարելի ասել,
462 թե բախտավոր է[89]։ Այսուհանդերձ նա դեռևս բարգավաճում էր, երբ որդին ժամանելով, զարմացած ասում էր, թե ինչու հռոմայեցիները վարանում են գրոհել պարիսպները. իսկ ինքը լինելով բնականից անվեհեր ռազմիկ, միաժամանակ այնքան հաղթանդամ էր, որ նրա խիզախումը հազվադեպ էր
463 ձախողվում։ Երբ Տիտոսը[90] ժպտալով «Կռիվն ընդհանուր է» ասաց, Անտիոքոսն առանց հապաղելու իր մակեդոնացիներին հետևեց դեպի պարիսպը։ Մինչդեռ ինքը իր ուժով և
464 համբույրամբ կարողանում էր պաշտպանվել հրեաների սլաքներից, նետահարելով նրանց, իր պատանի (թիկնապահները), բացի փոքր մի մասից, ջախջախվեցին, քանի որ տված խոս-

տումից ամաչելով, նրանք կռվում էին անվեհեր։ Եվ, ի վերջո,
465 մեծ մասամբ վիրավորվելով, նահանջեցին, մտածելով, որ նույնիսկ իսկական մակեդոնացիները, եթե հաղթեին, Ալեքսանդրի բախտը կունենային։

ԳԻՐՔ ՅՈԹԵՐՈՐԴ

17 Իսկ կայսրը պաշտոնատարների հետ երեք օր խրախճանք անելուց հետո, մնացած զորքերին արձակեց գնալու որտեղ յուրաքանչյուրը ցանկանում էր, իսկ տասներորդ գունդը թողեց որպես Երուսաղեմի կայազոր, այլևս այն չուղարկելով Եփրատի (գորակայանը), որտեղ նախապես գտնը-
18 վում էր գունդը։ Հիշելով նաև տասներկուերորդ գնդի մասին, որը Կտեսիոսի հրամանատարության տակ հանձնվել էր հրեաներին, այն ամբողջովին դուրս բերեց Սիրիայից, որովհետև նրա զորակայանը նախապես Հռափոանեա (վայրում) էր[91], և ուղարկեց Մելիտենե կոչված (շրջանը)[92], Եփրատի մոտ, Հայաստանի և Կապպադովկիայի սահմանի վրա։

* * *

41 Եվ պատահեց, որ այդ ժամանակները Անտիոքում[93] մնացած հրեաները (մեղադրվեցին) չարագործության մեջ և գտնվում էին բնաջնջման սպառնալիքի տակ, (որովհետև) անտիոքացիների քաղաքային համայնքը խիստ վրդովված էր նրանց դեմ և՛ ներկայիս նրանց վրա բարդված զրպարտություններից, և՛ ոչ հեռավոր անցյալում կատարված մի շարք
42 դեպքերի կապակցությամբ, որոնց մասին անհրաժեշտ է համառոտակի պատմել, որպեսզի հետագա դեպքերի շարադրանքը դառնա հեշտ հասկանալի։

43 Հրեական ցեղը շատ է ցրված օյկումենեով[94] մեկ տեղական բնակչության շրջանում, բոլորից առավել խառնված են Սիրիայում, (երկու երկրների) հարևանության պատճառով, բայց նրանք հատկապես (կենտրոնացել են) Անտիոքում՝ մասամբ քաղաքի մեծության, բայց առավել ևս այն պատճառով, որ Անտիոքոսին[95] հաջորդած թագավորները նրանց շնոր-
44 հեցին այնտեղ ապահով ապրելու (իրավունքը)։ Որովհետև դեռևս Եպիփանես կոչեցյալ Անտիոքոսը[96] Երուսաղեմը գրավելով, տաճարը կողոպտեց, իսկ նրանից հետո թագավորությունը ստացողները Անտիոքի հրեաներին վերադարձրին տաճարին արված պղնձե բոլոր ընծաները, որպեսզի դրանք, զե-

տեղեն իրենց ժողովարանում, և նրանց շնորհեցին քաղաքային
45 գործերին մասնակցելու հելլեններին հավասար իրավունք։
Քանի որ հետագայի թագավորները ևս նույն եղանակով շնորհում էին (արտոնություններ)[97], հրեաների գաղութը քանակով աճեց և սրբատեղին դարձավ շքեղ թե՛ կառուցումներով և թե՛ նվիրատվություններով, մյուս կողմից՝ մեծ թվով հելլեններ հարում էին նրանց կրոնին և դրանով իսկ որոշ չափով
46 դառնում էին համայնակից։ Ճիշտ այն ժամանակ, երբ պատերազմը[98] ծագեց և Վեսպասիանոսը դեռ նոր էր ժամանել Սիրիա, և երբ բոլորի ատելությունը հրեաների նկատմամբ
47 ուժեղանում էր, նրանց միջից ոմն Անտիոքոս, որը շատ էր հարգված իր հոր պատճառով—սա Անտիոքի հրեական համայնքի ավագն էր[99]—երբ անտիոքացիների դեմոսը ժողով էր գումարում թատրոնում, ներս մտնելով մատնացույց է անում իր իսկ հորը և մյուս հրեաներին, ամբաստանելով վերջիններիս այն բանի մեջ, թե իբր նպատակ են դրել գիշեր ժամանակ ամբողջ քաղաքը հրկիզել. միաժամանակ նա անտիոքացիներին է հանձնում մի քանի օտար հրեաների, որպես
48 դավադրության մասնակիցների։ Իսկ դեմոսն այս բոլորը լսելուց հետո, չկարողանալով իր զայրույթը զսպել, պահանջեց հանձնվածների համար իսկույն կրակ բերել և նույնհետայն բոլորը կրակի մատնվեցին հենց թատրոնում։ Այնուհետև ամ-
49 բոխը հարձակվեց հրեաների վրա, կարծելով, թե նրանց անմիջապես պատժելով կփրկեն իրենց հայրենիքը։ Իսկ Անտիո-
50 քոսը ավելի էր բորբոքում նրանց զայրույթը, և մտածելով ապացույց տալ իր հավատափոխության, ինչպես նաև այն մասին, որ ինքը խորշում է հրեական բարքերից, տաճարում հելլենների օրենքով զոհաբերություններ կատարեց։ Միաժա-
51 մանակ հորդորում էր, որպեսզի մնացած (հրեաներին) ևս ստիպեն նույնն անելու, քանի որ դավադիրներն այդ բանն անել չցանկանալու դեպքում, իրենք իրենց կմերկացնեն։ Ու երբ անտիոքացիները այդ փորձությանը ձեռնարկեցին, ապա
52 քչերը հնազանդվեցին, իսկ (հնազանդվել) չկամեցողները ոչնչացվեցին։ Այնուհետև Անտիոքոսը հռոմայեցի կառավարչից (օգնական) զինվորներ ստանալով, դաժանորեն բռնացավ իր համաքաղաքացիների վրա, արգելելով նրանց յոթերորդ օրը հանգստանալ[100], և ստիպելով նրանց այդ օրն ամեն
53 գործ անել, ինչպես և մյուս օրերին։ Նա հարկադրանքն այն-

քան ուժեղացրեց, որ շաբաթվա հանգստյան օրը վերացավ ոչ միայն Անտիոքում, այլև, այնտեղից սկսելով, կարճ ժամանակի ընթացքում այդ երևույթը տարածվեց մյուս քաղաքներում ևս:

54 Երբ այդպիսի դժբախտություններ էին պատահել Անտիոքում ապրող հրեաներին, նույն այդ ժամանակ նրանց վրա ընկավ մի երկրորդ աղետ, որի մասին պատմելու համար
55 մենք արեցինք վերոբերյալ նկարագրությունը: Քանզի պատահաբար հրո ճարակ դարձան քառակուսի հրապարակը և մատենատունը, և դիվանատունը, և ապարանքը[101], և երբ մեծ դժվարությամբ հաջողվեց ամբողջ քաղաքով մեկ տարածվող
56 հրդեհը հանգցնել, Անտիոքոսը այդ արարքի համար մեղադրում էր հրեաներին: Իսկ անտիոքացիները, թեև նախկինում նրանց նկատմամբ ատելություն չունեին, կատարված դեպքի հետևանքով առաջացած խուճապին ենթարկվելով, նախընթաց եղելություններից հետո, արդեն հիմա առավել ևս հակված էին հավատալու Անտիոքոսի պատմածներին և պատկերելու, որ մենակ իրենք չեն եղել, որ իրենց իսկ աչքերով տեսել են հրեաներին քաղաքը հրդեհելիս: Ուստի և մոլեգնելով կատաղությամբ, բոլորը հարձակվեցին մեղադրվողների
58 վրա, այնպես, որ իբրև դեսպան ուղարկված Գնայոս Կոլլեգասին հազիվ հաջողվեց նրանց թափը սանձահարել, թույլտվություն պահանջելով դեպքերի մասին կայսեր հաղորդելու.
59 դա այն պատճառով, որ Վեսպասիանոսի կողմից արդեն որպես կառավարիչ Սիրիա ուղարկված Կեսենիոս Պետոսը[102]
60 դեռևս տեղ չէր ժամանել: Այնուհետև ուշադիր հետաքննություն կատարելով, Կոլլեգասը բացահայտեց ճշմարտությունը, և (պարզվեց, որ) Անտիոքոսի կողմից մեղադրված հրեաներից
61 ոչ մեկը չէր մասնակցել արարքին, իսկ ամբողջ կատարվածը մի քանի չարագործ մարդկանց գործն է եղել, որոնք ենթադրում էին, որ եթե հրդեհեին հրապարակը և հանրային մատյանները[103], ապա կազատվեին իրենց բոլոր պարտքերից: Իսկ
62 հրեաները, որոնց գլխին կախված էին նման արհավիրքներ, առավել ևս տագնապով ու սարսափով սպասում էին դեպքերի հետագա ընթացքին:

* * *

100 Իսկ Անտիոքի ժողովուրդը[104] տեղեկանալով, որ Տիտոսը մոտենում է, ուրախությունից չէր կարողանում մնալ պա-

101 րիսպներից ներս, այլ շտապում էր նրան դիմավորելու։ Իվ
նրանք ընդառաջ եկան ավելի քան երեսուն ասպարեզ[105], ոչ
միայն տղամարդիկ, այլև կանանց բազմությունը երեխաների
102 հետ, որոնք դուրս էին հորդում քաղաքից։ Ու երբ տեսան նրան
մոտենալիս, ճանապարհի երկու կողմը կանգնելով, իրենց աջ
(ձեռքը) պարզում էին նրա անունը կոչելով և (արտասանելով)
ամեն տեսակ փառաբանություններ, նրա հետ միասին վե-
103 րադարձան։ Բայց նրանց բոլոր բացականչություններին ու-
ղեկցում էր հրեաներին վտարելու խնդրանքը։ Իսկ Տիտոսը
104 ոչինչ չարտահայտելով, լուռ լսում էր բոլոր ասվածները։ Սա-
կայն հրեաների սարսափը մեծ էր, քանի որ հայտնի չէր, թե
105 նա ի՞նչ է մտածում և ի՞նչ է ձեռնարկելու։ Իսկ Տիտոսը Անտիո-
քում ևս չմնաց, այլ անմիջապես շարունակեց իր երթը դե-
պի Եփրատի վրա գտնվող Զևգման[106], որտեղ և պարթևների թա-
գավոր Վոլոգեսոսի[107] կողմից (դեսպանություն) էր ժամանել,
հրեաների դեմ նրա տարած հաղթանակի առթիվ ոսկե պսակ բե-
106 րելով։ Այն ընդունելուց և արքայական (դեսպանության պատ-
վին) կոչունք տալուց հետո, այնտեղից վերադառնում է Ան-
107 տիոք։ Անտիոքի (քաղաքային) խորհուրդը և համայնքը ջեր-
մագին խնդրած լինելով նրան այցելել իրենց թատրոնը, որտեղ
ամբողջ բազմությունը հավաքվել էր նրան դիմավորելու, նա
108 մարդասիրաբար ընդառաջեց (այդ խնդրանքին)։ Ու երբ
նրանք կրկին անգամ համառորեն պնդում էին և շարունակա-
բար խնդրում հրեաներին հեռացնել քաղաքից, նա խոհեմա-
109 բար պատասխան տվեց, ասելով. «Բայց հենց նրանց հայ-
րենիքը, որտեղ իբրև հրեաների նրանց պետք էր վտարել, ա-
վերված է, և ուրիշ ոչ մի երկիր չի ընդունի նրանց»։ Երբ
110 իրենց առաջին խնդրանքը մերժվեց, անտիոքացիները դի-
մեցին երկրորդին, խնդրելով, որպեսզի նա վերացնի պղնձե
տախտակները, որոնց վրա արձանագրված էին հրեաներին
111 (շնորհված) իրավունքները։ Այս հարցում ևս Տիտոսը նրանց
չպաշտպանեց, այլ Անտիոքի հրեաների իրավական վիճակը
երկրում թողնելով նույնը, ինչպես նախկինում էր, ինքը մեկ-
նեց Եգիպտոս։

* * *

219 Երբ արդեն Վեսպասիանոսի իշխանության գլուխ գտնվե-
լու չորրորդ տարին էր, պատահեց, որ Կոմմագենեի թագավոր

Անտիոքոսը իր ամբողջ ընտանիքով հանդերձ մեծ դժբախտությունների մեջ ընկավ հետևյալ պայմաններում։ Կեսենիոս
220 Պետոսը, որն այդ ժամանակ Սիրիայի կառավարիչն էր, արդյոք ճշմարտություն էր հաղորդում, թե՞ Անտիոքոսի նկատմամբ թշնամանք ուներ—երբեք պարզորեն չի հաստատվել—
221 նամակներ է ուղարկում կայսրին՝ հայտնելով, որ Անտիոքոսը իր եպիփանես որդու հետ որոշել են ապստամբել հռոմայեցիների դեմ և պարթևների թագավորի հետ դաշինք հաստա-
222 տել։ Հետևաբար պետք է նրանց կանխել, որպեսզի չկարողանան դժվարություններ հարուցել և հռոմեական ամբողջ տե-
223 րությունը պատերազմով խռովել։ Իսկ կայսրը, երբ տեղեկությունը հասավ իրեն, չէր կարող այն անտեսել, քանի որ այս թագավորների փոխադարձ մերձեցումը բանը դարձնում էր ավելի լուրջ ուշադրության արժանի։ Որովհետև Սամոսա-
224 տը, Կոմմագենեի խոշորագույն քաղաքը, գտնվում էր Եփրատի վրա, այնպես որ պարթևների համար, եթե նրանք այդպիսի մտադրություն ունեին, կապահովեր հեշտ անցում և վստա-
225 հելի հանգրվան։ Այսպիսով, Պետոսը վստահված լինելով և իշխանություն ստանալով գործել այնպես, ինչպես իրեն օգ-
226 տավետ էր թվում, չհապաղեց, այլ հանկարծակի, քանի դեռ Անտիոքոսը և (նրա) մերձավորները ոչինչ չէին կասկածում, ներխուժեց Կոմմագենե, առաջնորդելով վեցերորդ լեգեոնը, ինչպես նաև մի քանի կոհորտա և հեծյալ գունդ։ Նրա հետ դաշնակցել էին նաև Քաղկիդիկեի թագավոր Արխատոբուզո-
227 սը[108] և Եմեսայի թագավոր Սոեմոսը[109]. ուստի և նրանց ներխուժումը կատարվեց առանց դիմադրության հանդիպելու, քանի որ ոչ ոք այդ վայրերում ապրողներից չէր կամենում
228 նրանց դեմ զենք բարձրացնել։ Իսկ Անտիոքոսը, երբ անակընկալ կերպով այդ լուրը հասավ իրեն, հռոմայեցիների դեմ պատերազմելու ոչ մի խորհուրդ չունեցավ, այլ որոշեց ամբողջ թագավորությունը, ինչպես որ կա, լքել և իր կնոջ ու որդիների հետ կառքով հեռանալ, նպատակ ունենալով դրանով իսկ իր վրա բարդված մեղադրանքից հռոմայեցիների առաջ
229 մաքուր երևալ։ Եվ քաղաքից հարյուր քսան ասպարեզ առաջ ընթանալով դեպի դաշտը, այնտեղ էլ իջևանեց։
230 Եվ Պետոսը իր զորքերի մի մասն ուղարկում է Սամոսատա և նրանց միջոցով նվաճում քաղաքը, մինչդեռ ինքը մյուս

231 մասով արշավում է Անտիոքոսին հետապնդելու համար: Մինչ-
դեռ թագավորն այս պայմաններում ևս հռոմայեցիների դեմ
պատերազմական որևէ գործողության ձեռնամուխ չեղավ, այլ
իր բախտը ողբալով, համբերությամբ սպասում էր դեպքերի
232 (ընթացքին): Բայց նրա երիտասարդ և ռազմական արվեստին
գիտակ, արտակարգ մարմնական ուժի տեր որդիների համար
հեշտ չէր առանց մարտի ընդունել վերահաս աղետը. ուստի
և Եպիփանեսը և Կալլինիկոսը ուժի դիմեցին: Տեղի ունեցած
233 բուռն ճակատամարտի ժամանակ, որը տևեց ամբողջ օրը,
նրանք աչքի ընկնող քաջություն ցուցաբերեցին, և նրանց զո-
րությունը բոլորովին չէր նվազել, երբ վրա հասած գիշերը
ցրեց նրանց: Իսկ Անտիոքոսին, այդ ճակատամարտի այդ-
234 պիսի (հաջող) ելքից հետո ևս, թվում էր, թե չի կարելի մնալ,
ուստի և վերցնելով իր կնոջը և դուստրերին, նրանց հետ փա-
խավ Կիլիկիա և իր այդ արարքով իսկ իր զինվորների (մար-
235 տական) ոգին ջլատեց: Եվ քանի որ նա (կայսրության) ձեռ-
քը մատնեց իր իսկ թագավորությունը, նրանք ապստամբե-
ցին և անցան հռոմայեցիների կողմը. նրանց մոտ ակնառու
236 էր հուսահատությունը: Ուստի Եպիփանեսը և նրա զինակից-
ները նախքան դաշնակիցների կողմից վերջնականապես լըք-
վելը, անհրաժեշտ համարեցին փախուստի դիմելով իրենց
(անձը) փրկել թշնամուց, և տասը հեծյալ հավաքվելով երկու
237 եղբայրների հետ անցնում են Եփրատը, այնտեղից էլ նրանք
առանց արգելքի պարթևների թագավոր Վոլոգեսեսի մոտ
հասնելով, արհամարհանքի չհանդիպեցին իբրև փախստա-
կաններ, այլ, իրենց նախկին բարեկեցությունը պահելով
ամեն տեսակ պատվի արժանացան:

238 Իսկ Անտիոքոսին, երբ սա հասավ Կիլիկիայի Տարսոն
(քաղաքը), ցենտուրիոնը ձերբակալելով ուղարկեց Պետոսի
239 մոտ, որը նրան շղթայակապ ուղարկեց Հռոմ: Վեսպասիանոսը
չսպասեց որ թագավորը բերվի իր առաջ, այլ նախամեծար
համարեց հին բարեկամությունը գնահատելով առավել մե-
ծարման արժանանալ, քան պատերազմի պատրվակով անխնա
240 զայրույթ պահել իր մեջ: Ուստի և նա, երբ (թագավորը) դեռևս
ճանապարհին էր, կարգադրում է ազատել նրան կապանքնե-
րից և կանխում նրա ժամանումը Հռոմ, (թույլատրում) ժամա-
նակավորապես ապրել Լակեդեմոնիայում, միաժամանակ պար-

գևում նրան մեծաքանակ դրամական նկամուտ, որպեսզի նա կարողանա ապրել ոչ միայն առատության մեջ, այլև արքայա-
241 վայել։ Եպիփանեան ու յուրայիններըը, որոնք նախկինում սաստիկ երկչոտել էին իրենց հոր համար, հոգեպես հանգստացան մեծ և ծանր հոգսերից։ Միաժամանակ նրանք ևս հուսով էին, որ կկարողանան կայսեր հետ հաշտվել նրա մոտ իրենց օգտին բանակցություններ վարելու նպատակով Վոլոգեսեսի ուղարկած դեսպանության միջոցով։ Որովհետև նրանք, նույնիսկ բարեբախտության մեջ գտնվելով, չէին ցանկանում ապրել հռոմեական կայսրության (սահմաններից) դուրս։ Իսկ երբ կայսրը
243 մեծահոգաբար նրանց թույլտվություն (շնորհեց), ժամանեցին Հռոմ, և երբ իրենց հայրը ևս իսկույն եկավ Լակեդեմոնիայից, ամեն տեսակ հարգանքի արժանանալով, մնացին այնտեղ։

244 Իսկ թե ալանաց ազգը, որը բնակեցրել է Տանայիս գետի[110] և Մեոտիս լճի շրջակայքը, սկյութացիներ են, մենք հայտնել
245 ենք դեռ նախապես մեկ այլ տեղ[111]։ Ահա նրանք այդ ժամանակները նպատակ ունենալով արշավել Մեդիա և նրանից ավելի այն կողմ ընկած այլ վայրեր ավարառության համար, համաձայնության են գալիս հյուրկանների թագավորի հետ, որը տերն էր այն անցուղու, որ Ալեքսանդր (Մակեդոնացի)
246 թագավորը փակել էր երկաթյա ամուր դարպասներով[112]։ Ու քանի որ այդ մուտքը նրանց տրամադրեց, ապա նրանք հոծ բազմությամբ հարձակվեցին մեդացիների վրա, որոնք աչինչ չէին կասկածում, և ավարի մատնեցին բազմամարդ և ամեն տեսակ անասուններով հարուստ երկիրը, իսկ ոչ ոք չհամար-
247 ձակվեց նրանց դիմադրել։ Որովհետև այդ երկրում թագավորող Պակորոսը[113] սարսափահար ապաստանել էր դժվարամատույց վայրեր, մնացած ամեն ինչը նրանց զիջելով, նրանցից կարողացավ հազիվ իր կնոջն ու հարճերին, որոնք գերի էին
248 ընկել, հարյուր տաղանդ (փրկագին) վճարելով ազատել։ Շատ հեշտությամբ և առանց մարտի կողոպուտի ենթարկեցին երկիրը մինչև Հայաստան ու վերադարձան ամեն ինչ թալանելով։ Իսկ (Հայաստանում) թագավորում էր Տիրիդատեսը, որը
249 ոգևորվի ելնելով նրանց դեմ, ճակատամարտ տվեց, բայց քիչ էր մնացել, որ կռվի ընթացքում նրանց ձեռքը գերի ընկ-
250 ներ կենդանի։ Որովհետև (ալաններից) մեկը հեռվից պարան

ձգեց նրա վրա և նրան արդեն կբռներ, եթե (Տիրիդատեսին) չհաջողվեր իր սրով իսկույն կտրել պարանը և անհապաղ ճո-
251 ղոպրել։ Մինչդեռ ալաններն այդ կռվի (ելքից) ավելի ևս գազազած, երկիրը թալանեցին և երկու թագավորություններից էլ մարդկանց մեծ բազմություն և ուրիշ շատ ավար տանելով, նորից վերադարձան իրենց երկիրը[114]։

ՀՐԵԱԿԱՆ ՀՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

89 Երբ աստված նշանը տվեց և անձրևն սկսվեց, ջուրը ամբողջ քառասուն օր թափվում էր, այնքան, որ բարձրացավ երկրի երեսին մինչև հիսուն կանգուն[115]: Եվ այդ էր պատճառը, որ (մարդկանց) մեծագույն մասը չկարողացավ փրկվել, փախուստի ապավեն չունենալու պատճառով: Երբ հորդ անձրևը դադրեց, ջուրն արագորեն սկսեց իջնել հարյուր և հիսուն օրվա ընթացքում, մինչև յոթերորդ ամսի սկիզբը, տասնօրյակի յոթերորդ օրը, և այն քիչ առ քիչ սկսեց նահանջել, երբ ամիսը վերջանալու մոտ էր: Այնուհետև, երբ տապանը կանգ առավ Հայաստանում գտնվող մի լեռան վրա, Նոքոսը այս տեսնելով, բացեց (տապանը) և նրա շուրջը փոքր մի հողակտոր նկատելով, հույսը վերածնվեց նրա մեջ, և նա մնաց այնտեղ:

91 Իսկ քիչ օրեր անց, երբ ջուրն աստիճանաբար նահանջում էր, նա մի ագռավ արձակեց, իմանալու համար, թե արդյո՞ք երկրի որևէ մի այլ մաս ևս դուրս է եկել ջրից, որից հետո (տապանից) դուրս գալը անվտանգ կլիներ. բայց ամբողջ երկիրը դեռևս լճացած տեսնելով, ագռավը վերադարձավ Նոքոսի մոտ: Իսկ յոթ օր հետո նա մի աղավնի արձակեց, իմանալու համար երկրի դրությունը: Այն վերադարձավ ցեխոտված և

92 միաժամանակ ձիթենու կանաչ ոստ բերելով, որից էլ Նոքոսն իմացավ, որ երկիրը ազատվել է ջրհեղեղից. ևս յոթ օր սպասելուց հետո նա բաց թողեց տապանի անասուններին, ինքն էլ իր գերդաստանով դուրս գալով, աստծուն զոհեր մատուցեց և խնջույք արեց ընտանիքի անդամների հետ: Հայերը մինչև օրս այդ վայրը կոչում են իջնելու տեղ[116], քանի որ այնտեղ է (ջրհեղեղից) փրկվել տապանը, և մինչև օրս այդ վայրում ցույց են տալիս դրա բեկորները:

93 Այս ջրհեղեղի և տապանի մասին հիշատակում են բոլոր նրանք, որոնք գրել են բարբարոսների պատմությունները. նրանցից է Բերոսոս Քաղդեացին, որը պատմելով ջրհեղեղի ժամանակ տեղի ունեցած դեպքերի մասին, այսպիսի բաներ է գրում. «Ասվում է, թե մինչև հիմա էլ նավի մի մասը գտնվում է Հայաստանում, Կորդվաց լեռների մոտ, և որ ոմանք (նրա վրայից) պոկելով կուպրի կտորներ են բերում. և մարդիկ դրանք կրում են իրենց վրա իբրև հուռութք»: Դրանց
94 մասին հիշատակում են նաև Հիերոնիմոս Եգիպտացին[117], որը գրել է փյունիկյան հնախոսությունը, և Մնասեասը[118] և շատ ուրիշներ, ինչպես նաև Նիկողայոս Դամասկոսցին[119] իր իննսունվեցերորդ գրքում պատմելով այդ բոլորի մասին, այս-
95 պես է ասում. «Մինիաս (երկրից)[120] վերև Հայաստանում կա մի խոշոր լեռ Բարիս անունով, որտեղ, պատմության համաձայն, շատերը ապաստանելով փրկություն են գտել ջրհեղեղի ժամանակ, իսկ մեկը տապանի վրա տարվելով, իջել է գագաթին և տախտակների մնացորդները երկար ժամանակ պահպանվել են: Սա հավանաբար այն մարդն է, որի մասին գրել է Մովսեսը, հրեաների օրենսդիրը»:

* * *

122 Իսկ Նոքոսի որդիները զավակներ ունեցան, որոնց պատվելու համար էլ որոշ երկրների առաջին բնակիչները ազգերին կոչեցին նրանց անուններով: Այսպես, Յափեթը[121], Նոքոսի որդին, ունեցավ յոթ զավակ. նրանք բնակվում են սկսած Տավրոս և Ամանոս լեռներից և առաջ են գնացել Ասիայում մինչև Տանայիս գետը[122], իսկ Եվրոպայում մինչև Գադեյրա երկիրը, նվաճելով այն, ու քանի որ նախապես այդ երկրները չէին բնակեցվել, իրենց անունները թողեցին այնտեղի ազգերին:
123 Նրանք, որոնց հելլեննները գալատներ են անվանում և կոչվում են գոմարյաններ, Գոմարը[123] հաստատեց. Մագոգեսը հաստատեց մագոգյան կոչվածներին, որոնց հելլեննները սկյութացիներ են անվանում: Յափեթի որդիներ Յավանոսից և Մա-
124 դեսից առաջացել են այս մեկից՝ մադերը, որոնք հելլենների կողմից մեդես են կոչվում, իսկ Յավանոսից սերել են Յոնիան և բոլոր հելլենները: Մինչդեռ Թեոբելոսը հաստատում է
125 Թեոբելյաններին[124], որոնք այժմ կոչվում են իբերներ: Եվ մեսքենները[125], որոնք հաստատվել են Մեսքեսի կողմից և այժմ

կոչվում են կապպադովկիացիներ. սակայն նրանց հնագույն անվանման ապացույցը բացահայտ է, որովհետև նրանց մոտ կա մի քաղաք, որը մինչև հիմա էլ կոչվում է Մազակա և հասկացողներին թելադրում է ենթադրելու, որ այդպես է կոչվել ամբողջ ազգը: Թիրեսը իր անունը թողեց Թիրյաններին, որոնց վրա ինքը իշխել էր, իսկ հելլեննները նրանց վերանվանեցին Բրակիացիներ: Ահա այսքան ազգեր են հաստատվել Յափեթի որդիների կողմից: Իսկ Գոմարը ունեցավ երեք զավակ, որոնցից Ասքանաքսեսը[126] հաստատեց ասքանաքսյաններին, որոնց հելլեննները այժմ կոչում են Հռեգյաններ, Հռիփաթեսը՝ Հռիփաթյաններին, որոնք պափլագոններ են կոչվում, Թյուգրամեսը[127] (հաստատեց) Թյուգրամյաններին, որոնց հելլեննները ճիշտ համարեցին փոյուգներ անվանել: Իսկ Յափեթի որդի Յավանոսը ևս երեք զավակ ունեցավ, որոնցից Հալիսասը իր անունը տվեց հալիսեցիներին, որոնց վրա ինքն իշխել էր, և որոնք այժմ էոլյաններն են. իսկ Թարսոսն (իր անունը տվեց) Թարսյաններին, որովհետև այսպես էր նախկինում կոչվել Կիլիկիան: Ապացույց, որ նրանց քաղաքներից ամենանշանակալիցը, որը և քաղաքամայրն է, կոչվում է Տարսոս, Թետան (Θ) տաու (Τ) տառով փոխարինելու հետևանքով:

* * *

Իսկ Նոքոսի երրորդ որդին՝ Սեմը, ունեցավ հինգ զավակ, որոնք բնակեցրել են Ասիան, սկսելով Եփրատից մինչև Հընդկաց օվկիանոսը: Այսպես՝ Ելիմոսի հետնորդներն էին ելիմայեցիները[128], որոնք պարսիկների նախահայրերն են. Ասսուրասը հիմնադրում է Նինոսի քաղաքը և իր հպատակներին անվանում ասսուրացիներ, որոնք մեծապես բարգավաճեցին: Արփաքսադեսը իշխելով այժմյան քաղդեացիներին, նրանց անվանեց արփաքսադյաններ, իսկ արամեացիներին տիրում է Արամոսը, որոնց հելլեննները սիրիացիներ կոչեցին: Եվ նրանց, ում հելլեննները հիմա լյուդիացիներ են կոչում, այն ժամանակ Լյուդասը հաստատեց: Արամոսի զավակները չորսն էին, որոնցից Ուսեսը հիմնում է Տրաքոնիտիսը և Դամասկոսը, որը գտնվում է Պաղեստինի և Կելե-Սիրիայի միջև. Հայաստանը (հաստատեց) Ուրոսը[129], իսկ Գեթերեսը բակտրիացիներին ու Մեսասը՝ մեսանյաններին, այժմ Սպասինու Քարակս կոչված շրջանում:

20 Իսկ Բերոսոսը, որը հեղինակել էր «Քաղդեականքը», հիշատակում է թագավոր Սենաքեյրիմի մասին և (պատմում), թե ինչպես նա տիրեց ասսուրացիներին և ինչպես արշավեց ամբողջ Ասիայի ու Եգիպտոսի վրա, գրելով հետևյալը...[130]

21 Սենաքեյրիմը Եգիպտոսի դեմ մղած պատերազմից Երուսաղեմ վերադառնալով հասավ այն ժամանակ, երբ զորավար Հռափսակեսի (հրամանատարության) տակ եղող զորքը ժանտախտի արհավիրքի առաջ էր գտնվում։ Որովհետև աստված կործանիչ հիվանդություն էր ուղարկել զորքերի վրա, և պաշարման առաջին իսկ գիշերը տասնութ բյուր և հինգ հազար մարդ կործանվեց իրենց հրամանատարներով ու դասակա-

22 պետներով հանդերձ։ Այս աղետի պատճառով նա ընկավ մեծ երկյուղի և տագնապի մեջ, ու վախենալով իր ամբողջ բանակի համար, զորքի մնացած մասով հեռանում է իր թագավո-

23 րությունը, որը կոչվել է Նինոսի անունով։ Եվ այնտեղ կարճ ժամանակ մնալուց հետո, դավադրաբար սպանվում է իր ավագ որդիներ Անդրոմաքոսի և Սելևկարոսի[131] կողմից ու վախճանվում, և նրա (դիակը) դրվեց իր իսկ սեփական տաճարում, որը կոչվում էր Արասկես։ Իսկ քաղաքացիների կողմից հայրապետության համար երկրից վտարվածները հեռանալով, հասան Հայաստան[132], մինչդեռ թագավորությունը ժառանգեց Սենաքեյրիմի որդիների իրավունքները ոտնահարած Ասարահադոնը։ Ահա այսպիսին էր Երուսաղեմի վրա ասսուրական արշավանքի վախճանը։

* * *

74 Իսկ եգիպտացիների Նեքաո թագավորը[133] զորք հավաքելով արշավեց դեպի Եփրատ գետը, կռվելու համար մեդացիների և բաբելոնացիների դեմ, որոնք կործանեցին ասորեստանյան պետությունը, քանի որ նա ցանկանում էր տիրել Ասիային։

* * *

84 Երբ Հովակիմի[134] թագավորության չորրորդ տարին էր, բաբելոնացիների մոտ իշխանությունը գրավում է Նաբուքոդոնոսոր անունով մեկը, որը նույն այդ ժամանակ մեծ պատ-

բաստուբյուն (տեսնելով), քայլում է Կարքեմիսա[135] քաղաքի վրա, որը գտնվում է Եփրատ գետի ափին, նպատակ ունենալով պատերազմել եգիպտական Նեքաո թագավորի դեմ,
85 *որովհետև ամբողջ Սիրիան նրա իշխանության տակ էր: Իմանալով բաբելոնացու մտադրությունը և իր դեմ նրա ձեռնարկած արշավանքը, Նեքաոն ինքը ևս չհապաղեց, այլ բաղմաթիվ ձեռքերով արշավեց Եփրատի կողմը, դիմավորելու հա-*
86 *մար Նաբուքոդոնոսորին: Տեղի ունեցած ճակատամարտում նա պարտվեց և ռազմադաշտում շատ բյուր (մարդկանց) թողեց: Ու Եփրատ գետն անցնելով, բաբելոնացին նվաճում է*
87 *(ամբողջ) Սիրիան մինչև Պելուսիոն, բացի Հրեաստանից: Արդեն Նաբուքոդոնոսորի թագավորության չորրորդ տարին էր և Հովակիմի հրեական գահի վրա գտնվելու ութերորդ տա-*
րին, երբ բաբելոնացին մեծ զորքով արշավում է հրեաների վրա և պատերազմ սկսելու սպառնալիքի տակ Հովակիմից հարկեր պահանջում: Իսկ սա, սպառնալիքից ահաբեկված և փողով խաղաղություն գնելով, երեք տարի վճարեց նրա նշանակած հարկը:

ԳԻՐՔ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

20 *Որովհետև Կյուրոսը զբաղված լինելով այլ պատերազմներով, անտեղյակ էր կատարված դեպքերին և պատահեց այնպես, որ մասսագետների[136] դեմ արշավելուց անմիջապես հետո մահացավ[137]:*

* * *

30 *... Իսկ Կամբյուսեսը վեց տարի թագավորելով, որի ըն-*
թացքում նվաճեց Եգիպտոսը, վերադարձավ այնտեղից և մա-
31 *հացավ Դամասկոսում: Մոգերի բնաջնջումից հետո, որոնք Կամբյուսեսի մահվանը հաջորդած տարին իշխանությունը վերցրել էին (իրենց ձեռքը), պարսիկների, այսպես կոչված, յոթ տները Հյուստասպեսի որդի Դարեհին թագավոր հռչակեցին: Երբ նա դեռևս հասարակ մարդ էր, ուխտեց աստծուն, որ եթե թագավոր դառնա, ապա աստծու[138] բոլոր սպասները, ինչքան դեռևս մնում էին Բաբելոնում, ետ կուղարկի Երու-*
32 *սաղեմի տաճար: Ու պատահեց որ այդ ժամանակ Երուսաղեմից Դարեհի մոտ ժամանեց Զորոբաբելը, որը նշանակված էր*

հրեա գերիների առաջնորդ, որովհետև վաղեմի բարեկամություն կար նրա և թագավորի միջև, որի համար էլ ուրիշ երկու հոգու հետ արքայի թիկնապահների շարքում ընդունվելու արժանի համարվեց. և նա իր իսկ ակնկալած պատվին արժանացավ:

33 Իր թագավորության առաջին տարում Դարեհը շատ մեծ պատրաստություններով շքեղ ընդունելություն կազմակերպեց, հրավիրելով իր մերձավորներին և իր արքունի տանը ծնվածներին, և Մեդիայի իշխաններին, և Պարսկաստանի սատրապներին, և Հնդկաստանից մինչև Եթովպիա ընկած երկրների տեղապահներին[139], և հարյուր քսանյոթ սատրա-
34 պությունների սատրապներին[140]: Ու երբ, խնջույքում հագենալու և լիանալու աստիճանին հասնելուց հետո, նրանք մեկնեցին յուրաքանչյուրն իր տուն քնելու, Դարեհ արքան գալով իր ննջարանը և գիշերվա կարճ մի մասում հանգստանալով, զարթնում է և այլևս քնել չկարողանալով, երեք թիկնապահ-
35 ների հետ զրույցի է բռնվում: Եվ նրան, ով իր հարցումին կտար ճշմարտագույն և առավել խորիմաստ պատասխան, նա խոստացավ որպես հաղթության պարգև շնորհել ծիրանի զգեստ՝ հագնելու համար, և ոսկե ըմպանակներ՝ խմելու համար, և ոսկե մահիճ՝ քնելու համար, և ոսկեսանձ մարտակառք, և բեհեզյա խույր[141], և ոսկե մանյակ, նաև իր իմաստության համար իրենից հետո առաջին գահը նա պետք է ու-
36 նենա «և իմ ազգակիցը պետք է կոչվի», ասաց նա: Այս ընծաները պարգևել խոստանալուց հետո հարցնում է առաջինին՝ արդյո՞ք գինին է (աշխարհում) ամենահզորը, երկրորդին՝ թագավորնե՞րն արդյոք, իսկ երրորդին՝ կանա՞յք արդյոք, թե՞ ճշմարտությունն է այդ բոլորից հզոր: Այս հար-
37 ցերը նրանց տալուց հետո նա հանգստացավ: Իսկ վաղ առավոտյան իր մոտ հրավիրելով մեծամեծներին և Պարսկաստանի ու Մեդիայի սատրապներին ու տեղապահներին և ատյանում իր սովորական տեղը բազմելով, հրամայեց թիկնապահներից յուրաքանչյուրին իր կարծիքը հայտնել առաջադրված հարցի մասին:

[Հետևում է ընդարձակ մի հատված (§§ 38—63), որտեղ երեք թիկնապահներից առաջինը գովերգում է գինու զորությունը, երկրորդը՝ արքաների, երրորդը՝ Զորոբաբելը՝ կնոջ զորությունը, ապա խոսում է ճշմարտության ամենազոր

լինելու մասին: Դարեհը, հավանելով նրա պատասխանը, խոստացված պարգևները շնորհում է Զորոբաբելին և նրան կարգում հրեաների առաջնորդ]:

* * *

184 Քսերքսեսի մահից հետո թագավորությունն անցավ նրա որդի Ասուերոսին, որին հույները անվանում են Արտաքսերքսես: Պարսկաստանում իշխանությունը նրա ձեռքին եղած տարիներին ամբողջ հրեական ժողովուրդը, կանանց ու երեխաների հետ միասին, բնաջնջման վտանգի առաջ կանգ-
185 նեց: Դրա պատճառը քիչ հետո կհայտնենք: Որովհետև պատշաճ է նախ այս թագավորի պատմությունն անել, թե նա ինչպե՞ս ամուսնացավ թագավորական գերդաստանին պատկանող հրեա կնոջ հետ, որի մասին պատմում են, թե փրկել
186 է մեր ազգը: Այսպես, Արտաքսերքսեսը, ընդունելով թագավորությունը և Հնդկաստանից մինչև Եթովպիա հարյուր քսանյոթ սատրապությունների վրա իշխաններ նշանակելով, իր գահակալության երրորդ տարում իր ընկերներին և պարսկական ցեղերին և նրանց առաջնորդներին հրավիրեց շքեղ ընդունելության, ինչպիսին վայել էր իր հարստությունը ցուցադրել ցանկացող թագավորին, հարյուր ութսուն օր շարու-
187 նակ: Իսկ այնուհետև բոլոր ազգերին և նրանց դեսպաններին Սուսայում[142] յոթ օր խնջույքի հրավիրեց: Եվ խրախճանքը հետևյալ կերպ էր կատարվում. ոսկե և արծաթե սյուներով վրան խփեց և այն ծածկեց բեհեզյա և ծիրանի վարագույրներով. այնպես, որ բյուրավոր մարդիկ կարողանան սեղան նըս-
188 տել: Եվ նրանց մատուցվում էին ոսկե և պատվական քարերից պատրաստած ըմպանակներով, որոնք հաճելի էին և գեղեցիկ: Նաև հրամայեց սպասավորներին, որպեսզի սրանք չպարտադրեն (մարդկանց) խմել՝ խմիչքը անընդհատ մատուցվելով, ինչպես պարսկական սովորություն է, այլ թույլ տան նրանց, որպեսզի ամեն մարդ իր ցանկության համաձայն բավարարի իր կարիքները: Իսկ ամբողջ երկրով մեկ բնակիչներին պատվիրեց, որ կարող են իրենց աշխատանքը թողնել և իր թագավորության պատվին շատ օրեր տոնախմ-
190 բություն անել: Նույնպես և Աստեր թագուհին կանանց ի մի հավաքեց իր պալատում կոչունքի, իսկ թագավորը, ցանկանալով նրան ցույց տալ բոլոր խրախճողներին, քանի որ նա

իր գեղեցկությամբ գերազանցում էր բոլոր կանանց, (մարդ)
ուղարկելով կարգադրեց (Թագուհուն) ներկայանալ իր խըն-
191 ջույքին։ Իսկ նա, պահպանելու համար պարսից օրենքները,
որոնք արգելում էին կանանց օտարների առաջ երևալու,
չգնաց թագավորի մոտ, թեև արքան բազմիցս նրա մոտ ու-
ղարկել էր իր ներքինիներին, այսուհանդերձ նա համառեց և
հրաժարվեց թագավորի առաջ ներկայանալ, մինչև որ արքան,
192 զայրանալով, ցրեց խնջույքը, վեր կենալով իր մոտ հրավի-
րեց յոթ պարսիկներին, որոնք օրենքի մեկնիչներն են
(Պարսկաստանում), և նրանց առաջ մեղադրեց իր կնոջը,
ասելով, թե ինչպե՞ս էր ինքն անարգվել նրա կողմից, քանի
որ բազմիցս հրավեր ստանալով թագավորից ներկայանալ
խնջույքին, ոչ մի անգամ չհնազանդվեց։ Ու հրամայեց իրեն
հայտնել, թե ի՞նչ վճիռ են սահմանում նրա նկատմամբ։ Այն-
ժամ նրանցից մեկը՝ Մուքեոս անունով, ասաց, որ այդ ար-
համարհանքը ուղղված է եղել ոչ միայն արքայի դեմ, այլև
համայն պարսիկների, որոնց սպառնում է կանանց կողմից
194 արհամարհված ամոթալի վիճակում ապրելը։ «Որովհետև ոչ
մի (կին այսուհետև) իր ամուսնու նկատմամբ ոչ մի ակնա-
ծանք չի տածելու, քանի որ իբր օրինակ կվերցնի թագուհու
դատողությունը, քո՝ բոլորի վրա իշխանություն ունեցողի
նկատմամբ»։ Այս իսկ պատճառով հորդորում էր նրան այդ-
պես արհամարհողին պատժել ծանր պատիժով, և այդ կատա-
րելուց հետո հռչակել բոլոր ազգերին թագուհու նկատմամբ
կայացած վճիռը։ Այսպիսով, նա հարմար դատեց Աստեին
զրկել (տիկնությունից) և նրա պատիվը տալ մեկ ուրիշ կնոջ։
195 (Մինչդեռ արքան) նրա նկատմամբ սեր էր տածում և
չէր կարողանում ամուսնալուծության դիմանալ, բայց օրեն-
քի համաձայն անկարող էր հաշտվել նրա հետ, ուստի և թախ-
ծում էր, տեսնելով, որ ի վիճակի չէ իր փափագը կատարելու։
Իսկ իր մերձավորները, տեսնելով նրան այս տանջալից վի-
ճակում, խորհուրդ էին տալիս ջնջել հիշողությունը իր կնոջ
196 և նրա անօգուտ սիրո մասին, և (մարդկանց) ուղարկելով ամ-
բողջ երկրով մեկ, փնտրել գեղեցիկ կույսերի և նրանցից իր
հավանածին կնության վերցնել. որովհետև առաջինի նկատ-
մամբ տածած բուռն սերը կհանգեր այն մեկ ուրիշով փոխա-
րինելուց հետո։ Եվ բարեհաճությունը նրա հանգեպ աստի-
197 ճանաբար կնվաճի իր հետ ապրող կնոջը։ Անսալով այս խոր-

հըրդին, հրամայեց ոմանց հավաքել իր թագավորության այն կույսերին, որոնք առավել հռչակված էին իրենց գեղեցկությամբ, և բերել իր մոտ։ Երբ մեծ թվով (կույսեր) հավաք-
198 վեցին, նրանց միջից գտնվեց Բաբելոնում բնակվող մի աղջիկ, որը ծնողներից որբ էր և ապրում էր իր հորեղբայր Մարդոքեոսի մոտ, իսկ սա Բենիամինի ցեղից էր[143] և առաջիններից հրեաների մեջ։ Եվ պատահեց, որ Եսթերը —այս էր կույսի անունը— իր գեղեցկությամբ ու արտաքին տեսքով բոլոր իրեն տեսնողների ուշադրությունը ամենից ավելի գրա-
200 վեց։ Իսկույն նա հանձնարարվեց ներքինիներից մեկին և ամեն տեսակ խնամքի արժանացավ և՛ անուշահոտությունների առատությամբ, և՛ թանկարժեք օծանելիքներով, այն ամենով, ինչ անհրաժեշտ է կանացի մարմնի համար։ Եվ այս բոլորը վայելում էին թվով չորս հարյուր աղջիկ վեց ամիս շա-
201 րունակ։ Իսկ երբ (ներքինին) մտածեց, որ վերոհիշյալ ժամանակի ընթացքում կույսերն արդեն բավարար չափով խնամք էին ստացել և արժանի էին թագավորի առագաստը մտնելու, օրական նրանցից մեկին ուղարկում էր արքայի մոտ քնելու. իսկ նա մերձենալուց հետո իսկույն ետ էր ուղարկում
202 (աղջկան) ներքինու մոտ։ Իսկ երբ Եսթերը եկավ նրա մոտ, (արքան) հաճոյացավ նրանով և աղջկան սիրահարվելով, նրան իր օրինական կինը դարձրեց և հարսանիք արեց իր թագավորության յոթերորդ տարվա տասներկուերորդ ամսին, որը կոչվում էր Ադար[144]։ Եվ նա անգարոս կոչված (արքունի) սուրհանդակներին ուղարկեց բոլոր ազգերի մոտ, հրահանգելով նրանց հարսանիքը տոնել. իսկ ինքը պարսիկներին և ազգերի ավագներին[145] ամբողջ մեկ ամիս կոչունքի հրավիրեց իր ամուսնության առթիվ։ Ու երբ Եսթերը մտավ պալատ, արքան խույրը[146] դրեց նրա գլխին և այսպիսով Եսթերը ապրեց արքայի հետ, առանց հայտնելու նրան, թե ո՞ր ազգից է
204 ինքը սերում։ Նրա հորեղբայրը ևս Բաբելոնից Պարսկաստանի Սուսա (քաղաքը) փոխադրվելով, այնտեղ էր բնակվում և ամեն օր պալատ այցելելով, տեղեկանում էր աղջկա որպիսության մասին. որովհետև նա խնամում էր նրան իր հարազատ դստեր նման։

205 Եվ թագավորը օրենք սահմանեց, որ այսուհետև յուրայիններից ոչ ոք առանց հրավերի չմտներ իրեն, քանի նա

դեռ գահին է նստած։ Ու նրա գահի շուրջը կանգնեցին սակրերով զինված մարդիկ, որպեսզի պատժեն առանց հրավեր
206 րի գահին մոտեցողներին։ Մինչդեռ ինքը, արքան, նստում էր (գահին), ոսկե գավազան բռնած, որը մեկնում էր առանց հրավերի մոտեցողին, եթե ցանկանում էր նրան փրկել. իսկ նա, ով դիպչում էր այդ գավազանին, վտանգից ղերծ էր մնում։

* * *

313 Եվ այդ ժամանակ Դարեհը[147] լսելով, որ Ալեքսանդրը Հելլեսպոնտոսն անցնելուց և իր սատրապներին Գրանիկոնի[148] ճակատամարտում հաղթելուց հետո առաջ է շարժվում, հեծելազոր և հետևակ զորք էր կենտրոնացնում, մտադիր լինելով դիմագրավել մակեդոնացիներին, նախքան նրանք ներ-
314 խուժելով կնվաճեին ամբողջ Ասիան։ Ճեղքելով, ուրեմն, Եփրատ գետը և անցնելով Կիլիկիայի Տավրոս լեռը, Թշնամուն սպասում էր Կիլիկիայում (գտնվող) Իսոսում, այնտեղ ճա-
315 կատամարտ տալու նպատակով։ Իսկ Սանաբալլետեսը[149], ուրախացած Դարեհի գալստյան վրա, անհապաղ ասաց Մանասսեին[150], որ իր խոստումները կատարի, հենց որ Դարեհը Թշնամիներին հաղթելով վերադառնա. որովհետև ոչ միայն նա, այլև բոլոր Ասիայում ապրողները համոզված էին, որ մակեդոնացիները նույնիսկ չեն մոտենալու պարսիկներին, նրանց մեծ թվի պատճառով[151]։

316 Բայց դեպքերը զարկացան ոչ ինչպես նրանք ակնկալում էին, քանի որ արքան ճակատամարտելով մակեդոնացիների դեմ, պարտվեց և կորցրեց իր բանակի մի խոշոր մասը։ Իր մայրն ու կինը և զավակները գերի վերցվեցին, իսկ ինքը փա-
317 խավ Պարսկաստան[152]։ Իսկ Ալեքսանդրը, հասնելով Սիրիա, գրավեց Դամասկոսը և դառնալով Սիդոնի տերը, պաշարեց Տյուրոսը[153]։ (Այստեղից) թուղթ հղեց հրեաների քահանայապետին, որպեսզի սա օգնական զորք ուղարկի իրեն և իր բանակին պարեն տրամադրի, և (բնակիչներն) իրեն տան այն բոլոր ընծաները, ինչ նախապես իբրև հարկ ուղարկում էին Դարեհին, ըրանով իսկ նախընտրեն մակեդոնացիների բարեկամությունը, քանզի չէին զղջալու այդպես վարվելով։ Բայց
318 քահանայապետը պատասխանեց սուրհանդակներին, թե երդվել էր Դարեհին նրա դեմ զենք չբարձրացնել, և քանի դեռ

Դարեհը կենդանի է, ինքը չի կարող դրժել այդ երդումը։
319 Ալեքսանդրը այս լսելով զայրացավ և որոշեց չթողնել Տյուրոսը, որն արդեն գրավվելու մոտ էր, սպառնաց, որ այն նվաճելուց անմիջապես հետո ինքը կարշավի հրեաների քահանայապետի դեմ և նրա օրինակով բոլորին կսովորեցնի, թե
320 ում հանդեպ պարտավոր են իրենց երդումը պահել։ Դրանից հետո նա առավել եռանդով շարունակեց պաշարումը և գրավեց Տյուրոսը։

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

293 Լսելով այդ, թագավոր Անտիոքոսը[154] մեծապես զայրացավ կատարված դեպքերի համար և իր սեփական ամբողջ զորքը հավաքելով և կղզիներից բազում վարձկաններ վերցնելով, պատրաստվում էր ամռան սկզբներին ներխուժել
294 Հրեաստան։ Բայց զորականների ուճիկները վճարելուց հետո, երբ տեսավ, թե իր գանձերը պակասում էին և դրամի կարիք էր զգացվում—որովհետև բոլոր հարկերը չէ, որ վճարվում էին (հպատակ) ազգերի ապստամբության պատճառով, իսկ ինքը, լինելով մեծահոգի և առատաձեռն ընծաների հարցում, չէր կարողանում բավարարվել առկա միջոցներով[155]— որոշեց առաջինը արշավել Պարսկաստան և հավաքել այդ երկրի հարկերը։ Պետության գործերի տնօրինումը
295 հանձնելով իր կողմից հարգված ոմն Լյուսիասի, որը կառավարում էր Եփրատ գետից մինչև Եգիպտոս ընկած երկրները և ստորին Ասիան, նաև թողնելով նրա մոտ զորքի և փղերի
296 մի մասը, միաժամանակ հանձնարարեց նրան ամենայն հոգատարությամբ խնամել իր որդի Անտիոքոսին, մինչև ինքը կվերադառնար, և Հրեաստանը ավերելուց ու նրա բնակիչներին գերեվարելուց ու Երուսաղեմը կործանելուց հետո,
297 ոչնչացնել հրեական ցեղը։ Այս հանձնարարություններն անելով Լյուսիասին, Անտիոքոս թագավորն արշավեց Պարսկաստան հարյուր քառասունյոթերորդ տարին[156] և Եփրատն անցնելով, բարձրացավ դեպի վերին սատրապությունները[157]։

* * *

354 Նույն այդ ժամանակ թագավոր Անտիոքոսը վերին սատրապությունները շրջագայելու ընթացքում լսում է Պարսկաս-

տանում գտնվող մի արտակարգ հարուստ քաղաքի մասին, էլիմայիս[158] կոչվող, որտեղ կար Արտեմիսին (նվիրված) շքեղ տաճար, և որը լեցուն էր ամեն տեսակ ընծաներով, մինչև իսկ զենքերով ու զրահներով, որոնք, ինչպես իմացավ, այնտեղ էր թողել Փիլիպպոսի որդի, մակեդոնացիների թա-
355 գավոր Ալեքսանդրը։ Այս բոլորից գայթակղվելով, նա արշավեց էլիմայիս և հարձակվելով, պաշարեց այն։ Եվ որովհետև քաղաքի բնակիչները չահաբեկվեցին նրա հարձակումից, ոչ էլ պաշարումից, այլ քաջաբար դիմադրեցին, նրա հույսերը ձախողվեցին. քանի որ նրան ետ մղեցին քաղաքից և, պարիսպներից դուրս գալով, հալածեցին այնպես, որ Բաբելոն հասավ իբրև հալածական, կորցրած իր զորքի մե-
356 ծագույն մասը։ Եվ մինչդեռ նա տխրում էր այս ձախողման պատճառով, գուժկանները նրան հաղորդում են նաև իր այն զորավարների պարտությունը, որոնց թողել էր հրեաների դեմ պատերազմ մղելու համար, ինչպես նաև պատմում են հրեա-
357 ների արդեն ձեռք բերած հզորության մասին։ Եվ այսպես, իր նախկին տագնապին այս իրադարձությունների առթած անհանգստությունը ևս ավելացավ, ու նա անհուսությամբ ընկճվելով, հիվանդացավ. իսկ (հիվանդությունը) երկարելով և ցավերը բարդացած լինելով, նա զգաց, որ պետք է մահանա, կանչեց իր մոտ ընկերներին և հաղորդեց, որ իր հիվանդությունը ծանր է, և որ այդ բոլոր տառապանքների պատճառն այն է, որ ինքը հալածել էր հրեական ազգը, կողոպտելով տաճարը և աստծուն նախատելով. և այս ասելով նա շունչը փչեց։
358 Ուստի ես զարմանում եմ, որ Պոլիբիոս Մեգալոպոլիսեցին, ազնիվ մարդ լինելով հանդերձ, ասում է, թե Անտիոքոսը մահացավ, որովհետև ցանկացել էր կողոպտել Պարսկաստանում գտնվող Արտեմիսի տաճարը, քանի որ մի բան ցանկանալը
359 սոսկ առանց այն ի կատար ածելու, դեռևս պատժի արժանի չէ։ Բայց եթե Պոլիբիոսը կարծում էր, թե Անտիոքոսն իր կյանքը կորցրեց այդ եղանակով, ապա առավել հավանական է, որ թագավորը մահացած լինի Երուսաղեմի տաճարը պղծությամբ կողոպտած լինելու պատճառով։ Այս ասելով, սակայն, ես չեմ ուզում վիճել նրանց հետ, որոնք Մեգալոպոլիսեցու տված պատճառաբանությունը առավել ճիշտ են համարում, քան մերը։

360 Բայց Անտիոքոսն իր մահից առաջ կանչելով իր ընկերներից Փիլիպպոսին, նրան նշանակում է թագավորության խնամակալ, և թագն ու պատմուճանը և մատանին նրան հանձնելով, պատվիրում է դրանք տանել և հանձնել իր որդի Անտիոքոսին, միաժամանակ խնդրելով, հոգ տանել նրա դաս-
361 տիարակության և պահպանել գահը նրա համար: Անտիոքոսը մահացավ հարյուր քառասուներեքերորդ տարում[159]: Այնժամ Լյուսիասը նրա մահը ծանուցելով բազմությանը, թագավոր է հռչակում նրա որդի Անտիոքոսին—քանի որ ինքն էր նրա խնամակալը— և նրան անվանում Եվպատոր:

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

184 Իսկ Դեմետրիոսը[160] գալիս հասնում է Միջագետք, կամենալով նվաճել և՛ այդ երկիրը, և՛ Բաբելոնը, ու դառնալով վերին սատրապությունների տիրակալը, այնտեղից վերահրաս-
185 կել ամբողջ թագավորության գործերին: Որովհետև այնտեղ ապրող հույները և մակեդոնացիները մշտապես դեսպաններ էին ուղարկում նրա մոտ, խոստանալով, որ եթե իրենց երկիրը ժամանի, ապա իրենք կհպատակվեն և, իր հետ դաշնակցած կպատերազմեն պարթևների թագավոր Արշակի դեմ[161]: Այս հույսերով տարված, նա շտապեց նրանց մոտ, համոզված լինելով, որ եթե կործանի պարթևներին և ձեռք բերի սեփական զորք, ապա կպատերազմի Տրյուփոնի[162] դեմ և նրան կվտարի Սիրիայից: Ու քանի որ երկրի բնակիչները նրան սիրով ընդունեցին, նա զորք հավաքելով պատերազմեց Արշակի դեմ, բայց իր ամբողջ զորքը կորցնելով, ինքը ևս գերի ընկավ[163]...:

* * *

253 Սակայն Անտիոքոսը[164] պատերազմ սկսելով պարթև Արշակի դեմ, կորցրեց իր զորքի մեծ մասը և ինքն էլ կործանվեց, իսկ Սիրիայի գահը ժառանգեց նրա եղբայր Դեմետրիոսը այն բանից հետո, երբ Արշակը նրան ազատեց գերությունից[165] այն ժամանակ, երբ Անտիոքոսը արշավել էր պարթևների երկիրը:

* * *

419 Այդ ժամանակ էլ լուր է հասնում, թե հայոց[166] թագավոր Տիգրանը երեսուն բյուր զորքով[167] ներխուժել է Սիրիա և գալիս է Հրեաստանի դեմ: Այս, բնականաբար, ահաբեկեց թագուհուն և ժողովրդին: Ուստի նրանք բազում և արժանավայել ընծաներ ուղարկեցին նրան և դեսպաններ, երբ նա դեռևս
420 պաշարում էր Պտղոմայիս (քաղաքը): Որովհետև Սելենե թագուհին, որը կոչվում էր նաև Կլեոպատրա, այդ ժամանակ տիրում էր Սիրիային և հորդորել էր բնակիչներին դռները փակել Տիգրանի առաջ: Ուստի դեսպանները հանդիպելով նրան, խնդրում էին բարենպաստ պայմաններ շնորհել թա-
421 գուհուն և ժողովրդին: Իսկ նա, գնահատելով այն, որ նրանք ժամանել են այդքան հեռու տարածությունից, լավագույնս հուսադրեց: Բայց հազիվ էր Պտղոմայիսը գրավվել, երբ լուր հասավ Տիգրանին, թե Լուկուլլոսը, հետապնդելով Միհրդատին, չի կարողացել նրան բռնել, քանի որ (վերջինս) փախել է Բոսպորի երկիրը. և (Լուկուլլոսը), ասպատակելով Հայաստանը, պաշարել է (մայրաքաղաքը)[168]: Տիգրանն այս մասին իմանալով, վերադարձավ իր սեփական երկիրը[169]:

ԳԻՐՔ ՏԱՍՆԶՈՐՍԵՐՈՐԴ

29 Այդ ընթացքում Պոմպեոսը Սկավրոսին ևս ուղարկում է Սիրիա, քանզի ինքը Հայաստանում էր և դեռևս պատերազմում էր Տիգրանի դեմ:

* * *

53 Եվ ոչ շատ ժամանակ հետո, մինչ Պոմպեոսը նրա դեմ էր իր զորքերն առաջնորդում, ճանապարհին Պոնտոսից ժամանած մարդիկ հաղորդեցին նրան Միհրդատի մահը[170], որը վրա էր հասել նրա որդի Փառնակեսի ձեռքով[171]:

* * *

110 Բայց ոչ ոք չպետք է զարմանա, որ մեր տաճարում այնքան շատ հարստություն կա, քանի որ ամբողջ աշխարհի հրեաները և նրանք, որոնք աստվածապաշտ են, նույնիսկ

Ասիայում և Եվրոպայում բնակվողները, երկար ժամանակ
111 (տաճարին) տուրքեր են վճարել։ Վկայություններ չեն պա-
կասում հիշյալ գումարների խոշոր լինելու մասին, ոչ էլ
դրանք այդքան աճել են մեր սնապարծության և ավելորդա-
բանության շնորհիվ, այլ շատ ուրիշ հեղինակներ ևս վկա-
յում են այդ մասին, հատկապես կապպադովկիացի Ստրա-
112 բոնը[172], ասելով հետևյալը. «Միհրդատը (մարդ) ուղարկե-
լով Կոս[173], վերցրեց այն փողերը, որ թագուհի Կլեոպատ-
րան[174] էր այնտեղ պահ դրել, նաև հրեաների ութ հարյուր
113 տաղանդը»[175]։ Բայց մենք հանրային փողեր չունենք, բացի
աստծուն պատկանող փողերից. և հանրահայտ է, որ այդ
փողերը փոխադրել են Կոս Ասիայի հրեաները՝ Միհրդատից
սհաբեկված լինելու հետևանքով։ Որովհետև հավատալի չէ,
որ Հրեաստանում բնակվողները, ունենալով ամրացված քա-
ղաք և տաճար, փողերն ուղարկեին Կոս, ոչ էլ Ալեքսանդրիա-
յում ապրող հրեաներն այդպես կանեին, քանզի նրանք
Միհրդատից վախ չունեին։

* * *

119 Իսկ Կրասոսը ամեն ինչ կարգավորելով այնպես, ինչ-
պես իրեն էր հաճելի, արշավեց դեպի Պարթիա. և ինքը իր ամ-
բողջ զորքի հետ միասին կործանվեց, ինչպես այլ տեղում
նկարագրված է[176], իսկ Կասսիոսը[177] փախչելով Սիրիա, այն
փորձեց վերցնել իր տիրապետության տակ, բայց խոչըն-
դոտվեց պարթևներից, որոնք Կրասոսի դեմ տարած հաղթա-
նակից հետո ասպատակում էին այն։

* * *

330 Իսկ երկրորդ տարին Սիրիան նվաճել էին արքայորդի
Պակորոսը և Բարզափռանեսը, որը պարթևական սատրապ էր։
Նույն ժամանակ մահանում է Մեննայոսի որդի Պտղոմեոսը,
իսկ իշխանությունը վերցնելով նրա որդի Լյուսանիասը,
Արիստոբուլոսի որդի Անտիգոնոսի հետ բարեկամություն է
հաստատում, որի համար նա օգտագործում է սատրապին[178],
331 քանի որ սրա վրա մեծ ազդեցություն ուներ։ Անտիգոնոսը
խոստացավ պարթևներին տալ հազար տաղանդ և հինգ հար-
յուր կին, եթե նրանք իշխանությունը վերցնեն Հյուրկանոսից

և այն հանձնեն իրեն ու ոչնչացնեն Հերովդեսին և նրա մեր-
332 ձավորներին: Նա, փաստորեն, նրանց չտվեց այս բոլորը,
այսուհանդերձ պարթևները, հանուն այդ ամենի, Անտիգոնո-
սին ետ բերելով իր երկիրը, արշավեցին Հրեաստան, Պակո-
րոսը ծովափով, իսկ սատրապ Բարզափռանեսը միջնաշ-
333 խարհով: Սակայն Տյուրոսի բնակիչները փակեցին ճանա-
պարհը Պակորոսի առաջ, մինչդեռ Սիդոնի և Պտղոմայիսի
բնակիչները ընդունեցին նրան: Ինչևիցե, երկիրը հետազոտե-
լու և Անտիգոնոսին օգնելու նպատակով իր անվանակից՝ ար-
քունի տակառապետի հրամանատարությամբ Պակորոսը Հր-
334 բեաստան ուղարկեց հեծելազորի մի ջոկատ: Եվ որովհետև
Կարմելոն կոչված լեռան մոտ ապրող հրեաներից ժամանեցին
Անտիգոնոսի մոտ և պատրաստ էին նրան օգնելու իր արշա-
վանքում, Անտիգոնոսը հույս ուներ երկրի մի մասն ստանալ.
իսկ այդ վայրը կոչվում էր Կաղնիներ: Սակայն ոմանք նրանց
դիմադրելով, գալիս հասնում են Երուսաղեմ: Եվ նրանց ուրիշ-
ներ ևս միանալով, մեծ մի խումբ կազմեցին և մոտենալով
335 պալատին, այն պաշարեցին: Բայց Փասայելոսն ու Հերով-
դեսը իրենց մարդկանցով օգնության հասան պաշարվածնե-
րին, և ագորայում[179] տեղի ունեցած կռվում երիտասարդները
հաղթեցին թշնամուն. և նրանց մինչև տաճար հալածելուց
հետո մի խումբ հոպլիտներ ուղարկեցին մերձակա տները,
դրանք պահպանելու համար, բայց քանի որ հոպլիտները մե-
կուսացված էին, զեմոսը նրանց դեմ ոտքի ելնելով, տները
336 նրանց հետ միասին հրկիզեց: Շատ չանցած, սակայն, այդ
անարգանքի համար Հերովդեսը վրեժ լուծեց ապստամբու-
թյան հակառակորդներից և նրանցից շատերին սպանեց
կռվում:

337 Մինչդեռ կատարվում էր ամենօրյա փոխնետաձգություն,
հակառակորդները սպասում էին քորայից ամբոխի ժամանե-
338 լուն պենտեկոստե կոչված տոնի օրը: Ու երբ այդ օրը վրա հա-
սավ, տաճարի շուրջը խմբվեցին բյուրավոր մարդիկ, զինված
և անզեն: Ժամանածները վերցրին տաճարը և քաղաքը, բա-
ցի պալատի շրջակայքից, որովհետև այդ վայրը պաշտպա-
339 նում էին Հերովդեսի մերձավորները սակավ զինվորների
հետ: Եվ այսպես, մինչ Փասայելոսը պահպանում էր պարիս-
պը, Հերովդեսը մի ջոկատ վերցնելով, հարձակվեց թշնամու

վրա քաղաքի արվարձանում և բուռն կռվից հետո բազում բյուրավորների քշեց, որոնցից մի մասը փախավ քաղաք, մյուս մասը ապաստան գտավ տաճարում, իսկ ուրիշներ արտաքաղաքային խրամատներում, ինչպիսիք կային այնտեղ:
340 Հերովդեսին օգնում էր Փասայելոսը: Իսկ Պակորոսը, պարթևների զորավարը, փոքրաթիվ հեծյալներով, Անտիգոնոսի խնդրանքից հետո գալիս է քաղաք, իբրև թե խռովությունը ճնշելու պատրվակով, բայց իրականում իշխանությունը գրա-
341 վելու գործում Անտիգոնոսին օգնելու համար: Իսկ երբ Փասայելոսը նրանց դիմավորեց և հյուրասիրաբար ընդունեց, Պակորոսը հորդորեց նրան անձամբ դեսպանության գնալ Բարզափռանեսի մոտ. սա նրա դեմ մտածված դավադրություն էր: Եվ Փասայելոսը ոչինչ չկասկածելով, համոզվում է, թև Հերովդեսը համաձայն չէր կատարվածին, այլ, ընդհակառակը, խորհուրդ էր տալիս հարձակվել Պակորոսի և մյուս ժամանածների վրա:

342 Եվ այսպես, Փասայելոսն ու Հյուրկանոսը գնացին դեսպանության, իսկ Պակորոսը Հերովդեսի մոտ թողնելով երկու հարյուր հեծյալ և տասը մարդ ազատ կոչվածներից[180], ուղեկցեց նրանց: Բայց երբ նրանք հասան Գալիլեա, այնտեղ
343 գտնվող թշնամիները նրանց դիմավորեցին զենքերով: Եվ Բարզափռանեսը սկզբում նրանց հոժարակամ ընդունեց և ընծաներ պարգևեց, ապա սկսեց դավ նյութել նրանց դեմ: Փասայելոսի հետ եղողները մեկնեցին Եկդիպոն, որը նայում է դեպի ծովը. ճիշտ այստեղ էլ, երբ լսեցին, թե Անտիգոնոսը խոստացել է իրենց հաշվին պարթևներին տալ հազար տաղանդ և հինգ հարյուր կին, արդեն սկսեցին կասկած տածել
344 բարբարոսների նկատմամբ: Այս բոլորից հետո ինչ-որ մեկը հաղորդեց, որ նրանց դեմ դավադրություն է նյութված և այն պետք է իրագործվի գիշերով, որ անտեսանելի մի պահակախումբ է տեղավորված նրանց շուրջը, և որ նրանք վաղուց կձերբակալվեին, եթե (դավադիրները) չսպասեին Հերովդեսի ձերբակալմանը Երուսաղեմում գտնվող պարթևների կողմից, որպեսզի չլինի թե սկզբում դեսպանության ձերբակալումը Հերովդեսի (մտքում) կասկածներ հարուցի, և սա փախչի: Եվ այս բոլորը ճիշտ էր, քանի որ նրանց պահակախմբերն արդեն երևում էին: Ուստի ոմանք խորհուրդ էին տալիս Փասա-

345 յելոսին անմիջապես ձի հեծնել և այլևս չսպասել. առանձնապես նրան այդ անել համոզում էր Օփելլիոսը, որն այդ ամենը իմացել էր ժամանակի ամենահարուստ սիրիացի Սարամալլայից, և խոստանում է փախուստի համար նրան նավ տր-
346 ամադրել, քանի որ ծովը մոտիկ էր: Իսկ նա արդար չհամարեց լքել Հյուրկանոսին և վտանգել իր եղբորը, այլ, ընդհակառակը, գնալով Բարզափռանեսի մոտ, ասաց նրան, որ արդար գործ չի անում իրենց նկատմամբ այդպիսի դավեր նյութելով, քանզի եթե նա փողի կարիք էր զգում, կարող էր ավելին ձեռք բերել իրենից, քան տվել էր Անտիգոնոսը, և, բոլոր դեպքերում, դաժան է իր մոտ հավատարմորեն դեսպանության ժամանած մարդկանց սպանելը, եթե սրանք ոչ մի
347 անարդարություն չեն գործել: Իսկ բարբարոսը, երբ նա այսպես ասաց, երդվում էր, որ այդ ենթադրությունները իրական չեն, այլ, ընդհակառակը, Փասայելոսին հուզող կասկածները խաբուսիկ են. այնուհետև Բարզափռանեսը մեկնեց Պակորոսի մոտ[181]:

348 Երբ նա հեռացավ, պարթևներից ոմանք կալանավորեցին Հյուրկանոսին և Փասայելոսին, որոնք խիստ հայհոյում էին պարթևներին, նրանց երդմնազանցության համար: Իսկ Հերովդեսի մոտ ուղարկված տակառապետը[182] հրահանգ էր ստացել նրան առաջնորդել պարսպից դուրս և ձերբակալել:
349 Բայց դիպվածի բերմամբ, Փասայելոսը սուրհանդակներ էր ուղարկել պարթևների անհավատարմության մասին հայտնելու, որոնց թշնամու կողմից ձերբակալումն իմանալով, Հերովդեսը գնում է (գանգատվելու) Պակորոսի և պարթևների հզորների մոտ, որպես մնացյալների վրա իշխանություն ու-
350 նեցողների: Իսկ նրանք, ամեն ինչ իմանալով հանդերձ, նենգորեն կեղծում էին և ասում նրան, որ իրենց հետ նա պետք է դուրս գա պարսպի առաջ սուրհանդակներին դիմավորելու, քանի որ նրանք չէին ձերբակալվել հակախոռվարարների կողմից, այլ նկել էին տեղեկանալու Փասայելոսի կատարած
351 սխրագործությունների մասին: Հերովդեսը սրանց չհավատաց, որովհետև ուրիշների միջոցով իմացել էր իր եղբոր ձերբակալության մասին: Եվ Հյուրկանոսի դստեր Թեկլադրանքով, որի աղջկան ինքը նշանված էր, ավելի ևս սկսեց կասկածել պարթևների վրա: Մինչդեռ մյուսները սրան չէին հավատում, ինքը անձամբ հավատում էր շատ խելամիտ կնոջը:

* * *

439 Իսկ Հերովդեսը իրեն օգնության հասած հեծյալների և հետևակի հետ շտապեց Անտոնիոսի մոտ, որն այդ ժամանակ պաշարում էր Սամոսատը՝ մի բնակավայր Եփրատին
440 մոտիկ[183]: Հասնելով Անտիոք, նա այնտեղ պատահեց մեծ թվով հավաքված մարդկանց, որոնք անհամբեր էին գնալու դեպի Անտոնիոսը, բայց վախենալով բարբարոսներից, որոնք ճանապարհին հարձակվում էին մարդկանց վրա և շատերին սպանում, նրանք չէին համարձակվում մեկնել: Նրանց քաջալերելով ինքը դարձավ ճանապարհի առաջնորդը: Իսկ
441 Սամոսատից երկու կայան հեռավորության վրա[184] բարբարոսները դարանակալել էին, սպասելով Անտոնիոսի մոտ գնացողներին: Եվ որովհետև նրանք բռնել էին դեպի դաշտավայրը տանող անտառների ելքը, որտեղ դարան էին մտել ոչ փոքրաթիվ ձիավորներ, որոնք կարող էին հանգիստ սպասել, մինչև անցորդները կհասնեին այնպիսի մի վայր,
442 որտեղ հնարավոր կլիներ ձիերն օգտագործել: Երբ առաջիններն անցան, իսկ Հերովդեսը վերջապահ գունդն էր տանում, հանկարծակի հարձակվում են դարանակալները, որոնք մոտ հինգ հարյուր էին, և առաջիններին հալածում: Բայց թագավորը վրա է հասնում և իր զինակիցների օգնությամբ անմիջապես կասեցնում հակառակորդին, միաժամանակ բարձրացնում է յուրայինների բարոյական կորովը, նրանց քա-
443 ջությունն ոգեշնչելով: Այսպիսով, սկզբում փախուստի մատնվածները ետ դառնալով կռվում էին, և բարբարոսները ամեն կողմ սպանվում էին: Իսկ թագավորը շտապում էր, ճանապարհին կոտորելով նրանց, և ամբողջ (բարբարոսների կողմից) խլվածները—իսկ գումակայիններն ու ստրուկները մեծա-
444 թիվ էին—վերստին փրկելով, շարժվեց առաջ: Եվ դաշտավայրի մուտքի մոտ անտառներում դարանակալած ավելի մեծ թվով մարդկանց հարձակմանը ենթարկվելով, նրանց հետ ևս մարտի է բռնվում մի խումբ հաղթանդամ յուրայիններով, նրանցից շատերին սպանում է և դրանով իսկ իր ետևից եկողների համար ճանապարհն անվտանգ դարձնում: Ուստի և նրանք իրեն փրկիչ և պահապան էին անվանում:

445 Իսկ երբ նա հասավ Սամոսատի մոտ, Անտոնիոսն իր զորքը իր անձնական շքախմբով ուղարկեց նրան դիմավորելու, դրանով իսկ պատիվ շնորհելով Հերովդեսին, միաժամա-

նակ օժանդակություն ցույց տալով, որովհետև լսել էր նրա վրա բարբարոսների կատարած հարձակման մասին։ Իսկ
446 երբ Հերովդեսը ժամանեց, (Անտոնիոսը) ուրախացավ նրան տեսնելով, և իմանալով ճանապարհին նրա կատարածների մասին, բարձրացրեց աջը և իր հիացմունքն արտահայտեց նրա առաքինության համար. հետո ինքն Անտոնիոսը գրկեց նրան և հատուկ հարգանք ցույց տվեց ու նորից թագավոր
447 հռչակեց։ Բայց շատ չանցած Անտիոքոսը հանձնում է ամրությունը, դրանով իսկ դադարեցնելով պատերազմը[185]։ Այնուհետև Անտոնիոսը Սիրիան հանձնում է Սոսիոսին, միաժամանակ հրահանգելով նրան օգնել Հերովդեսին, իսկ ինքը մեկնում է Եգիպտոս։ Եվ Սոսիոսը առաջից երկու լեգեոն ուղարկեց Հրեաստան, Հերովդեսին օգնելու, մինչդեռ ինքը իր բանակի մեծագույն մասով ընդհուպ հետևում էր։

ԳԻՐՔ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

11 Լսելով, որ Հերովդեսը տիրացել է (հրեից) թագավորությանը, քահանայապետ Հյուրկանոսը, որը գերեվարվել էր պարթևներից, գալիս է Հերովդեսի մոտ, գերությունից հետևյալ կերպ ազատվելով։ Պարթևների զորավարներ Բարզափռանեսը և Պակորոսը գերի վերցնելով նախկինում քահանայապետ, ապա՝ թագավոր դարձած Հյուրկանոսին և Հերով-
13 դեսի եղբայր Փասայելոսին, քշեցին Պարթիա։ Փասայելոսը, ստակյան, չկարողանալով տանել կապանքի նախատինքը, ամեն գնով ապրելուց առավել գերադասելի համարեց փառքով մեռնելը և ինքնասպանություն գործեց, ինչպես ասել եմ նախապես։

14 Երբ Հյուրկանոսը տարվեց այնտեղ, պարթևների թագավոր Փրաատեսը[186] նրա նկատմամբ շատ մեղմությամբ վերաբերվեց, լսած լինելով նրա ազնվական և նշանավոր ծագման մասին։ Այդ իսկ պատճառով, նրան ազատ արձակեց կապանքներից և արտոնեց հաստատվել Բաբելոնում, որտեղ
15 մեծ թվով հրեաներ էին բնակվում։ Սրանք Հյուրկանոսին մեծարում էին որպես քահանայապետի և թագավորի. նույնը նաև մինչև Եփրատ բնակվող ամբողջ հրեական ազգը։ Այս բոլորը հաճելի էր նրան։ Բայց իմանալով, որ Հերովդեսը
16 վերցրել է թագավորական իշխանությունը, նորից հուսադըր-

վեց, քանի որ սկզբից ևեթ նրա նկատմամբ բարեհոգի վերաբերմունք ուներ և ակնկալում էր, որ (Հերովդեսը) կհիշի նրան մատուցած իր ծառայությունները, երբ նա մեղադրվում էր և արդեն պետք էր մահվան դատապարտվել, ինքը նրան փրկեց այդ վտանգից և պատժից: Հետևաբար, այդ մասին տեղեկացնելով հրեաներին, շտապեց մեկնել նրա մոտ[187]: Իսկ
17 նրանք հաստատապես պահանջում էին Հյուրկանոսից մնալ, հիշեցնելով իրեն տրված պաշտոններն ու պատիվները, ասելով, որ իրենց մոտ նա զուրկ չի մնա քահանայապետներին կամ թագավորներին ցույց տրված պատիվներից և, որ ավելի կարևոր էր, նա այնտեղ՝ Հրեաստանում, այդպիսի (պատիվների) չէր արժանանա իր մարմնական խեղվածության պատճառով, որին ենթարկվել էր Անտիգոնոսի կողմից. իսկ որպես հասարակ մարդ ստացված շնորհները նույնությամբ չեն վերադարձվում թագավոր դառնալուց հետո, քանի որ (հաջող) բախտը այդպիսիներին փոխում է ոչ քիչ չափով:
18 Ի հեճուկս նրանց այդպիսի օգտավետ առաջարկներին, Հյուրկանոսը բուռն ցանկություն ունեցավ մեկնելու. և Հերովդեսը նրան գրեց՝ խնդրել Փրաատեսից և այնտեղի հրեաներից չպախարակել իրեն այն բանի համար, որ ցանկանում է թագավորական իշխանությունը կիսել (Հերովդեսի) հետ, քանի որ սա ճիշտ այն պահն է, երբ Հերովդեսը կարող է վարձահատույց լինել այն բանի համար, որ իր ձեռքով սնվել, դաստիարակվել է ու փրկվել, իսկ ինքը կարող է իր բարե-
19 գործության համար վարձատրվել: Այս ամենը Հյուրկանոսին գրելուց հետո, Փրաատեսի մոտ ուղարկում է նաև Սարամալլային, որպես դեսպան, և բազում ընծաներ, (խնդրելով) չարգելել իրեն բարերարին նույն առաքինությամբ հատուցել, ինչ
20 ինքը տեսել էր նրանից: Նրա (դրսևորած) եռանդի պատճառը, սակայն, դա չէր, այլ այն փաստը, որ ինքը արժանի չէր իշխելու և վախենում էր բարենպաստ փոփոխություններից. ուստի և շտապում է Հյուրկանոսին ձեռքի տակ ունենալ կամ ամբողջովին նրան տապալել: Եվ այս իրագործեց հետագայում:

* * *

96 Կլեոպատրան այդ (պարգևներն) ստանալուց և Անտոնիոսին Հայաստանի դեմ ձեռնարկած արշավանքի ժամանակ

մինչև Եփրատ ուղեկցելուց հետո, վերադարձավ Հրեաստան, որտեղ նրան դիմավորեց Հերովդեսը և վարձակալեց նրանից Արաբիայի նրան շնորհված մասերը, ինչպես նաև Երիքովի շրջանի եկամուտները։ Այս երկիրը արտադրում է բալասան, որն այնտեղ ամենապատվական բանն է և միայն այդ երկրում է աճում, նաև առատ ու լավ արմավ։

* * *

104 Եվ Անտոնիոսը, Հայաստանը նվաճելուց հետո, Տիգրանի որդի Արտավազդին[188] նրա որդիների ու սատրապների հետ միասին կալանավոր ուղարկում է Եգիպտոս և Կլեոպատրային է նվիրում նրանց, ինչպես նաև թագավորության ամբողջ զարդերը, որ հափշտակել էր այնտեղից։ Իսկ Հայաստանի թագավոր դարձավ (Արտավազդի) անդրանիկ որդին՝ Ար-
105 տաշեսը[189], որն այդ իրադարձությունների ժամանակ (կարողացել էր) փախչել։ Սրան էլ Արքելաոսը[190] և Կեսար Ներոնը[191] վտարեցին և գահի վրա հաստատեցին նրա կրտսեր եղբայր Տիգրանին[192]։ Բայց այդ դեպքերը հետագային են վերաբերում։

ԳԻՐՔ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

39 Այդ ժամանակամիջոցում մահանում է Փրաատեսը՝ պարթևների թագավորը, իր որդի Փրաատակեսի[193] կողմից իր դեմ նյութված դավադրության հետևանքով, հետևյալ հանգամանքների մեջ[194]։

40 Փրաատեսը, որն արդեն ուներ օրինական զավակներ, սիրահարվում է մի իտալուհի երիտասարդ ստրկուհու, Թեսմուսա[195] անունով։ Սա այլ ընծաների թվում իրեն ուղարկվել էր Հուլիոս Կեսարի կողմից, և ինքը սկզբում նրան օգտագործում էր որպես վարձակ, բայց այնքան հիացել էր նրա շռայլ գեղեցկությամբ, որ ժամանակի ընթացքում, երբ արդեն նրանից ունեցավ որդի՝ Փրաատակեսին, նա այդ ստրկուհուն իր
41 կինը հռչակեց և նրան (համապատասխան) պատվի արժանացրեց։ Երբ նա արդեն դարձավ այնպիսին, որ նրա ամեն ասածը թագավորի հավանության էր արժանանում, շտապեց իր որդուն դարձնել պարթևների առաջնորդ. և իրեն թվում էր, թե այդ նպատակը հնարավոր է իրականացնել

միայն (այն դեպքում), երբ դավադրաբար հեռացնի Փրաատեսի հարազատ որդիներին։ Ուստի համոզում է նրան իր հա-
42 րազատ որդիներին պատանդ ուղարկել Հռոմ[196]։ Այսպիսով նրանք, քանի որ Փրաատեսի համար հեշտ չէր հակաճառել Թեամուսայի թելադրանքներին, ուղարկվեցին Հռոմ[197]։ Իսկ Փրաատակեսը, որը մենակ էր դաստիարակվում իշխանության (գլուխ անցնելու) համար, մտածում էր, որ վտանգավոր և ձանձրալի երկար է սպասել, որպեսզի հոր հեռանալուց հետո իշխանությունը ստանա. ուստի և դավադրություն է նյութում իր հոր դեմ, մոր մասնակցությամբ, որի հետ, ըստ խոսակ-
43 ցությունների, ինքը կենակցում էր։ Եվ նա ատելի դարձավ երկու տեսակետից. հայրասպանությունից ոչ պակաս իր մոր նկատմամբ տածած սեռական սերը նողկանք առաջացրեց հպատակների մեջ. այնպես որ նախքան նա կհզորանար, ապստամբություն ծագեց նրա դեմ, և նա գահընկեց արվեց ու
44 այդպես մահացավ[198]։ Իսկ ազնվագույն ծագում ունեցող պարթևները ժողով գումարելով, համաձայնվեցին, որ առանց թագավորի հնարավոր չէ երկիրը կառավարել և սահմանեցին, որ թագավորական գահը պետք է գրավի Արշակունի տոհմից սերած անձնավորությունը, որովհետև օրինական չէ, որ ուրիշները կառավարեն։ Իսկ բավականաչափ հաճախակի մինչև հիմա էլ թագավորական իշխանությունը անարգվել է և՛ իտալուհի հարճի ամուսնության, և՛ նրա ծնելու հետևանքով. և նրանք դեսպանություն ուղարկելով, հրավիրեցին Օրոդեսին, որը թեկուզև սիրելի չէր բազմությանը ոչ միայն իր չափազանց դաժանության, այլև ծայր աստիճան հիմար ու զայրույթի պահին չարանենգ լինելու համար, սակայն այդ
45 տոհմի մի անդամն էր։ Այսուհանդերձ, միաբանելով, սրան ևս սպանեցին[199], ինչպես ոմանք ասում են, սեղանին (նստած) խնջույքի և ողջակեզ մատուցելու ժամանակ, քանի որ բոլորի համար սովորություն է ողջակեզ մատուցելու պահին դաշույն կրել։ Բայց, մեծամասնության ասելով, նրան սպանել
46 են որսորդության ժամանակ։ Ու երբ դեսպանություն ուղարկեցին Հռոմ և (իրենց համար) թագավոր խնդրեցին այնտեղ գտնվող պատանդներից մեկին, ապա եղբայրների միջից նախապատվությունը տրվեց Վոնոնեսին, որը և ուղարկվեց։ Որովհետև թվում էր, թե նա կարող է տանել այն բախտավորությունը, որ նրան շնորհում էին երկու խոշորագույն տերու-

47 թյուններն արևի տակ, յուրայինը և օտարը։ Սակայն բարբարոսները ենթակա են (զգացմունքների) արագ փոփոխման, քանի որ նրանք բնականից անկայուն են, առավել ևս երբ ենթարկվում են անարդանքի, մանավանդ որ նրանք չէին հանդուրժում հնազանդվել այն մարդուն, որն օտարին էր դարձել ստրուկ—նրանք պատանդ լինելը ստրկություն էին համարում—ոչ էլ կարող էին հանդուրժել այդ կոչման նվաստացումը։ Քանի որ պատերազմական արդարությամբ չէ, որ նա իբրև թագավոր տրվել էր պարթևներին, այլ, որ բոլորից վատթարագույնն է, ոտնահարելով խաղաղությունը։ Ուստի և նույնհետայն հրավիրում են թագավորելու Մեդիայի (թագա-
48 վոր) Արտաբանոսին[200] Արշակունի տոհմից։ Իսկ Արտաբանոսը հավանություն է տալիս ու գալիս է իր զորքի հետ։ Վո-
նոնեսը դուրս է գալիս նրան դիմագրավելու։ Եվ սկզբում, քանի դեռ պարթևների մեծամասնությունը իրեն համամիտ էր, կռիվ մղելով, նա հաղթում է, իսկ Արտաբանոսը փախ-
49 չում է դեպի Մեդիայի սահմանները։ Բայց շատ չանցած, (Արտաբանոսը), համախմբելով իր զորքերը, հարձակվում է Վոնոնեսի վրա և հաղթում նրան, իսկ Վոնոնեսը հեծյալ փախչում է իր փոքրաթիվ մերձավորների հետ Սելևկիա[201]։ Եվ Արտաբանոսը, որը բարբարոսներին ահաբեկելու նպատակով ճանապարհին մեծ ջարդեր գործեց, իր բազմությամբ
50 մեկնում է Կտեսիփոն[202]։ Եվ Արտաբանոսը թագավորում է պարթևների մոտ, մինչդեռ Վոնոնեսը ապաստան է գտնում Հայաստանում[203]։ Սկզբում սա փորձեց տիրել երկրին և դես-
51 պանություն ուղարկեց հռոմայեցիների մոտ։ Սակայն Տիբերիոսը նրա խնդրանքը մերժեց, նրա փոքրոգության, ինչպես նաև պարթևական (թագավորի) սպառնալիքների պատճառով, քանի որ (Արտաբանոսը) դեսպանություն ուղարկելով, սպառնացել էր պատերազմ սկսել։ Մինչդեռ Վոնոնեսը թագավոր դառնալու ոչ մի այլ հնարավորություն չուներ, քանի որ Նպատի[204] շուրջ բնակվող հայ մեծամեծները հարել էին Արտաբանոսին, որոնք և Վոնոնեսին հանձնեցին Սիրիայի
52 ստրատեգոս Սիլանոսին։ Եվ (Վոնոնեսը), հանուն Հռոմում իր ստացած դաստիարակության, ապաստան գտավ Սիրիայում. իսկ Հայաստանը Արտաբանոսը տվեց իր որդիներից մեկին՝ Օրոդեսին[205]։

53 Մահացավ նաև Կոմմագենեի թագավոր Անտիոքոսը, ո-

րից հետո բազմությունը դեմ դուրս եկավ երևելիներին. ուստի և երկու կողմերն էլ առանձին դեսպանություն են ուղարկում. մեծամեծները խնդրում էին երկրի պետական կարգը փոխել և այն վերածել (հռոմեական) պրովինցիայի, իսկ բազմությունը (ցանկանում էր) հայրենի սովորության համաձայն թագավոր ունենալ[206]: (Հռոմի) սենատը որոշում է
54 Գերմանիկոսին ուղարկել Արևելքի դրությունը կարգավորելու համար, այս հանգամանքը վերջինիս սպանության համար հարմար առիթ դարձնելով. որովհետև, երբ սա ժամանեց Արևելք և ամեն ինչ կարգավորեց, թունավորման միջոցով վերացվեց Պիսոնի ձեռքով, ինչպես այդ մասին գրել են ուրիշները:

* * *

96 Այնժամ էլ Տիբերիոսը թուղթ է ուղարկում Վիտելլիոսին[207], հրահանգելով նրան բարեկամություն հաստատել պարթևների թագավոր Արտաբանոսի հետ: Որովհետև նրան սարսափեցնում էր այն, որ չլինի թե (Արտաբանոսը), որը թշնամի էր և հափշտակել էր Հայաստանը, ավելի մեծ չարիքներ գործի[208]: Եվ (հրահանգում է) հավատալ նրա բարեկամությանը միայն (այն դեպքում), երբ կտրվեն պատանդ-
97 ներ և, գլխավորապես, Արտաբանոսի որդին: Տիբերիոսն այս ամենը Վիտելլիոսին գրելուց հետո, մեծ գումարներ տալով, համոզում է և՛ իբերների, և՛ աղվանների թագավորներին, առանց վարանելու պատերազմի բռնել Արտաբանոսի դեմ: Իսկ նրանք, թեև դեմ կանգնեցին, սակայն Կասպյան դռները բաց անելով ալանների առաջ, իրենց երկրի միջով ճանապարհ
98 տվեցին նրանց Արտաբանոսի դեմ: Այսպիսով, Հայաստանը ևս շուտով վերանվաճվեց, ու քանի որ պարթևների երկիրը բռնկվել էր պատերազմով, այնտեղ ևս բնակվող մարդկանցից լավագույնները սպանվեցին ու նրանց երկիրն ավերվեց, և միաժամանակ թագավորի որդին այդ կռիվներում ընկավ
99 ու նրա հետ բազում բյուրավոր զորք[209]: Եվ Վիտելլիոսը նրա հոր՝ Արտաբանոսի ազգակիցներին ու բարեկամներին դրամ ուղարկելով, մտածում էր այդ ընծաները ստացողների ձեռքով սպանել նրան, և այդ դավադրությունը անխուսափելի հաջողություն կունենար, քանի որ այն կազմակերպված էր
100 երևելի շատ մարդկանց կողմից, եթե Արտաբանոսը չկա-

հեր այն և համոզված չլիներ, որ նույնիսկ նրանք ևս, որոնք անկեղծորեն իրեն էին պաշտպանել, հիմա կաշառված էին և ներգամտաբար հավատարմություն էին ձևացնում, կամ թե իր հանդեպ որևէ մահափորձ կատարվելու դեպքում, նրանք կանցնեին իր հակառակորդների կողմը. ուստի և նա իրեն փրկեց, փախչելով վերին սատրապություններից մեկը: Հետագայում նա դայերից ու սակերից[210] (կազմված) խոշոր բանակ հավաքելով, պատերազմ մղեց իր հակառակորդների դեմ և գրավեց իշխանությունը:

101 Տիբերիոսը, լսելով այս բոլորի մասին, արդեն ձգտում էր բարեկամություն հաստատել Արտաբանոսի հետ, և երբ այդ մասին նրան հաղորդեցին, ինքը հաճույքով ընդունեց: Ուստի Արտաբանոսը և Վիտելլիոսը գալիս (և հանդիպում) են
102 Եփրատի վրա: Ու գետը կամրջելով, նրանք հանդիպեցին կամրջի ուղիղ մեջտեղում, յուրաքանչյուրն իր հետ ունենալով իր թիկնապահներին: Երբ համաձայնության պայմաններին հասան, չորրորդապետ[211] Հերովդեսը խնջույք տվեց նրանց, գետանցի մեջտեղում պատրաստած իր շքեղագույն
103 վրանի մեջ: Եվ Արտաբանոսը որպես պատանդ Տիբերիոսին է ուղարկում իր Դարեհ որդուն բազում ընծաներով, որոնց թվում նաև յոթ կանգուն հասակով, ցեղով հրեա, Եղիազար անունով մեկին:

* * *

139 Իսկ Ալեքսանդրը՝ Հերովդես թագավորի որդին, որն իր հոր ձեռքով սպանվել էր, ունեցել էր երկու որդի՝ Ալեքսանդրին և Տիգրանին՝ Կապպադովկիայի թագավոր Արքելաոսի դստրից: Եվ Տիգրանը, որը թագավորում էր Հայաստանում, անզավակ մեռավ այն բանից հետո, երբ ամբաստանվելով տարվեց Հռոմ[212]: Իսկ Ալեքսանդրը ունեցավ իր եղբոր անվանակից որդի՝ Տիգրանին, որը հետագայում Ներոնի կողմից ուղարկվեց որպես Հայաստանի թագավոր[213]. այս Տիգրանն էլ ունեցավ Ալեքսանդր անունով որդի: Սա ամուսնացավ Կոմմագենեի Անտիոքոս թագավորի դուստր Յոտապեի հետ, և Վեսպասիանոսը[214] նրան հաստատեց Կիլիկիայում գտնվող Կետիսի թագավոր: Իսկ (Տիգրանի եղբայր) Ալեքսանդրի սերունդը ամբողջ տոհմով հրաժարվեց հրեական ավանդու-

թյունների պահպանումից և նրանք նվիրվեցին հելլենական ավանդությունների պահպանմանը։

ԳԻՐՔ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

276 Իսկ Անտիոքոսից[215] վերցնելով նրա ունեցած թագավորությունը, (Կլավդիոսը)[216] նրան (փոխարենը) շնորհեց Կիլիկիայի մի մասը և Կոմմագինեն։ Այնուհետև, աղատ արձակեց նաև ալաբարքեսի (պաշտոնը վարող)[217] Ալեքսանդրին՝ իր հին ընկերներից մեկին, որն իր մոր՝ Անտոնիայի խնամակալն էր եղել և բանտարկվել էր Գայոսի կողմից նրա գայրույթի հետևանքով։

* * *

338 Բերիտոսում կատարելով վերոհիշյալ ծիսակատարությունները, (Ագրիպպասը) եկավ Գալիլեայի Տիբերիաս քաղաքը։ Նա արդեն ակնհայտորեն բոլոր մյուս թագավորներից առավել աչքի ընկնողն էր։ Համեմատյն դեպս, նրա մոտ ժամանեցին Կոմմագենեի թագավոր Անտիոքոսը, Եմեսայի թագավոր Սամպսիգերամոսը[218], Կոտիսը[219], որը թագավոր էր Փոքր Հայքում և Պոլեմոնը[220], որը տիրացել էր Պոնտոսի իշխանությանը, և Հերովդեսը, որը նրա եղբայրն էր և իշխում էր Քաղկիսում։

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ

17 Իսկ այդ ժամանակ Ադիաբենեի[221] Հելենե թագուհին և նրա որդի Իզատեսը դարձան հրեական բարքերի հետևորդներ հետևյալ հանգամանքներում։ Ադիաբենեի թագավոր Մոնոբազոսը, որն ուներ նաև Բազեոս մականունը, սիրահարվելով իր քրոջը՝ Հելենեին, նրա հետ ամուսնական հարաբե-
18 րությունների մեջ մտավ ու նրան հղի թողեց։ Մի անգամ նրա կողքին քնած ժամանակ, նա իր ձեռքը դրել էր կնոջ փորի վրա։ Մինչ նա քնած էր, նրան թվաց, թե մի ձայն լսեց, որը հրամայում էր իրեն ձեռքը վերցնել նրա փորի վրայից ու չճզմել նրանում գտնվող երեխային, որը աստվածային կանխորոշմամբ, երջանիկ ծնունդ կունենա և բախտավոր վախ-
19 ճան։ Խռովվելով այդ ձայնից, իսկույն վեր կացավ և այս ամենը պատմեց կնոջը. և (ծնված) որդուն անվանեց Իզա-

տես[222]։ Նա Հելենեից ուներ ևս մի ավագ որդի՝ Մոնոբազոս
20 անունով և ուրիշ որդիներ իր մյուս կանանցից։ Սակայն բացահայտ էր, որ ամբողջ հոգատարությունը նա կենտրոնացրել էր Իզատեսի վրա, ասես սա իր միածին որդին լիներ։
21 Այդ իսկ պատճառով տղայի նկատմամբ նույն հորից ծնված եղբայրների մոտ նախանձ առաջացավ, որը վերածվում էր ատելության, որովհետև բոլորը վշտանում էին, որ իրենց հայրը (բոլոր որդիների մեջ) նախապատվությունը տալիս է
22 Իզատեսին։ Այս ամենը հայրը թեկուզ և պարզորոշ հասկանում էր, բայց ներողամիտ էր գտնվում, նրանց այդ զգացումները վերագրելով ոչ թե չարամտության, այլ այն բանին, որ նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր արժանանալ հոր բարեհաճությանը։ Ուստի պատանի (Իզատեսին), քանի որ շատ էր անհանգստանում նրա մասին, որպեսզի չլինի թե եղբայրների ատելության պատճառով որևէ վտանգի ենթարկվի, առատ ընծաներով ուղարկում է Սպասինու Քարակսի թագավոր Աբեներիգոսի[223] մոտ, վերջինիս հանձնարարե-
23 լով տղայի ապահովությունը։ Իսկ Աբեներիգոսը սիրահոժար ընդունեց երիտասարդին և նրա հետ բարյացակամ վերաբերվելով, նրան կին տվեց իր դստերը, որի անունը Սամաքո էր, միաժամանակ նրան պարգևեց երկիր, որից նա կարող էր խոշոր եկամուտներ ստանալ։

24 Իսկ Մոնոբազոսն արդեն ծերացած լինելով և տեսնելով, որ ինքը երկար չի ապրելու, ցանկացավ վախճանվելուց առաջ տեսակցել իր որդու հետ։ Ուստի և նրան իր մոտ կանչելով, ամենասիրալիր կերպով ողջագուրվում է և պարգևում
25 նրան Կարրոն[224] կոչված երկիրը։ Այդ երկիրը առատորեն արտադրում է բարձրորակ համեմունք։ Այնտեղ են գտնվում նաև այն տապանի բեկորները, որով, զրույցի համաձայն, Նոքոսը փրկվել է ջրհեղեղից, և մինչև հիմա դրանք ցուցադրվում են տեսնել ցանկացողներին։ Ուստի և Իզատեսն
26 ապրում էր այդ երկրում մինչև իր հոր վախճանվելը։ Մոնոբազոսի մահվան օրն իսկ Հելենե թագուհին իր մոտ է հրավիրում բոլոր մեծամեծներին և թագավորության սատրապներին և նրանց, ում վստահված էր բանակը։ Երբ նրանք
27 ժամանեցին, ասաց նրանց. «Կարծում եմ, դուք անտեղյակ չեք լինի այն բանին, որ իմ ամուսինը իր թագավորության ժառանգորդ ցանկանում էր տեսնել Իզատեսին և նրան այդ

պատվին արժանի էր համարում, այսուհանդերձ, ևս սպասում եմ ձեր վճռին ևս: Որովհետև, օրհնյալ է նա, ով ոչ թե
28 մեկի, այլ շատերի կամքով է իշխանություն ստանում»: Նա այս խոսքերը ասաց, փորձելու համար, թե ի՞նչ են մտածում հրավիրվածները: Իսկ նրանք, լսելուց հետո, նախ խոնարհվեցին Թագուհու առաջ, ինչպես սովորություն էր նրանց մոտ, ապա ասացին, որ հաստատում են Թագավորի կարծիքը և սիրով կհնազանդվեն Իզատեսին, որին արդարացի կերպով հայրը գերադասել է մյուս եղբայրներից, և իրենց բոլորի
29 ցանկությունն իսկ այդ է: Ասացին նաև, որ նախ իրենք մտածել են սպանել նրա եղբայրներին և ազգակիցներին, որպեսզի Իզատեսը կարողանա ապահով կերպով իր ձեռքում պահել իշխանությունը, որովհետև եթե նրանք ոչնչացվեն, ապա կվերանա նրանց ատելության և նախանձի պատճառով
30 առաջացած վտանգը: Ի պատասխան այս խոսքերին, Հելենեն իր և Իզատեսի կողմից շնորհակալություն հայտնեց իրենց նկատմամբ նրանց ունեցած բարյացակամության համար. սակայն նրանց խնդրեց եղբայրներին ոչնչացնելու մասին իրենց մտադրությունը հետաձգել, մինչև Իզատեսը կգար ու
31 կտար իր համաձայնությունը: Իսկ նրանք, քանի որ չկարողացան (Թագուհուն) համոզել (եղբայրներին) ոչնչացնելու, խորհուրդ տվեցին մինչև նրա ժամանումը, բանտարկել նրանց, որպեսզի իրենք ապահով լինեն: Նաև խորհուրդ տվեցին. մինչ այդ՝ մեկին, ում (Թագուհին) առավել էր վստա-
32 հում, նշանակել իշխանության խնամակալ[225]: Հելենեն այդ խոսքերին համոզվեց և ավագ որդուն՝ Մոնոբազոսին կարգեց Թագավոր, խույրը դնելով նրա գլխին և տալով նրան հոր կնիք-մատանին և նրանց մոտ սամպսերա[226] կոչվածը ու համոզեց նրան Թագավորությունը կառավարել մինչև եղբոր
33 ներկայանալը: Իսկ վերջինս, լսելով իր հոր մահը, շտապ ժամանեց և հաջորդեց իր եղբայր Մոնոբազոսին, որն իշխանությունից հրաժարվեց իր օգտին:

34 Մինչդեռ Իզատեսը Սպասինու Քարակսում էր գտնվում, Անանիա անունով ոմն հրեա վաճառական, մտնելով Թագավորի կանանց մոտ, նրանց քարոզում էր աստծուն պաշտել հրեական բարքերի համաձայն ու նրանց միջոցով իսկ նա հայտնի դարձավ Իզատեսին և նրան նույնպես կարողացավ
35 համոզել: Ու երբ (Իզատեսը) Ադիաբենե կանչվեց իր հոր

կողմից, (Անանիան) ևս ուղեկցեց նրան, հնազանդվելով նրա
խիստ թախանձանքներին։ Ու պատահեց, որ մեկ այլ հրեա,
Հելլենեին ևս քարոզելով, դավանափոխ արեց դեպի հրեական
36 սովորույթները։ Իսկ Իզատեսը, երբ վերցնելով իշխանու-
թյունը, եկավ Ադիաբենե ու տեսավ իր եղբայրներին ու ազ-
գակիցներին բանտարկված, սրտնեղեց կատարվածի համար։
37 Ու նրանց ոչնչացնելը կամ բանտարկված պահելը անարգա-
կան համարելով, միաժամանակ մտածելով, որ սխալ է նաև
նրանց առանց բանտարկելու իր մոտ պահելը, քանի որ
նրանք վրեժխնդիր կլինեին, նրանց մի մասին, որդիների հետ
միասին, ուղարկեց Հռոմ, որպես պատանդ, Կլավդիոս կե-
սարի մոտ, մյուսներին ևս նույն պատրվակով ուղարկեց
պարթև Արտաբանեսի մոտ։

* * *

54 Պարթևների թագավոր Արտաբանեսը զգալով, որ սատ-
րապներն իր դեմ դավադրության են նյութում, և տեսնելով,
որ նրանց հետ մնալն արդեն ապահով չէ, որոշեց հեռանալ
Իզատեսի մոտ, նպատակ ունենալով նրա մոտ փրկության
միջոց գտնել, և, եթե այդ հնարավոր լինի, կարողանա վե-
55 րադառնալ իր իշխանության գլուխ։ Այսպիսով, նա ժամա-
նում է իր ազգակիցներից ու ծառաներից շուրջ հազար հո-
գու ուղեկցությամբ ու ճանապարհին պատահում է Իզատե-
56 սին։ (Արտաբանեսը) լավ ճանաչեց նրան, բայց Իզատեսի
կողմից չճանաչվելով, կանգնեց նրա մոտ և, հայրենի սովո-
րության համաձայն, խոնարհվելուց հետո ասաց. «Ո՛վ ար-
քա, անտարբեր մի լինի իմ՝ քեզ ապավինողի նկատմամբ և մի
արհամարհիր իմ խնդրանքը. քանզի բախտի փոփոխման հե-
տևանքով ստորացել եմ ու թագավորից հասարակ մարդ դար-
57 ձած, քո օգնության կարիքն ունեմ։ Ուստի և տես բախտի ան-
կայունությունը և իմացիր, որ այդ նախախնամությունը ըն-դ-
հանուր է նաև քեզ համար։ Որովհետև, եթե ես մնամ անու-
շադրության մատնված և առանց վրեժխնդիր լինելու, ապա
շատերը ավելի հանդուգն կդառնան նաև այլ թագավորների
58 նկատմամբ»։ Այս բոլորը նա ասում էր արտասվելով ու գըլ-
խահակ, իսկ Իզատեսը, երբ լսեց իր անունը և տեսավ իր ա-
ռաջ Արտաբանեսին կանգնած ապավեն խնդրելիս, իսկույն ցած
59 թռավ ձիուց և ասաց. «Քաջ եղիր, ո՛վ արքա, և մի շփոթվիր,

կարծելով, թե ներկան անուղղելի է. որովհետև շուտափոյթ է լինելու վշտի փոփոխությունը. ես կլինեմ քեզ բարեկամ և դաշնակից առավել, քան ինքդ ակնկալում էիր: Կամ քեզ պարթևական գահին կվերահաստատեմ, կամ ես կհրաժարվեմ իմ գահից»:

60 Այս ասելով, նա Արտաբանեսին ձի նստեցրեց, իսկ ինքը հետիոտն հետևում էր, այդ պատիվը մատուցելով նրան, քանի որ նա ավելի մեծ թագավոր էր: Բայց Արտաբանեսն այս նկատելով, մեծապես զգացվեց ու երդվեց իրեն հասած ճակատագրի և այժմ իրեն ցույց տրվող պատվի վրա, որ ինքը ցած կիջնի (ձիուց), եթե (Իզատեսը) նորից չնստի իր ձին ու
61 չգնա առջևից: Եվ Իզատեսը, համոզվելով, նստեց իր ձին և (Արտաբանեսին) բերելով իր թագավորությունը, ամեն տեսակ պատվի արժանացրեց նրան իր (թագավորական) խորհուրդներում և հատկացրեց առաջին բարձը խնջույքի սեղանների շուրջ, որովհետև (Իզատեսը) նկատի ուներ ոչ թե նրա ներկա բախտը, այլ նրա նախորդ դիրքը, և միաժամանակ մտածում էր, որ բոլոր մարդկանց համար կարող է բախտը փոփո-
62 խական լինել: Նաև թուղթ է գրում պարթևներին, հորդորելով նրանց ետ ընդունել Արտաբանեսին, իր աջը բարձրացնելով երդվում է և հավաստիացնում նրանց, որ կատարվածի հա-
63 մար կստանան ներումն և իր միջնորդությունը: Իսկ պարթևները պատասխանեցին, թե չեն մերժի Արտաբանեսին ընդունել, բայց և չեն կարող այդ անել, քանի որ իշխանությունն արդեն հանձնել են մեկ ուրիշին, իսկ այդ սպանձնողի անունն էր Կիննամոս, և վախենում են, որ այդպես վարվելով, իրենց
64 դեմ ապստամբություն հրահրեն: Կիննամոսը, տեղեկանալով նրանց այդ տրամադրությանը, ինքն իսկ գրում է Արտաբանեսին, քանի որ ինքը դաստիարակվել էր նրա կողմից և բնավորությամբ բարի և ազնիվ էր, խնդրելով վստահել իրեն և, վերադառնալով, ետ վերցնել իր իսկ իշխանությունը: Եվ Արտա-
65 բանեսը, հավատալով նրան, ժամանեց: Կիննամոսը դիմավորեց նրան և երկրպագելուց ու նրան թագավոր կոչելուց հետո, իր գլխից խույրը հանելով, դրեց նրա գլխին:

66 Այսպիսով, Արտաբանեսը, Իզատեսի օգնությամբ, նորից հաստատվեց գահին, որից նախապես նա հեռացվել էր մեծամեծների ձեռքով: Նա երախտամոռ չգտնվեց իր հանդեպ կատարված բարերարությունների համար, այլ փոխարենը

Իզատեսին հատուցեց իրենց մոտ ընդունված մեծագույն պա-
67 տիվներով։ Այսպես, նա արտոնեց Իզատեսին (թագավորա-
կան) տիարան գլխին ուղիղ դնել[227] և ոսկե առագաստում
քնել. արտոնություններ, որոնք միայն պարթև թագավորների
իշխանության խորհրդանիշներն էին։ Նաև պարգևեց նրան
ընդարձակ և բերրի մի երկիր, այն վերցնելով հայոց թագա-
վորից։ Այդ երկիրը կոչվում է Նիսիբիս և այնտեղ նախկինում
մակեդոնացիները կառուցել էին Անտիոք քաղաքը, որը կոչե-
ցին նաև Ծպիմիդոնիա[228]։ Այսպիսի պատիվներով Իզատեսը
մեծարվեց պարթևների թագավորի կողմից։

69 Ոչ շատ ժամանակ անց, Արտաբանեսը վախճանվում է,
թողնելով թագավորությունը իր որդի Վարդանեսին[229]։ Սա ար-
դեն հռոմայեցիների դեմ պատերազմի պատրաստվելով, գա-
լիս է Իզատեսի մոտ և փորձում համոզել նրան օգնական ու-
ժեր պատրաստել և իր հետ միացած դուրս գալ արշավանքի։
70 Սակայն չկարողացավ համոզել, որովհետև Իզատեսը, ծանոթ
լինելով հռոմայեցիների հզորությանը և բախտավորությանը,
71 գտնում էր, որ նա անկարելին էր ձեռնարկում։ Դեռ ավելին.
նա առավել ևս դժկամություն էր դրսևորում, քանի որ երի-
տասարդ տարիք ունեցող իր հինգ որդիներին ուղարկել էր
մեր հայրենի բարքերն ու լեզուն լրիվ սովորելու, իսկ մորը,
ինչպես ասվել է, ուղարկել էր տաճարը երկրպագելու, ուստի
և ետ էր կանգնեցնում Վարդանեսին, անվերջ պատմելով նրան
հռոմայեցիների ուժի և արարքների մասին, ենթադրելով, որ
այդպիսով նրան կվախեցնի, և նա կդադարի նրանց դեմ ար-
72 շավանք ցանկանալուց։ Մինչդեռ պարթևը դրանից զայրանա-
լով, իսկույն պատերազմ հայտարարեց Իզատեսի դեմ։ Այ-
սուհանդերձ, նա ոչ մի օգուտ չքաղեց այս արշավանքից,
73 քանի որ աստված նրա բոլոր հույսերը ի դերև հանեց։ Որով-
հետև պարթևները, լսելով Վարդանեսի մտադրությունը, ինչ-
պես նաև հռոմայեցիների դեմ արշավելու նրա որոշումը,
սպանեցին նրան և իշխանությունը հանձնեցին նրա եղբայր
74 Գոտարզեսին[230]։ Ոչ շատ ժամանակ անց, սա նույնպես դա-
վադրության հետևանքով սպանվեց[231] ու նրան հաջորդեց նրա
եղբայր Վոլոգեսեսը[232], որն իր հայրակից երկու եղբայրներին
ևս թագավորություններ վստահեց. ավագին՝ Պակորոսին նա
տվեց Մեդիան[233], իսկ կրտսերին՝ Տրդատին՝ Հայաստանը։
75 Թագավոր (Իզատեսի) եղբայր Մոնոբազոսը և նրա ազ-

գակիցները նկատելով, որ Իզատեսը աստծու հանդեպ իր ունեցած բարեպաշտությամբ նվաճել է բոլոր մարդկանց հիացմունքը, իրենք ևս փափագեցին հրաժարվել իրենց հայ-
76 րենի սովորություններից և ընդունել հրեական բարքերը: Նրանց այս արարքը հայտնի դարձավ հպատակներին, և այդ բանից մեծամեծները վրդովվեցին, բայց իրենց զայրույթը չէին արտահայտում, այլ իրենց հոգում թաքցնելով այն, սպասում էին հարմար մի առիթի նրանց հետ դատաստան
77 տեսնելու համար: Այդ մասին (թուղթ) են գրում արաբների թագավոր Աբիասին, խոստանալով նրան մեծ գումար տալ, եթե նա ցանկանար արշավել իրենց թագավորի դեմ, միաժամանակ հայտնելով, որ առաջին իսկ ճակատամարտում նրանք կլքեն (իրենց) թագավորին, որովհետև ցանկանում են պատժել նրան իրենց բարքերը արհամարհած լինելու պատճառով: Եվ իրար նկատմամբ հավատարմության երդում տա-
78 լուց հետո, խնդրում էին շտապեցնել (արշավանքը): Արաբ (թագավորը) համոզվելով, մեծ զորք է հավաքում և արշավում է Իզատեսի վրա: Երբ պետք է տեղի ունենար առաջին ճակատամարտը, և նախքան կսկսվեր կռիվը, (մեծամեծնե-
րը), ազդանշանի վրա, լքեցին Իզատեսին, ձևացնելով, որ իբր խուճապի են մատնվել, և իրենց թիկունքը թշնամուն
79 դարձնելով, փախան: Սակայն Իզատեսը չցնցվեց, այլ կռահելով, որ մեծամեծների կողմից դավաճանություն է տեղի ունեցել, ինքը ևս նահանջեց դեպի զորակայան, և հետաքրքրվելուց հետո, երբ իմացավ նրանց փախչելու պատճառը, թե դաշնակցել են արաբ (թագավորի) հետ, մեղավորներին սպա-
80 նեց. իսկ հաջորդ օրը, ճակատամարտ տալով, շատերին կոտորեց ու բոլորին փախուստի մատնելով և իրեն, թագավորին իսկ, հալածելով, քշեց մինչև Արսամոն բերդը, և կատաղի մարտից հետո այն գրավեց և այնտեղ գտնված ամբողջ ավարը խլելով, իսկ այն շատ էր, վերադարձավ Ադիաբենե, չկարողանալով Աբիասին կենդանի բռնել, որովհետև, սա բոլոր կողմերից շրջապատված լինելով, ինքնասպան եղավ, նախքան կընկներ Իզատեսի ձեռքը:

81 Ադիաբենեի մեծամեծները, երբ ձախողվեցին իրենց առաջին փորձի մեջ, քանի որ աստված նրանց մատնեց (Իզատես) թագավորի ձեռքը, դարձյալ չհանդարտվեցին, այլ նորից թուղթ հղեցին Վոլոգեսեսին, որը պարթևների թագավորն էր,

նրան խնդրելով ոչնչացնել Իզատեսին և իրենց վրա նոր տիրակալ կարգել պարթևական տոհմից. որովհետև, ինչպես ասում էին նրանք, ատում էին իրենց թագավորին հայրենի բարքերը վերացնելու և օտար սովորույթներին երկրպագու
82 դառնալու համար: Այս մասին լսելով, պարթևը սկսեց ձգտել պատերազմի, բայց արդարացի ոչ մի պատրվակ գտնել չկարողանալով, (հրահանգ) ուղարկեց, ետ պահանջելով (Իզատեսից) իր հոր կողմից նրան շնորհված պատիվները, և սպառ-
83 նաց, մերժելու դեպքում, պատերազմ սկսել: Այս ամենը լսելով, Իզատեսի հոգին քիչ չվրդովվեց, մտածելով, որ այդ պատիվները ետ վերադարձնելը արհամարհանք կհարուցի իր հանդեպ, որովհետև կթվար, թե նա այդպես է վարվում վա-
84 խից դրդված: Սակայն, համոզված լինելով, որ պարթևը պարգևները ետ ստանալուց հետո ևս չի հանգստանալու, հարմար դատեց վտանգի այս պահին իրեն հանձնել աստծու ողորմածությանը և հավատալով, որ (աստված) իր մեծագույն դաշնակիցն է, իր որդիներին ու կանանց ամենաապահով բերդերում թողեց, իսկ ամբողջ խոտն ու արոտները հրկիզեց:
85 Այսպիսի նախապատրաստությունից հետո, սպասում էր Բըշ-
86 նամուն: Երբ պարթևը ժամանեց հետևակ և հեծյալ մեծաթիվ զորքով ավելի կարճ ժամանակում, քան ինքը սպասում էր, որովհետև նա շատ արագ էր արշավել, Իզատեսը ևս, իր հետ ունենալով վեց հազար հեծյալ, բանակեց նրանից ոչ հեռու:
87 (Այդ ժամանակ) պարթևի կողմից ուղարկված դեսպանը ժամանեց Իզատեսի մոտ և հիշեցրեց նրան, թե ինչքան ընդարձակ է պարթևների տերությունը, թե նրա սահմանները տարածվում են Եփրատ գետից մինչև Բակտրիա, միաժամանակ
88 թվարկեց պարթևներին հպատակվող թագավորներին: Այնուհետև սպառնաց, որ (Իզատեսը) կհատուցի իր տերերի հանդեպ ունեցած ապերախտության համար, և որ արքայի ձեռքից նրան չի կարող փրկել մինչև իսկ նրա պաշտած աստ-
89 վածը: Դեսպանի այս խոսքերից հետո Իզատեսն ասաց, որ ինքը գիտե, թե պարթևների տերությունը շատ ավելի ընդարձակ է, քան իրենը, գիտե նաև, ասաց նա, որ բոլոր մարդկանցից առավել հզոր աստվածն ինքն է: Այսպիսի պատասխան տալուց հետո, նա իրեն հանձնեց աստծու ողորմածությանը և իրեն գետին նետելով ու գլխին մոխիր ցանելով, կնոջ ու

որդիների հետ միասին ծոմ էր պահում և աստծուն աղաչում
90 այս խոսքերով. «Ո՛վ տեր թագավոր, եթե իզուր չէ, որ ես վա-
յելել եմ քո բարերարությունը և քեզ եմ ճանաչել որպես ա-
մենազոր և արդարագույն տերը բոլորի մեջ, հասիր ինձ օգ-
նության ոչ միայն իմ թշնամիներից ինձ պաշտպանելու հա-
մար, այլ և այն պատճառով, որ նրանք հանդգնեցին մարտա-
91 հրավեր կարդալ քո հզորության դեմ»: Նա այսպես աղաղա-
կում էր արցունք թափելով ու ողբալով. իսկ աստված լսեց
նրան և նույն գիշերն իսկ Վոլոգեսեսը նամակներ է ստանում,
որոնցում գրված էր, թե դայերի և սակերի խոշոր ուժեր, օգտ-
վելով իր բացակայությունից, ներխուժել են (թագավորու-
թյան սահմանները) և ասպատակում են պարթևական երկիրը:
Ուստի և նա դատարկաձեռն ետ վերադարձավ: Այսպիսով,
Իզատեսը աստվածային նախախնամությամբ խուսափեց
պարթևի սպառնալիքներից:
92 Ոչ շատ ժամանակ անց, իր ծննդյան հիսունհինգերորդ
տարին լրացնելուց և քսաներս տարի թագավորելուց հետո,
(Իզատեսը) մահանում է, թողնելով քսաներս տղա և քսան-
93 չորս դուստր: Եվ նա հրահանգեց, որ **իշխանությունը ժառանգի**
իր եղբայր Մոնոբազոսը, որպես վարձատրություն այն բանի,
որ իր հոր մահից հետո, երբ ինքը դեռևս երկրից բացակա-
յում էր, նա իր համար հավատարմորեն պահպանեց երկի-
94 րը: Իսկ նրա մայր Հելենեն, լսելով իր որդու մահը, ծանր ապ-
րումներ ունեցավ, ինչպես վայել էր այդքան բարեպաշտ որ-
դուց զրկվող մորը: Այսուհանդերձ, նա մխիթարվեց, լսելով,
որ իշխանությունը անցել է իր ավագ որդուն, ուստի և փու-
թաց գալ նրա մոտ: Նա ժամանեց Ադիաբենե, բայց իր որդի
Իզատեսի (մահից հետո) երկար չապրեց, այլ ճնշվելով ծե-
րության ու տխրության բեռան տակ, շուտով հոգին ավանդեց:
95 Իսկ Մոնոբազոսը և՛ նրա, և՛ իր եղբոր աճյունը Երուսաղեմ
ուղարկելով, պատվիրեց թաղել այն երեք բուրգերի մեջ, որ
իր մայրը կառուցել էր Երուսաղեմ քաղաքից երեք ասպարեզ
96 հեռավորության վրա: Ինչ վերաբերում է այն գործերին, որ
կատարեց թագավոր Մոնոբազոսը իր կյանքի ընթացքում,
մենք կպատմենք հետագայում[234]:

* * *

139 Եպիփանեսը՝ (Կոմմագենեի) Անտիոքոս թագավորի որ-
դին, չցանկանալով ընդունել հրեական բարքերը, հրաժարվեց

այդ ամուսնությունից, թեպետև նախապես այդ խոստացել էր նրա հորը[235]։

* * *

158 Ներոնի իշխանության առաջին տարին, երբ Եմեսայի դինաստ Ազիզոսը մահացավ, իշխանությունը ժառանգեց նրա եղբայր Սոեմոսը[236]։ Իսկ Փոքր Հայքի իշխանությունը Ներոնը հանձնեց Քաղկիսի Հերովդես թագավորի որդի Արիստոբուլոսին[237]։

* * *

245 Այդ ժամանակ պարթևական երկրի տիրակալները Բարզափռանեսը[238] և Պակորոսը, անցնելով Եփրատը և պատերազմելով Հյուրկանոսի դեմ, նրան կենդանի գերեցին և Արիստո-
246 բուլոսի որդի Անտիգոնոսին թագավոր հայտարարեցին։ Սա իշխեց երեք տարի և երեք ամիս, որից հետո, պաշարվելով Սոսսիոսի և Հերովդեսի կողմից, գերի վերցվեց, իսկ Անտոնիոսը նրան Անտիոք տանելով, սպանեց։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Ապիոն Ալեքսանդրիացին ապրել է մ. թ. I դարում և ժամանակակիցն է Հովսեպոս Փլավիոսի։ Ծնվել է Ալեքսանդրիայում։ Եղել է հայտնի քերական։ Տիբերիոս կայսեր ժամանակ մեկնել է Հռոմ և դարձել ճարտասանության դասատու։ Կալիգուլայի ժամանակ գլխավորել է Ալեքսանդրիայից կայսեր մոտ ուղարկված հակահրեական պատվիրակությունը և հրեաներին մեղադրող հատուկ հուշագիր հանձնել Կալիգուլային։ Ապիոնը եղել է զարգացած հեղինակ։ Նա առավելապես հայտնի է եղել որպես Հոմերոսի մեկնիչ։ Գրել է նաև եգիպտոսի պատմությունը, բաղկացած հինգ գրքից, բայց նրա գործերից մեզ չնչին մի մաս է հասել։ Նրա մասին մենք առավելապես տեղեկանում ենք Հովսեպոսի ներկա հակաճառությունից։ Պարզվում է, որ Ապիոնը իր աշխատություններում ամեն կերպ ձգտել է վարկաբեկել հրեաներին, որոնց պաշտպանությանն է նվիրված Հովսեպոսի «Ընդդեմ Ապիոնի» երկը։*

2 *Այստեղ Հովսեպոսը նկատի ունի Աստվածաշնչի հետևյալ գրքերը, որոնք բովանդակում են հրեաների ավանդական պատմությունը. Ննգամատյան (Ննընդոց, Ելից, Ղևտացվոց, Թվոց, Երկրորդ օրինաց գրքերը), Նավյան Հեսու, Դատավորաց, Թագավորաց Ա. Բ. Գ, Դ, Մնացորդաց Ա և Բ, Եզրասի, Նեեմյայի, Եսթերի, Մակաբայեցվոց Ա, Բ և Գ գրքերը և, հավանաբար, Սաղմոսներն ու Առակաց գիրքը։ Հրեաների ծագումնաբանության և դավանաբանության հիմքը կազմող Ննգամատյանի հեղինակությունը վերագրվում է հրեական լեգենդար մարգարե և օրենսդիր Մովսեսին, որը հրեաներին դուրս բերեց եգիպտական գերությունից, առաջնորդեց Սինայի անապատով մինչև ավետյաց երկիրը և, իբր, հաղորդակցելով Եհովայի՝ հրեաների աստծու հետ, իր ժողովրդին տվեց հիերոկրատիկ հասարակության ներքին հարաբերությունները կարգավորող օրենքները։*

3 *Աքեմենյան արքաներից Արտաքսերքսես Ա-ն 465 թ. պարսկական գահի վրա հաջորդեց Քսերքսեսին (486—465 թթ.) և թագավորեց 40 տարի։*

4 *Խոսքը 490 թ. Դարեհ Ա-ի և 480 թ. Քսերքսեսի Հունաստան կատարած արշավանքների մասին է, որոնք, ինչպես հայտնի է, վերջացան անհաջող։*

5 *Բերոսոսը (330—250 թթ. մ. թ. ա.) եղել է Բաբելոնում Բելի տաճարի քուրմը։ Սեպագիր աղբյուրների հիման վրա նա հունարեն գրել է Բաբելոնի պատմությունը χαλδαϊκὰ կամ* Βαβυλωνιακὰ *վերնագրով, որն իր ժամանակ հայտնի է եղել հելլենիստական աշխարհում* (*P. Schabel*, Berossus und die babylonisch-hellenistische Literatur, Leipzig—Berlin, 1923; *И. М. Дьяконов*, История Мидии, М.—Л., 1956, *էջ 35 և հաջ.*)։ *Բերոսոսի*

հեղինակությունը հայտնի է եղել Մովսես Խորենացուն. «Այլ և բազում արք,— գրում է պատմահայրը,— անուանիք և իմաստութեան պարապեալք ի Յունաց աշխարհէն՝ հոգացան ոչ միայն զգիրս դիւանացն այլոց ազգաց թագաւորացն և զմեհենիցն յեղուլ ի յոյն բան,— որպէս գտանեմք զայն, որ և զԲերոսոսն յայս յորդորեաց զայր քաղդէացի և զվարժ ամենայն իմաստութեամբ,— այլ և զմեծամեծս և զզարմանալոյ արժանաւորս յարուեստից. և ուրեք գտեալ աշխատութեամբ, հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզուս» (Մ. Խորենացի, Ա, բ)։ Բերոսոսից մեջ բերված ընդարձակ հատվածները առանձին արժեք են հաղորդում Հովսեպոսի այս երկին, քանի որ քաղդեացի պատմագրի երկը մեզ չի հասել։

6 Նոքոսը Աստվածաշնչի Նոյ նահապետն է։ Բերոսոսի մեզ չհասած բնագրում նրա անունը, ինչպես հաղորդում է բյուզանդական մատենագիր Սինկելոսը, եղել է Քսիսութրիս։ Խորենացին ևս Բերոսոսից քաղած իր վկայության մեջ Նոյի փոխարեն հիշատակում է Քսիսութրիս անունը։ (Մովսես Խորենացի, Ա, զ)։

7 Նաբուպալասարը թագավորել է Բաբելոնում մ. թ. ա. 625—604 թթ.։

8 Նաբուքոդոնոսորը թագավորել է մ. թ. ա. 604—561 թթ.։

9 Պարսից Կյուրոս արքան իշխել է մ. թ. ա. 559—529 թթ.։

10 Խոսքը Նաբուքոդոնոսորի մասին է։

11 Բաբելոնի «կախյալ պարտեզները» համարվել են հին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը։ Դրանց առավել լրիվ նկարագրությունը տվել է հույն պատմիչ Կտեսիասը, որից և քաղել է Դիոդորոս Սիկիլիացին (Diodor., II, 7 և հաջ.)։

12 Այստեղ ամբողջ մի հատված (§§ 135—141) բառացի կրկնվում է Հովսեպոսի «Հրեական հնախոսություն» մատյանում (X, 219—226)։ Կրկնությունից խուսափելու համար մենք այն զանց ենք արել «Հնախոսության» համապատասխան մասերը թարգմանելիս։

13 Հովսեպոսն այստեղ նկատի ունի մ. թ. ա. IV դարի հույն հեղինակ Կտեսիասին, որը Ասորեստանի տերության առասպելական հիմնադիրներ Նինոսի և Շամիրամի (Սեմիրամիս) պատմության համար գլխավոր հեղինակությունն էր համարվում հին աշխարհում (հմմտ. Herodot., I, 84)։

14 Փիլոստրատոսը գրել է Հնդկաստանի և Փյունիկիայի պատմությունը, որի մասին մեզ հասած միակ վկայության համար մենք պարտական ենք դարձյալ Հովսեպոսին։

15 Մեգասթենեսն այն հեղինակն է, որին հետագայի հույն պատմիչները պարտական են Հնդկաստանի վերաբերյալ իրենց ունեցած գիտելիքների մեծ մասի համար։ Սելևկոս Ա Նիկատորի կողմից նա շուրջ 300 թ. դեսպանության կազմում ուղարկված է եղել հնդկական թագավոր Չանդրագուպտայի մոտ։

16 Լիբիա ասելով հնում հասկացել են ընդհանրապես Աֆրիկան, իսկ որոշ դեպքերում՝ Աֆրիկայի հյուսիսային մասերը։ Իբերիան այս դեպքում Պիրենյան թերակղզին է։

17 Պերսիսը համապատասխանում է «Աշխարհացոյց»-ի Պարսք նահանգին (Ս. Տ. Եռեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 114)։

18 Բորսիպա. այժմ Բիրս Նիմրուդ բնակավայրը Բաբելոնից հարավ։

19 Կարմանիա մարզը գտնվում է Պարսից ծոցի ափին։

20 Տե՛ս Herodot., II, 104, որտեղից գրեթե բառացի վերցրել է Հովսեպոսը։

21 Թերմոդոնտ (Թերմեռ-չայ) և Պարթենիոս գետերը գտնվում են Փոքր

Ասիայում, առաջինը՝ Թեմիսկիրայի մոտ, Պոնտոսում, երկրորդը՝ Պափլագոնիայում։

22 Մակրոնների ցեղն ապրում էր Պոնտոսում։ Նրանց մասին հիշատակում է դեռևս VI դարի վերջի V դարի սկզբի մատենագիր Հեկատեոս Միլետացին։ Մակրոններին և նրանց երկիրը առավել մանրամասն նկարագրել է ականատես Քսենոփոն Աթենացին իր «Անաբասիս» երկում (Xenoph., Anab., IV, VIII, —118).

23 Հույն բանաստեղծ Հոյրիլոսը ծնվել է Սամոս կղզում և եղել է Հերոդոտոսի կրտսեր ժամանակակիցն ու մտերիմը։ Գրել է էպիկական պոեմ, նվիրված հույն-պարսկական պատերազմներին։ Այդ մասին հիշատակում է Ստրաբոնը (Strabo, VII, 9, c. 303).

24 Հեկատեոս Միլետացի։ Մ. թ. ա. VI դ. վերջի և V դ. սկզբի հույն մատենագիր. ապրել է հույն-պարսկական պատերազմների շրջանում, որի ժամանակ էլ ծավալել է քաղաքական լայն գործունեություն։ Շրջել է շատ երկրներ և գրել մի շարք երկեր, որոնցից միայն հատվածներ են մեզ հասել։ Ինչպես երևում է, նրա երկերը դեռևս պահպանվում էին Հովսեպոսի ժամանակ։

25 Ադաթարքիդես։ Մ. թ. ա. II դ. հույն հեղինակ, որը գրել է պատմական և աշխարհագրական մի շարք երկեր։

26 Ստրատոնիկեն դուստրն էր Սելևկյան թագավոր Անտիոքոս Ա Սոտերի և ամուսնացած էր Մակեդոնիայի Դեմետրիոս Բ թագավորի հետ (տե՛ս հաջորդ ծանոթ.)։ Երբ Դեմետրիոսը կնքեց իր երկրորդ ամուսնությունը, Ստրատոնիկեն օգնություն խնդրեց Սելևկոս Բ Կալլինիկոսից։

27 Դեմետրիոս Բ (մ. թ. ա. 239—229 թթ.), Մակեդոնիայի թագավոր, որդին Անտիգոնոս Գոնատասի։

28 Սիրիան հայկական մատենագրության նույն Ասորիքն է։

29 Սելևկոս Բ Կալլինիկոսը թագավորել է մ. թ. ա. 247—225 թթ.։

30 Անաքարսիս։ Անվանի սկյութացի, որը հույն օրենսդիր Սոլոնի ժամանակ (մ. թ. ա. VII դ. վերջ) այցելել է Աթենք։ Այդ մասին վկայում են նաև Հերոդոտոսը, Պլատոնը, Պլուտարքոսը և ուրիշներ։

31 Սկյութացիների մասին Հովսեպոսի այս վկայությունները քաղված լինելով Հերոդոտոսից (գուցե և Հեկատեոսից), բնականաբար արտացոլում են ոչ թե իր ժամանակի, այլ մ. թ. ա. VI դարից առաջ ընկած ժամանակաշրջանի սկյութական բարքերը։

32 Ապոլլոնիոս։ Մ. թ. ա. III դ. հույն հեղինակ, որի գրչին է պատկանում «Արգոնավտիկա» էպիկական պոեմը։

33 Ակնարկությունը մ. թ. ա. 490 և 480 թթ. պարսիկների Հունաստան կատարած արշավանքների մասին է, երբ հույները, շարժման մեջ դնելով իրենց ամբողջ ուժերը, մեծ կորուստների գնով, հազիվ կարողացան ետ շպրտել պարսիկներին և պահպանել իրենց երկիրը նվաճումից։

34 Պարսիկների այդպիսի բարքերի ու սովորությունների մասին վկայում է Հերոդոտոսը (IV, 32)։

35 Ակնարկությունը Հռոմեական տիրապետության դեմ 66 թ. Պաղեստինում ծագած հրեական ապստամբության մասին է (տե՛ս առաջաբանը)։

36 Խոսքը վերաբերում է ոչ թե Փոքր Ասիայում հաստատված գալատներին, այլ Գալլիայում ապրող ցեղերին։

37 Այս Ալեքսանդրան Տիգրան Բ-ի ժամանակ Հրեաստանի թագուհին էր, որին Խորենացին անվանում է «դժխոյն Հրէից Աղեքսանդրիայ, որ և Մեսաղինայ, որ էր լեալ կին Աղեքսանդրի ... որ զայնու ժամանակաւ ունէր զթագաւորութիւնն Հրէից» (Մ. Խորենացի, Բ, ժդ)։

38 Այս Պտղոմեոսը, Մեննայոսի որդին, ոչ մի առնչություն չունի Եգիպտոսի Պտղոմեոսների հետ։ Նա եղել է Կելե-Սիրիայի (Ներքին Ասորիք) ոչ մեծ թագավորության տիրակալը մ. թ. ա. 85—40 թթ.։ Նրա իշխանության կենտրոնը եղել է Քաղկիսը։ Շատ հավանական է, որ այս Պտղոմեոսը դաշնակից էր Տիգրան Բ-ին, քանի որ պատերազմում էր հայոց թագավորի թշնամի՝ Հրեաստանի դեմ։ Երբ 84—83 թթ. Տիգրանը նվաճեց Ասորիքը, Պտղոմեոսը, երևի, ընդունեց Տիգրանի գերիշխանությունը և մնաց Կելե-Սիրիայում նրան ենթակա կառավարիչ։

39 Այս Կլեոպատրան, որը կոչվում էր նաև Սելենե, Եգիպտոսի թագավոր Պտղոմեոս Փիսկոնի (146—117 թթ.) դուստրն էր և ամուսնացել էր Սելևկյան մի քանի թագավորների հետ։ Այս նույն դեպքերի մասին գրել են նաև Ստրաբոնն ու Մովսես Խորենացին, որոնց վկայությունները ավելորդ չեմ համարում մեջ բերել։ «Այստեղ է հիմա եփրատի գետանցը. նրա դիմաց հիմնվել է Միջագետքի Սելևկիա բերդը, որը Պոմպեոսը միացրեց Կոմմագենեին։ Այդ բերդում մի ժամանակ բանտարկելուց հետո Տիգրանը, երբ Սիրիայից դուրս քշվեց, սպանեց Սելեններին, որը վերակոչված էր Կլեոպատրա» (Strabo, XVI, 2, 3, C. 749)։ «Եւ նոյն հետայն դիմէ յաշխարհն, Պաղեստինացւոց՝ վրէժս պահանջել ի Պտղոմայիդ Կղէոպատրայ յաղագս Դիոնիսի որդւոյ նորա առ հայր իւր յանցանաց։ Առեալ գերի բազում և ի Հրէից՝ նստի շուրջ զՊտղոմայիդ քաղաքաւ։ Իսկ դշխոյն Հրէից Աղեքսանդրիայ, որ և Մեսաղինայ, որ էր լեալ կին Աղեքսանդրի, որդւոյ Յովհաննու, որդւոյ Շմաւոնի, եղբօր Յուդայ Մակաբէի, որ զայնու ժամանակաւ ունէր զթագաւորութիւնն Հրէից, ինչ բազում տալով՝ դարձոյց զնա անտի։ Քանզի էր լուեալ և համբաւ, թէ Վայկուն ոմն անուն յեղուզակ խոովէր զերկիրն Հայոց...» (Մ. Խորենացի, Բ, ժդ)։

40 Հյուրկանոս Բ։ Թագավոր և քահանայապետ հրեից (79—40 թթ.), որը առաջին անգամ գահընկեց արվեց իր եղբոր՝ Արիստոբուլոսի կողմից, բայց վերականգնվեց հռոմայեցիների ձեռքով. երկրորդ անգամ նրան տապալեց Արիստոբուլոսի որդի Անտիգոնոսը և ի վերջո Հերովդեսը 39 թ. մահապատժի ենթարկեց 80-ամյա Հյուրկանոսին։

41 Արետաս։ Արաբական Նաբաթեա պետության թագավոր։

42 Հովսեպոսի հաղորդած այս տեղեկությունները գրեթե նույնությամբ կարդում ենք նաև Մովսես Խորենացու մատյանում (Բ, ժե)։

43 Երիքով։ Ոչ մեծ քաղաք Հրեաստանում։ Հովսեպոսի այս գրածը աղբյուր է ծառայել Խորենացուն, որը խոսելով Միհրդատի մահվան մասին, գրում է. «Եւ ի ձեռն հօրն Պիղատոսի Պոնտացւոյ զՄիհրդատ սպանանէ թունաւոր դեղովք։ Վկայէ այսմ բանիս և Յովսեպոս ի ճառին, որ վասն ապրսամին պատմէ, այսպէս ասելով. «Պոմպէի հուպ յերիքով հասանեն աւետիք մահուանն Միհրդատայ» (Մ. Խորենացի, Բ, ժե)։

44 Գաբինիոս։ Հռոմեական զորավար, որին Պոմպեոսը թողեց որպես իր փոխանորդը Արևելքում։

45 Հիշյալ Պտղոմեոսը, որը Եգիպտոսի այդանուն թագավորների շարքում XI էր և կրում էր Ավլետես (Սրնգահար) մականունը, գահ բարձրացավ մ. թ. ա.

80 թվին։ Սակայն Հռոմը նրան ճանաչեց միայն 59 թվականին, այն էլ Պտղոմեոսի կողմից կաշառված Պոմպեոսի միջնորդությամբ։ 58 թվականին մայրաքաղաք Ալեքսանդրիայի զայրացած ժողովուրդը նրան քշեց երկրից։ Երեք տարի վտարանդի մնալուց հետո, նորից ստացավ իր գահը Պոմպեոսի հանձնակատար Գաբինիոսի օգնությամբ։ Բոլորին ատելի դարձած այս միապետը մահացավ 52 թ., գահը թողնելով իր դստեր՝ հայտնի Կլեոպատրային։

46 Քաղաքական այս դեպքերի մասին հաղորդում է նաև Մովսես Խորենացին (Բ, ժզ)։

47 Ստեփանոս Լեհացու թարգմանության մեջ Օրսաննես (Ὀρσάνης) անունը հայկականացվել ու դարձել է Արշամ (Գիրք Պատմութեանց Յովսեպոսի Երուսաղեմացւոյ..., էջ 38)։ Նման սխալների հաճախ կարելի է հանդիպել այդ թարգմանության մեջ. մենք, սակայն, անհրաժեշտ չենք համարում ամեն անգամ անդրադառնալ դրանց։

48 Հռոմում Կատիլինայի դավադրության ճնշումից հետո (մ. թ. ա. 60 թ.), իշխանության գլուխ անցան Պոմպեոսը, Հուլիոս Կեսարը և իր անհաշիվ հարստություններով հայտնի Կրասոսը, կազմելով այսպես կոչված եռապետությունը (տրիումվիրատը)։ Սրանք հռոմեական միրապետության տակ գտնվող երկրները բաժանեցին իրար միջև։ Կրասոսին բաժին ընկավ Ասորիքը։ Ընչաքաղցությունից շլացած ու փառամոլ Կրասոսը ցանկացավ իր կատարելիք նվաճումներով չափվել Ալեքսանդր Մակեդոնացու հետ և արշավեց պարթևների դեմ։ Սակայն իր ռազմական տաղանդով չփայլող այս եռապետը Կարրայի (Խառան) մոտ 53 թ. դաժանորեն ջախջախվեց պարթևների զորավար Սուրենի կողմից և հատուցեց իր կյանքով։ Կրասոսի կենսագրությունը մանրամասն շարադրել է Պլուտարքոսը։

49 Այս նույն փաստը գրեթե նույնությամբ արձանագրված է նաև Խորենացու մատյանում (Բ, ժէ), այն տարբերությամբ, սակայն, որ Խորենացին պարթևների գործունեությունը վերագրել է Տիգրանին։ Պատմությունից հայտնի է, որ Կրասոսի ջախջախումը Կարրայի մոտ տեղի էր ունեցել մ. թ. ա. 53 թ., իսկ Տիգրան Բ-ը գահակալել է մինչև 56 կամ 55 թ. և այդ ժամանակ հայոց բանակավորն էր Տիգրանի որդի Արտավազդը։ Պատմահայրը իր շարադրանքի մեջ միշտ պարթևական զորքի արշավանքը վերագրում է հայոց զորքին (Բ, ժը)։

50 Գայոս Կասսիոս Լոնգինոսը Կրասոսի բանակի քվեստորն էր։ Վերջինիս անփառունակ վախճանից հետո, հավաքելով հռոմեական ջախջախված լեգեոնների մնացորդները, նա կարողացավ իր ձեռքում պահել Ասորիքի որոշ մասը։ Կասսիոսը հետագայում Հուլիոս Կեսարի դեմ կազմակերպված դավադրության գլխավոր ոգեշնչողներից մեկը։

51 Հետագա շարադրանքի ընթացքում Հովսեպոսը, դժբախտաբար, իր այս խոստումը չի կատարում։

52 Տե՛ս ծանոթ. 38։

53 Համմա. Մ. Խորենացի, Բ, ժթ։

54 Պենտեկոստե (հուն. πεντηκοστή) բառացի նշանակում է հիսուներորդ օր։

55 Այս և հետագա պարագաներում «տաճար» ասելով Հովսեպոսը միշտ նկատի ունի Երուսաղեմում գտնվող Սողոմոնի հայտնի տաճարը։

56 *Քորա (հուն. χώρα —երկիր) հելլենիստական աշխարհում կոչվում էր քաղաքից դուրս գտնվող և քաղաքին պատկանող գյուղական վայրը, որի բնակչությունը չէր մտնում քաղաքային համայնքի մեջ։*

57 *Այս Պակորոսը ոչ թե նախորդ հատվածներում հիշատակված արքայորդին է, այլ նրա անվանակից արքունի տակառապետը։*

58 *Բնագրում՝* τῶν καλουμένων ἐλευθερων ἱππέων.

59 *Գալիլեան ընկած էր Պաղեստինի հյուսիս-արևմտյան հատվածում, Ննիսարեթ լճի և Փյունիկեի միջև։ Հրեական ապստամբության ընթացքում Գալիլեան խաղաց առաջնակարգ դեր, հանդիսանալով ապստամբների կարևոր հենակետերից մեկը։*

60 *Հովսեպոսի «Հրեական հնախոսություն» գրքում (XIV, 348) այս նույն դեպքերին վերաբերող մասում* տակառապետ (οἰνοχόος) *բառի փոխարեն ընթերցվում է «ներքինի»* (εὐνοῦχος)։

61 *Իդումեա երկրամասը գտնվում էր Մեռյալ ծովից հարավ և բնակեցված էր արաբական ծագում ունեցող իդումեացիներով։ Իդումեայից էին սերում Հրեաստանի գահին նստած Հերովդեսները։*

62 *Հովսեպոսից մեր թարգմանած այս վերջին հատվածների բովանդակությունը հիմնական աղբյուրն է Խորենացու պատմության երկրորդ գրքի XIX գլխի։ Հովսեպոսի և Խորենացու այս հատվածների համեմատության վերաբերյալ տե՛ս Г. Халатьянц,* Армянские Аршакиды в „Истории Армении" Моисея Хоренского, т. I. М., 1903, *էջ 56—68, Գ. Խ. Սարգսյան, Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ, էջ 31—42։*

63 *Համմտ.* Մովսես Խորենացի, *Բ, իա։*

64 *Սա Մարկոս Անտոնիոսն է, որը մ. թ. ա. 43 թ. Լեպիդոսի և Օկտավիանոսի հետ կազմեցին երկրորդ եռապետությունը Հռոմում։ Այս անգամ Հռոմի արևելյան տիրույթները անցան Անտոնիոսին։*

65 *Սամոսատ։ Կոմմագենեի թագավորության մայրաքաղաքը։*

66 *Հին հույները բարբարոս էին համարում ընդհանրապես բոլոր ոչ-հելլեններին։*

67 *Անտիոքոս։ Կոմմագենեի թագավոր (մ. թ. ա. 69—34 թթ.), որը թոզել է Նեմրուդ լեռան հոյակապ հուշարձանը։*

68 *Պլուտարքոսը* (Anton., 34) *այլ կերպ է պատմում Անտիոքոսի հանձնվելու մասին, գրելով, որ Անտոնիոսը խաղաղության դաշինք կնքեց Անտիոքոսի հետ այն բանից հետո, երբ վերջինս նրան վճարեց 300 տաղանդ, նախկինում Բենտիդիոսի պահանջած հազարի փոխարեն։*

69 *Համմտ.* Մովսես Խորենացի, *Բ, իա։*

70 *Արտաբազնսը (Արտավազդ) Հովսեպոսի այս հատվածում սխալմամբ անվանված է պարթև։ Սա հայոց թագավոր Արտավազդ Բ-ն է, Տիգրան Բ-ի որդին, որին Անտոնիոսը համարում էր պարթևական արշավանքի ժամանակ իր կրած պարտության գլխավոր պատճառը (Համմտ. Plutarch., Anton., 50)։ «Հրեական հնախոսության» մեջ (XV, 104) Հովսեպոսը Արտաբազեսին չի անվանում պարթև։ Հովսեպոսի այս վկայությունն է ընկած Խորենացու երկրորդ գրքի XXIII գլխի հիմքում։*

71 *Արքելաոսը Անտոնիոսի օգնությամբ ստացավ Կապպադովկիայի գահը և թագավորեց մ. թ. ա. 36—17 թթ.։ Նրա մահից հետո Կապպադովկիան վերածվեց*

հռոմեական պրովինցիայի։ Գործակցելով Անտոնիոսի հետ, Արքելաոսը ստացավ նաև Փոքր Հայքի թագավորությունը և Կիլիկիայի մի մասը (Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 308)։

72 Այս Գլափյուրայի մայրը, հավանաբար, եղել է Արտաշեսյան տոհմի հայ թագավորի դուստր (Հ. Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 300)։

73 Այս Տիգրանը, հավանաբար, Օգոստոսի կողմից 6 թ. Հայաստանի գահին բազմեցված Տիգրան Ե-ն է (Հ. Հ. Մանանդյան, նույն տեղում)։

74 Մասնավոր մարդ (ἰδιώτης) հունական աշխարհում կոչվում էր այն քաղաքացին, որը չէր վարում որևէ պետական պաշտոն։

75 Տե՛ս ծանոթ. 73։

76 Այս Ագրիպպասը Քաղկիսի ոչ մեծ թագավորության տիրակալն էր, որին Ներոն կայսրը, շնորհելով հիշյալ չորս քաղաքներն իրենց շրջակայքով, պարտավորեցնում է մասնակցել Հայաստանի և պարթևների դեմ հռոմայեցիների ձեռնարկած արշավանքին (Հ. Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 327)։

77 Պերեա (հուն. (Περαία) կոչվում էր առհասարակ ջրից այն կողմ գտնվող երկիրը։ Հնում այդպես էր կոչվում հատկապես Հորդանան գետից այն կողմ գտնվող Պաղեստինի մասը, որը և նկատի է առնված Հովսեպոսի այս հատվածում։

78 Բնագրում՝ ἐπίτροπος.

79 Իստրոս հնում կոչվում էր Դանուբ գետը։

80 Գադեյրա (լատին. Gades)։ Առափնյա քաղաք Պիրենյան թերակղզում։

81 Հռոմեական պետության մեջ բարձրաստիճան պաշտոնյաների առաջից գնում էին հատուկ պաշտոնատար անձինք, որոնք, որպես իշխանության նշան, տանում էին ձողիկների մի կապոց, ծայրին կացին ամրացրած։ Հռոմայեցի հյուպատոսների իշխանության նշանն ուներ 12 ձողիկ, դիկտատորներինը՝ 24, քաղաքային պրետորներինը՝ 2, իսկ պրովինցիայի կառավարիչներինը՝ 6։ Այս հատվածում խոսքը վերաբերում է այն բանին, որ Հունաստանը ենթարկվում էր հռոմայեցի կառավարչին։

82 Մեյոտիս լիճ հնում կոչվում էր Ազովի ծովը։

83 Հովսեպոսը, հավանաբար, նկատի ունի պարթևների թագավոր Վաղարշի եղբայր Տրդատին, որը Հռոմում թագադրվեց որպես հայոց թագավոր, այնտեղ թողնելով իր դստերը որպես պատանդ (համմտ. Tacit., Annal., XV, 29 և հետ.)։

84 Բնագրում՝ οἰκουμένη. Անտիկ հեղինակները այսպես են անվանում իրենց հայտնի աշխարհը։

85 Հայտնի է, որ հռոմեական կայսրության բոլոր ազատ բնակիչները Հռոմի քաղաքացու իրավունքներ ստացան միայն Անտոնինոս Կարակալլա կայսեր ժամանակ (211—217 թթ.)։ Մեր թարգմանած հատվածում «բնակեցված երկրի բոլոր մարդիկ հռոմեացիներ են» ասելով, Հովսեպոսը ուզում է շեշտել, թե այդ բոլոր երկրները հպատակեցված են Հռոմին։

86 Ադիաբենեում իշխող արքայատոհմը Կլավդիոսի կայսրության ժամանակ (41—54 թթ.) հարել էր հրեական կրոնին, որի համար էլ Հովսեպոսը Ադիաբենեի բնակիչներին ցեղակիցներ է անվանում (համմտ. Jos. Flav., Jud. Ant., XX, 17 և հետ.)։

87 Զչիոթել Սելևկյան թագավոր Անտիոքոս Դ. Եպիփանեսի հետ։ Այստեղ խոսքը Կոմմագենեի թագավոր Անտիոքոս Ե-ի մասին է։

88 Ակնարկությունը նախորդ ծանոթագրության մեջ հիշատակված Անտիոքոս Դ-ի մասին է։

89 Ըստ Հերոդոտոսի, Աթենքի հայտնի օրենսդիր, հին աշխարհի ամենահմաստուն մարդկանցից մեկը համարվող Սոլոնը ևս, Լյուդիայի արքա Կրեսոսի մոտ հյուրընկալվելիս, զրույցի ժամանակ նույնպիսի մի ասույթ է արտահայտել (*Herod.*, I, 32).

90 Տիտոս Փլավիոս Սաբինոս Վեսպասիանոս։ Վեսպասիանոս կայսեր որդին, որը իր հոր հետ մասնակցեց հրեական ապստամբության ճնշմանը և այն հասցրեց իր ավարտին։ Վերադառնալով Հռոմ, Տիտոսը նախ դարձավ իր հոր գահակիցը, իսկ նրա մահից հետո՝ կայսր (79—81 թթ.)։

91 Հռափանեան գտնվում էր հյուսիսային Սիրիայում, Եմեսայից (այժմ՝ Հոմս) արևմուտք։

92 Մելիտենե. այժմ՝ Մալաթիա։

93 Անտիոք անունով եղել են մոտ երկու տասնյակ քաղաքներ, հիմնադրված Սելևկյան առաջին թագավորների կողմից։ Այստեղ խոսքը վերաբերում է նախկինում Սելևկյանների պետության մայրաքաղաք, այդ ժամանակ հռոմեական պրովինցիա դարձած Սիրիայի կենտրոն Անտիոքին։ Սա իր ժամանակ երրորդ խոշոր քաղաքն էր հռոմեական կայսրության մեջ, Հռոմից և Ալեքսանդրիայից հետո, 500 հազարի հասնող բնակչությամբ, և եղել է հելլենիստական մշակույթի խոշորագույն օջախ, որտեղ կենտրոնացել էին մեծ թվով հրեաներ, կազմակերպելով առանձին համայնք։

94 Տե՛ս ծանոթ. 84։

95 Այստեղ Հովսեպոսը նկատի ունի Սելևկյան Անտիոքոս Ա Սոտեր թագավորին (280—261 թթ.)։

96 Սելևկյան Անտիոքոս Դ Եպիփանեսը թագավորել է 174—164 թթ.։

97 Հովսեպոսը մեկ այլ տեղ (Contra Apion., II, 39) վկայում է, որ Անտիոքի հրեաներին այդ իրավունքները շնորհել էր դեռևս Սելևկյան հարստության և Անտիոք քաղաքի հիմնադիր Սելևկոս Ա Նիկատորը (312—280 թթ.)։

98 Խոսքը Պաղեստինի հրեաների ապստամբության մասին է։

99 *Բնագրում՝* ἄρχων τῶν ἐπ' Ἀντιοχείας ἰουδαίων.

100 Մովսիսական օրենքի համաձայն, շաբաթվա յոթերորդ օրը սուրբ էր հրեաների համար, և այդ օրն աշխատելը համարվում էր սրբապղծություն։

101 Հունարեն բնագրի ἡ ἀγορά, τὰ ἀρχεῖα, τὸ γραμματοφυλάκιον, αἱ ἀρχαὶ բառերը համապատասխանաբար թարգմանել ենք՝ «հրապարակ», «մատենադարան», «դիվանատուն», «ապարանք»։

102 Կեսենիոս Պետոսը այն անձնավորությունն է, որը 62 թ. Հռանդեայի մոտ խայտառակ պարտություն կրեց Տրդատի գլխավորած հայ-պարթևական ուժերից։ Այդ պարտության անմիջական հետևանքն այն էր, որ Հռոմը ստիպված եղավ Տրդատին ճանաչել որպես Հայաստանի թագավոր։ Դրանով իսկ հաստատվում է հայ Արշակունիների հարստությունը։

103 *Բնագրում՝* διμόσια γράμματα.

104 *Բնագրում՝* δηνάριος—դեմոս։

105 Ասպարեզ (στάδιον) — երկարության չափ անտիկ աշխարհում, որը հավասար էր մոտավորապես 185 մետրի։

106 Զևգմայի գետանցը գտնվում էր վերին Եփրատի աջ ափին, Սամոսատ

քաղաքի մոտ. իր անունը ստացել է այնտեղ գետի վրա կառուցված նավակների կամուրջից։

107 Վոլոգեսես-Վաղարշը (51—75 թթ.) պարթևական պետության ամենաընդունակ և ամենահզոր թագավորներից էր։ Մեծ է եղել նրա նպաստը Հայաստանում Արշակունյաց հարստության հաստատման գործում։

108 Նախորդ հատվածներից մեկում Հովսեպոսը այս Արիստոբուլոսին հիշատակում է իբրև Փոքր Հայքի թագավոր, իսկ Քաղկիսի (նույնը թե՝ Քաղկիդիկեի) թագավոր համարում է Ագրիպպասին (տե՛ս էջ 80)։ Այդպես էլ ընդունված է պատմագրության մեջ (Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 327 և 340)։

109 Եմեսա (այժմ՝ Հոմս)։ Սիրիայում գտնվող համանուն փոքր թագավորության կենտրոն, Օրոնտես գետի վրա։ Այս թագավորությունը նախապես ենթակա էր Հռոմին, իսկ 72 թ. հետո հռոմայեցիները այն միացրին իրենց Սիրիա պրովինցիային։ Եմեսայի թագավոր Սոեմոսի սերնդից մի իշխան հետագայում դարձել է հայոց թագավոր (Հ. Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 327, К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 225 և 235)։

110 Տանայիս անտիկ հեղինակները կոչում էին Դոն գետը։

111 Հովսեպոսի երկերն ընթերցելիս մենք չգտանք այն հատվածը, որի մասին այստեղ ակնարկում է մատենագիրը։

112 Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներին նվիրված իր պատմության մեջ II դ. հեղինակ Արրիանոսը նկարագրում է, թե ինչպես Ալեքսանդրը, Դարեհ Կոդոմանոսին հետապնդելիս, չկարողացավ հասնել նրան, նախքան սա կհասներ այդ կետը, բայց Հովսեպոսի հիշատակած «երկաթե դարպասներից» մասին ոչինչ չի ասվում (Arrian., Anab., III, 20)։

113 Այս հատվածում հիշատակված Պակորոսը (Բակուր) պարթևական Վաղարշ Ա թագավորի և հայոց Տրդատ Ա թագավորի եղբայրն էր, որին Վաղարշը հաստատել էր Մեդիա-Ատրպատականի գահի վրա։

114 Ա. Մ. Գարագաշյանը (Քննական պատմութիւն Հայոց, մասն Ա, Թիֆլիս, 1895, էջ 242—244) և Հ. Հ. Մանանդյանը (Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 11—14) հավանական են համարում, որ Խորենացուն հայտնի է եղել ալանների այս արշավանքը Հայաստանի վրա (համմտ. Խորենացի, Բ, ձ)։

115 Մեզ համար պարզ չէ, թե կանգուն (πῆχυς) ասելով Հովսեպոսը չափի ի՞նչ միավոր է նկատի ունեցել, քանի որ 50 կանգուն բարձրանալով ջուրը ոչ մի դեպքում չէր կարող ծածկել լեռները։ Ջրհեղեղի մասին պատմող Աստվածաշնչի համապատասխան հատվածում ևս (Գիրք ծննդոց, է) հիշատակված չափը կանգունն է, բայց այս անգամ ոչ թե 50, այլ 15։ Եթե նկատի է առնված սովորական կանգունը, ապա կարելի է ենթադրել, որ երկու դեպքում ևս խոսքն այն մասին է, թե ջրերը ծածկելով ամբողջ երկիրը, նույնիսկ լեռներից վերև բարձրացան այդքան կանգուն։ Սակայն բնագրի բառացի թարգմանությունը չի տալիս այդ իմաստը։

116 Բնագրում՝ ἀποβατήριον։

117 Հիերոնիմոս Եգիպտացու մասին ուրիշ ոչ մի տեղեկություն մեզ չի հասել։

118 Մնասեաս՝ Լիկիայում (Փոքր Ասիա) ծնված մատենագիր, որն աշակերտել է Երատոսթենեսին. ստեղծագործել է մ. թ. ա. III դարի վերջերին։

119 Նիկողայոս Դամասկոսցին եղել է Հրեաստանի Հերովդես Մեծ թագավորի մտերիմն ու կենսագիրը, որը միաժամանակ գրել է ընդհանրական պատմություն։ Այս վերջինը Հովսեպոսի գլխավոր աղբյուրներից մեկն է եղել։

120 Մինիաս երկիրը Աստվածաշնչում «Միննի» ձևով (ասսուրական տեսագիր արձանագրություններում՝ «Մաննա») հիշատակվում է միշտ Արարատի հետ կապակցված։

121 Բնագրում՝ Ἰάφθα — Յաւիթա։

122 Տանայիս-Դոն գետը հին աշխարհում համարվել է սահմանագիծ Ասիայի ու Եվրոպայի միջև։

123 Գոմարյանների նահապետ Գոմարը հիշատակված է նաև Աստվածաշնչում (Ծննդ. ժ, 2—3 և Ա Մնաց., Ա, 5—6)։ Ուսումնասիրողները այս գոմարյաններին նույնացնում են կիմմերների հետ։ Վերջիններս ասսուրական սեպագրերում հայտնի են Գիմիրի անունով (Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Ա, էջ 10—11)։ Սակայն անբացատրելի է մնում այն, որ, Հովսեպոսի ասելով, գոմարյաններին հելլենները գալատներ են անվանում։ Հայտնի է, որ գալատները կելտական ցեղերի թվին են պատկանում և առնչություն չունեն կիմմերների հետ։

124 Թեորբելոս անվանաձևը կապվում է ասսուրական սեպագրերում հանդիպող Թաբալա անվան հետ, իսկ այդ երկրի բնակիչները՝ Թեորբելյանները, հավանաբար Հերոդոտոսի մոտ (III, 94) հիշատակված տիբարեններն են (τιβαρηνοί)։

125 Մեսքենների անունը հանդիպում է ասսուրական սեպագիր արձանագրություններում muski ձևով։ Մեսքենների ցեղը Հերոդոտոսի մոտ (VII, 78) հիշատակված մոսքերն են (μόσχοι).

126 Հովսեպոսի հիշատակած Ասքանաքսեսը և ասքանաքսյանները համապատասխանում են Աստվածաշնչի Ասքանազին և Ասքանազյան գնդին։ Կորյուն վարդապետը հայերին համարում է «Ասքանազեան ազգն» «Պատմութիւն վարուց և մահուան Մեսրոպայ վարդապետի, Վենետիկ, 1894, էջ 7) Աստվածաշնչի հետևյալ հատվածի հիման վրա. «Առէք զնշան ի վերայ երկրիդ, փող հարէք ընդ ազգս ամենայն, հրաւիրեցէք ի վերայ դորա (Բաբելոնի) գունդս. պատուէր տուք յինէն Արարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին. կանգնեցէք զնովաւ նետակալս. կոչեցէք ի վերայ նորա զթագաւորութիւնս Արարատայ, Միննեայ և Ասքենազայ» (Երեմիա, ԾԱ, 27)։ Անդրադառնալով այս վկայությանը, Հ. Մանանդյանը նշում է, թե «Ասքանազյան գունդը, ինչպես միանգամայն ճիշտ բացատրել է Ֆր. Դելիչը, նույնն է բևեռագիր արձանագրությունների «Աշգուզայ»-ի (Ašgûza) հետ, որ պարզապես հյուսիսից արևելյան Անդրկովկաս արշավող սկյութացիների անունն է» (Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Ա, էջ 11)։

127 Թյուգրամեսը նույնական է Աստվածաշնչի Թոգարմա (Թորգոմ) անվան հետ, իսկ Թոգարմա (սեպագր. Թիլ-Գարիմմու) երկիրը ավանդաբար նույնացվում է Հայաստանի հետ։

128 Ելիմայեցիներ անվան տակ, հավանաբար, պիտի հասկանալ Էլամի բնակիչներին։

129 Մի ձեռագրում Ուրոսի (Οὖρος) փոխարեն կարդում ենք Օտրոս (Ὄτρος). իսկ մեկ այլ ձեռագրում՝ Ուլոս (Οὖλος)։

130 *Ուսումնասիրողները ենթադրում են, որ այստեղ Բերոսոսից մեջ բերված հատվածն ընկել է Հովսեպոսի բնագրից և չի հասել մեզ։*

131 *Այստեղ անունները բացահայտ կերպով հելլենականացված են։ Այլ ձեռագրերում, ըստ երևույթին Աստվածաշնչին հետևելով (Գ Թագ., ԺԲ, 37, Եսայի, Լէ, 38)՝ Ադրամելեքոս և Սարասարոս, որը ավելի մոտ է Խորենացու մոտ պահպանված ավանդության անուններին։*

132 *Համմա. Մ. Խորենացի, Ա, իգ։ Խորենացու «Պատմության» աշխարհաբար իր Թարգմանության այս հատվածը ծանոթագրելիս, Ստ. Մալխասյանցը նկատում է, որ «... Սեննեքերիմի սպանությունը որդիների ձեռքով տեղի է ունեցել 681 թ. ն. ք., և զարմանալի է, ինչպե՞ս ավելի քան 2500 տարի կենդանի է մնացել հայ ժողովրդի հիշողության մեջ, որովհետև Սասնա ծռերի շատ վարիանտներում հիշվում են այս Սանասարն ու Ադրամելիքը, որոնցից սերվել են Սասնա ծռերը՝ Մհերը և Դավիթ Սասունցին» (Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Թարգմ., նեբած. և ծանոթագր. Ստ. Մալխասյանի, Երևան, 1940, էջ 273)։*

133 *Խոսքը Եգիպտոսի փարավոն Նեքաո Բ-ի մասին է, որը թագավորել է մ. թ. ա. 650—594 թ.։*

134 *Այս Հովակիմը՝ Հովսիայի որդին, մ. թ. ա. 610 թ. Եգիպտոսի Նեքաո փարավոնի կողմից հաստատվեց Հրեաստանի փոխարքա, իսկ 601 թ. հարկատու դարձավ Բաբելոնի Նաբուքոդոնոսոր թագավորին, կառավարելով մինչև իր մահը՝ 599 թ.։*

135 *Կարքեմիսսա (Կարքեմիշ)։ Առաջավոր Ասիայի հնագույն քաղաք, Եփրատ գետի վրա, խեթական թագավորության կենտրոններից։*

136 *Մասսագետները (հայկական աղբյուրներում մասքութք) հավանաբար սկյութական ցեղեր են եղել, որոնք քոչում էին Կասպից ծովի հյուսիս-արևելյան տափաստաններում։ Հերոդոտոսը պատմում է, որ նրանց մոտ կանայք ընդհանուր էին, որ նրանք զոհարերում և ուտում էին ծերունիներին, անվում կաթով ու մսով ու կուլում էին և՛ հետիոտն, և՛ ձիավոր. Նրանց թագուհին այդ ժամանակ եղել էր Թոմիրիսը, որի դեմ Կյուրոսը մ. թ. ա. 530 թ. արշավելով, սպանվեց։*

137 *Կյուրոսի արշավանքը մասսագետների դեմ հայտնի է նաև Խորենացուն, որը նկարագրելով Արտաշես Տիեզերակալի աղետալի վախճանը, գրում է. «Յետ փոքու ժամանակի աղէտք անցին զամեննեքումբք. ոչ այնքան թշուառացաւ Կիւրոս ընդ Մասքութս պատերազմելով, ոչ այսպիսի կիրս կրեաց Դարեհ ի Սկիւթացւոցն փախուստն, և ոչ Կամբիւսէս յՆիովպացիս» (Մ. Խորենացի, Բ, ժզ)։*

138 *Այս դեպքում նկատի է առնված հրեաների Եհովա աստվածը։*

139 *Բնագրում՝ τοπαρχῶν — տոպարխների։*

140 *Հայտնի է, որ Դարեհ Ա-ի ժամանակ պարսկական տերության սատրապությունների թիվը երբեք 127 չի եղել։ Հետագայում, երբ Սելևկյանները ժառանգեցին Աքեմենյան տերության մեծագույն մասը, սատրապությունների տարածությունը սահմանափակելով, դրանց թիվը, ըստ Ապպիանոսի (App. Syr., 62) հասցրին 72-ի։ Տվյալ դեպքում իր արտահայտությունն է գտել այն, որ Փոքր Ասիայի նախկին հյուպարքիաները, Ասորիքի, Փյունիկեի և Պաղեստինի մերիս (μερίς — բաժին) կոչված ավելի մանր միավորները վերածվեցին սատրապությունների։ Ինչ վերաբերում է Փլավիոսի հիշատակած 127 թվին, ապա պիտի ենթադրել, որ այն վերցված է Աստվածաշնչից (Գիրք Եսթերայ, Ա, 1), որտեղ խոսվում է պարսկական տերության 127 գավառների մասին։*

141 *Բնագրում՝ χιλιαρχ — կիդարիս։*

142 Սուսա (Շուշ)։ Աքեմենյան արքայից արքայի մայրաքաղաքը, որտեղ հետագայում Ալեքսանդր Մակեդոնացին իր հարսանիքը կատարեց։

143 Ըստ ավանդության, հրեական ցեղերը 12 էին, որոնցից յուրաքանչյուրը կրում էր հրեաների Հակոբ նահապետի 12 որդիներից մեկի անունը։ Այդ ցեղերից մեկն էլ կրում էր Հակոբի ամենակրտսեր որդու՝ Բենիամինի անունը։

144 Ադարը համապատասխանում է մարտ ամսին։

145 Բնագրում՝ τοὺς πρώτους τῶν ἐθνῶν—ազդերի առաջիններին։

146 Բնագրում՝ διάδημα—դիադեմա։

147 Սա Աքեմենյան վերջին թագավոր Դարեհ Գ Կոդոմանոսն է, որը նախկինում եղել էր Արմենիայի սատրապը։

148 Գրանիկոն գետը (այժմ՝ Կոջա-չայ) գտնվում է Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան մասում։ Այդ գետի ափին Ալեքսանդր Մակեդոնացին մ. թ. ա. 334 թ. մայիսին առաջին հաղթանակը տարավ պարսկական զորքերի դեմ, որոնց գլխավորում էին Հոնիայի, Լյուդիայի և Հելլեսպոնտոսյան Փոյուգիայի սատրապները։

149 Սանաբալլետեսը Դարեհ Կոդոմանոսի կողմից որպես սատրապ ուղարկված էր Պաղեստին։

150 Մանասսեն հրեական ցեղապետներից մեկն էր, որն ամուսնացել էր Սանաբալլետեսի աղջկա հետ։

151 Նույնպիսին է Դիոդորոսի շարադրանքը (*Diodor.*, XVII. 32. 4. Համմ. *Arrian.*, II. 6, 4)։ Դարեհի զորքերի թիվը Արրիանոսի մոտ (II, 8, 8) ցույց է տրված 600 հազար մարդ, Դիոդորոսի մոտ (XVII, 31, 2)՝ 500 հազար, իսկ Յուստինոսի (XI, 9) և Կուրտիոսի մոտ (XIII, 24)՝ 400 հազար։

152 Իսոսի հակատամարտը տեղի է ունեցել մ. թ. ա. 333 թ. հոկտեմբերին։

153 Տյուրոս քաղաքի պաշարումը տևեց մոտ 7 ամիս, 332 թ. հունվարից մինչև հուլիս ամիսը (*Diodor.*, XVII. 46, 5. *Curtius*, IV, 4, 19).

154 Խոսքը վերաբերում է Սելևկյան թագավոր Անտիոքոս Դ Եպիփանեսին (175—164 թթ.)։

155 Անտիոքոս Եպիփանեսի շռայլությունները վառ կերպով նկարագրել է Պոլիբիոսը (XXVI, 1)։

156 Սելևկյան տոմարի 147-րդ տարին համապատասխանում է մ. թ. ա. 166 հոկտ.—165 հոկտ. ժամանակահատվածին։ Ուստի մենք ենթադրում ենք, որ Հովսեպոսի մոտ հիշատակված այս արշավանքը Անտիոքոս Եպիփանեսը ձեռնարկել է ոչ թե Պարսկաստանի, այլ Հայոց թագավոր Արտաշես Ա-ի դեմ, որն իրեն անկախ էր հայտարարել Սելևկյաններից և հրաժարվել էր հպատակության հարկ վճարելուց (Համմ. *Diodor.*, XXXI. 17 և *Appian.*, Sur., 45)։ Անտիոքոսը դեպի Արևելք կատարեց ևս մի արշավանք 164—163 թթ. ընթացքում, այս անգամ Պարսկաստանում գտնվող Էլիմայիսի հարուստ տաճարը կողոպտելու նպատակով, որի համար էլ, վերջին հաշվով, հատուցեց իր կյանքով։

157 Վերին սատրապություններ կամ վերին երկրներ ասելով, անտիկ հեղինակները ենթադրել են Հայաստանը, Մեդիան, Պարսկաստանը և այլն։

158 Էլիմայիս անունն էր կրում նաև Սուսիանայի՝ Պարսկաստանին հարած շրջանը, Տիգրիսի ստորին հոսանքում, որտեղ բնակվում էին ռազմատենչ և ավազակաբարո ցեղեր, որոնք առանձնապես հայտնի էին որպես վարժ նետաձիգներ (*Strabo*, XVI c. 760: *Tit. Liv.*, XXXVII, 40).

159 Սելևկյան տոմարի 149-րդ տարին համապատասխանում է մ. թ. ա. 164 հոկտ.—163 հոկտ. ժամանակահատվածին։

160 Սելևկյան թագավոր Դեմետրիոս Նիկատորը գահակալել է Անտիոքում երկու անգամ՝ մ. թ. ա. 147—142 և 128—126 թթ.։

161 Սա Արշակ Ջ Միհրդատ Ա-ն է, որը թագավորել է 171—138 թթ.։

162 Տրյուփոնը եղել է Սելևկյանների զորավար և ունեցել է շատ փոթորկալից կյանք։ Սպանելով Անտիոքոս Ջ-ին, որին ինքն էր գահ բարձրացրել, 142 թ. ինքը հռչակվեց թագավոր և իշխեց 3 տարի։

163 Այս պատերազմը տեղի է ունեցել 138 թ., որի ժամանակ պարթևները պերի վերցնելով Դեմետրիոսին, նրան մեծ պատիվներ շնորհեցին և ամուսնացրին արքայադստեր հետ։

164 Սա Անտիոքոս VII Սիդետեսն է (139—130 թթ.), Դեմետրիոս Բ-ի եղբայրը, որը Տրյուփոնին վտարելով, գահ էր բարձրացել։

165 Տե՛ս ծանոթ. 163։

166 Որոշ ձեռագրերում բաց է թողնված «հայոց» բառը։ Դա, հավանաբար, այն պատճառով, որ Տիգրանն արդեն նվաճել էր Սելևկյան թագավորությունը և ժառանգել էր այդ գահը, իսկ անտիկ հեղինակները Սելևկյան թագավորներին պարզապես անվանում էին «թագավոր» (βασιλεύς)։

167 Որոշ ձեռագրերում՝ «50 բյուր զորքով»։

168 Հունարեն բնագրում բացակայում է «մայրաքաղաք» լրացումը. սակայն այստեղ «պաշարեց» (πολιορκεῖν) բառը անիմաստ է մնում առանց ուղիղ խնդրի, ինչպիսին տվյալ դեպքում կարող է լինել «մայրաքաղաքը» (գուցե և «Տիգրանակերտը») բառը։ Առաջարկված լրացումը մեզ հնարավորություն է տալիս նոր տեսանկյունից դիտելու Տիգրանակերտի ճակատամարտին անմիջականորեն նախորդած դեպքերի պատմությունը (այդ մասին տե՛ս մեր հոդվածը՝ Տիգրան Բ-ին վերաբերող մի կարևոր ուղղում, ՊԲՀ, 1967, № 4, էջ 275—278)։

169 Տե՛ս ծանոթ. 39։

170 Փլավիոսը իր «Հրեական պատերազմը» գրքում (I, 138) գրում է, որ Միհրդատի մահվան լուրը Պոմպեոսին հասավ, երբ սա բանակել էր Երիքովի մոտ՝ Հրեաստանում։

171 Միհրդատի մահը տեղի է ունեցել մ. թ. ա. 63 թ. գարնանը։ Միհրդատյան պատերազմների մանրամասն նկարագրությունը տվող Ապպիանոսի պատմելով, Միհրդատն իր որդու ապստամբությունից հետո, իր իսկ խնդրանքով, սպանվել էր իր թիկնապահներից մեկի ձեռքով։

172 Ստրաբոնը (64 մ. թ. ա.—20 մ. թ.) ծնվել է Պոնտական Կապպադովկիայի Ամասիա քաղաքում։

173 Կոս։ Կղզի Էգեյան ծովում։

174 Սա հավանաբար Կլեոպատրա—Սելենե թագուհին է։

175 Ստրաբոնի այս վկայությունը վերցված է, հավանաբար, նրա մեզ չհասած «Պատմական հիշատակարաններ» (Ἱστορικὰ ὑπομνήματα) երկից (տե՛ս Ներածութ., էջ 20)։

176 Փլավիոսն այստեղ նկատի է ունեցել ուրիշ հեղինակների, քանի որ ինքն այս դեպքերին քիչ է անդրադարձել (համմտ. Հրեակ. պատ., I, 179)։ Կրասոսը ջախջախվեց Կարրայի (այժմ՝ Խառան) մոտ, Միջագետքում, մ. թ. ա. 53 թ. գարնանը, և մահապատժի ենթարկվեց։

177 Կասսիոսը Սիրիայի կառավարիչ էր մ. թ. ա. 53—51 թթ.։

178 Սատրապ ասելով Հովսեպոսն այստեղ նկատի ունի Բարզափրանեսին։

179 Ագորա (ἀγορά) *հույները անվանում էին քաղաքի բացօթյա այն վայրը՝ հրապարակը, որտեղ քաղաքային համայնքը գումարում էր իր ժողովները։ Ավելի հին ժամանակներում* ագորա *կոչվում էր ինքը՝ ժողովրդական ժողովը, իսկ հետագա դարերում նաև ապրանքների վաճառքի շուկան։*

180 *Հռոմայեցի մատենագիր Յուստինոսի վկայությամբ* (Justini Epitoma historiarum Philippicarum Pompeii Trogi, XLI, 25), *պարթևների ցորքը հիմնականում բաղկացած էր ստրուկներից։ Ազատ կոչվածները պատկանում էին, հավանաբար, ավագանու թվին։*

181 *Սա արքայորդի Պակորոսն է, քանի որ տակառապետ Պակորոսը զբաղված էր Հերովդեսին չեզոքացնելու գործով։*

182 *Տե՛ս ծանոթ. 60։*

183 *Անտոնիոսը եկել էր փոխարինելու Հռոմայեցի զորավար Բենտիդիոսին, որը կռվում էր պարթևների դաշնակից Կոմմագենեի Անտիոքոս Թագավորի դեմ* (*հմմտ.* Cambridge Ancient history, vol. X,p. 53, note 3, *W. W. Tarn-ի բաժինը և N. C. Debevoise.* A political history of Parthia, Chicago, 1938, p. 120, note 103).

184 *Պարսկական լայնատարած տերության մեջ արքունի ճանապարհի վրա կառուցված էին կայաններ կամ օթևաններ* (σταθμός—*ստաթմոս*) *իրարից 5—10 փարսախ հեռավորության վրա։ Այդ կայանների միջև ընկած էր մոտավորապես մեկ օրվա ճանապարհի տարածություն։*

185 *Տե՛ս ծանոթ. 67 և 68։*

186 *Սա պարթևների Հրահատ Դ թագավորն է, որը գահակալել է մ. թ. ա. 37—9 թթ.։*

187 *Այլ ձեռագրերում՝ «հետևաբար, այդ մասին հաղորդում է հրեաներին, որոնք շտապում էին մեկնել նրա մոտ»։*

188 *Բնագրում՝* Ἀρταξάζης—*Արտաբազես։*

189 *Բնագրում՝* Ἀρταξίας— *Արտաքսիաս։*

190 *Արքելայոսը եղել է Կապպադովկիայի թագավոր, որը ստացել էր Փոքր Հայքը (հմմտ. N. Debevoise,* A political history of Parthia, Chicago, 1938, *էջ 141։ Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 290—291)։*

191 *Տիբերիոս Կլավդիոս Ներոնը (հետագայում, 14—37 թթ., Հռոմի կայսր), ուղարկված էր Օգոստոսի կողմից Հայաստանում «կարգ» հաստատելու համար այն բանից հետո, երբ Արտաշես Բ-ն դավադրաբար սպանվեց իր ազգակիցների կողմից (հմմտ. Հ. Հ. Մանանդյան, նույն տեղում)։ Հետևաբար, Հովսեպոսը սխալվում է գրելով, որ Տիբերիոսը և Արքելայոսը երկրից վտարեցին Արտաշեսին։*

192 *Սա Արտավազդի կրտսեր որդի Տիգրան Գ-ն է, որը թագավորեց Հայաստանում մ. թ. ա. 20—8 թթ.։*

193 *Փրաատակեսը հայագիտության մեջ հայտնի պարթև թագավոր Հրահատակն է (մ. թ. ա. 2—մ. թ. 4 թթ.)։*

194 *Ն. Դիբվոյզը բարձր է գնահատում Փլավիոսի վկայությունները պարթևների պատմության վերաբերյալ և նշում, որ այդ տվյալները հաստատվում են գրավոր այլ աղբյուրներով և դրամագիտական նյութերով (N. Debevoise, նույն տեղում, էջ XXIX)։*

195 *Ինչպես պարզվում է դրամագիտական նյութերից* (P. Gardner, Part-

hian coinage, 1887, էջ 46), թագուհի դառնալուց հետո Թեոմուսայի անունը դառնում է Թեա (աստվածուհի) Մուսա։

196 Դժվար չէ նկատել, որ Թեոմուսայի այս արարքը ոչ այնքան անձնական շահեր էր հետապնդում, ինչքան Հռոմի ընդհանուր քաղաքական շահերի տեսակետից հետուն գնացող նպատակներ։

197 Այլ աղբյուրների համաձայն, տարբեր շարժառիթներ են Փրաատեսին մղել իր որդիներին Հռոմ պատանդ ուղարկելու համար։ Այսպես, Օգոստոս կայսեր հայտնի արձանագրություն-կտակը այդ ակտը վերագրում է Հռոմի բարեկամությունը ապահովելու Փրաատեսի ձգտմանը (տե՛ս Res gestae divi Augusti (Monumenta Ancyranum), 32, ed. Th. Mommsen, Berlin, 1883)։ Նույնպիսի շարժառիթի մասին են խոսում Սուետոնիոսը (Sueton., Aug., 21), Տակիտոսը (Tac., Ann., II, 1) և Ստրաբոնը (XVI, 1, 28)։ Վերջին երկու հեղինակները, սակայն, ավելացնում են, որ Փրաատեսը դրանով նպատակ ուներ կանխել իր դեմ հավանական որևէ ընդվզում, այն զրկելով Արշակունի տոհմից գլխավորող ուներնալու հնարավորությունից։ Տակիտոսն, օրինակ, գրում է, որ Փրաատեսը Օգոստոսի նկատմամբ «իր բարեկամությունը ամրապնդելու նպատակով ուղարկել էր իր զավակների մի մասը Հռոմ, ոչ այնքան մեզանից վախենալու պատճառով, որքան համերկրացիների հավատարմությանը չվստահելու հետևանքով»։ Իսկ Ստրաբոնն ուղղակի նշում է, որ Փրաատեսն այդ քայլին դիմեց, որովհետև «... վախենում էր ընդվզումից և ապստամբությունից իր դեմ և գիտենալով, որ նրանք երբեք ուժեղ չէին լինի, եթե Արշակի տոհմից որևէ մեկին չդնեին նրա փոխարեն, քանի որ պարթևները չափազանց արշակասեր էին, ուստի հեռացրեց իր որդիներին, վերացնելու համար չարագործների այդ հույսը»։

198 Փրաատակեսը դավադրաբար սպանվեց 4 թ., մինչդեռ Monumenta Ancyranum-ում նշված է, որ Փրաատակեսը (արձանագրության մեջ՝ Φραάτης) փախչելով, ապաստան գտավ Հռոմում։

199 Օրոդեսի սպանությունը տեղի է ունեցել 6 թ.։

200 Սա Ատրոպատենեի թագավոր Արտավան Գ-ն է, որին Փլավիոսը սխալմամբ համարում է Մեդիայի թագավոր։ Իսկ Հ. Մանանդյանը (Քննական տեսություն..., հ. Ա, էջ 305—306) սխալմամբ գրում է. «Հովսեպոս Փլավիոսի վկայությամբ, Արտավանը, պարթևական գահը գրավելուց առաջ, թագավոր էր եղել Ատրպատականի»։ Ինչպես տեսանք, Հովսեպոսը նրան համարում է Մեդիայի թագավոր։

201 Սելևկիա խոշորագույն հելլենիստական քաղաքը կառուցվել էր մ. թ. ա. IV դ. վերջին Սելևկոս Նիկատորի կողմից Տիգրիսի աջ ափին, այժմյան Բաղդադից փոքր-ինչ հարավ։

202 Կտեսիփոն էր կոչվում հայ պատմագրության մեջ հայտնի պարսկական Տիզբոն քաղաքը, որը գտնվում էր Տիգրիսի ափին, Սելևկիայի մոտ, այժմյան Բաղդադից 60 մղոն հարավ։

203 Վոնոնեսը ոչ երկար ժամանակով (11—16 թթ.) անտերնչության շրջանում դառնում է Հայաստանում թագավոր։

204 Բնագրում՝ Νιφάτης—Նիփատես։ Լ. Հ. Ֆելդմանը Հովսեպոսի անգլերեն թարգմանությանը կցած իր մի ծանոթագրության մեջ հավանական է համարում, որ Նիփատես կոչվում էր այլ առիթով մեզ անհայտ հայ առաջնորդներից մեկը, և որ այդ հատվածը կարելի է թարգմանել նաև հետևյալ կերպ. «Նիփատեսը

իրեն շրջապատող հայ մեծամեծներով» (տե՛ս Josephus, London, vol. IX, p. 40, note b)։

205 Օրոդեսը Հայաստանում իշխեց 15—18 թթ., մինչև այն ժամանակ, երբ Գերմանիկոս կայսրը տեսնելով, որ հայերը պատրաստ են որպես թագավոր ընդունելու հայերի միջավայրում հասակ առած Ջենոնին, որը Պոնտոսի Պոլեմոն թագավորի որդին էր, թագադրեց նրան, տալով Արտաշես անունը (Tacit., Annal., II, 56; Sueton., Gaius, 1; Strabo, XII, 3, 29։ Տե՛ս նաև Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Ա, էջ 308—309)։

206 Կոմմագենում ստեղծված նույն դրության մասին վկայում է նաև Տակիտոսը (Annal., II 42)։

207 Վիտելլիոսը Սիրիա պրովինցիայի կառավարիչն էր։

208 Տակիտոսն այս տրամադրությունները բացատրում է տարբեր շարժառիթներով։ Նրա վկայությամբ (Annal., VI, 31—32), Արտաբանոսի թշնամության գլխավոր պատճառը եղել էր Տիբերիոսի ձգտումը նրան գահից հեռացնելու և փոխարենը սկզբում Փրաատեսին, ապա Տրդատին թագավորեցնելու համար։ Մի այլ պատճառ էլ հայկական գահը խլելն էր Արտաբանոսի կողմից իր որդի Արշակի համար։

209 Հ. Մանանդյանն իրավացի կերպով այս հատվածի վերջին մասը համարում է անհավաստի։ Նա գրում է. «Հովսեպոս Փլավիոսի այս վկայության մեջ անհավաստի է, իհարկե, նրա հաղորդած վերջին տեղեկությունը, որ իբր թե իբերները, աղվանները և ալանները ավերել էին պարթևների երկիրը։ Իրապես, այդ պատերազմը տեղի էր ունեցել Հայաստանում և ավերվել ու կողոպտվել էր ոչ թե պարթևների, այլ հայերի երկիրը» (Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Ա, էջ 314)։

210 Դայերը Միջին Ասիայում բնակվող ցեղեր էին, որոնց մասին խոսում է Պլինիոսը (Hist. Nat. VI, 19), իսկ սակերը նրանց հարևաններն էին ու ցեղակիցները, որոնց մասին հիշատակում է դեռևս Հերոդոտոսը (VII, 9)։ Այս նույն դեպքերի մասին խոսելիս, Տակիտոսը(Annal., VI, 44) գրում է, որ Արտաբանոսը զորք հավաքեց սկյութական երկրում։

211 Բնագրում՝ τετράρχης։

212 Սա Տիգրան Ե-ն է, որը Հայաստանում թագավորել է մ. թ. 6 թ.։ Այս նույն իրադարձությունների հանգամանալից նկարագրությունը տվել է Տակիտոսը (Annal., VI, 30)։

213 Խոսքը Տիգրան Ջ-ի մասին է, որը Հայաստանում թագավորել է որպես Հռոմի դրածո 60—61 թթ.։ Տակիտոսը (Annal., VI, 26) նույնպես նշում է, որ Տիգրանը Ներոնի կողմից հաստատվել էր Հայաստանի գահին։ Նա ավելացնում է, որ Հռոմում Տիգրանի երկար ժամանակ որպես պատանդ մնալը նրան դարձրել էր ստրկահոգի և Հռոմի ձեռքին գործիք։ Նրան հայերը ընդունեցին միայն այն պատճառով, որ իրենք առավել վախենում էին պարթևներից։

214 Վիսպասիանոս։ Հռոմի կայսր (69—79 թթ.), Փլավյանների կայսերական դինաստիայի հիմնադիրը։ Վեսպասիանոսը եղել է Հովսեպոսի բարերարը և հովանավորը, շնորհելով նրան նույնիսկ իր ազգանունը։

215 Կապպադովկիայի և Կոմմագենեի նախկին թագավորությունները Տիբերիոս կայսրը 17 թ. վերածել էր հռոմեական պրովինցիաների։ 37 թ. նոր կայսր Գայոս Գերմանիկոս Կալիգուլան (37—41 թթ.) Կոմմագենեի թագավորությունը վերականգնեց և այն հանձնեց նախկին թագավոր Անտիոքոս Գ-ի որդուն՝ Ան-

տիոքոս Դ-ին, նրա թագավորությանը միացնելով նաև Հյուսիսային Սիրիան և Կիլիկիայի ծովափը (Dio Cass., LIX, 8, 2)։ Նրա թագավորությունը կարճ ժամանակ հետո Կալիգուլայի կողմից վերացվեց, բայց այն վերականգնեց Կլավդիոս կայսրը 41 թ.։ Անտիոքոսը վերջնականապես զրկվեց իր թագավորությունից 72 թ.։

216 Կլավդիոսը եղել է Հռոմի կայսր 41—54 թթ.։

217 Ալաբարքեսը (ἀλαβάρχης) հրեաների մոտ ընդհանուր հարկահավաքի պաշտոն էր (հմմտ. Josephus, vol. IX, 1955, London, p. 103, note 7)։

218 Սամոսիգերամոս անունը հայտնի է մեր պատմահորը Շամշագրամ ձևով։ Խորենացու պատմելով (Բ, լ), սա Աբգար թագավորի ժամանակ Ապահունյաց տոհմի նահապետն էր։

219 Կոտիսը Պոնտոսի թագավոր Պոլեմոն Ա-ի որդին էր, Թրակիայի Կոտիս թագավորի որդին, որը 37 թ. Կալիգուլայի կողմից կարգվել էր Փոքր Հայքի թագավոր (հմմտ. Dio Cass., LIX, 12, 2)։ Տակիտոսը (Annal., XI, 9) հաղորդում է, որ 47 թ. Կլավդիոս կայսրն իր նամակով խանգարեց նրա արշավանքը Հայաստան, որի նպատակն էր արգելել Հռոմի հովանավորյալ Միհրդատ Իբերացու վերահաստատումը Հայաստանում։

220 Այս Պոլեմոնը Փոքր Հայքի թագավոր Կոտիսի (տե՛ս նախորդ ծանոթ.) եղբայրն էր և թագավորել էր Պոնտոսում 37—63 թթ.։

221 Ադիաբենեի թագավորությունը, Արբելա մայրաքաղաքով, գտնվում էր Հյուսիսային Միջագետքում։

222 **Ֆ. Յուստին** (F. Justi, Iranisches Namenbuch, 1895, s. v. „Yazata", SS 145—146) նշում է, որ Իզատես անունը պարսկերենում նշանակում է «հանճարեղ», «աստվածապաշտ» և օգտագործվել է հատկապես Միհրայի նկատմամբ, իսկ հետագայում հոգնակի ձևով նշանակել է «աստված»։

223 Քարակս-Սպասինու քաղաքը Եփրատի և Տիգրիսի գետաբերանների միջև ընկած փոքրիկ թագավորության կենտրոնն էր (հմմտ. Dio Cass., LXVIII 28, 4 և Ptolem., VI, 3, 2)։

224 Ո՞ր երկիրն է Կարրոն կոչվել, դեռևս հաստատ ասել դժվար է։ Դա, իհարկե, Հյուսիսային Միջագետքում գտնվող Կարրա (Խառան) վայրը չէ, քանի որ Փլավիոսը նշում էր, որ այս Կարրոն վայրում կարելի է տեսնել նոյի տապանի մնացորդները։ Հետևաբար, այստեղ ընթերցվածը հնարավոր է ուղղել «Կորդուք», որտեղ Արարադ լեռան վրա կանգնել է բիբլիական տապանը (տե՛ս J. Markwart, Osteuropäische und ostasiatische Streifzüge, 1913, էջ 289, ծան. 4, որտեղ Մարկվարտը Καρρῶν-ի փոխարեն առաջարկում է կարդալ Καρδοῦ—Կորդուք)։ Այդ դեպքում, սակայն, կասկած է հարուցում այն հանգամանքը, որ Կարրոն երկրում աճում էր համեմունքը (ἄμωμον), ինչպիսի բույս չի հանդիպում Կորդվաց աշխարհում։

225 Բնագրում՝ ἐπίτροπος—Էպիտրոպոս։

226 Լ. Հ. Ֆելդմանը Փլավիոսի անգլերեն թարգմանության կցած իր ծանոթագրության մեջ նշում է, որ Կլեմենտը Փլավիոսի գերմաներեն թարգմանության համապատասխան ծանոթագրության մեջ բացատրում է, թե sampsa արաբների մոտ նշանակում է «արև» և որ sampsera-ն արևի ձև ունեցող ոսկե վահան էր, որը կրում էին որպես իշխանության նշան (Josephus, vol. IX, London, 1955, p. 406, note a)։

227 Տիարան պարսկական խույր էր, որը գլխին ուղիղ դնելու իրավունքը

միայն պարսից թագավորն ուներ։ Այդ մասին Քսենոփոնը ատրապ Տիսսաֆեռնեսի բերանով վկայում է. «Միայն արքան իրավունք ունի գլխին ուղիղ տիարա դնելու...» Xenoph., Anab., II, 5, 23։ Հմմտ. նաև Aristophan. Ὄρνιθες, 487)։

228 Ստրաբոնն այս քաղաքը անվանում է Անտիոք Միգդոնիայում (Strabo, XVI, 1, 23, C. 747):

229 Տակիտոսը (Annal., XI, 8) պատմում է, որ Արտաբանեսին հաջորդեց Գոտարզեսը, իսկ սրան՝ նրա վերադարձած եղբայրը՝ Վարդանեսը։ Հովսեպոսի մոտ Գոտարզեսը հաջորդում է Վարդանեսին։ J. G. C. Anderson-ը այս երկու վկայությունների մեջ հակասություն է տեսնում և Հովսեպոսի վկայությունը համարում ոչ ճիշտ (Cambr. Anc. history, v. X, 1934, էջ 754, ծան. 1)։ Սակայն իրականում այդ հաղորդումների միջև հակասություն չկա։ Ըստ Տակիտոսի, Արտաբանեսի մահից անմիջապես հետո, կարճ ժամանակով Գոտարզեսը վերցնում է իշխանությունը, սակայն Վարդանեսի ժամանելուց հետո Գոտարզեսը համաձայնության գալով նրա հետ, զահը հանձնում է նրան և միայն Վարդանեսի սպանությունից հետո Գոտարզեսը վերջնականապես հաստատվում է գահի վրա (Tacit., Annal., XI, 9—10). Մինչդեռ Հովսեպոսը իր շարադրանքի մեջ զանց է առել Գոտարզեսի առաջին կարճատև գահակալումը։

230 Բնագրում՝ Κοτάρσης (Կոտարզես)։ Տակիտոսը (Annal., XII, 10) Գոտարզեսին պատկերում է որպես դաժան տիրակալի ազնվականության և ժողովրդի հետ ունեցած իր հարաբերություններում։ Գոտարզեսի անթիվ ոճիրներին զոհ գնացին նրա եղբայրները, մոտիկ և հեռավոր ազգակիցները, բազում պալատականներ, հղի կանայք։ Վարդանեսի սպանությունից հետո գահի շուրջ պայքար է ծավալվում Գոտարզեսի և Միհրդատի միջև։ Այս հակամարտության մասին Հովսեպոսը ոչինչ չի պատմում։ Ըստ Տակիտոսի (Annal., XII, 13), այս պայքարի ընթացքում Իզատեսը առերես դաշնակցում է Միհրդատի հետ, բայց գաղտնաբար համակրում էր Գոտարզեսին և պարսկական գահի այս երկու հավակնորդների միջև տեղի ունեցած վճռական ընդհարումից առաջ անցնում է Գոտարզեսի կողմը։

231 Տակիտոսի պատմելով (Annal., XII, 14), Գոտարզեսը ոչ թե զոհ է գնում դավադրության, այլ հիվանդանում է ու մահանում։

232 Սա հայ պատմագիտության մեջ հայտնի Վաղարշ Ա-ն է, Հայաստանի Արշակունյաց թագավորության հիմնադիր Տրդատ Ա-ի եղբայրը, որը պարթևական գահին նստեց 51—75 թթ., դառնալով պարթևական ամենաընդունակ և ամենաուժեղ թագավորներից մեկը։ Հովսեպոսի շարադրանքում զանց է առնված Վոնոնեսի թագավորությունը, որը, համաձայն Տակիտոսի (Annal., XII, 14), հաջորդել է Գոտարզեսին։ Բայց նույն ինքը Տակիտոսը նշում է նաև, որ Վոնոնեսի թագավորությունը կարճատև էր և անփառունակ։ Ուստի և հավանական է, որ Հովսեպոսը, որը տվել է պարթևների գահակալական կոխվների շատ ամփոփ շարադրանքը, հարկ չի համարել նշելու նրա թագավորությունը։

233 Տակիտոսը (Annal., XV, 2) նշում է, որ Պակորոսն արդեն իշխում էր Մեդիայում, երբ Վոլոգեսեսը դարձավ թագավոր։ Պակորոսն այնտեղ ապաստանել էր ալանների արշավանքից հետո։

234 Հովսեպոսը, ցավոք, իր խոստումը չի կատարում։ Այսուհանդերձ, Տակիտոսը որոշ տեղեկություններ հաղորդում է Մոնոբազոսի հետագա գործունեության

մասին։ Նա պատմում է, որ Մոնոբազոսը դիմում է պարթևների թագավոր Վաղարշ Ա-ին, որպեսզի սա իրեն օգնի հռոմայեցիների կողմից Հայաստանի թագավոր կարգված Տիգրանի դեմ, որը մ. թ. 62 թ. ասպատակում էր Ադիաբենեն (*Tacit.*, Annal., XVI, 1 և XV, 14)։

235 Հովսեպոսը պատմում է, որ Հրեաստանի թագավոր Ագրիպպասը ունեցել էր մի տղա և երեք աղջիկ, որոնցից մեկը՝ Դրուսիլան, պետք է ամուսնանար Կոմմագենեի Անտիոքոս թագավորի որդի Եպիփանեսի հետ, բայց այդ ամուսնությունը տեղի չի ունենում (*Joseph.* Flav., Antiq., XIX, 355)։

236 Այս Սոեմոսը կապ ունի՞ արդյոք Ներոնից Ծոփքի հայկական թագավորության գահն ստացած Եմեսայի իշխանական տոհմից սերած Սոեմոսի հետ (տե՛ս *Tacit.*, Annal., XIII, 7)։ J. G. C. Anderson-ը այս հարցին բացասաբար է պատասխանում (Cambridge Ancient history, vol. X, 1934, էջ 758, ծան. 3), իսկ Հ. Մանանդյանը գրում է. «Փոքր Հայքի թագավորությունը, որ հիմնվեց Հայաստանի կողքին, տրվեց Արիստոբուղոսին, որը Հերովդեսի սերունդից էր, իսկ Ծոփքի թագավորությունը՝ Սոեմոսին, որն Էմեսայի իշխանների տոհմից էր» (Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Ա, էջ 327)։

237 Նույն վկայությունը կա նաև Տակիտոսի մոտ (Annal., XIII, 7)։

238 Բնագրում՝ Βαρζαβάνης — Բարզաբանես։

ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍ ԿՈԿԿԵՅԱՆՈՍ

«ՀՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

(Հատվածներ)

817—8

ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍ

(Կյանքը և գործը)

Մ. թ. II դարի վերջին և III դարի սկզբին Հռոմեական կայսրության սահմաններն ընդարձակվել էին ինչքան երբեք։ Ստեղծվել էր հսկայածավալ և հզոր մի պետություն, որն իր նախընթացը չուներ պատմության մեջ։ Սրբեմնի փոքրիկ Հռոմի քաղաքացիներն իրենց տիրապետությունը տարածել էին Բրիտանական կղզիներից մինչև Նեղոսի հովիտը և Ատլանտյան օվկիանոսից մինչև Սիրաստ գետի ափերը, Միջերկրականը հայտարարելով իրենց սեփական ծովը՝ mare nostrum։ *Կայսր Անտոնինոս Կարակալլայի գահակալության տարիներին (211—217 թթ.) արդեն կայսրության ամբողջ տարածքի վրա բնակվող բոլոր ազատ բնակիչները հայտարարվեցին հռոմեական քաղաքացիներ, որով և իրավական տեսակետից վերացավ տարբերությունը Հռոմի բուն քաղաքացու և պրովինցիաների բնակչության միջև, ասես դրանով իսկ իր ժամանակի համար ստեղծվեց ինչ-որ աշխարհաքաղաքացիություն։*

Բնական է, որ նման պայմաններում արդեն չէր կարելի բավարարվել այս կամ այն առանձին երկրի կամ ժողովրդի պատմությունը շարադրելով, քանի որ հունա-հռոմայեցիներին հայտնի ամբողջ քաղաքակիրթ աշխարհը՝ օյկումենեն, ընդգրկված էր Հռոմեական կայսրության կազմում կամ էլ գտնվում էր նրա հետ անմիջական քաղաքական առնչությունների մեջ։ Եվ ահա հրապարակ են գալիս «Հռոմեական պատմություն» և կամ նման վերնագրով մեծածավալ աշխատություններ, որոնք իրենց ժամանակի համար կրում են «համաշխարհային» պատմության բնույթ։ Այդ գործերի հեղինակների համար արդեն բնավ էլ պարտադիր չէր Աթենքում կամ Հռոմում ծնված լինելը, քանի որ նախ հելլենիզմի, ապա Հռոմեական կայսրության համահարթիչ մամլակը աստիճա-

Նաբար վերացրել էր կենտրոնի և ծայրամասերի միջև նախկինում գոյություն ունեցած տնտեսական և քաղաքական տարբերությունները։ Համահարթում տեղի էր ունենում նաև լեզվի աստիճարեզում և արդեն պարտադիր էր դառնում հեղինակել կա՛մ լատիներեն (հատկապես կայսրության արևմտյան մասում), կա՛մ հունարեն։

Վերոհիշյալ երևույթները բնորոշ են նաև ուշ անտիկ շրջանի խոշորագույն պատմիչներից մեկին՝ Դիոն Կասսիոս Կոկկեյանոսին, որն իր երկը հեղինակել է հունարեն։

Դիոն Կասսիոսը (շուրջ 155—235 թթ.) ծնվել է Բյութանիայում, փոքրասիական Նիկիա քաղաքում։ Նա սերում էր արիստոկրատական հայտնի ընտանիքից և ստացել էր իր ժամանակի համար նախանձելիորեն անթերի կրթություն։ Դիոն Կասսիոսը թոռն է հայտնի հռետոր և մատենագիր Դիոն Ոսկեբերանի։ Նրա հայրը եղել է Հռոմի ծերակուտական և Մարկոս Ավրելիոսի կայսրության տարիներին (161—180 թթ.) վարել է Կիլիկիա պրովինցիայի, այնուհետև՝ Դալմատիայի հռոմեական կառավարչի պաշտոնը։

Դիոն Կասսիոսի կենսագրության միակ աղբյուրը նրա իսկ աշխատությունն է, որի մեջ, դժբախտաբար, հեղինակը կցկտուր տեղեկություններ է հաղորդում իր մասին։ Այդ տեղեկությունների համաձայն, պատանի Դիոնը ուղեկցել է իր հորը, երբ վերջինս Կիլիկիա պրովինցիայի կառավարիչն էր։ Հոր մահից հետո ապագա պատմիչը շուրջ 180 թ. Կոմմոդոս կայսեր ժամանակ (180—192 թթ.) գալիս է Հռոմ և այդ տարիներից հետո ընկած ժամանակահատվածի պատմությունն արդեն շարադրում է որպես դեպքերի ականատես, մինչդեռ դրան նախորդած պատմությունը շարադրելիս, հասկանալի է, օգտվել է հնագույն վավերագրերից կամ էլ նախորդ հեղինակների երկերից։

Կայսրության մայրաքաղաքում հաստատվելուց հետո, շուրջ 25 տարեկան հասակում, Դիոն Կասսիոսը դառնում է Հռոմի սենատի անդամ, որից հետո արդեն վարում է պետական տարբեր պաշտոններ Պերտինաքս (193 թ.), Դիդիոս Հուլիանոս (193 թ.), Սեպտիմիոս Սևերոս (194—211 թթ.), Անտոնինոս Կարակալլա (211—217 թթ.) և նրանց հաջորդ կայսրերի ժամանակ։

Ոգևորված Սեպտիմիոս Սևերոսի կառավարումից, երբ գահակալական բուռն կռիվներից հետո կայսերական իշխանությունը ժամանակավորապես կայունացել էր, Դիոն Կասսիոսն սկսում է իր գրական բեղուն գործունեությունը։ Սկզբում նա գրում է և հրա-

պարակում կայսր Սեպտիմիոսին գովաբանող ինչ-որ գործ, որի մեջ շարադրում է նրա կառավարման հետ կապված իր ակնկալությունները։ Այդ գրվածքի համար, որն, ի դեպ, մեզ չի հասել, Սեպտիմիոսը նրան պատշաճն է հատուցում և բարձր գնահատական տալիս գրվածքին։ Այդ ամենից առավել ևս քաջալերված, Դիոն Կասսիոսը միտք է հղանում արդեն գրելու հռոմեական պետության ամբողջ պատմությունը։

Դիոն Կասսիոսը մոտիկից շփվելով Հռոմի կառավարող շրջանների հետ, եռանդագին մուտք է գործում քաղաքական գործունեության ասպարեզ և արագորեն բարձրանում ծառայության աստիճաններով։ 194 թ. Սեպտիմիոս կայսրը նրան կարգում է զինվորական բարձր պաշտոնի։ 211 թ., Սեպտիմիոս Սևերոսի մահից անմիջապես առաջ, ընտրվում է Հռոմի կոնսուլ։ 216 թ. Դիոնը ուղեկցելով Անտոնինոս Կարակալլա կայսրին, մասնակցում է պարթևների դեմ վերջինիս ձեռնարկած ռազմական արշավանքին և գալիս է Արևելք, հավանաբար, հասնում մինչև Տիգրիս գետը։ Կարակալլայի այդ արշավանքը նպատակ ուներ Հռոմեական կայսրությանը միացնել Օսրոենե-Եդեսիան ու Հայաստանը և այս թագավորությունները դարձնել հռոմեական պրովինցիաներ։ Ինչպես հայտնի է իրադարձություններին մասնակից իր իսկ Դիոնի հաղորդումներից, հռոմայեցիներին թեև հաջողվեց նվաճել Օսրոենեն, բայց նրանց զորքերը առաջ շարժվելիս չարաչար պարտվեցին Հայաստանում։

218 թ., Մակրինոս կայսեր օրոք, Դիոնը նշանակվում է Պերգամոնի կառավարիչ. այդ կատարվեց հետևյալ պարագաներում։ Ինչպես նշեցինք, Անտոնինոս Կարակալլայի ժամանակ հռոմեական քաղաքացիության իրավունքը տարածվեց կայսրության սահմաններում բնակվող բոլոր ազատների վրա։ Բնական է, որ Կարակալլայի այս միջոցառումը պետք է հռոմեական վերնախավի դժգոհություն առաջացներ, բայց և ապահովեր պրովինցիաների բնակչության համակրանքը։ Կայսրից դժգոհ տարրերն, ահա, Կարակալլայի պարթևական արշավանքի ժամանակ դավադրաբար սպանեցին նրան։ Այս ոճրապարտ քայլն էլ առաջացրեց Պերգամոնի բնակչության դժգոհությունը և առիթ դարձավ ապստամբության։ Կայսերական գահին հենց նոր բազմած Մակրինոսը Դիոնին ուղարկում է Պերգամոն, դրությունը խաղաղեցնելու համար։ Այստեղ էլ Դիոնը մնում է մինչև Ալեքսանդր Սևերոսի կայսր հռչակվելը։

Այնուհետև, Ալեքսանդր Սևերոս կայսեր ժամանակ (222—235 թթ.) հաջորդաբար նշանակվում է կայսերական զորքերի լեգատ Աֆրիկա, Դալմատիա, Վերին Պաննոնիա պրովինցիաներում, բայց պրետորյան գնդերը, դժգոհ նրա կիրառած խիստ կարգապահությունից, ապստամբում են Դիոնի դեմ, և միայն կայսեր բարձր հովանավորությունն է փրկում նրան, և պատմիչը, ապաստանելով Կամպանիայում, որոշ ժամանակ ապրում է այնտեղ։ 229 թ. արդեն քաղաքական գործունեության հարուստ փորձ ձեռք բերած Դիոն Կասսիոսը, կայսեր միջնորդությամբ, երկրորդ անգամ ընտրվում է մայրաքաղաքի կոնսուլ։ Սակայն կայսեր այս քայլը դարձյալ վրդովեցնում է պրետորյաններին, և Դիոնը քիչ անց ամբողջովին հրաժարվում է քաղաքական գործունեությունից, իր խոսքերով ասած՝ վատառողջ լինելու պատճառով, հեռանում է Իտալիայից և վերջնականապես հաստատվում իր հայրենի Նիկիա քաղաքում, որտեղ էլ մինչև իր կյանքի վերջը մնացած ամբողջ ժամանակը տրամադրում է իր մեծարժեք «Հռոմեական պատմության» (Ῥωμαϊκὴ ἱστορία կամ Ῥωμαϊκά) շարադրանքն ավարտելու գործին։

«Հռոմեական պատմությունը» շարադրելու վրա հեղինակն աշխատել է շուրջ երեք տասնամյակ, գուցե և ավելի։ Իր իսկ Դիոնի խոստովանությամբ, նա ամբողջ մեկ տասնամյակ (200—211 թթ.) հատկացրել է անհրաժեշտ նյութերը հավաքելու գործին և հաջորդ 12 տարիների ընթացքում շարադրել է իր պատմության այն մասը, որն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև Սեպտիմիոս Սևերոսի մահը (211 թ.)։ Հետագա տարիներին նա շարադրել է իր պատմության վերջին մասերը։ Դիոնին են վերագրվում նաև մի շարք երկրորդական այլ գործեր, որոնց վավերականությունը, սակայն, ավելի քան կասկածելի է։

Դիոն Կասսիոսի «Հռոմեական պատմությունը» բաղկացած է եղել 80 գրքից։ Այդ մեծածավալ երկի բովանդակությունը կազմել է հռոմեական տերության ամբողջ պատմությունը, հնագույն ժամանակներից ի վեր, սկսած հռոմայեցիների նախնի և նրանց պետության հիմնադիր Էնեասի մասին զրույցներից, երբ սա, փախչելով կրակի մատնված Տրոյայից, հաստատվում է Լատիումում, մինչև մ. թ. 229 թ., այսինքն, մինչև իր՝ հեղինակի երկրորդ կոնսուլության տարին։

80 գրքից ամբողջությամբ պահպանվել են միայն 24-ը (XXXVI—LX գրքերը), որոնց մեջ, մանրամասն շարադրված է

Հռոմի պատմությունը մ. թ. ա. 68—մ. թ. 47 թթ., այն է՝ Լուկուլլոսի Հայաստան կատարած արշավանքից մինչև Կլավդիոս կայսեր իշխանության տարիները։ Սա մի ժամանակահատված էր, որի ընթացքում տեղի են ունեցել քաղաքական կարևորագույն իրադարձություններ Հռոմի ներսում, և որոնց մասին մեր միակ արժանահավատ աղբյուրը մնում է Դիոն Կասսիոսի պատմությունը։

Նախորդ և հաջորդ դրքերի բովանդակությունն ընդհանրապես մեզ հայտնի է իրենց ժամանակի համաշխարհային պատմությունը գրելու փորձեր արած բյուզանդական տարեգիրներ Քսիփիլինոսի (XI դ.), Զոնարասի (XII դ.), մասամբ նաև Ցեցեսի (XII դ.) և այլոց կատարած մերթ ընդարձակ, մերթ էլ շատ հակիրճ քաղվածքներից։

Հռոմի պատմության ավելի քան մեկ հազարամյակ ընդգրկող ժամանակաշրջանի պատմությունը Դիոն Կասսիոսը բաժանել է երեք հատվածի. 1) հանրապետության շրջան՝ Հռոմի հիմնադրումից մինչև կայսրության հաստատումը, 2) միապետության շրջան՝ Օգոստոս կայսրից մինչև 180 թ., այսինքն՝ մինչև Մարկոս Ավրելիոս կայսեր մահը և 3) հեղինակի ապրած շրջանը՝ 180—229 թթ.։ Առավել մանրամասն շարադրված են վերջին շրջանի դեպքերը, որոնց անմիջական մասնակիցն ու ականատեսը եղել է ինքը՝ հեղինակը. մինչդեռ ավելի վաղ շրջանի պատմությունը շարադրելիս նա ամբողջովին կախում է ունեցել իր օգտագործած աղբյուրներից։ Բոլոր դեպքերում, սակայն, իր պատմական բովանդակության տեսակետից Դիոն Կասսիոսի երկը մեծ արժեք է ներկայացնում, քանի որ հեղինակը, ինչպես տեսանք, իբրև զորահրամանատար և քաղաքական գործիչ տարիներ շարունակ բարձր պաշտոններ է վարել թե՛ բուն Հռոմում, թե՛ զանազան պրովինցիաներում և այդ իսկ պատճառով մոտիկ շփման մեջ եղել կայսերական միջավայրի հետ, լավատեղյակ իր ժամանակի իրադարձություններին և լայն հնարավորություններ է ունեցել օգտվելու պետական պաշտոնական վավերագրերից։

Մյուս կողմից, սակայն, չի կարելի աչքաթող անել այն կարևոր հանգամանքը, որ Դիոնի արիստոկրատական ծագումը և զբաղեցրած պետական բարձր պաշտոնները, անկասկած, պայմանավորել են նրա պատմության միտումնավորությունը հօգուտ Հռոմայեցիների և ի վնաս հատկապես Արևելքի ժողովուրդների։

Դիոն Կասսիոսն իր «Պատմությունը» շարադրելիս ընտրել է աննալիստական մեթոդը, տարեգրությունների ձևը: Այդ սկզբունքի հիման վրա էլ մեկ տարվա բոլոր իրադարձությունները, աշխարհի որ մասում էլ դրանք կատարված լինեն, նա պատմում է միասին, հաճախ ընդհատելով իր պատմությունը: Այս մեթոդի հիմնական թերությունն այն է, որ մեկ տարվա ժամանակահատվածը շատ սահմանափակ միավոր է համաշխարհային դեպքերը և իրադարձությունները տեղադրելու համար: Այդ իսկ պատճառով նման սկզբունք կիրառող հեղինակն ամեն անգամ հարկադրված է լինում ընթերցողին փոխադրելու Հռոմից Հունաստան, Հունաստանից՝ Սիկիլիա, այստեղից՝ Մակեդոնիա, այնուհետև՝ Աֆրիկա, Իսպանիա, Արևելք ու նորից Հռոմ: Բնական է, որ այսպիսի արատավոր մեթոդով կատարված շարադրանքից մեծապես պետք է տուժեր աշխատության կառուցվածքը, ի հաշիվ անխուսափելի և անտեղի կրկնությունների:

Դիոն Կասսիոսի լեզուն գերազանց մշակված ատտիկյան հունարենն է, որը, սակայն, երբեմն ծանր է կարդացվում և զերծ չէ լատինաբան արտահայտություններից: Իր շարադրանքի ընթացքում պատմիչը գլխավորապես ուշադրություն է դարձրել ռազմական դեպքերի, ինչպես նաև կառավարող շրջանակներին վերաբերող առանձին հաղորդումների վրա: Նա, ընդհանրապես, քիչ է ուշադրություն դարձնում պետության և հասարակության ներքին զարգացման հետ կապված հարցերին: Դիոնը, որպես պալատի դրանիկ, ատելություն է տածում իրենց ազատության համար կրվող ժողովուրդների նկատմամբ: Նա իր աշխարհայացքով հեռու է ռեալիստ լինելուց և կրքոտ կերպով հավատում է ամեն տեսակ երազների, հրաշքների և նշաններին: Իր շարադրանքի ընթացքում Դիոնը փորձել է հետևել մեծ Պոլիբիոսին, բայց ոչ մի դեպքում չի կարողացել հավասարվել նրան. որոշ հատվածներում աշխատել է նմանվել աթենական խոշոր պատմիչ Թուկիդիդեսին, իսկ գործիչներին վերագրած իր ճառերում քաղաքական դատողություններ անելիս, նկատի է ունեցել դասական շրջանի հելլեն հռետորների ճառերը:

Այս նկատված թերություններով հանդերձ, Դիոն Կասսիոսի «Հռոմեական պատմությունը» անփոխարինելի սկզբնաղբյուր է ոչ միայն ընդհանրապես հին աշխարհի պատմությունն ուսումնասիրելու համար, այլև այն բովանդակում է կարևորագույն տվյալներ հատկապես մ. թ. ա. I—մ. թ. II դդ. Հայաստանի պատմության

վերաբերյալ։ Առանձին դեպքերում, ինչպես օրինակ Հայաստանն օկուպացրած հռոմեական կայազորների դեմ մայրաքաղաք Արտաշատի բնակչության 163 թ. ապստամբության մասին, Դիոնի երկը միակ աղբյուրն է։

Ներկա թարգմանությունը կատարել ենք „Cassii Dionis Coccеani Historiarum Romanorum quae supersunt". ed. Boissevain, Berolini, 1895 հրատարակությունից։ Միաժամանակ ձեռքի տակ ունեցել ենք „Loeb Classical Library" մատենաշարով հրատարակված Դիոն Կասսիոսի բնագիրը։

Թարգմանելու համար Դիոն Կասսիոսի «Պատմություն»-ից ընտրել ենք այն հատվածները միայն, որոնք վերաբերում են պատմական Հայաստանին և հարևան երկրներին, որոնց հետ հայերը հնագույն ժամանակներից ունեցել են քաղաքական, տնտեսական և մշակութային առնչություններ։ Դիոն Կասսիոսի երկի այդ հատվածները ամբողջությամբ առաջին անգամ են թարգմանաբար ներկայացվում հայագետների ուշադրությանը։

Սույն թարգմանության մեջ փակագծերում հանդիպող բառերը ընթերցվածը պարզ դարձնելու նպատակով մեր կատարած հավելումներն են։

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

1 *Ես կարդացել եմ նրանց մասին[1] որևէ մեկի կողմից գրված գրեթե ամեն ինչ, բայց ընդգրկել եմ (իմ պատմության մեջ) ոչ ամեն բան, այլ այն բոլորը, ինչ ես ընտրել եմ։*

2 *Եվ ոչ իսկ գեղապաճույճ խոսքեր եմ օգտագործել. միայն այնքանով, որքանով այդ թույլ էր տալիս իրերի շարադրանքը, որպեսզի այդ խոսքերի ճշմարտության մեջ ոչ ոք չկասկածի, ինչպես պատահում է այլոց երկերում։ Ուստի ես,*

3 *ինչքան հնարավոր էր, աշխատել եմ երկու դեպքում էլ հավասարապես լինել ճշմարիտ։ Ես կսկսեմ այնտեղից, ուր մեր բնակեցրած երկրի վրա կատարված դեպքերի մասին ամենաստույգ տեղեկություններն ունենք։ Այն երկրի, որտեղ կառուցված է հռոմայեցիների քաղաքը։*

ԳԻՐՔ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

(Զոնարաս, 9, 18)

Փլամինիոսի[2] Հռոմ ժամանելուց հետո Նաբիսը[3] դարձյալ ապստամբեց։ Եվ դրանից ամբողջ հունական (երկիրը), այսպես ասած, փոթորկվեց, դրդվելով էտոլիացիների[4] կողմից։ Ուստի նրանք պատրաստվում էին պատերազմի և դեսպաններ ուղարկեցին Փիլիպպոսի[5] և Անտիոքոսի[6] մոտ։ Եվ համոզեցին սրան պատերազմել հռոմայեցիների դեմ, որով նա կարող էր թագավորել և՛ Հելլադայի, և՛ Իտալիայի վրա։ Իսկ հռոմայեցիները այս խառնակ իրավիճակի պայմաններում հույս չունեին հաղթելու Անտիոքոսին, այլ ցանկանում էին պահպանել այն, ինչ արդեն ձեռք էին բերել։ Քանզի Ան-

տիոքոսը մեծ էր համարվում թե՛ իր սեփական ուժի համար, որով ի թիվս այլոց նվաճել էր նաև Մեդիան, թե՛ առավել ևս հպորացել էր, Եգիպտոսի թագավոր Պտղոմեոսին[7] և Կապպադովկիայի (թագավոր) Արիարաթեսին[8] իրեն փեսա դարձնելով։

(Ջոնարաս, 9, 20)

Այդ ժամանակ Մանլիոսը գրավեց Պիսիդիան և Լյուկաոնիան, և Պամփյուլիան, և Ասիական Գալատիայի մեծ մասը։ Քանդի այստեղ կա գալլերի մի ցեղ, որն անջատվել է եվրոպականից։ Իրենց թագավոր Բրեննոսի առաջնորդությամբ նրանք արշավեցին Հելլադայի և Թրակիայի վրայով և այնտեղից անցնելով Բյութանիայի միջով, նրանք անջատեցին Փռյուգիայի, Պափլագոնիայի, Օլյումպոսի տափաստանակից Մյուսիայի և Կապպադովկիայի որոշ մասեր և այնտեղ բնակվեցին. ուստի այժմ առանձին մի ժողովուրդ կա այնտեղ, որը կրում է գալատներ անունը։ Սրանք, ահա, մեծ դժվարություններ հարուցեցին Մանլիոսին։ Բայց (Մանլիոսը) սրանց ևս հաղթեց, նրանց Անկյուրա քաղաքը պաշարմամբ վերցնելով, մինչդեռ մյուս քաղաքները հանձնվեցին։ Այս ամենը աննելուց և Կապպադովկիայի Արիարաթես թագավորից որպես խաղաղության փրկագին խոշոր գումար ստանալուց հետո նա վերադարձավ տուն։

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ

(Ջոնարաս, 9, 24)

Այդ ժամանակ էլ Կապպադովկիայի հարցը կարգավորվեց այսպես։ Այս երկրի (թագավոր) Արիարաթեսը ունեցավ դարազատ որդի՝ Արիարաթեսին։ Բայց սրան ունենալուց առաջ նրա կինը, քանի որ երկար ժամանակ չէր հղիանում, տղա որդեգրեց, անվանելով նրան Օրոփեռնես։ Երբ հետատղա որդեգրեց, այն մեկը բացահայտվեց և հնգայում ծնվեց հարազատը, այն մեկը բացահայտվեց և հնազվեց (երկրից)։ Արիարաթեսի մահից հետո սա էլ ապստամբեց եղբոր դեմ։ Եվ Արիարաթեսին դաշնակցեց Եվմեննեսը[9], իսկ Օրոփեռնեսին՝ Դեմետրիոսը՝ Ասորիքի թագավորը[10]։ Արիարաթեսը թուլանալով ապաստանեց հռոմեացիների մոտ և նրանց կողմից հաղորդակից հռչակվեց Օրոփեռնեսի թագավորական իշխանությանը։ Եվ քանի որ

Արիարաթեսը հռոմայեցիների կողմից հռչակվեց (իրենց) բարեկամ և դաշնակից[11], այդ իսկ պատճառով նա կարողացավ յուրացնել ամբողջ իշխանությունը։ Եվ Ատտալոսը[12] հաջորդելով մահացած Եվմենեսին, թե՛ Օրոփեռնեսին, թե՛ Դեմետրիոսին ամբողջապես դուրս արեց Կապպադովկիայից։

ՀԱՏՎԱԾՆԵՐ 30—35 ԳՐՔԵՐԻՑ

99, 1 Միհրդատը[13], երբ հռոմայեցիների դեսպանները ժամանեցին, բոլորովին չվհրդովվեց, այլ հակամեղադրանք հարուցելով և ցուցադրելով դեսպաններին այն միջոցները, որ նա վատնել էր և՛ պետական գործերի, և՛ մասնավոր անձանց վրա, մնաց հանգիստ։ Իսկ Նիկոմեդեսը[14], քաջալերվելով հռոմայեցիների դաշնակցությունից և դրամի կարիք զգալով, ներխուժեց նրա երկիրը։

2 Միհրդատը դեսպաններ ուղարկեց Հռոմ, պահանջելով, որ եթե իրենք Նիկոմեդեսին բարեկամ են համարում, ապա թող համոզեն կամ նույնիսկ ստիպեն նրան արդարացի վերաբերվել իր հանդեպ. հակառակ դեպքում թույլ տան իրեն պաշտպանվելու թշնամու դեմ։ Մինչդեռ նրանք ոչ միայն չկատարեցին նրա խնդրանքներից որևէ մեկը, այլև սպառնացին (պատժել) նրան, եթե Կապպադովկիան չվերադարձնի Արիոբարզանեսին[15] և խաղաղություն չպահպանի Նիկոմեդեսի հետ։ Եվ նրա դեսպաններին նույն օրը ետ ուղարկեցին ու սաստեցին նրան այլևս ոչ ոքի չուղարկել, մինչև իրենց չհնազանդվի։

* * *

101, 1 Բոլոր ասիացիները, Միհրդատի կարգադրությամբ, սպանեցին հռոմայեցիներին։ Միայն Տրալլեսի[16] բնակիչները անձամբ իրենք ոչ ոքի չսպանեցին, այլ (այդ գործի համար) վարձեցին ոմն պափլագոնացի Թեոփիլոսի, ասես թե դրանով իրենք պակաս պետք է կորստի մատնվեին կամ թե սպանվողների համար ասես որևէ կարևորություն ուներ, թե
2 ո՞ւմ ձեռքով են սպանվում։ Թրակիացիները Միհրդատի դրդմամբ ասպատակեցին Եպիրոսը մինչև Դոդոնե[17] երկրի մյուս մասերը, այնպես, որ Զևսի տաճարը ևս կողոպտեցին։

* * *

109, 6 Գերի վերցվածների սպանությունը այդ ժամանակ էլ կատարվեց ոչ պակաս չափով, քան Սուլլայի օրոք. և քանի որ նրանք սպանվում էին տաճարի մոտ, մեծ աղմուկն ու ողբը, լացն ու կականը թափանցում էին մինչև սենատ.
7 այնպես, որ սենատորները կրկնակի տագնապեցին։ Քանզի իրենք ևս արդեն հետու չէին ինչ-որ վտանգավոր բանի սպասելուց. այնքան սիրտ էին նրա խոսքերը և գործերը։ Ուստի և շատերը, մեծապես տագնապելով այս կրկնակի վտանգի պատճառով, ցանկանում էին գտնվել դրսում կործանվողների թվում, որպեսզի դադարեին այսուհետև վախենալուց.
8 Բայց իրենք խուսափեցին, իսկ մյուսները ջարդվեցին ու գետր նետվեցին. այնպես որ Միհրդատի դաժան համարված կոտորածը, երբ նա մեկ օրում սպանել էր Ասիայում գտնվող բոլոր հռոմայեցիներին, առավել փոքր թվաց այդ ժամանակ սպանվածների բազմության համեմատությամբ։

ԳԻՐՔ ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ[18]

(Քսիփիլինոս, հրատ. Dindorf-*ի, էջ 1—2)*

1 Այդ ժամանակ (մ. թ. ա. 69-թրգմ.) Լուկիոս Լուկուլլոսը պատերազմում հաղթելով Ասիայի տիրակալներ Միհրդատին և արմեն Տիգրանին, և ստիպելով նրանց խուսափել ճակատամարտից, պաշարում էր Տիգրանակերտը։ Բայց բարբարոսները[19] նետաձգությամբ և (պաշարողական) մեքե-
2 նաների վրա թափած նավթով[19ա] մեծապես վնասեցին նրան։ Այս դեղանյութը կուպրաշատ էր և բոցավառվող, այնպես որ հրկիզում էր այն ամենը, ինչի կպչում էր, և ոչ մի հեղուկով հեշտ չէր այն հանգցնել։ Այս բանից Տիգրանը նորից սրտապնդվելով այնքան մեծ զորքով առաջ եկավ, որ նույնիսկ ծիծաղեց այնտեղ գտնվող հռոմայեցիների վրա. պատմում են, ուրեմն, որ նա իբր ասել է՝ եթե եկել են պատերազմելու,
3 քիչ են, իսկ եթե եկել են դեսպանության՝ շատ են եկել[20]. Սակայն նրա հրճվանքը երկար չտևեց, այլ շուտով նրան պարզ դարձավ, թե որքան քաջությունն ու արվեստը գերազանցում են ամեն մի թվի։ Նրա փախուստից հետո զինվորները, գտնելով նրա խույրը և մոտիկ ընկած ապարոշը, հանձնեցին Լուկուլլոսին. քանզի վախենալով նրանց կողմից

ճանաչվելով բռնվելուց, (արքան) պոկել էր դրանք ու դնն շպրտել[21]։

* * *

1 ...Եվ քանի որ (Միհրդատը) ենթարկվել էր բախտի երկու ծայրահեղություններին, (Տիգրանը) նրան հանձնեց (գորքի հրամանատարությունը՞)[22]։ Քանզի շատ անգամներ պարտվելով և հաղթելով, ենթադրվում էր, որ նա ոչ պակաս հմուտ էր դարձել ռազմական արվեստին։ Ուստի և նրանք սպես թե նոր էին պատրաստվում պատերազմ սկսելու, դեսպաններ ուղարկեցին հարևաններին և, իմիջիայլոց, նաև Արշակ Պարթևին[23], թեպետև տա Տիգրանի հանդեպ թշնամություն ուներ վիճելի մի երկրամասի պատճառով[24], և
2 խոստացան այն գիջել նրան. միաժամանակ նրանք մեղադրում էին հռոմայեցիներին, ասելով, որ եթե իրենք առանձին մնան և հռոմայեցիները հաղթեն իրենց, ապա անհապաղ կարշավեն նաև նրա դեմ։ Քանզի ամեն մի հաղթողի բնականից հատուկ է անհագությունը և նրա ընչաքաղցությունը ոչ մի սահման չի ունենում. այսպես ևս հռոմայեցիները, որոնք ուժով տիրել են շատերին, չեն ցանկանա զրկվել այդ ամենից։

2, 1 Մինչդեռ նրանք այսպես էին գործում, Լուկուլլոսը Տիգրանին չհետապնդեց, այլ թույլ տվեց նրան շատ ազատորեն փրկվել։ Այս պատճառով էլ Լուկուլլոսը քաղաքացիների և մյուսների կողմից պաշտոնանկ հայտարարվեց այն մեղադրանքով, որ իբր չի ցանկանում վերջ տալ պատերազմին,
2 որպեսզի կարողանա իր իշխանությունը երկարաձգել։ Ուստի և նրանք Ասիայում իշխանությունը վերադարձրին պրետորներին, ու դրանից հետո, երբ պարզ դարձավ, որ նա շարունակում էր նույն եղանակով գործել, նրանք ուղարկեցին այդ տարվա կոնսուլին՝ փոխարինելու Լուկուլլոսին
3 Մինչդեռ նա Տիգրանակերտը գրավեց այնտեղ բնակեցված օտարների ապստամբության հետևանքով[25]։ Քանզի նրանց մեծ մասը կիլիկեցիներ էին, որոնք մի ժամանակ տեղահանվել էին իրենց երկրից, և այժմ գիշերով հռոմայեցիներին
4 ներս թողեցին։ Այնուհետև մնացած ամեն ինչը հափշտակվեց, բացի կիլիկեցիների ունեցվածքից. իսկ հզորագույնների կանանցից շատերին, որոնք գերվել էին, Լուկուլլոսը պահեց առանց ստորացնելու. այս վարմունքով նա իր կողմ

5 նվաճեց նաև նրանց ամուսիններին։ Իսկ Կոմմագենեի թագավոր Անտիոքոսին—այս երկիրը Ասորիքի, Եփրատի և Տավրոսի մոտ է գտնվում—արաբ իշխանավոր Ալքավդոնիոսին և ուրիշներին, որոնք դեսպաններ էին ուղարկել, ընդունեց։

3,1 Եվ նրանցից տեղեկանալով Տիգրանի և Միհրդատի կողմից Արշակին ուղարկված դեսպանության մասին, ինքը ևս դրան հակառակ, դաշնակիցներից ոմանց ուղարկեց նրա մոտ, սպառնալիքներով՝ եթե օգնելու լինի նրանց, և խոս-
2 տումներով՝ եթե ընտրելու լինի իրեն։ Իսկ Արշակը այժմ, քանի որ դեռևս զայրացած էր Տիգրանի դեմ և միաժամանակ ոչ մի կասկած չուներ հռոմայեցիների հանդեպ, փոխադարձ դեսպաններ ուղարկեց (Լուկուլլոսի մոտ) և բարեկա-
3 մություն ու դաշնակցություն հաստատեց։ Սակայն հետո նա տեսնելով իր մոտ ժամանած Սեկիլիոսին, կասկածեց, որ սա եկել էր իր երկիրը նաև ուժերը լրտեսելու համար—քանզի այդ պատճառով, և ոչ թե տեղի ունեցած համաձայնության հետևանքով, ուղարկվել էր ռազմական գործերում աչքի ընկած մի մարդ—ուստի հետագայում ևս ոչ մի օգնություն ցույց չտվեց նրան։ Բայց և միաժամանակ ոչնչով չհակառակվեց, այլ կանգնեց երկու կողմերի միջև, չցանկանալով, ինչպես բնական էր, ուժեղացնել նրանցից որևէ մեկին. քանզի նա կարծում էր, որ կողմերի միջև հավասար կռիվը իր համար մեծագույն ապահովություն կլիներ։

4,1 Այդ տարին ահա Լուկուլլոսն այսպես գործեց և գրավեց Հայաստանի շատ մասերը։ Եվ Քվինտոս Մարկիոսի կոնսուլության տարին—քանզի սա, թեպետև միայնակ չէր կարգվել կոնսուլ, մենակ կոնսուլություն արեց. որովհետև նրա հետ կոնսուլ ընտրված Լուկիոս Մետելլոսը մահացավ տարեսկզբին, ու նրա փոխարեն պաշտոնում ընտրվածը նույնպես մահացավ դեռևս իշխանության գլուխ անցնելուց առաջ, որից հետո այլևս ոչ ոք չընտրվեց—նույն այդ տարին, ու-
2 րեմն, Լուկուլլոսը արդեն ամռան կեսին սկսեց արշավանքը, քանզի ցրտերի պատճառով անկարելի էր գարնանը ներխուժել Բշնամու երկիրը, և ավերեց երկրի որոշ մասերը, որպեսզի բարբարոսները պաշտպանելով այն, ներքաշվեն պատերազմի մեջ. բայց քանի որ նրանք դարձյալ չշարժվեցին,
5,1 ինքն արշավեց նրանց վրա։ Եվ այս ընդհարման ժամանակ

հռոմայեցի հեծյալներին թշնամու հեծելազորը դժվար դրության մատնեց, իսկ հետևակի հետ նրանցից ոչ մեկը ձեռնամարտի դուրս չեկավ, այլ նրանք փախչում էին ամեն անգամ, երբ լուկուլլոսի վահանակիրները օգնության էին հասնում հեծելազորին։ Այսուհանդերձ թշնամիները որևէ վնաս չկրեցին. այլ նրանք ետ դառնալով և հետապնդողներին նետահարելով, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին
2 էլ վիրավորեցին։ Ու վերքերը ծանր էին և դժվար բուժելի. քանզի նրանք գործածում էին երկծայր նետեր, և ծայրերը այնպես էին իրար ագուցված, որ նետերը թե՛ մարմնի որևէ մասում մնալու և թե՛ դուրս քաշվելու դեպքում, արագորեն սպանում էին, որովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերքի մեջ[26]։

6, 1 Այնժամ լուկուլլոսը, քանի որ շատերը վիրավորվում էին և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր,
2 նահանջեց այդտեղից և արշավեց Նիսիբիսի[27] վրա։ Այս քաղաքը կառուցված է Միջագետք կոչված երկրում—քանզի այսպես է կոչվում Տիգրիսի և Եփրատի միջև գտնվող ամբողջ (երկիրը)—և այժմ այն պատկանում է մեզ և համարվում է մեր գաղութը։ Բայց այդ ժամանակ Տիգրանը պարթևներից վերցնելով այն, իր գանձերը և այլ հարստությունների մեծ մասը այնտեղ էր կենտրոնացրել և իր եղբորը[28] այնտեղ բերդապահ էր կարգել։ Լուկուլլոսը ամռանը հասնելով այս քաղաքը, թեպետև հարձակվում էր ոչ իմիջիայլոց, բայց ոչինչ չկարողացավ վճռել. քանզի (քաղաքի) պարիսպները և՛ կրկնակի, և՛ աղյուսաշեն լինելով, մեծ հաստություն ունեին և բաժանված էին խորը խրամատով. այնպես որ ոչ մի տեղում չկարողացավ (պարիսպը) ո՛չ քանդել, ո՛չ իսկ խախտել. ուստի և Տիգրանը նույնիսկ օգնության չեկավ
7, 1 յուրայիններին։ Բայց երբ ձմեռը վրա հասավ, և բարբարոսները դարձան առավել անզգույշ, քանի որ իրենք գերազանցել էին հռոմայեցիներին և երբեք չէին սպասում, որ նրանք
2 իրենց տեղերից կշարժվեն, (Լուկուլլոսը) ընտրելով անլուսնկա մի գիշեր, երբ ուժեղ տեղատարափ էր և ամպրոպ, ուստի և թշնամին չէր կարող նախապես ոչինչ տեսնել, ոչ իսկ լսել, լքեց արտաքին շրջապարիսպը և միջակա խրամատը թողնելով մի փոքր խումբ, և շատ տեղերում մոտեցավ

պարսպին. առանց դժվարության անցավ հողաթմբերը և հեշտությամբ սպանեց այնտեղ թողնված ոչ մեծաթիվ պա-
3 հակներին: Եվ այսպիսով, խրամատի մի մասը լցրեց—քանզի բարբարոսները քանդել էին կամուրջները—իսկ ուժեղ տեղատարափի պատճառով ո՛չ նետաձգությունը, ո՛չ իսկ կրակը չէին կարողանում նրան վնասել: Ուստի անցնելով այն, անմիջապես գրավեց ամեն ինչ, քանի որ ներքին շրջապարիսպը այնքան ամուր չէր, որովհետև արտաքին պատի ամրությունը վստահություն էր ներշնչում: Իսկ միջնաբերդ
4 փախածներին, որոնց մեջ էր նաև Տիգրանի եղբայրը, հետագայում ստիպեց հանձնվել: Այսպիսով և՛ մեծաքանակ հարբստություն ձեռք բերեց, և՛ այնտեղ էլ ձմեռեց:

8, 1 Ուստի Նիսիբիսն այս կերպ նա գրավեց, բայց Հայաստանի, ինչպես և Պոնտոսի շուրջը գտնվող մի շարք երկրամասեր կորցրեց: Քանզի Տիգրանը, կարծելով, որ Նիսիբիսը անառիկ է, օգնություն չուղարկեց, այլ արշավեց դեպի վերոհիշյալ երկրամասերը, որպեսզի, քանի դեռևս Լուկուլլոսը զբաղված էր Նիսիբիսի շուրջը, ինքը կարողանար ետ նվա-
2 ճել դրանք: Այնժամ նա Միհրդատին ետ ուղարկեց իր երկիրը, իսկ ինքը եկավ իր Հայաստանը և այստեղ իրեն դիմադրած Լուկիոս Փաննիոսին շրջապատեց ու պաշարեց, մինչև որ Լուկուլլոսն այդ մասին իմանալով, օգնություն ուղարկեց:

9, 1 Մինչ այս դեպքերը տեղի էին ունենում, Միհրդատը, մտնելով մյուս Հայաստանը[29] և նրա մերձակա շրջանները, Հռոմայեցիներից շատերին, որոնք թափառում էին երկրով մեկ, հանկարծակի հարձակվելով՝ ոչնչացրեց, իսկ մյուսներին պատերազմում ջարդեց. և դրանով իսկ երկրի մեծագույն
2 մասը արագորեն նվաճեց: Քանզի մարդիկ նրան համակրում էին և՛ համազգի լինելու, և՛ հայրենի թագավորական իշխանություն ունենալու պատճառով. մինչդեռ հռոմայեցիներին ատում էին և՛ այլազգի լինելու, և՛, որպես իշխողներ, իրենց հալածած լինելու պատճառով. հետևաբար անցան նրա կողմը և դրանից հետո հաղթեցին այնտեղի կառավարի:
3 Մարկոս Փաբիոսին: Քանզի բրակիացիները, որոնք նախապես վարձկաններ էին Միհրդատի մոտ, իսկ այժմ Փաբիոսի հետ էին, և հռոմեական բանակատեղում գտնվող ստրուկ-
4 ները նրանց մեծապես օգնեցին: Որովհետև բրակիացիները

817—9

Փաբիոսի կողմից հետախուզության ուղարկվելով, ոչ մի որոշակի տեղեկություն չհաղորդեցին նրան, և դրանից հետո երբ նա առաջվա նման անզգույշ էր առաջանում, և Միհրդատը հանկարծակի հարձակվեց նրա վրա, նրանք ևս համատեղ նետվեցին հռոմայեցիների վրա։ Միաժամանակ ստրուկները ևս, որոնց համար բարբարոս (թագավորը)[30] ազատություն էր հռչակել, մասնակցեցին գործին։ Եվ կոչնչացնեին նրանց[31], եթե Միհրդատը, որն արդեն յոթանասուն տարեկանն անց լինելով դեռևս կռվում էր, քարով չվիրավորվեր։ Այս էլ երկյուղ ներշնչեց բարբարոսներին, թե նա կարող է մեռնել։ Ուստի և այդ պատճառով նրանք դադարեցրին կռիվը, և Փաբիոսն ու մյուսները կարողացան ապահով տեղ փախչել։

10,1 Այս դեպքերից հետո (Փաբիոսը) փակվեց Կաբիրայում[32] և պաշարվեց, բայց ազատվեց Տրիարիոսի կողմից[33]։ Քանի որ սա Ասիայից Լուկուլլոսի մոտ դնալիս, գտնվում էր այդ շրջանում, և տեղեկանալով կատարված դեպքերի մասին, 2 հավաքեց ներկա եղողներից հնարավորին չափ մեծ ուժ և այնպես շփոթեցրեց Միհրդատին, որը կարծեց, թե պետք է հանդիպի հռոմեական ամբողջ բանակին, որ ստիպեց նրան հեռանալ, դեռևս բոլորովին ի տես չեկած։ Եվ այս բանից հետո (Տրիարիոսը) արտապնդվելով, փախչող (Միհրդատին) 3 մինչև Կոմանա[34] հալածեց և այնտեղ հաղթեց։ Քանի որ Միհրդատը բանակել էր հանդիպակաց ափին այն գետի, որի կողմից մոտենում էին հռոմայեցիները, ապա ցանկացավ նրանց հետ կռվի բռնվել, քանի դեռ նրանք ճանապարհից հոգնած էին. ուստի և ինքը եկավ ընդառաջ և միաժամանակ ուրիշներին ևս կարգադրեց ճակատամարտի ընթացքում մեկ այլ կամրջով անցնելով, հարձակվել։ Եվ ինքը, թեպետև երկար ժամանակ հավասար կերպով կռվում էր, կամուրջը, որի վրայով շատերը համատեղ բազմությամբ անցնում էին[35]... զրկեց նրան օգնությունից և շփոթության մատնեց։

11,1 Եվ սրանից հետո նրանք երկուսն էլ քաշվեցին իրենց ամրություններըը, քանզի արդեն ձմեռ էր, և հանգիստ արեցին։ Իսկ Կոմանան պատկանում է այժմյան Կապպադովկիային և համարվում էր, որ դեռևս մինչև այդ ժամանակ Արտեմիսի տավրիկյան փայտե կուռքը, ինչպես և Ագամեմնոնի[36] սերունդը այստեղ են պահպանվել։ Թե ինչպե՞ս այս

բոլորը այստեղ ընկան, կամ թե ինչպե՞ս պահվեցին, ես չեմ կարող հստակ որոշել, քանի որ այդ մասին շատ բաներ են
2 պատմվում։ Բայց ես կպատմեմ այն, ինչ պարզորեն հասկացել եմ։ Այսպիսի նույնանուն երկու քաղաք կա Կապադովկիայում, որոնք իրարից այնքան էլ շատ հեռու չեն գտնվում և միևնույն հավակնություններն ունեն. քանզի բոլոր դեպքերում այստեղ պատմում են միևնույն (ավանդությունը) և ցուցադրում միևնույն մասունքները. մինչև անգամ Իփիգենիայինը համարվող թուրը[37] երկու քաղաքներում էլ կա[38]։

12, 1 Այս ամենի մասին այսքան. իսկ հաջորդ տարին, Մանիոս Ակիլիոսի և Գայոս Պիսոնի կոնսուլության ժամանակ, Միհրդատը բանակեց Տրիարիոսի (զորաբանակի) դիմաց,
Գազիուրայի[39] մոտ, մարտահրավեր կարդալով նրան և գըր-
2 գռռելով։ Քանզի նա հռոմայեցիների աչքի առաջ ոչ միայն ինքն էր մարզվում, այլ ամբողջ բանակը զորավարժություններ էր կատարում։ Նա հուսով էր, որ Լուկուլլոսը Տրիարիոսին օգնության չհասած, ինքը կռվի կբռնվի և կհաղթի նրան ու դրանով իսկ ետ կնվաճի իր մնացած իշխանությունը։ Բայց քանի որ այն մեկը չէր շարժվում, ուղարկեց ոմանց Դադասա բերդը, որտեղ հռոմայեցիների գումակն էր տեղավորված, որպեսզի նրանք, ստիպված լինելով այն պաշտպանելու, դրանով իսկ ներքաշվեն ճակատամարտի մեջ։
3 Եվ այդպես էլ եղավ։ Քանզի Տրիարիոսը նախապես Միհրդատի բազմությունից վախենալով և սպասելով Լուկուլլոսին—քանզի սրան կանչել էր օգնության—հանգիստ էր մնում, բայց երբ տեղեկացավ Դադասայի պաշարված լինելու մասին, իսկ պինվորներն էլ վախենալով իրենց դիրքերից, անհանգստանում էին և սպառնում, որ եթե որևէ մեկը նրանց դուրս չառաջնորդի, ապա սեփական նախաձեռնությամբ կօգնեն իրենք իրենց, այնժամ նա ակամայից
4 դուրս եկավ իր դիրքերից։ Եվ մինչդեռ նա առաջ էր ընթանում, բարբարոսները հարձակվեցին և իրենց բազմությամբ մի մասին շրջապատելով կոտորեցին, ապա շուրջանակի արշավելով, սպանեցին դաշտ փախածներին, որոնք անտեղյակ էին, թե գետը շրջված է դաշտի վրա։

13, 1 Եվ նրանց գլխովին կոչնչացնեին, բայց հռոմայեցիներից ինչ-որ մեկը ձևացնելով, թե պատկանում է Միհրդա-

տի դաշնակից զորաբանակին—քանզի, ինչպես ասել եմ, իր հետ արշավողներից շատերին նա զգեստավորել էր հռոմայեցիների նման—մոտեցավ (արքային) և իբր ցանկանալով նրան ինչ-որ բան ասել, վիրավորեց։ Եվ այսպիսով, այդ մարդը բռնվեց ու սպանվեց, իսկ այս պատահարից բարբարոսները շփոթվեցին, որից և շատ հռոմայեցիներ փրկ-
2 վեցին։ Միհրդատն ահա բուժում էր իր վերքը և կասկածելով, որ բանակի ճամբարում դեռ կան ուրիշ թշնամիներ ևս, զինվորների ստուգատես կատարեց, իբր թե մեկ այլ պատճառով, որից հետո կարգադրելով ամեն մեկին արագորեն վերադառնալ իր վրանը, հայտնաբերեց բոլորին և մեկուսացած հռոմայեցիներին ոչնչացրեց։

14, 1 Այս իրադրության մեջ, երբ Լուկուլլոսը ժամանեց, ոմանք այնպիսի հույս ունեցան, որ նա հեշտությամբ կկարողանա հաղթել Միհրդատին և արագ կերպով վերանվաճել այն ամենը, ինչ նախապես կորցրել էր. բայց ոչինչ չհա-
2 ջողվեց անել։ Քանզի Միհրդատը, ամրանալով Տալավրայի[40] մոտ գտնվող բարձրություններում, դուրս չեկավ նրա դեմ, իսկ Մեդիայից մյուս Միհրդատը[41], Տիգրանի փեսան, հանկարծակի հարձակվեց դեռևս ցրված հռոմայեցիների վրա և շատերին սպանեց. միաժամանակ լուր հասավ, թե ինքը Տիգրանը ևս մոտենում է, ուստի և զորքը ապստամբեց.
3 Քանզի վալերիականները[42] բանակից զորացրվելուց հետո դարձյալ զորագրվել էին, անհանգստացան նույնիսկ Նիսիբիսում և՛ իրենց հաղթանակի, և՛ իրենց վայելած հանգստի համար, որովհետև նրանք առատ պարեն ունեին և մեծ մասամբ ժամանակն անց էին կացնում առանց Լուկուլլոսի,
4 քանի որ սա բազում տեղեր էր մեկնում. միաժամանակ նաև ոմն Պուպլիոս Կլոդիոս, որին ոմանք Կլավդիոս կոչեցին, բնածին խռովարարությունից մղված, դրդում էր նրանց ապստամբելու, թեպետև նրա քույրը ամուսնացած էր Լուկուլլոսի հետ։ Այնժամ նրանք մեծապես վրդովվեցին նաև տեղեկանալով, թե կոնսուլ Ակիլիոսը, որն ուղարկվել էր փոխարինելու Լուկուլլոսին վերոհիշյալ դեպքերի պատճառով, արդեն մոտենում է. քանզի նրանք արդեն Լուկուլլոսին արհամարհում էին, նրան դիտելով իբրև մասնավոր քաղա-
15, 1 քացի։ Այնժամ Լուկուլլոսը և՛ այս ամենի պատճառով, և՛ որովհետև Ակիլիոսին իբրև կոնսուլ նախորդած Մարկիոսը,

որը ժամանելու էր Կիլիկիա իբրև կառավարիչ, մերժել էր
2 իրեն օգնելու խնդրանքը, մեծ դժվարության մատնվեց. և չուզենալով աննպատակ կերպով վերացնել ճամբարը, միաժամանակ վախենալով մնալ այդ երկրում, արշավեց Տիգրանի վրա (այն հույսով), որ գուցե կարողանար հանկարծակի հարձակումով ետ մղել նրան, քանի դեռ նա ռազմերից հոգնած կլիներ, և դրանով իսկ ինքը կկարողանար մի կերպ դադարեցնել խռովություն բարձրացրած զինվորների
3 հուզմունքը: Բայց այս ամենից և ոչ մեկը չկատարվեց: Քանզի բանակը նրան հետևեց մինչև ինչ-որ վայր, որտեղից հնարավոր էր շրջվել դեպի Կապպադովկիա և այնտեղ բոլորը միահամուռ, առանց մի խոսքի, շրջվեցին (դեպի այս երկիրը): Եվ հատկապես վալերիականները լսելով, թե իշխանությունները նրանց զորացրել են, ամբողջովին մեկնեցին:

16, 1 Եվ թող ոչ ոք չզարմանա, որ Լուկուլլոսը, մարդկանց մեջ ռազմական արվեստին ամենահմուտը լինելով հանդերձ, և առաջինը լինելով հռոմայեցիների մեջ, որը պատերազմելու համար բանակով անցավ Տավրոսը և հաղթելով երկու ոչ թույլ թագավորների[43], կարող էր նրանց իր ձեռքը գցել, եթե ինքը որոշեր արագորեն վերջացնել պատերազմը, այժմ չէր կարողանում իշխել իր զինվորներին, որոնք ամբողջ ժա-
2 մանակ ապստամբում էին և ի վերջո լքեցին նրան: Քանզի Լուկուլլոսը նրանց շատ բան էր հրամայում, ինքը դժվարահաղորդ էր, գործի նկատմամբ խստապահանջ, և պատժելիս անխնա լինելով, չէր իմանում ինչպե՞ս մարդուն սիրաշահել համոզելով կա՛մ իրեն կապել մեղմությամբ, կա՛մ էլ պատիվներ ու դրամ սարգևելով բարեկամներ շահել, որպիսիք բոլոր դեպքերում շատ անհրաժեշտ են, իսկ առավել
3 ևս ռազմարշավի ելնողին: Ուստի և զինվորները, քանի դեռ բարօրության մեջ էին, և վտանգները փոխհատուցվում էին ձեռք բերված ավարով, հնազանդվում էին նրան. բայց երբ դժվարությունների հանդիպեցին, և նրանց հույսերը փոխարինվեցին երկյուղով, արդեն նրան չէին գերադասում: Դրա ապացույցն այն է, որ Պոմպեոսը վերցնելով նույն այս մարդկանց—քանզի նա վալերիականներին դարձյալ հավաքագրել էր—պահեց նրանց առանց որևէ մի խռովության: Այնքան շատ է մարդը տարբերվում մարդուց:

17, 1 Զինվորների այս վարմունքից հետո Միհրդատը վերագրավեց համարյա ամբողջ իր տերությունը և Կապադովկիան ուժեղ կերպով ավերեց. քանզի ո՛չ Լուկուլլոսը, Ակիլիոսի մոտիկ լինելու պատճառով, պաշտպանեց այն, ո՛չ էլ ինքը՝ Ակիլիոսը: Որովհետև այս մեկը առաջին հերթին ցանկանում էր խլել Լուկուլլոսից հաղթանակի փառքը, իսկ այժմ, տեղեկանալով կատարված դեպքերի մասին, զորակա-
2 յան չեկավ, այլ մնաց Բյութանիայում: Մարկիոսը ևս օգնության չեկավ Լուկուլլոսին պատճառաբանելով, թե զինվորները չեն ցանկանում հետևել իրեն. սակայն Կիլիկիա ժամանելով նա ընդունեց ոմն Մենեմաքոսի, որը դասալիք էր եղել Տիգրանի մոտից, և Կլոդիոսին, որը Նիսիբիսում կատարված դեպքերի կապակցությամբ վախենալով, լքել էր Լուկուլլո-
սին. սրան նավատորմի հրամանատար կարգեց, քանզի ին-
3 քը նույնպես նրա քույրերից մեկին իրեն կին էր վերցրել: Եվ այս մեկը ծովահենների կողմից գերի վերցվելուց և Պոմպեոսի հանդեպ նրանց ունեցած վախի պատճառով ազատ արձակվելուց հետո եկավ Սիրիայի Անտիոք քաղաքը, հայտարարելով, թե ինքը նրանց դաշնակիցը կլինի արաբների դեմ, որոնց հետ այդ ժամանակ վեճեր ունեին. այստեղ ևս ոմանց խոտովության դրդելով, քիչ անց կործանվեց:

* * *

37, 3 Նախապատրաստվելով ստեղծված իրադրության և իր ունեցած մտադրության համապատասխան, Պոմպեոսը նավարկեց ամբողջ ծովը, ուր ծովահեններն անհանգիստ էին,
և այն ենթարկելով հսկողության, մի մասն անձամբ ինքը,
մյուս մասն իր փոխհրամանատարների միջոցով, դրա մեծ
4 մասը սանձահարված պահեց ամբողջ տարին: Որովհետև նա ոչ միայն օգտագործում էր մեծաքանակ նավատորմ և հոպլիտներ[44], այնպես որ թե՛ ծովում և թե՛ ցամաքում անհնարին էր նրան դիմադրելը, այլև մարդասիրություն էր ցուցաբերում իրեն հարողների հանդեպ. այնպես որ այս եղա-
5 նակով ևս շատ շատերին գրավեց իր կողմը: Քանզի այն մարդիկ, որոնք պարտվել էին նրա ուժերից և ճաշակել նրա բարությունը, հոժարագույնս անցնում էին նրա կողմը: Նա ամեն կերպ հոգ էր տանում նրանց մասին, որպեսզի երբեք

այսուհետև նրանցից ոչ մեկը չքավորությունից դրդված երբեք նորից չարագործության չդիմի. ուստի և ինչքան անբնակ վայրեր և բնակչության պակաս ունեցող քաղաքներ տեսավ, տվեց նրանց: Նրա կողմից բնակեցվեցին շատ քաղաքներ, որոնց թվում նաև Պոմպեոպոլիս կոչվածը. սա գտնվում է Կիլիկիայի ծովափին և ավերվել էր Տիգրանի կողմից. այն նախապես կոչվում էր Սոլի[45]:

* * *

41, 1 Ռոսկիոսը ևս օրենք մտցրեց, օրենք մտցրեց նաև Գայոս Մանիլիոսը[46], երբ տրիբուն էր: Առաջինը, քանի որ հեծյալների նստատեղիները թատրոններում ճշտորեն զատորոշեց մնացածներից, այդ պատճառով գովասանքի էր արժա-
2 նացել. մինչդեռ Մանիլիոսը քիչ էր մնացել դատի ենթարկվեր, քանզի ազատ արձակվածների դասին նա իրավունք տվեց, ամբոխից ոմանց կաշառելով, տարվա վերջին օրվա երեկոյան քվեարկել իրենց ազատ արձակածների հետ միա-
3 սին: Եվ երբ սենատն իսկույն այդ մասին իմանալով, հաջորդ օրը, հենց ամսվա առաջին օրն իսկ, երբ Լուկիոս Տուլլիոսը և Էմիլիոս Լեպիդոսը սկսեցին իրենց կոնսուլությունը, մերժեց նրա օրենքը, նա, վախենալով ամբոխի խիստ զայրույթից, սկզբում այդ միտքը վերացրեց Կրասո-
4 սին[47] և մի քանի այլ մարդկանց. բայց քանի որ ոչ ոք նրան չհավատաց, նա սկսեց շողոքորթել Պոմպեոսին, թեպետև սա բացակայում էր, մանավանդ, որ նա գիտեր, թե Գաբրինիոսը մեծ ազդեցություն ուներ նրա վրա: Ուստի և Պոմպեոսին կարգեց Տիգրանի և Միհրդատի դեմ մղվող պատերազմի հրամանատար, ինչպես և Բյութանիայի և Կիլիկիայի վրա կառավարիչ:

* * *

45, 2 Այդ ժամանակ էլ (Պոմպեոսը) ցանկանալով փորձել Միհրդատի մտայնությունը, ուղարկեց Մետրոփանեսին[48] նրա մոտ բարեկամական առաջարկներով: Իսկ Միհրդատն
3 այնժամ նրան արհամարհեց. քանի որ պարթևների թագավոր Արշակը այդ ժամանակ մահացած լինելով, նա հույս ուներ իր կողմը գրավել նրան հաջորդած Փրաատեսին[49]: Սա-

Այլ Պոմպեոսը կանխեց նրան, Փրաատեսի հետ շտապ կերպով նույն պայմաններում բարեկամություն հաստատելով և համոզելով նրան անհապաղ ներխուժել Տիգրանին (պատկանող) Հայաստանի մասերը: Այս բոլորն իմանալով, (Միհրդատը) ահաբեկվեց և իսկույն դեսպաններ ուղարկելով, փորձեց հաշտություն կնքել: Բայց երբ Պոմպեոսը պահանջեց նրանից զենքերը ցած դնել և փախստականներին հանձնել, նա մտածելու ժամանակ չունեցավ. քանզի նրա զորաբանակում գտնվող փախստականները—որոնք մեծաթիվ էին—լսելով այս ամենը և վախենալով, որ իրենց կհանձնեն (Հռոմայեցիներին), մյուս կողմից բարբարոսները ևս (վախենալով), որ ստիպված կլինեն կռվելու առանց նրանց (փախստական Հռոմայեցիների—Թրգմ.), աղմուկ բարձրացրին: Եվ նրանք Միհրդատին որևէ (չարիք) կհասցնեին, եթե նա չձևացներ, որ իբր դեսպաններին ուղարկել է ոչ թե դաշինք կնքելու, այլ Հռոմայեցիների պատրաստությունները լրտեսելու համար. սրանով նա հազիվ կարողացավ զսպել նրանց:

46, 1 Այսպիսով, Պոմպեոսը, հաստատապես իմանալով, որ ինքը ստիպված է պատերազմելու, տկսեց ամեն կերպ նախապատրաստվել. մինչև անգամ նորից հավաքագրեց վաւերիականներին: Այժմ, երբ նա Գալատիայում էր, Լուկուլլոսը, հանդիպելով նրան, հայտարարեց, թե պատերազմն ավարտված է և այսուհետև ոչ մի արշավանքի կարիք չկա, և որ այդ իսկ պատճառով այդ երկրները կառավարելու համար սենատի կողմից ուղարկված մարդիկ արդեն ժամանել
2 են: Բայց քանի որ Պոմպեոսը չհամոզվեց վերադառնալ, ապա Լուկուլլոսը դիմեց մեղադրանքների, անվանելով նրան, իմիջիայլոց, նաև ամեն ինչով զբաղվող, պատերազմասեր և իշխանատենչ: Իսկ Պոմպեոսը նրան քիչ ուշադրություն դարձնելով, սաստեց, որ այսուհետև որևէ մեկը չենթարկվի նրա հրամաններին, և ինքը արշավեց Միհրդատի դեմ, ձգտելով հնարավորին չափ շուտափույթ հանդիպել նրան:

47, 1 Իսկ Միհրդատը առ ժամանակ խույս էր տալիս, քանզի նրա զորքերը առավել թույլ էին, և (Պոմպեոսի) առաջ երկիրը շարունակ ավերում էր, ստիպում նրան երկար թափառել և միաժամանակ պարենամթերքի պակաս ղգալ. բայց երբ Պոմպեոսը ներխուժեց Հայաստան[50] և՛ պարեն գտնելու նպատակով, և՛ որպեսզի այն գրավի, թեպետև ամայացած, այն-

2 ժամ Միհրդատը, վախենալով, որ այն կարող է գրավվել նախքան իր տեղ հասնելը, ինքը ներխուժեց այդ երկիրը և (հռոմայեցիների) դիմաց գրավեց ամրացված մի բլուր և այնտեղ հանգրվանեց ամբողջ զորքի հետ միասին, հույս ունենալով հռոմայեցիներին ոչնչացնել պարենամթերքի անբավարարության միջոցով, մինչդեռ ինքը գտնվելով իրեն հպատակ երկրում, շատ վայրերից կարող էր իրեն ապահովել առատ մթերքով. նա մշտապես հեծյալներից ոմանց ուղարկում էր արդեն ամայացված դաշտը, հալածում այնտեղ պատահողներին, և դրա հետևանքով մեծ թվով փախստակ-
3 ների ընդունեց իր մոտ: Իսկ Պոմպեոսը չհամարձակվեց այդ վայրերում հարձակվել նրանց վրա, այլ իր զորաբանակը շարժեց մի այլ վայր, ուր տեղանքը անտառապատ լինելու պատճառով հակառակորդների հեծյալները և նետաձիգները պակաս վնաս կհասցնեին, ու դարանակալեց ուր որ հարմար
4 էր, որից հետո փոքրաթիվ զորքով բացահայտորեն մոտենալով բարբարոսների զորաբանակին, շփոթության մատնեց նրանց և հրապուրեց դեպի այն վայրը, ուր ինքը ցանկանում էր, ու շատերին սպանեց: Քաջալերված այս (հաջողությունից), ինքը ևս պարենավորվելու համար տարբեր ուղղություններով մարդիկ ուղարկեց երկրով մեկ:

48, 1 Երբ (Պոմպեոսը) արդեն այդ բոլորը հաստատապես հայթայթում էր և ոմանց օգնությամբ տիրացավ Հայաստանին պատկանող Անահտական երկրին[51], որը նվիրված էր համանուն մի աստվածուհու, այդ բանից հետո շատերը ևս հարեցին նրան և, դրանից բացի, Մարկիոսի[52] զինվորները
2 ևս միացան (Պոմպեոսի) զորքերին, Միհրդատը վախեցավ և այլևս չմնաց այդ երկրում, այլ իսկույն գիշերով աննկատելի հեռացավ և այնուհետև գիշերային երթերով առաջացավ դեպի Տիգրանի Հայաստանը[53]: Իսկ Պոմպեոսը հետապնդում էր նրան, ցանկանալով մարտի բռնվել. բայց դեռ չէր համարձակվում այդ անել ոչ ցերեկը, քանի որ նրանք իրենց բանակատեղից դուրս չէին գալու, ոչ իսկ գիշերը, քանզի վախենում էր անծանոթ տեղանքից, մինչև որ
3 արդեն հասան սահմանի մոտ: Այնժամ արդեն, նկատելով, որ նրանք կարող են խուսափել, ստիպված եղավ գիշերով
4 մարտի բռնվել: Այսպիսի որոշումով նա աննկատորեն առաջ անցավ բարբարոսներից, որոնք կեսօրվա հանգիստ էին առ-

նում, և ընթացավ այն ճանապարհով, որտեղով պետք է նրանք անցնեին. և հասնելով ինչ-որ հողաբլուրների միջև ընկած մի ձոր, այնտեղ էլ իր զորքը առաջնորդեց ամենա-
5 բարձր կետերը և սպասեց թշնամուն: Ու երբ նրանք վստահությամբ և առանց զգուշանալու մտան ձորը, քանի որ նախապես ոչ մի վտանգի չէին ենթարկվել և այժմ էլ ամենայն ապահովությամբ առաջ էին գնում այն համոզմամբ, թե հռոմայեցիները արդեն իրենց չեն հետապնդում, (Պոմպեոսը) խավարի մեջ հարձակվեց նրանց վրա. քանզի ոչ նրանց հետ որևէ մի այլ լույս կար, ոչ իսկ երկնքից որևէ բան լուսավորում էր:

49, 1 Ճակատամարտը տեղի ունեցավ հետևյալ կերպ: Սկըզբում շեփորահարները ազդանշանի վրա բոլորը միասին հարձակում ազդարարեցին, որից հետո թե՛ զինվորները և թե՛ ամբողջ ամբոխը աղմուկ բարձրացրին՝ մի մասը նիզակներով վահաններին, մյուս մասն էլ քարերով պղնձե իրերին
2 հարվածելով: Եվ այդ աղմուկը զարնվելով շրջապատող լեռներին, անդրադառնում էր առավել սարսափելի աստիճանի, այնպես որ բարբարոսները հանկարծակի գիշեր ժամանակ և ամայության մեջ լսելով այդ աղմուկը, մեծապես շփոթվեցին, կարծես թե ինչ-որ գերբնական հարվածի էին ենթարկ-
3 վել: Այս ընթացքում էլ հռոմայեցիները բարձունքներից քարերով, նետերով և նիզակներով բոլոր կողմերից հարվածելով, անվրեպ վիրավորեցին նրանցից ոմանց, քանի որ նրանք բազմաթիվ էին, և հասցրին նրանց ամենավատ դրության: Քանզի (բարբարոսները) շարադասվել էին ոչ թե ճակատամարտի, այլ չվերթի համար, և նույն վայրով առաջանում էին ձիերի, ուղտերի և ամեն տեսակ ուղեբեռի հետ
4 միասին տղամարդիկ և կանայք. խառնիճաղանջ ընթանում էին ոմանք նժույգներ հեծած, մյուսները ռազմակառքերի կամ ծածկած սայլերի և սայլակառքերի վրա. և քանի որ ոմանք արդեն վիրավորվել էին, իսկ մյուսներն էլ ենթակա էին վիրավորվելու, խուճապի մատնվեցին, որի հետևանքով էլ իրար վրա խոնվելով, հեշտությամբ կործանվում էին:
5 Այսպես տուժում էին, քանի դեռ նրանց հարվածում էին հեռվից: Իսկ երբ հռոմայեցիները, սպառելով իրենց հեռահար ուժը, ցած իջան և հարձակվեցին նրանց վրա, եզրերում եղողները սպանվում էին—և նրանց սպանության համար

բավական էր մեկ հարված, քանի որ մեծ մասը անզեն էր— իսկ կենտրոնում ճնշում էին իրար, քանի որ բոլորը ամեն կողմից վրա հասած վտանգի պատճառով դեպի այնտեղ էին
6 շարժվում: Այսպիսով, նրանք կործանվում էին նաև իրարից հրմշտվելով և կոխոտվելով, անկարող իրենք իրենց պաշտպանելու կամ թշնամուն որևէ դիմադրություն ցույց տալու: Քանզի նրանք մեծ մասամբ լինելով հեծյալներ ու աղեղնավորներ, անկարող էին խավարի մեջ որևէ բան տեսնել և տեղի նեղվածքի պատճառով որևէ բան ձեռնարկել: Իսկ երբ լուսինը ծագեց, նրանք ուրախացան, կարծելով, թե լույսի տակ իրենք
7 գոնե ոմանց կոչնչացնեն: Եվ նրանք ինչ-որ հաջողություն վուննեին, եթե հռոմայեցիները, լուսինն իրենց թող ունենալով, մերթ այս կողմից, մերթ այն կողմից նրանց վրա չհարձակվեին ու չխանգարեին թե՛ նրանց տեսողությանը և թե՛ նրանց գործողություններին: Քանզի հարձակվողները մեծաթիվ լինելով և բոլորը միասին թանձր ստվեր կազմելով, խանգարում էին նրանց, նախքան վերջիններս կմոտենային
8 իրենց: Որովհետև բարբարոսները կարծելով, թե արդեն մոտեցել են, իզուր հարվածում էին և ստվերի համատեղ մոտենալու ժամանակ անսպասելիորեն վիրավորվում: Եվ այսպիսով, նրանցից շատերը սպանվեցին և ոչ քչերն էլ գերի ընկան. իսկ նշանակալից մասը կարողացավ փախչել, նրանց թվում նաև Միհրդատը:

50, 1 Այնժամ Միհրդատը շտապեց դեպի Տիգրանը. բայց երբ նրա մոտ նախ բանագնացներ ուղարկեց, ոչ մի սիրալիրության չհանդիպեց, քանի որ (Տիգրանի) որդին՝ Տիգրանը, ապստամբել էր (հոր) դեմ, իսկ սա կասկածում էր, որ Միհրդատը, լինելով նրա պապը, հրահրել էր այդ վեճը իր դեմ: Ուստի և Տիգրան (արքան) ոչ միայն չընդունեց նրան, այլև նրա կողմից եկած բանագնացներին կալանավորեց ու բանտարկեց: (Ահա այս բոլորից հետո) Միհրդատը հուսախափ լինելով, շուռ եկավ դեպի Կոլխիս և այնտեղից հետիոտն հասավ Մայոտիս[54] և Բոսպորոս[55] ոմանց համոզելով, մյուսներին բռնանալով. նա ետ վերցրեց այդ երկիրը Մաքարեսից՝ իր որդուց, որն ընդունել էր հռոմայեցիների հովանավորությունը և իշխում էր այդ երկրի վրա, և նրան այնպես ահաբեկեց, որ նա նույնիսկ չներկայացավ իր առաջ: Միհրդատը նրա մերձավորների միջոցով սպանեց

նրան, ներումն խոստանալով և հարստություն տալով նը-
3 րանց: Բայց երբ նա փախչելով անցավ Փասիսը[56], Պոմպեոսը իր հաղթանակ տարած վայրում քաղաք հիմնեց, այն տալով իր վիրավոր և տարեց զինվորներին. նրանց հետ այստեղ բնակվեցին նաև շատ ցանկացողներ հարևան վայրերից. նրանք գոյություն ունեն մինչև այժմ և կոչվում են Նիկոպոլսեցիներ[57] և հիմա ենթարկվում են Կապպադովկիայի նահանգին:

51, 1 Պոմպեոսը այսպես էր գործում. իսկ Տիգրանը՝ Տիգրանի որդին, վերցնելով իր հետ հզորներից[58] ոմանց, որովհետև նրանց հաճելի չէր ծերունու իշխանությունը, փախավ Փրաատեսի մոտ. և մինչդեռ սա Պոմպեոսի հետ կնքված դաշինքի պատճառով մտածում էր իր անելիքի մասին, հա-
2 մոզեց նրան ներխուժել Հայաստան: Եվ նրանք եկան մինչև Արտաշատ[59], իրենց առաջ ընկած երկիրը հպատակեցնելով, մինչև իսկ հարձակվեցին (Արտաշատի վրա). քանզի ծերունի Տիգրանը վախենալով նրանցից, ապաստանել էր լեռները. բայց երբ պարզվեց, որ (քաղաքի) պաշարման համար ժամանակ էր պետք, Փրաատեսը զորքերի մի մասը թողնելով (Տիգրանի) որդուն, վերադարձավ իր հայրենի երկիրը. այնժամ էլ հայրը դուրս եկավ արդեն մենակ մնացած որդու
3 դեմ և հաղթեց. իսկ նա փախչելով, նախ ուղևորվեց դեպի Միհրդատը՝ իր մեծ հայրը. բայց երբ իմացավ, թե նա պարտվել է և ավելի շուտ ինքն է օգնության կարիք զգում, քան թե ի վիճակի է ուրիշին օգնելու, գնաց հռոմայեցիների մոտ. և Պոմպեոսը նրան օգտագործելով իբրև առաջնորդ, արշավեց Հայաստան, նրա հոր դեմ:

52, 1 Եվ Տիգրանը իմանալով այս մասին և տագնապելով, իսկույն նրա մոտ հաշտության բանագնացներ ուղարկեց և նրան հանձնեց Միհրդատի դեսպաններին: Եվ քանի որ իր որդու հակառակվելու պատճառով չէր կարող մեղմ պայմանների հասնել, և երբ արդեն Պոմպեոսն էլ Արաքսն անցնելով մոտեցել էր Արտաշատին, այնժամ Տիգրանը թե՛ քաղաքը հանձնեց նրան և թե՛ ինքը հոժարակամ եկավ նրա զո-
2 րակայանը: Նա զգեստավորվել էր այնպես, որ դրսևորվեր և՛ իր նախկին շքեղությունը, և՛ այժմյան խոնարհ վիճակը, որպեսզի նրան արժանի երևա թե հարգանքի և թե կարեկ-
3 ցանքի: Քանզի նա իր վրայից հանել էր սպիտակաշերտ[60]

պատմուճանը[61] և համակ ծիրանի վերարկուն[62], բայց գլխին կրում էր խույրը և ապարոշը[63]։ Արդ՝ Պոմպեոսը իր մակա-
նակիրներից[64] մեկին ուղարկելով նրան ընդառաջ, ձիուց վար իջեցնել տվեց, որովհետև նա, իրենց սովորության համաձայն, հեծյալ վիճակում էր մտել ամրություն։ Բայց երբ Պոմպեոսը տեսավ նրան, որ հետիոտն ներս մտավ և դեն նետելով գլխի ապարոշը[65] գետին ընկավ և ուզում էր իրեն
4 երկրպագել, գթաց և տեղից վեր կենալով բարձրացրեց նրան և ապարոշը կապելով նրա գլխին, նստեցրեց նրան իր կողքի բազմոցին և մխիթարելով ասաց նաև, թե նա ոչ միայն չի կորցրել հայոց թագավորությունը, այլև ձեռք է բերել հռոմայեցիների բարեկամությունը։ Այս խոսքերով նա
53,1 քաջալերեց նրան և ընթրիքի հրավիրեց։ Իսկ որդին, որը նստած էր Պոմպեոսի մյուս կողքին, հորը տեսնելիս վեր չկացավ և ոչ իսկ որևէ մի այլ ձևով նրան պատվեց. նույնիսկ ճաշի հրավիրված լինելով հանդերձ, չգնաց։ Այս պատճառով էլ նա մեծապես ատելի դարձավ Պոմպեոսին։

2 Այսպիսով, հաջորդ օրը (Պոմպեոսը) լսելով նրանց, ավագին վերադարձրեց նրա ամբողջ հայրենի իշխանությունը. բայց նրա կողմից նվաճված երկրները—որոնց մեջ նաև Կապպադովկիայի և Ատորիքի[66] մասերը, ինչպես նաև Փյունիկիան և ոչ փոքր երկիր Ծուփքը[67]—վերցրեց նրանից, ինչպես նաև գանձեր պահանջեց նրանից. իսկ կրտսեր (Տիգ-
3 րանին) պարգևեց միայն Ծուփքը։ Եվ քանի որ պատահմամբ Ծուփքում էին գտնվում գանձատները, ուստի և երիտասարդը սրանց պատճառով վիճեց և հաջողություն չունենալով—քանի որ Պոմպեոսը ոչ մի այլ տեղից չէր կարող ստանալ պայմանավորված գումարը—դժգոհեց և մտադրվեց փախչել։ Սակայն Պոմպեոսը, տեղեկանալով այդ մասին, նրան հրաշքողության տակ վերցրեց առանց կալանքի, և սուրհանդակներ ուղարկելով գանձերի պահապանների մոտ, հրամայեց
4 նրանց, որ այդ բոլորը հանձնեն նրա հորը։ Եվ որովհետև նրանք չհնազանդվեցին, ասելով, թե երիտասարդ (Տիգրանը), որին այժմ պատկանում է այդ երկիրը, պետք է այդ բանը հրամայի իրենց, ապա (Պոմպեոսը) նրան ուղարկեց դեպի բերդերը։ Եվ սա, բերդերը փակ գտնելով, մոտիկ գնաց և դժկամությամբ հրամայեց բաց անել դրանք։ Եվ երբ նրանք այլևս չէին հնազանդվում, առարկելով, որ նա այդ

հրամանը տվել է ոչ թե կամովին, այլ հարկադրված, Պոմպեոսը զայրացավ և շղթայեց (երիտասարդ) Տիգրանին:

5 Եվ այսպիսով, ծերունի (արքան) ստացավ գանձարանները. իսկ նա (Պոմպեոսը—Թրգմ.) զորքը երեք մասի բաժանելով, ձմեռեց Անահտական երկրում և Կյուռնոս[68] գետի մոտ ու Տիգրանից էլ մեծ քանակությամբ այլ բաներ ևս ստացավ, ինչպես նաև պայմանավորվածից ավելի շատ գանձեր:

6 Եվ առավելապես այդ իսկ պատճառով քիչ ժամանակ անց նա (Տիգրանին) գրանցեց (հռոմեական ժողովրդի) բարեկամների ու դաշնակիցների ցուցակի մեջ և նրա որդուն հսկողության տակ բերեց Հռոմ:

54, 1 Այսուհանդերձ նա հանգստությամբ չձմեռեց: Քանզի Օրոյսեսը՝ Կյուռնոսից վերև բնակվող ալբաննե՛րի[69] թագավորը, ցանկանալով մի կողմից շնորհ անել Տիգրան կրտսերին, որը իրեն բարեկամ էր, մյուս կողմից հատկապես վախենալով, որ հռոմայեցիները կներխուժեն Ալբանիա[70], և կարծելով, որ անկասկած հաջողության կհասնի, եթե ձմեռ ժամանակ անսպասելի հարձակվի նրանց վրա, քանի դեռ նրանք չեն կենտրոնացել մեկ միասնական զորակայանում,

2 արշավեց նրանց վրա Սատուռնալիա[71] տոնի ժամանակ: Եվ ինքը՝ Օրոյսեսը, քայլեց Մետելլոս կելերի վրա, որի մոտ էր Տիգրան (Կրտսերը), ուրիշներին ուղարկեց Պոմպեոսի դեմ և մյուսներին էլ զորքի երրորդ մասի հրամանատար Լուկիոս Փլակկոսի դեմ այն հույսով, որ բոլորը միաժամանակ

3 շփոթության կմատնվեն և չեն կարողանա իրար օգնել: Բայց, այսուհանդերձ, նա ոչ մի տեղ ոչ մի հաջողություն չունեցավ: Քանզի նրան կելերը ուժգնորեն ետ մղեց. իսկ Փլակկոսը, քանի որ խրամատի շրջագիծը մեծ լինելու պատճառով անկարող էր այն պաշտպանել (ամբողջությամբ), ներսում

4 մեկ այլ խրամատ պատրաստեց: Թշնամին այս տեսնելով ենթադրեց, որ նա վախեցել էր ու ետ նահանջել, որով և նա թշնամուն արտաքին խրամատից այս կողմ ներքաշեց և այստեղ նրանց վրա անակնկալ հարձակվելով, շատերին ձեռնամարտում, շատերին էլ փախուստի մատնելով սպանեց: Այդ ժամանակ էլ Պոմպեոսը տեղեկանալով մյուսների դեմ բարբարոսների ձեռնարկած փորձի մասին, անակնկալ եկավ իր դեմ արշավողներին ընդառաջ և, հաղթելով նրանց, իսկույն, ինչպես կար, շտապեց Օրոյսեսի դեմ: Եվ նրան

չհանդիպեց, քանի որ (սա) ետ մղվելով Կելերի կողմից, և տեղեկանալով մյուսների ձախորդությունների մասին, փա-
5 խուստի էր դիմել. սակայն (Պոմպեոսը) ալբաններից շատերին ձեռք գցելով Կյուռնոսի գետանցի մոտ, կործանեց։ Այնուհետև նրանց խնդրանքով դաշինք կնքեց. քանի որ թեպետև նա բուռն կերպով ցանկանում էր ներխուժել նրանց երկիրը՝ վրեժ լուծելու համար, բայց ձմեռվա պատճառով ուրախությամբ հետաձգեց պատերազմը։

ԳԻՐՔ ԵՐԵՍՈՒՆՅՈԹԵՐՈՐԴ

1, 1 Այդ ժամանակ նա այսպես գործեց. իսկ հաջորդ տարին, երբ կոնսուլ էին Լուկիոս Կոտտասը և Լուկիոս Տորկուատոսը, (Պոմպեոսը) կռիվ մղեց թե՛ ալբանների և թե՛ իբերների դեմ։ Հակառակ իր ենթադրության, սկզբից ևեթ նա ստիպված եղավ վերջիններիս դեմ պատերազմել։ Նրանք
2 ապրում են Կյուռնոսի երկու ափին, մի կողմից ալբանների, մյուս կողմից հայերի հարևանությամբ։ Նրանց թագավոր Արտոկեսը վախենալով, որ Պոմպեոսը իր հարձակումը կուղղի նաև իր դեմ, նրա մոտ դեսպաններ ուղարկեց բարեկամության դաշինք կնքելու, բայց և միաժամանակ պատրաստվում էր հարձակվելու նրա վրա, երբ ինքը արդեն ապահով
3 կլիներ, իսկ նա (հարձակման) չէր սպասի։ Ուստի Պոմպեոսը տեղեկանալով այդ մասին ևս, ինքը ներխուժեց նրա երկիրը, նախքան սա անհրաժեշտ պատրաստություն կտեսներ և կդրավեր առանց այն էլ դժվարամատույց մուտքը։ Եվ առաջ գնալով հասավ մինչև Ակրոպոլիս կոչվող քաղաքը[72], նախքան Արտոկեսը կտեղեկանար, թե ինքը արդեն այն-
4 տեղ է։ Այն գտնվում էր ամենանեղ հատվածում, որտեղ [մի կողմից Կյուռնոս գետն է հոսում, մյուս կողմից][73] Կովկաս (լեռն) է ձգվում, և կառուցվել էր մուտքը պաշտպանելու համար։ Այսպիսով Արտոկեսը խուճապահար եղավ ու ժամանակ չունեցավ իր զորքերը դասավորելու, այլ գետը անցնելուց հետո կամուրջը այրեց. և պարիսպներից ներս եղողները տեսնելով նրա փախուստը, ինչպես նաև
5 կռվում հաղթվելով, անձնատուր եղան։ Ուստի և Պոմպեոսը, տիրելով կիրճին, այնտեղ պահակազորք թողեց և այնտեղից

արշավելով, հնազանդեցրեց գետից այս կողմ գտնվող ամբողջ երկիրը:

2,1 Բայց երբ (Պոմպեոսը) ևս պետք է կյուռնոսն անցներ, Արտոկեսը նրա մոտ (դեսպաններ) ուղարկեց հաշտություն խնդրելով, միաժամանակ խոստանալով կամուրջը հանձնել
2 նրան և հոժարակամ մթերք տրամադրել: Այս երկու (խոստումներն) էլ նա կատարեց, ասես արդեն համաձայնություն էր կայացրել. բայց տեսնելով, որ Պոմպեոսը արդեն անցել է գետը, նա փախավ դեպի Պելորոս գետը[74], որը նույնպես հոսում էր իր երկրի միջով. այսպիսով, նա սկզբում հրապուրեց թշնամուն, ապա փախավ, մինչդեռ կարող էր խոչըն-
3 դոտել նրա անցումը: Պոմպեոսը զգալով այս, հետապնդեց նրան և ետևից հասնելով, հաղթեց. քանզի արագ երթով և նախքան թշնամու աղեղնավորները կկարողանային օգտվել իրենց հմտությունից, նա ձեռնամարտի բռնվեց և արագ
4 կերպով ջախջախեց նրանց: Այս դեպքից հետո Արտոկեսը անցավ Պելորոս (գետը) և այդ գետի վրայի կամուրջը ևս այրելուց հետո փախավ. մնացածներից ոմանք կռվելիս,
5 ուրիշներ հետիոտն գետն անցնելիս սպանվեցին: Շատերն էլ ցրվեցին անտառներում և մի քանի օր կենդանի մնացին, քանի դեռ նրանք նետեր էին արձակում ծառերի վրայից, որոնք շատ բարձր էին. բայց երբ ծառերը կտրատվեցին, սրանք ևս կործանվեցին: Այսպիսով, Արտոկեսը դարձյալ դեսպաններ ճամբեց Պոմպեոսի մոտ և նվերներ ուղար-
6 կեց: Պոմպեոսը այդ բոլորը ընդունեց այն համոզմամբ, որ Արտոկեսը դաշինք կնքելու հույս ունենալով, այլևս առաջ չի գնա. բայց նա չէր համաձայնվում խաղաղություն շնորհել, եթե (Արտոկեսը) իր որդիներին նախապես իբրև պատանդ չուղարկի իր մոտ: Սա որոշ ժամանակ դանդաղեց, մինչև որ ամառվա ընթացքում Պելորոս (գետը) տեղ-տեղ դյուրանցանելի դարձավ, և ոչ ոք այլևս իրենց չէր խանգարում, հռոմայեցիները անցան այն: Այսպիսով, արդեն նա իր որդիներին ուղարկեց Պոմպեոսի մոտ և դրանից հետո դաշինք կնքեց:

3,1 Այնժամ Պոմպեոսը տեղեկանալով, որ Փասիսը հեռու չէ, և որոշելով նրա ափն ի վար իջնել Կոլխիս և այնտեղից արշավել Բոսպորոս՝ Միհրդատի դեմ, առաջ շարժվեց,
2 ինչպես նպատակադրվել էր. և անցավ կոլխերի և նրանց

հարևանների երկրում՝ մի մասին համոզելով, մյուս մասին վախեցնելով։ Բայց այստեղ էլ զգալով, որ ցամաքային ճանապարհը անցնում է բազմաթիվ անծանոթ և թշնամական ցեղերի[75] երկրի միջով, և որ ծովով ճանապարհվելը առավել դժվար էր երկրում նավահանգիստներ չլինելու, ինչպես նաև տեղի բնակիչների պատճառով, ուստի հրամայեց, որ նավատորմը պաշարման մեջ պահի Միհրդատին, որպեսզի նա չկարողանա նավել դեպի որևէ մի կողմ, և միաժամանակ խանգարվի նրա պարենավորման գործը. իսկ ինքը շուտ եկավ դեպի ալբանների (երկիրը) ոչ թե ամենակարճ ճանապարհով, այլ Հայաստան վերադառնալուց հետո, որպեսզի այս միջոցով, ինչպես նաև կնքված հաշտության պատճառով, նրանց անակնկալի բերի։ Եվ հետիոտն անցավ Կյուռնոսը այն կետում, որտեղ ամռանը (գետը) դարձել էր դյուրանցանելի. նա հրամայեց հեծելազորին՝ կտրել-անցնել հոսանքը. երկրորդը կանցներ գումակը և կհետևեր հետևակը. այսպիսով, ձիերը իրենց մարմիններով կզսպեին հոսանքի ուժգնությունը, իսկ բեռնատարներից որևէ մեկը եթե շրջվեր նույնիսկ, ապա դեմ կառներ առավել ցածով անցնող հետևակներին և էլ չէր քշվի հոսանքն ի վար։ Այստեղից ընթացավ դեպի Կամբյուսես[76] գետը, առանց հանդիպելու թշնամու կողմից որևէ դիմադրության. բայց տապի և դրանից առաջացած ծարավի պատճառով նա, ամբողջ զորքի հետ միասին, մեծապես տառապեց, թեպետև ճանապարհի մեծ մասը գիշերով էր ընթանում։ Քանզի նրանց առաջնորդները, լինելով գերեվարվածների թվից, նրանց տանում էին ոչ հարմարագույն ճանապարհով։ Նույնիսկ գետը նրանց ոչընչով չօգնեց, որովհետև ջուրը, որից շատ էին խմել, սառնագույն լինելու պատճառով, շատերին վնասեց։ Ու քանի որ նույնիսկ այստեղ ոչ մի թշնամի չերևաց, ուստի և շարժվեցին դեպի Արաս[77], իրենց հետ տանելով միայն (խմելու) ջուր. քանզի մնացած ամեն ինչ նրանք ստանում էին տեղաբնիկներից, կամավոր կերպով. այդ իսկ պատճառով նրանք ոչ մի չարիք չէին հասցնում։

4, 1 Եվ երբ արդեն նրանք անցել էին գետը, լուր հասավ, թե Օրոյսեսը մոտենում է։ Այնժամ Պոմպեոսը ցանկացավ նրան կռվի մեջ քաշել, նախքան սա կիմանար հռոմայեցիների քանակի մասին, որպեսզի չլինի թե (վախենալով)

817—10

2 եւ նահանջի։ Նա իր հեծելազորը դասավորեց առաջամասում, նախապես հանձնարարելով նրանց անելիքը. իսկ մնացյալին նա ամբողջովին անշարժ, վահաններով իրար ծածկած, դասավորեց (հեծյալների) ետև, այնպես որ Օրոյսեսը չկարողանար կռահել նրանց ներկայությունը, նախքան
3 մարտի բռնվելը։ Այսպիսով, (Օրոյսեսը) արհամարհելով հեծյալներին, կարծելով թե նրանք մենակ են, կռվի բռնվեց նրանց հետ. և երբ քիչ անց նրանք դիտավորյալ կերպով փախուստի դիմեցին, նա ամբողջ թափով հալածեց նրանց։ Այնժամ հետևակայինները իսկույն վեր կացան և երկու մասի բաժանվելով, իրենց շարքերի միջով յուրայիններին ապահով նահանջ շնորհեցին, միաժամանակ անզգույշ կերպով հետապնդմամբ հրապուրված թշնամիներին իրենց
4 շարքերի մեջ ընդունելով, շատերին շրջապատեցին։ Այսպիսով, նրանք շրջապատվածներին կոտորեցին, իսկ հեծյալները՝ մի մասը աջ, մյուս մասը հակառակ կողմից շրջանցելով, թիկունքից հարձակվեցին շրջապատվածների վրա։ Եվ այստեղ էլ այս զորամասերը շատերին սպանեցին. իսկ մյուսներին, որոնք փախել էին անտառները, կրակի մատնեցին, աղաղակելով՝ «Ո՛վ Սատուռնալիա»[78], դրանով իսկ ակնարկելով այդ առիթով իրենց վրա կատարված հարձակումը (ալբաննների կողմից)։

5, 1 Պոմպեոսը այս գործերը կատարելուց և ամբողջ երկիրը ասպատակելուց հետո, ալբաններին խաղաղություն պարգևեց, ինչպես նաև մի շարք այլ ցեղերի հետ, որոնք բնակվում են այն տարածքի վրա, որն ընկած է Կովկասից մինչև Կասպից ծով, որտեղ և վերջանում է Պոնտոսում
սկիզբ առնող լեռը, դաշինք կնքեց, երբ սրանք իր մոտ այդ նպատակով դեսպաններ ուղարկեցին։ Փրաատեսը ևս (դեսպաններ) ուղարկեց նրա մոտ դաշինքը վերանորոգելու ցան-
2 կությամբ։ Քանզի սա, տեսնելով Պոմպեոսի այս հաջողությունները, և այն, որ նրա տեղակալները[79] ևս շարունակում էին հնազանդեցնել Հայաստանի և Պոնտոսի մնացած մասերը, և որ Գաբինիոսը[80] նույնպես անցնելով Եփրատը, առաջացել է մինչև Տիգրիս, վախ զգաց նրանց հանդեպ և ցանկացավ հաշտության պայմանները հաստատել. այսու-
3 հանդերձ, նա ոչինչ չկարողացավ իրագործել։ Քանզի Պոմպեոսը, ելնելով առկա իրավիճակից, ինչպես նաև հու-

սաղրված այդ բոլորից, արհամարհեց նրան և գոռոզությամբ պատասխաններ դեսպաններին, իմիջիայլոց, պահանջելով նաև Կորդուենե երկիրը, հանուն որի Փրաատեսը վեճ ուներ
4 Տիգրանի հետ։ Եվ քանի որ նրանք ոչինչ չպատասխանեցին, քանզի այդ մասին նրանք ոչ մի հանձնարարություն չունեին, (Պոմպեոսը) մի գիր գրեց Փրաատեսին, բայց առանց որևէ պատասխանի սպասելու, իսկույն Ափրանիոսին ուղարկեց (Կորդուենե) երկիրը, և այն առանց մարտի գրավելուց հե-
5 տո, հանձնեց Տիգրանին։ Եվ Ափրանիոսը, հակառակ Պարթևի[81] հետ կայացված համաձայնության, Միջագետքի վրայով Ասորիք վերադառնալիս, մոլորվեց (ճանապարհին) ու մեծ դժվարություններ կրեց թե՛ ձմեռվա և թե՛ պարենի պակասության պատճառով. ու նրա (զորքերը) կկորչեին, եթե չլինեին կարրայները, որոնք մակեդոնական գաղութա-
բնակներ էին[82] և ապրում էին այստեղ. սրանք ընդունեցին նրան և նա ճանապարհեցին։

6, 1 Այսպիսի վերաբերմունք ունեցավ Պոմպեոսը Փրաատեսի նկատմամբ իր հզորության ժամանակ, դրանով իսկ պարզորեն ցույց տալով իրենց ընչաքաղցությունը բավարարել ցանկացողներին, թե ամեն ինչ կախված է զենքի ուժից և դրա օգնությամբ հաղթողը նվաճում է անհրաժեշտ իրավունք իր ցանկացած օրենքը սահմանելու. և դրա հետ մեկտեղ արհամարհեց նրա տիտղոսը, որով նա փառաբանվում էր մնացած բոլորի, ինչպես նաև իրենց՝ հռոմայեցիների առաջ, որը և սրանք օգտագործում էին ամեն անգամ
2 նրան դիմելիս։ Քանզի, մինչդեռ նա կոչվում էր «արքայից արքա», (Պոմպեոսը) հատեց «արքայից» կոչումը և նրան հղած իր նամակում դիմեց նրան միայն «արքա» անվանելով։ Դեռ ավելին. այդ տիտղոսը, հակառակ ընդունված կարգի, նա շնորհեց գերեվարված[83] Տիգրանին[84], երբ
3 ինքը Հռոմում իր հաղթահանդեսը տոնեց։ Այդ իսկ պատճառով Փրաատեսը, թեպետև վախենում էր նրանից և ձգտում էր սիրաշահել նրան, վշտացավ այդ դեպքից, ասես իր իսկ թագավորությունից զրկված լիներ, և դեսպաններ ուղարկելով, մեղադրում էր նրան իր կրած բոլոր անարդությունների համար և համոզում նրան Եփրատը չանցնել։
4 Եվ քանի որ ոչ մի հաշտարար պատասխան չստացվեց, (Փրաատեսն) իսկույն արշավեց Տիգրանի վրա, սրա

որդու ուղեկցությամբ, որին իր աղջկան էր (կնության) տվել[85]. դա այն ամռանն էր, երբ կոնսուլ էին Լուկիոս Կեսարը և Գայոս Փիգուլոսը. նախ կռվում պարտվեց, բայց
5 հետո նա գերազանցություն ձեռք բերեց: Եվ երբ Տիգրանը դիմեց Ասորիքում գտնվող Պոմպեոսի օգնությանը, նա դարձյալ նրա մոտ դեսպաններ ուղարկեց և Տիգրանին շատ բաներում մեղադրեց, միաժամանակ նաև շատ ակնարկություններ արեց Հռոմայեցիների դեմ. այնպես որ Պոմպեոսը
7, 1 և՛ ամաչեց, և՛ զարմացավ: Ուստի և ո՛չ Տիգրանին օգնություն ուղարկեց, ո՛չ էլ Փրաատեսի դեմ թշնամական որևէ բան ձեռնարկեց, պատճառաբանելով, թե իրեն չի կարգադրված այդպիսի մի արշավանք կատարել, և որ Միհրդատը դեռևս գտնվում է զինված վիճակում: Նա հայտարարեց, թե բավարարվում է իր ձեռքբերածով և չի ցանկանում (այսուհետև որևէ վտանգավոր բան ձեռնարկել)[86], որպեսզի չլինի թե շատ բաների ձգտելով, արդեն ձեռքբերածները ևս վտանգի,
2 ինչպես Լուկուլլոսն էր արել: Քանզի նա այսպես էր փիլիսոփայում. պնդում էր, թե ագահությունը վատ բան է, իսկ ուրիշների ունեցվածքին ձգտելը՝ անարդարություն, մանավանդ, որ այժմ ինքն արդեն վախենալով և ահաբեկված դեպքերի անկայունությունից, չձեռնարկեց պատերազմի, թեպետև շատերը նրան դրդում էին (այդ անել). միաժամանակ և բարբարոսի[87] գանգատներին ուշադրություն չդարձրեց, անպատասխան թողնելով. իսկ ինչ-որ սահմանների վերաբերյալ Տիգրանի հետ ունեցած նրա վեճի մասին ասաց, որ այդ հարցը կկարգավորեն երեք մարդ, որոնց և նա
3 ուղարկեց: Սրանց էլ (թագավորները) ընդունելով իբրև ճշմարիտ դատավորների, պարզեցին իրար նկատմամբ ունեցած բոլոր գանգատները: Տիգրանը զայրացել էր, որ ինքը օժանդակություն չէր գտել, իսկ Փրաատեսը ցանկանում
4 էր գերազանցել հայոց (թագավորին), այնպես որ անհրաժեշտ դեպքում նրան օգտագործի իբրև դաշնակցի հռոմայեցիների դեմ: Քանզի նրանք երկուսն էլ լավ գիտեին, թե իրենցից ով որ մյուսին գերիշխի, դրանով նպաստած կլինի հռոմայեցիների գործին և ինքն էլ նրանց կողմից առավել հեշտ կհպատակեցվի:

5 Այս նկատառումներով էլ նրանք իրար հետ հաշտվեցին. իսկ Պոմպեոսը այդ ժամանակ դարձյալ ձմեռեց Ա-

պիտում[88], նվաճելով դեռևս դիմադրող մյուս վայրերը ևս, ինչպես նաև գրավեց Սիմփորիոնը[89], որն իրեն հանձնեց Ստրատոնիկեն։ Սա Միհրդատի կինն էր, որը զայրացած լինելով (ամուսնու) դեմ, նրա կողմից լքված լինելու պատճառով, բերդապահներին ամրությունից դուրս ուղարկեց, իբր թե պարեն մթերելու համար, և ներս ընդունեց հռոմայեցիներին թեպետև նրա որդին իր հետ[90]...

* * *

(Ֆսիփիլևնոս, հրատ. Dindorf-*ի, էջ 6—7)*

7ա Վերադառնալով Հայաստանից, Պոմպեոսը իր մոտ ժամանած արքաների և տիրակալների վեճերը քննարկելով հաշտեցրեց։ Ոմանց թագավորությունը հաստատեց, մյուսների տիրույթները ավելացրեց, ուրիշների առավել հզորությունը կրճատեց ու ստորացրեց. Կելե-Սիրիան և Փյունիկիան, որոնք վերջերս էին ազատվել (իրենց) թագավորներից և արաբների ու Տիգրանի կողմից ավերածության ենթարկվել, միացրեց իրար։ Քանզի Անտիոքոսը[91] համարձակվեց դրանք ետ պահանջել, բայց չստացավ. ընդհակառակը, դրանք դասվեցին մեկ իշխանության տակ և ստացան այնպիսի օրենքներ, որոնցով կառավարվում էին հռոմեական եղանակով։

* * *

10, 1 Իսկ հաջորդ տարին (64 մ. թ. ա.—Թրգմ.), երբ կառավարիչներ էին Փիգուլոսը և Լուկիոս Կեսարը, դեպքերը սակավ էին, բայց մարդկային գործերի տեսակետից անմիտ
2 լինելու պատճառով, արժանի հիշատակման։ Քանզի այն մարդը, ով Սուլլայի հրամանով սպանել էր Լուկրետիոսին և մեկ ուրիշը, որը նրա կողմից պրոսկրիպցիայի[92] ենթարկվածներից շատերին սպանել էր, մեղադրվեցին այդ ոճիրների համար և պատժվեցին. այդ գործն առանձնապես նա-
3 խապատրաստեց Հուլիոս Կեսարը[93]։ Այսպիսով, իրադրության փոփոխությունները հաճախ ամենաուժեղներին ևս դարձնում են ամենաթույլ։ Եվ այս գործն էլ շատերի սպասածից հակառակ վախճան ունեցավ. քանզի և Կատիլի-

նան[94], որը մեղադրվում էր նրանց հետ նույն հանցանքների մեջ—քանի որ սա ևս նրանց նման շատերին, (որոնք պրոսկրիպցիայի էին ենթարկվել), սպանել էր—արդարացվեց։ Եվ այս պատճառով էլ նա առավել ևս վատթար դարձավ, որի հետևանքով էլ կործանվեց։ Քանզի երբ Մարկոս Կիկերոնը[95] և Գայոս Անտոնիոսը[96] կոնսուլ ընտրվեցին, և Միհրդատն էլ այլևս ոչ մի չարիք չէր պատճառում հռոմայեցիներին, այլ ինքն իրեն կործանեց, Կատիլինան ձեռնամուխ եղավ նոր կառավարություն ստեղծելու և դաշնակիցներին պետության դեմ միավորելով, ժողովրդին պատճառեց պատերազմի ոչ փոքր երկյուղ։ Այդ գործերից յուրաքանչյուրը այսպես կատարվեց։

11, 1 Ինքը, Միհրդատը, չէր ընկճվում անհաջողություններից, այլ վստահելով առավելապես իր կամքին, քան թե ուժին, նաև այն պատճառով, որ Պոմպեոսը այժմ զբաղված էր Ասորիքում, ծրագրեց հասնել Իտրոս (գետը)[97] սկյութների (երկրի) միջով և այստեղից ներխուժել Իտալիա։ Եվ քանի որ նա բնականից մեծագործության հակում ուներ և բազում ձախորդությունների հետ միասին ճաշակել էր նաև բազում հաջողություններ, ապա կարծում էր, որ իր համար ոարսափելի կամ անհուսալի ոչինչ չկար։ Եվ եթե նա ձախողվելու լիներ, ապա ցանկանում էր կործանվել իր թագավորության հետ միասին կատարյալ հպարտությամբ, քան թե դրանից զրկվելով ապրել նվաստացած և անփառունակ։

3 Այս միտքը նրան ուժ էր ներշնչում. քանզի ինչքան որ նա մարմնի թուլության հետևանքով թառամում էր, այնքան հաստատապես ուժեղանում էր մտքի հզորությամբ. այնպես որ առաջինի թուլությունը ծածկվում էր երկրորդի մտադրություններով։ Մինչդեռ իր հետևորդները դավաճանեցին, քանի որ հռոմայեցիների (դրությունը) հետզհետե ուժեղանում էր, իսկ Միհրդատինը՝ թուլանում. քանզի մնացած ամեն ինչի հետ երբևիցե պատահած երկրաշարժերից ամենաուժեղը կործանեց նրանց քաղաքներից շատերը. զինվորականները ևս խռովություն բարձրացրին և Միհրդատի որդիներից ոմանց առևանգելով, բերեցին Պոմպեոսի մոտ։

12, 1 Այս բոլորից հետո (Միհրդատը) ոմանց բացահայտեց և պատժեց, ուրիշներին էլ, սոսկ կասկածից զայրանալով,

(պատժեց) ու կանխեց. և արդեն ոչ ոքի չէր վստահում, այլ կասկածելով, իր մնացած որդիներից ոմանց ևս սպանեց, Ուստի նրա որդիներից մեկը, Փառնակեսը, տեսնելով այս ամենը, վախեցավ նրանից և միաժամանակ հույս ունենալով, որ հռոմայեցիների կողմից թագավորությունը կըստանա—քանզի արդեն առնականացած էր—դավադրու-
2 թյուն նյութեց նրա դեմ: Բայց այն բացահայտվեց—քանզի շատերը թե՛ բացահայտորեն և թե՛ գաղտնաբար նրա կողմից բոլոր կատարվածներին մասնակցում էին—և եթե ծերունու[98] հանդեպ թիկնապահները ամենափոքր բարեհաճությունն ունենային, նա իսկույն կպատժվեր. մինչդեռ այժմ Միհրդատը, թեպետև թագավորական իշխանության վերաբերող գործերում իմաստնագույն էր դարձել, չիմացավ,
թե ո՛չ զենքը, ո՛չ իսկ հպատակների բազմությունները որևէ
ուժ չեն ներկայացնում առանց նրանց բարեկամության. այլ ընդհակառակը, (իշխանավորը) ինչքան շատ հպատակներ ունենա, այնքան առավել դժվար կլինի նրա համար, եթե
3 նրանք հավատարիմ չեն: Համենայն դեպս, Փառնակեսը արդեն նախապատրաստված մարդկանց հետ, ինչպես նաև իրեն ձերբակալելու համար հոր կողմից ուղարկվածների հետ—քանզի սրանց հեշտությամբ նա սիրաշահեց—ինքը գնաց հոր դեմ: Ծերուկը, որը գտնվում էր Պանտիկապեյո-
նում[99], իմանալով այդ մասին, որդու դեմ մի քանի զինվոր ուղարկեց, հայտնելով, թե ինքը ևս շուտով կհետևի նրանց:
4 Սրանց ևս (Փառնակեսը) հեշտությամբ վերափոխեց, քանի որ սրանք նույնպես չէին սիրում Միհրդատին, և քաղաքը համավոր կերպով վերցրեց, իսկ պալատում ապաստանած հորը սպանեց[100]:

13, 1 Մինչդեռ (Միհրդատը) փորձեց ինքնասպանություն գործել և իր կանանց ու մնացած երեխաներին նախապես թունավորելով վերացնելուց հետո, մնացած (թույնը) ինքը խմեց. բայց ոչ այդ միջոցով, ոչ իսկ թրով չկարողացավ իր
2 կյանքին վերջ տալ: Քանզի թույնը, թեպետև մահացու էր, չհաղթեց նրան, քանի որ նա ամեն օր նախազգուշական նպատակով առավել մեծ քանակությամբ հակաթույն էր ընդունում. իսկ սրի հարվածը բթացել էր, քանզի թե՛ առաջացած տարիքի ու առկա տարաբախտությունների և թե՛, հավանաբար, թույնի օգտագործման հետևանքով ձեռքը թու-

3 լացել էր։ Ու քանի որ նա չկարողացավ ինքն իրեն ոչնչացնել և թվում էր, թե այդ կարող է պետք եղածից երկար տևել, իր վրա նետվեցին նրանք, ում ինքն ուղարկել էր որդու դեմ, և սրերով ու դաշույններով արագացրին նրա կործանումը։

4 Այսպիսով, Միհրդատը, որը բազմապիսի և առավել ակնառու բախտի էր արժանացել, մինչև իսկ կյանքի սովորական վախճան չունեցավ։ Քանզի չկամենալով հանդերձ, ցանկացավ մեռնել և ինքն իրեն սպանել փորձելով հանդերձ, չկարողացավ. այլ մասամբ թույնով, մասամբ թրով ինքնասպանություն էր գործում, բայց թշնամիների կողմից սպան-

14, 1 վեց։ Փառնակեսը նրա դիակը զմռսելով ուղարկեց Պոմպեոսին, որպես ապացույց կատարվածի, և նրան հանձնեց իր անձը և իր իշխանությունը։ Եվ (Պոմպեոսը) չանարգեց (դիակը), այլ ընդհակառակը, հրամայեց այն թաղել հայրենի դամբարանում. քանզի ենթադրելով, որ նրա թշնամությունը հանգել է նրա հոգու հետ, այլևս անտեղի չզայ-

2 րացավ դիակի վրա։ Այսուհանդերձ Բոսպորի թագավորությունը նա պարգևեց Փառնակեսին իբրև վարձ նրա ոճրագործության և նրան գրանցեց իր բարեկամների և դաշնակիցների ցուցակում։

3 Այսպիսով, երբ արդեն (Միհրդատը) կործանվել էր, նրա տերության բոլոր մասերը, բացի մի քանիսից, նվաճվեցին. քանզի Բոսպորից դուրս գտնվող մի քանի ամրությունների կայազորները, որոնք այդ ժամանակ դեռևս մնում էին, անմիջապես չհամաձայնվեցին ո՛չ այն պատճառով, որ մտածում էին դիմադրել (Պոմպեոսին), այլ որովհետև վախենում էին, թե իրենց պահպանած գանձերը ուրիշները կհափշտակեն ու մեղքը կբարդեն իրենց վրա. ուստի և նրանք սպասում էին, ցանկանալով ամեն ինչ ցույց տալ իրեն՝ Պոմպեոսին։

15, 1 Այսպիսով, երբ այս վայրերը նույնպես ենթարկվեցին, և Փրաատեսը մնում էր հանգիստ, իսկ Սիրիան և Փյունիկիան խաղաղվել էին, (Պոմպեոսը) շրջվեց Արետասի դեմ։ Սա թագավորում էր արաբների վրա, որոնք այժմ հպատակվում են հռոմայեցիներին, մինչև կարմիր ծով, և նախկինում մեծապես վնասել էր Սիրիային, որի համար էլ այդ (երկիրը) պաշտպանող հռոմայեցիների դեմ մղած կռվում

պարտվեց, բայց այդ ժամանակ դեռևս շարունակում էր պա-
2 տերազմը: Ուստի և Պոմպեոսը, արշավելով նրա և նրա մեր-
ձակա երկրների դեմ, առանց դժվարության հաղթեց նրանց
և հանձնեց կայազորի (հսկողության):

ԳԻՐՔ ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ

30, 1 Եվ Կիկերոնը[101], լսելով այս խոսքերը[102], ինչ-որ չափով թեթևացավ. միաժամանակ նաև երկար չմնաց արտաքսված, այլ ետ վերադարձվեց իր իսկ Պոմպեոսի կողմից, որը բոլորից առավել (պատասխանատու էր) նրա արտաքսման համար: Պատճառն այն էր, որ Կլոդիոսը[103] փողի միջոցով համոզվեց և կրտսեր Տիգրանին, որն այդ ժամանակ դեռևս Լուկիոս Փլավիոսի մոտ կապանքների մեջ էր, փախցնելով
2 աղատ արձակեց. միաժամանակ նաև Պոմպեոսին և Գաբինիոսին, որոնք զայրացել էին այդ առթիվ, անպատվեց, նրանց հետևորդներին վերքեր ու (մարմնական) վնասվածքներ պատճառեց, միաժամանակ նաև փշրեց կոնսուլի ձողիկները[104] և իր ունեցվածքը նվիրաբերեց աստվածներին:

37, 5 «Այսպիսով[105], նմանօրինակ կարգերի հետևանքով, այս մարդիկ[106], որոնք սկզբնապես սակավաթիվ էին և բնակվում էին նախ մի քաղաքում, որից փոքրը չի կարող լինել, իշխեցին լատիններին, հաղթեցին սաբիններին, տիրեցին էտրուսկներին[107], վոլսկերին, օսկերին[108], լուկաններին և սամնիտներին. մի խոսքով, հպատակեցրին Ալպյան (լեռներից) այս կողմ գտնվող ամբողջ երկիրը, ի-
38, 1 րենց դեմ արշաված բոլոր այլացեղներին ետ մղեցին[109]: Հետագայում հռոմայեցիները, ինչպես նաև մեր իսկ հայրերը նմանվելով նրանց, չբավարարվեցին առկա եղածներով, ոչ իսկ գոհացան իրենց ժառանգածով, այլ ծուլությունը իրոք համարելով իրենց համար կորուստ, իսկ չարչարվելը՝ ճշմարիտ փրկություն, և վախենալով, որ իրենց ունեցածը եթե մնա ինքն ինքնին, ապա կարող է սպառվել և (ժամանակի ընթացքում) մաշվել, և ամաչելով, որ այսքան շատ բան ստացած լինելով ոչինչ ավելացրած չեն լինի, նրանք
2 ավելի շատ և ավելի խոշոր նվաճումներ կատարեցին: Բայց ինչո՞ւ մեկ առ մեկ հիշատակենք Սարդինիան, Սիկիլիան, Մակեդոնացիներին, Իլլիրիացիներին, Հելլադան, Հոնիա-

կան Ասիան[110], բյութանիացիներին, իբերներին, աֆրիկացիներին։ Թեպետև կարթագենացիները առատ դրամ տվեցին նրանց, որպեսզի դեպի այնտեղ չնավեն, շատ տվեցին նաև Փիլիպպոսը[111] և Պերսևսը[112], որպեսզի իրենց վրա չարշավեն. Անտիոքոսը[113] ևս շատ է տվել, շատ են տվել նաև նրա որդիները և թոռները, որպեսզի (հռոմայեցիները) մնա-
3 յին Եվրոպայում։ Բայց ո՛չ այդ մարդիկ փառքի և իշխանության մեծությանն ի տես գերադասեցին անփառունակ անգործությունը և ապահով հարստացումը, ո՛չ իսկ մեզանից ավագները, որոնք դեռևս այժմ էլ կան. բայց լավ իմանալով, որ բարիքը ձեռք է բերվում և պահպանվում նույն միջոցով, նրանք ապահովեցին նախկինում եղածները, միա-
4 ժամանակ և բազում նորերը նվաճեցին։ Բայց ինչո՞ւ մեկ առ մեկ այստեղ ևս թվարկել Կրետեն, Պոնտոսը, Կիպրոսը, Ասիական Իբերիան[114], այնտեղի Ալբանիան[115], զույգ Սիրիաները, երկու Արմենիաները[116], Արաբիան և Պաղեստինը. (երկրներ), որոնց անուններն անգամ մենք նախկինում ճիշտ չգիտեինք, իսկ այժմ նրանց մի մասին ինքներս ենք տիրում, մյուս մասը շնորհել ենք ուրիշներին. այնպես որ նրանցից ստացել ենք և՛ հկամուտներ, և՛ զորքեր, և՛ պատիվներ և թե՛ դաշնակցություններ»։

ԳԻՐՔ ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ

56, 1 Այդ կատարվեց այսպես. Գաբինիոսը[117] շատ վնասներ հասցրեց Սիրիային, նույնիսկ առավել քան երկիրը ավարի տվող ծովահենները, որոնք այդ ժամանակ նույնպես աճում էին։ Այստեղից, այստեղից ստացվածները նվազագույն համարելով, սկզբում նա մտածեց և նախապատրաստվեց արշավելու պարթևների և նրանց հարստության
2 վրա։ Քանզի Փրաատեսը սպանված լինելով իր որդիների կողմից, Օրոդեսը[118] ժառանգեց նրա թագավորությունը և Միհրդատին՝ իր եղբորը, դուրս քշեց Մեդիայից, որտեղ նա իշխում էր։ Եվ սա, ապաստանելով Գաբինիոսի մոտ, համո-
3 զեց նրան աջակցելու իր վերադարձին։ Բայց և այնպես, երբ Պտղոմեոսը[119] ժամանեց Պոմպեոսի նամակով ու խոստացավ թե՛ իրեն և թե՛ զորքերին շատ դրամ վճարել, մի մասը անմիջապես, մյուս մասը՝ երբ նորից գահ բարձրանա, (Գա-

բինիոսը) հրաժարվեց պարթևների դեմ արշավանքից և շարժվեց Եգիպտոսի վրա, թեպետև (հռոմեական) օրենքը արգելում
4 էր կառավարիչներին արշավել իրենց սահմաններից դուրս կամ պատերազմ նախաձեռնել իրենց իսկ հայեցողությամբ:

ԳԻՐՔ ՔԱՌԱՍՈՒՆԵՐՈՐԴ

12, 1 Իսկ Կրասոսը[120] ինքը նույնպես ցանկանալով կատարել փառալից և իր համար շահավետ ինչ-որ բան, ու նկատելով, որ Սիրիայում հնարավոր չէր այդպիսի մի բան անել, քանզի սիրիացիները խաղաղվել էին, իսկ նախկինում իրենց՝ հռոմայեցիների դեմ պատերազմ մղածները թուլացած լինելու պատճառով չէին խլրտում, արշավեց պարթևների վրա, թեպետև նրանց դեմ ոչ մի մեղադրանք չէր կարող հարուցել, ոչ էլ պատերազմ էր հայտարարել, բայց որովհետև լսել էր, թե նրանք շատ հարուստ են, և ենթադրում էր, թե Օրոդեսին[121], որը դեռ գահին նոր հաստատված էր,
2 կարելի է հեշտությամբ գերեվարել: Ուստի և անցավ Եփրատ գետը և առաջացավ Միջագետքի շատ խորքերը, ասպատակելով և ամայացնելով այդ (երկիրը): Քանի որ նրա գետն անցնելը անսպասելի էր բարբարոսների համար, ոչ մի իսկական պահակազորք չկար այնտեղ, ապա Սիլակեսը, որն այդ ժամանակ այդ երկրի սատրապն էր, պարտվեց Իքնիա կոչված մի ամրության մոտ, կռվելով փոքրաթիվ հեծյալներով, վիրավորվեց ու փախավ, անձամբ հաղորդելու ար-
13, 1 քային նրա կատարած արշավանքի լուրը: Իսկ Կրասոսը արագորեն իր կողմը գրավեց բերդերը և հատկապես հելլենական քաղաքները, որոնց թվում նաև Նիկեփորիոն[122] կոչվածը. քանզի մակեդոնացիներից և նրանց հետ միասին արշաված հելլեններից մեծ թվով վերաբնակներ, բոնի քշված լինելով (բարբարոսների կողմից)[123], հռոմայեցիներին հա-
2 մարում էին հունասերներ և կամովին չէին դիմադրում. բացի Զենոդոտիոնի[124] բնակիչներից, որոնք (հռոմայեցիներից) ոմանց հրավիրեցին, հայտնելով, որ իբր ապստամբում են. բայց երբ հռոմայեցիները մտան քաղաք, ձերբակալեցին նրանց ու ոչնչացրին. այդ իսկ պատճառով նրանք (բոնի) տեղահանվեցին. այդ ժամանակ Կրասոսը ուրիշ ոչ մի վնաս
3 ոչ կրեց, ոչ էլ պատճառեց: Այնուամենայնիվ նա կհպատակեցներ նաև Տիգրիսից այս կողմ գտնվող մյուս երկըր-

ները ևս, եթե նա օգտված լիներ իր արշավանքի թափից և այդ ամենի պատճառով բարբարոսներին (համակած) խուճապից, ինչպես և եթե ձմեռեր այդ նույն երկրում և աչ-
4 լուրջ հետևեր իրադարձություններին։ Մինչդեռ այժմ նա դրավեց (այն վայրերը), ինչ կարողացավ (հանկարծակի) արշավանքի միջոցով, և հոգ չտարավ ոչ մնացածը (նվաճելու), և ոչ իսկ (արդեն նվաճվածի) մասին, այլ գերադասեց Միջագետքում դանդաղել և փափագեց Սիրիայում ծուլանալ, դրանով իսկ պարթևներին ժամանակ ընձեռեց պատրաստվելու և երկրում թողնված զինվորներին վնաս հասցնելու։

14, 1 Այսպիսին էր հռոմայեցիների պատերազմի սկիզբը պարթևների դեմ։ Սրանք բնակվում են Տիգրիսից այն կողմ, մեծ մասամբ պարտպապատ (ամրոցներում) և բերդերում, մասամբ նաև քաղաքներում, որոնց թվում է նաև Կտեսիփոնը[125], որտեղ նրանք ունեն նաև արքայանիստ պալատ։ Նրանց ցեղը գոյություն ուներ դեռևս հին բարբարոսների ժամանակ և կրում էր նույն անունը նաև պարսից թագավո-
2 րության[126] ընթացքում. բայց այդ ժամանակ նրանք բնակվում էին (այդ) երկրի մի փոքր մասի վրա և իրենց սահմաններից դուրս ոչ մեկ տիրույթ ձեռք չէին բերել. իսկ երբ պարսիկների իշխանությունը տապալվեց ու բարձրացավ մակեդոնացիների տերությունը, և երբ Ալեքսանդրի դիադոքները վիճեցին միմյանց հետ, ու նրանցից յուրաքանչյուրն իր համար առանձին երկիր անջատեց և իր միապետու-
3 թյունը հաստատեց, այնժամ էլ առաջին անգամ ոմն Արշակի[127] ղեկավարությամբ (պարթևները) հանդես եկան, ուրից էլ հետագայում նրանց արքաները կոչվեցին Արշակունիներ[128] ու, բարգավաճելով, նվաճեցին հարևան բոլոր երկրները, տիրացան նաև Միջագետքին՝ որպես սատրապությունների, ու վերջում ձեռք բերեցին այնքան փառք և հզորություն, որ այդ ժամանակ նույնիսկ հռոմայեցիների դեմ կռվեցին ու դրանից հետո մինչև հիմա ևս մշտապես
4 (հռոմայեցիներին) հակառակորդ են համարվում։ Նրանք թեպետև նույնպես հզոր են ռազմական գործերում, սակայն առավել շատ են հռչակված (քան արժանի են), ու թեպետև հռոմայեցիներից ոչինչ չեն կարողացել վերցնել, այլ նույնիսկ իրենց ունեցածից (կորցրել են), երբևիցե չեն հպա-

տակվել, այլ այժմ ևս ամեն անգամ նրանք մեր դեմ մղած
15, 1 պատերազմներում աչքի են ընկնում: Այսպիսով, նրանց ցեղի և նրանց յուրահատուկ բարքերի մասին շատերի կողմից ասվել է, և ես մտադիր չեմ (դրանք) նկարագրել: Բայց նրանց դինվածության և ռազմավարության մասին ես կպատմեմ, քանի որ դրանց ուսումնասիրությունը առանձնապես վերաբերում է այստեղ պատմվելիք դեպքերին, ուս-
2 տի այժմ անհրաժեշտ է իմանալ դրանց մասին: Վահաններ նրանք բոլորովին չեն օգտագործում. նրանց բանակը կազմված է հեծյալ աղեղնավորներից և (հեծյալ) նիզակակիրներից, որոնք մեծ մասամբ զրահապատված են: Նրանց հետևակը փոքրաթիվ է, բաղկացած ամենաչքավորներից. բայց սրանք ևս նետաձիգներ են. և նրանք մանկությունից մարզվում են և երկինքն ու երկիրը նպաստում են այս բո-
3 լորին: Քանզի երկիրը, մեծ մասամբ հարթավայրային լինելով, լավագույնս սնում է ձիերին և շատ հարմար է ձիավարության համար: Ուստի և նրանք նույնիսկ պատերազմներին ամբողջ երամակներ են քշում, այնպես, որ նրանք կարող են տարբեր ժամանակ օգտվել տարբեր ձիերից ու անսպասելի հեռվից արշավել և հանկարծակի նահանջել մի
4 հեռավոր տեղ: Ու երկինքը նրանց վերևում շորագույն լինելով և չնչին խոնավություն իսկ չունենալով, նրանց աղեղները առավել ձգած են մնում, բացի խորը ձմռանից: Այդ իսկ պատճառով նրանք տարվա այդ եղանակին երբեք չեն արշավում: Իսկ տարվա մյուս մասում էլ նրանք առավել անհաղթահարելի են թե՛ իրենց երկրում և թե՛ դրան նմանվող այլ
5 երկրներում: Քանզի նրանք արդեն սովորած լինելով, կարողանում են տանել արևը, որը առավել կիզիչ է, և հակամիջոցներ են հայտնագործել ջրի սակավության և դրա հայթայթման հետ կապված դժվարությունների դեմ. ուստի և այս պատճառով էլ իրենց երկիրը ներխուժողի դեմ նրանք հեշտությամբ կարողանում են կռվել: Իսկ այդ երկրից դուրս, Եփրատից այս կողմ, նրանք մի քանի ճակատամարտեր շահել են հանկարծակի արշավանքներով. բայց նրանք
6 անդադար ու տևական պատերազմներ չեն կարող մղել (այլոց դեմ), քանզի նրանք (մի կողմից) չեն կարողանում տալ նել իրենց երկրից և օդից տարբեր պայմաններ, (մյուս կողմից) ոչ պարենամթերք են հայթայթում, ոչ էլ ոռճիկ են վճարում:

16, 1 Այսպիսին է կարգը պարթևների մոտ: Իսկ Կրասոսը երբ ներխուժեց Միջագետք, ինչպես ասվել է, Օրոդեսը նրա մոտ, Սիրիա, դեսպաններ ուղարկեց, մեղադրելով նրան ներխուժման համար և պահանջեց հայտնել պատերազմի պատճառները. միաժամանակ նաև Սուրենին զորքով ու-
2 ղարկեց նվաճված և ապստամբած շրջանները. քանզի ինքը մտադիր էր արշավել Հայաստան, որը մի ժամանակ Տիգրանի[129] երկիրն էր, որպեսզի Արտավազդը[130], Տիգրանի որդին, որն այդ ժամանակ թագավորում էր (այնտեղ), իր սեփական երկրի վիճակով մտահոգված, որևէ օգնություն
3 չուղարկի հռոմայեցիներին: Բայց Կրասոսը պատասխանեց նրան, թե պատերազմի պատճառը կհայտնի Սելևկիայում[131] —սա քաղաք է Միջագետքում, որի բնակչության մեծագույն մասը այժմ ևս հելլենական է: Եվ պարթևներից մեկը իր ձախ ափին մյուս ձեռքի մատներով խփեց ու նրան պատասխանեց, թե՝ «Ավելի հեշտ այստեղ մազեր կբուսնեն, քան դու կլինես Սելևկիայում»:

17, 1 Ու երբ վրա հասավ ձմեռը, և Գնայոս Կալվինոսը և Վալերիոս Մեսսալասը դարձան կոնսուլներ[132], նույնիսկ իր՝ Հռոմի վրա բազմաթիվ վատ նախանշաններ հայտնվեցին. քանզի բվեճներ երևացին և գայլեր, իսկ շները թափառում էին ու ոռնում, և արձանների մի մասը քրտնել էր, մյուս
2 մասը շանթահարվել. մինչդեռ իշխանությունները, մասամբ գժտության, բայց առավել ևս հավքերի[133] և երկնային նշանների պատճառով հազիվ յոթերորդ օրը այդ մասին հայտնեցին: Բայց այդ նշանները ոչ մի պարզ բան չէին ցույց տալիս, թե ի՞նչ պետք է կատարվի. քանզի քաղաքում իրավիճակը խառն էր, իսկ գալլերը նորից խռովություն էին բարձրացրել. ու թեպետև (հռոմայեցիները) դեռևս չգիտեին ինչ անեին, արդեն պատերազմի բռնվեցին պարթևների հետ:
3 Իսկ Կրասոսին, երբ սա անցնում էր Զևգման[134]—այդ վայրն այսպես կոչվեց Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից հետո, քանզի նա (գետն) այստեղով անցավ—այդ նշան-
18, 1 ները ակնհայտ և հեշտ բացատրելի թվացին: Քանզի այսպես կոչված արծիվը—կա մի տաճար, որի մեջ դրված է ոսկե արծիվ. այդպիսին հաստատված է զորակոչված բոլոր լեգեոններում, և երբեք դուրս չի բերվում (լեգեոնի) ձմեռային կայանից, այլ միայն այն ժամանակ, երբ ամ-

2 բողջ զորքը դուրս է գալիս։ Այս դեպքում մի այր տանում է այն, անցկացրած երկար նիզակին, որը վերջանում է սուր ծայրով, այնպես, որ խրվելիս ամրանում է հողին—ահա այդ արծիվներից մեկը այդ ժամանակ չկամեցավ Կրաստոսի հետ միասին անցնել Եփրատը, այլ խրված մնաց գետնին, ասես բուսած լիներ այնտեղ, մինչև որ շատերը դրա
3 շուրջը կանգնելով, ուժով դուրս չքաշեցին հողից։ Ու սա ևս, թեպետ ակամա, հետևեց նրանց, իսկ մեծ դրոշներից մեկը, որը նման էր առագաստի, և որի վրա փյունիկյան գրեր կային, ազդարարելու համար թե՛ զորքը և թե՛ նրա հրամանատարին[135], շուռ եկավ ու կամուրջից ընկավ գետը.
4 և սա պատահեց ուժեղ քամու ժամանակ։ Այնժամ Կրաստոսը մնացյալները ևս հավասար չափով կտրեց, որպեսզի դրանք ավելի կարճանային ու դրանով իսկ հնարավոր լիներ ավելի հեշտ տանել. բայց այդպիսով միայն ավելացրեց հրաշքը, քանզի ուղիղ գետանցի ժամանակ այնքան (թանձր) մշուշ իջավ զինվորների վրա, որ նրանք սկսեցին իրար հետ ընդհարվել և թշնամու երկրից ոչինչ չէին նկատում, մինչև
5 ոտք չէին դնում այնտեղ. և գետանցի ու ափհանման համար մատուցված զոհաբերությունները առավել անբարենպաստ եղան։ Այդ ժամանակ էլ ուժեղ քամի բարձրացավ ու կայծակներ ճայթեցին, և կամուրջը, նախքան բոլորը կանցնեին, քանդվեց։ Եվ այս կատարվածները այնպես (ակընհայտ) էին, որ ամենաանգետներին և ամենաանուսաներին անգամ ցույց էին տալիս, թե վախճանը վատ պետք է լինի և իրենք չեն կարողանալու ետ վերադառնալ, (ուստի) և
19, 1 զորքին խիստ սարսափ և հուսալքում համակեց։ Այնժամ Կրաստոսը, փորձելով քաջալերել նրանց, ասաց, թե «Մի՛ խռովեք, զինվորներ, եթե կամուրջը քանդվել է, և մի՛ կարծեք, թե դրա մեջ որևէ վատ կանխանշան կա. քանզի ես ինքս երդվելով ձեզ ասում եմ, որ իմ վերադարձը պետք է կա-
2 տարեմ Հայաստանի վրայով»։ Այս խոսքերով նա գուցե քաջալերեր նրանց, եթե նույն պահին պատասխանելով ինչ-որ մեկին, բարձրաձայն չավելացներ. «Քաջ եղեք, քանզի
3 մեզանից ոչ ոք այնտեղից չի վերադառնալու»։ Լսելով այս խոսքերը, զինվորներին թվաց, թե այս մեկը ևս ոչ պակաս խոշոր կանխանշան էր, որի պատճառով էլ առավել հուսալքման մեջ ընկան. ուստի և նրանք այսուհետև ուշադրու-

թյուն չէին դարձնում նրա խրատական խորհուրդներին, որոնցով (մի կողմից) վատաբանում էր բարբարոսին[136], (մյուս կողմից) փառաբանում հռոմեական պետությունը. տալիս էր նրանց դրամ և խոստանում հաղթության պարգևներ: Բայց այս դեպքում ևս (զինվորները) հետևեցին (նրան), և ոչ մեկը չհակաճառեց նրան, ոչ էլ որևէ հակառակ գործ կատարեց, մասամբ, գուցե, հավատարիմ օրենքին, բայց միաժամանակ նաև այն պատճառով, որ նրանք շփոթված էին և չէին կարող փրկարար որևէ մի բան մտածել, ոչ էլ ձեռնարկել: Որովհետև, ինչպես ամեն ինչում, նրանք թե՛ մտքով և թե՛ մարմնով կորած էին, ասես անհայտ մի աստվածություն նրանց կործանում էր:

20, 1 Սակայն նրանց ամենամեծ վնասը պատճառեց Աբգար Օսրոենացին[137]. քանզի նա Պոմպեոսի ժամանակ դաշնակից էր եղել հռոմայեցիներին, իսկ այժմ գերադասել էր բարբարոսին: Նույն բանն արեց նաև Ալքավդոնիոս Արաբը, որը
2 միշտ անցնում էր ուժեղի կողմը: Այս մեկը, սակայն, բացահայտ կերպով ապստամբեց, ուստի և դժվար չէր նրանից պաշտպանվել: Մինչդեռ Աբգարը, մտածելով հօգուտ պարթևի, ձևացնում էր, թե իբր բարյացակամ է Կրասոսի հանդեպ և նրա օգտին անխնա դրամ էր ծախսում և իմանալով նրա բոլոր ծրագրերը, դրանք հաղորդում էր (թշնամուն), և նույնիսկ եթե դրանցից որևէ մեկը օգտավետ էր (հռոմայեցիներին, խորհուրդ էր տալիս) հրաժարվել դրանից, իսկ եթե վնասաբեր էր, շտապեցնում այն: Վերջապես
3 նա այսպիսի մի բան արեց: Երբ Կրասոսը մտածում էր արշավել դեպի Սելևկիա, կարծելով, որ այնտեղ կարող է ապահով հասնել, եթե իր զորքն ու պարենամթերքը տանելու լինի Եփրատի վրայով ու նրա երկարությամբ, և նրանց[138] հետ միասին—քանի որ նա ենթադրում էր, թե նրանց հեշտությամբ կգրավի իր կողմը, քանզի նրանք հելլեններ էին—առանց դժվարության (գետի վրայով) կհասնի Կտեսիփոն, այնժամ (Աբգարը) խորհուրդ տվեց նրան հրաժարվել այդ բանից, քանի որ, իբր դա երկար ժամանակ կխլեր,
4 և համոզեց նրան հարձակվել Սուրենի վրա, քանի որ սա
21, 1 գտնվում էր մոտակայքում և քիչ զորք ուներ: Այսպիսով, երբ նա արդեն պայմաններ էր ստեղծել մեկի կործանման և մյուսի հաղթանակի համար—քանզի նա լրտեսելու պա-

տըրվակով մշտապես հանդիպում էր Սուրենին—հռոմայեցիներին դուրս բերեց (ճակատամարտի) անհոգ վիճակում, իբր հաղթանակը պատրաստ էր, և գործողության ընթացքում միանալով (բարբարոսներին) հարձակվեց (հռոմայեցիների) վրա։

2 Այդ կատարվեց այսպես։ Պարթևներն իրենց զորքի մեծ մասը թաքցնելով—քանզի այնտեղ վայրը անհարթ էր և ծառեր կային—դեմ դուրս ելան հռոմայեցիներին։ Նրանց նկատելով Կրասոսը՝ ոչ թե հրամանատարը, այլ կրտսերը, որը Գալլիայից ժամանել էր իր հոր մոտ, արհամարհեց նրանց, ենթադրելով, թե մենակ են, իր հեծյալ զորքը հանեց նրանց դեմ. և երբ նրանք դիտավորյալ փախուստի դիմեցին, հալածեց նրանց և կարծելով, թե հաղթել է, շատ հեռացավ Ֆալանգից[139] և այստեղ իսկ շրջապատվելով՝ կտրատվեց։

22, 1 Այս բանը կատարվելուց հետո, հռոմայեցիների հետևակը փախուստի չդիմեց, այլ եռանդագին մարտի բռնվեց պարթևների հետ, նրա մահը հատուցելու համար։ Սակայն նրանք իրենց վայել ոչինչ չկարողացան անել թե՛ Թշնամու բազմության և թե՛ նրա ռազմական տակտիկայի, ինչպես

2 նաև Աբգարի դավադրության պատճառով։ Քանզի երբ նրանք փորձում էին համատեղ շրջափակվել վահաններով, պաշտպանվելու համար Թշնամու նետահարումներից, ապա իրենց վրա թափով նետվում էին Թշնամու նիզակավորները և մի մասին ցած էին գլորում, մյուսներին ցրիվ տալիս։ Իսկ երբ նրանք այդ բանից խուսափելու համար ձգում-երկա-

3 րացնում էին իրենց շարքերը, նետահարվում էին։ Այս վիճակում շատերն սպանվում էին վրա հասնող նիզակավորների հարվածներից, իսկ շատերն էլ կործանվում էին, շրջապատվելով հեծյալներից. ուրիշներն էլ տապալվում էին նիզակների (հարվածներից) և կամ քշվում էին վիրավոր-

4 ված։ Եվ նետասլաքներն էլ ամեն կողմից խտությամբ միանգամից խոցում էին նրանց, շատերին մահացու վերք հասցնելով, շատերին էլ դարձնելով կռվելու անընդունակ, որով և բոլորն անապահովանում էին։ Սլաքները թռչում էին նրանց աչքերին, թափանցելով նրանց (պաշտպանական) զենքերը, վիրավորում էին նրանց ձեռքերն ու մարմնի մյուս բոլոր մասերը, պաշտպանվելու հնարավորությունից զրկելով նրանց, ստիպում ամբողջապես բացվել ու ենթարկ-

817—11

5 վել մշտական նետահարման. այնպես որ մինչ որևէ մեկը փորձում էր պաշտպանվել նետերից և կամ աշխատում էր արդեն (մարմնին) մխրճված սլաքը դուրս քաշել, իսկույն իրար ետևից բազում վերքեր էր ստանում: Ուստի և անիմաստ էր նրանց համար շարժվելը, բայց անիմաստ էր նաև անշարժ մնալը: Քանզի ոչ շարժվելը, ոչ էլ հանգիստ մնալը, ոչ մի ապահովություն չէր խոստանում, այլ երկու դեպքում էլ նրանք կործանվում էին. որովհետև շարժվել չէին կարողանում, բայց հեշտությամբ նետահարվում էին:

23, 1 Այս բոլորը դեռ այն է, ինչին ենթարկվեցին միայն բացահայտ թշնամիների դեմ կռվելիս. քանզի Աբգարը անմիջապես չէ, որ նրանց դեմ գործողություն ձեռնարկեց. բայց երբ սա ևս հարձակվեց, այնժամ օսրոենցիները իրենք ևս հարվածեցին (հռոմայեցիների) անպաշտպան թիկունքին, երբ սրանք ետ էին շրջվել, և դրանով իսկ օգնում էին մյուսներին, սրանց ավելի հեշտ ոչնչացնելու համար: Քանզի (հռոմայեցիների) շարքերը փորձելով սրանց դեմ հանդիման դասավորվել, իրենց թիկունքը պարթևներին էին դարձ-
2 նում: Հետո շուռ էին գալիս դեպի պարթևները, այնուհետև դարձյալ դեպի օսրոենցիները, հետո նորից դեպի պարթևները: Այս ամենից հետո առավել շփոթմունքի ենթարկվելով, քանի որ նրանց հարվածող հակառակորդին դիմագրավելու համար ստիպված անընդհատ այս ու այն կողմ էին շրջվում, ապա ընկնում էին յուրայինների դաշույնների վրա և շատերն
3 սպանվեցին իրար ձեռքով: Ու վերջապես, քանի որ թշնամին ամեն կողմից միաժամանակ հարձակվում էր իրենց վրա, և իրենք ստիպված էին պաշտպանելու իրենց մերկացած զորամասերը վերջիններիս մոտիկ կանգնածների վահաններով, դրանով իսկ նրանք փակվեցին մի նեղ տեղանքում, այնպես որ այլևս շարժվել չէին կարողանում: Եվ իսկապես, մահացածների բազմության պատճառով նրանք հաստատ կանգնելու տեղ անգամ չունեին, այլ սայթաքելով
4 ընկնում էին (դիակների) վրա: Իսկ տապն ու ծարավը— քանզի ամառվա կեսն էր, և այս ամենը կատարվում էր կեսօրին—և փոշին, որը բարբարոսները հնարավորին չափ բարձրացնում էին, ձիավարելով նրանց շուրջ բոլորը, (կենդանի) մնացածներին խիստ սարսափով համակեց և շատերը այս ամենից ընկնում էին ցած, թեպետև չվիրավորված:

24, 1 Եվ նրանք մինչև վերջինը կկորչեին, եթե բարբարոսների նիզակները մասամբ չճկվեին, մասամբ էլ չջարդվեին, իսկ անդադար նետահարումից սղեղների ջղերը չպոկվեին և նետերն էլ չսպառվեին և բոլոր թրերը չբթանային և, որ ամե-
2 նակարևորն է, իրենք՝ այրերը չհոգնեին սպանելուց։ Ահա այսպես (հարձակվողները) ետ քաշվեցին, քանզի գիշերը իջնում էր, և նրանք պետք է հեռու ձիավարեին։ Որովհետև նրանք երբեք չէին բանակում նույնիսկ ամենաթույլերին մոտիկ, քանի որ ոչ մի խրամատ չէին օգտագործում, ուստի և եթե որևէ մեկը մթության մեջ հարձակվի նրանց վրա, նրանք անկարող են լինում օգտագործել իրենց ձիերն ու ա-
3 ղեղները։ Այսուհանդերձ նրանք այս ժամանակ հռոմայեցիներից ոչ մեկին կենդանի չվերցրին. քանզի տեսնելով նրանց իրենց զենքերով կանգնած ու նկատելով, որ նրանցից և ոչ մեկը զենքը դեն չի նետում և չի փախչում, պարթևները են-թադրեցին, որ սրանք դիտմամբ ուժեղ են, ուստի և վախեցան նրանց հետ կռվի բռնվելու։

25, 1 Այսպիսով Կրասոսը և բոլոր մյուսները, ովքեր կարողացան, արշավեցին դեպի Կարրա[140], որը իրենց հանդեպ հնազանդ էր պահվել այստեղ մնացած հռոմայեցիների շնորհիվ։ Մինչդեռ վիրավորներից շատերը, քանի որ անկարող էին քայլել և զրկված էին տանող սայլերից և նույնիսկ օգնող-տանողներ չունեին, քանի որ մյուսները հազիվ կարողացել էին իրենք իրենց քարշ տալ, մնացին դաշտում։
2 Եվ սրանցից ոմանք մահացան վերքերից և կամ ինքնասպանության դիմեցին, մյուսներն էլ հաջորդ օրը գերի վերցվեցին։ Իսկ խուսափածներից շատերը կործանվեցին, ճանապարհին հոգնելով. շատերն էլ ոչնչացան ավելի ուշ, քանի որ ժամանակին անհրաժեշտ խնամք չստացան։
3 Քանզի Կրասոսը հուսահատված լինելով, ենթադրեց, որ նույնիսկ քաղաքում այսուհետև հնարավոր չէ դիմանալ, և մտածեց անմիջապես փախչել։ Ու քանի որ նրա համար հնարավոր չէր ցերեկ ժամանակ դուրս գալու դեպքում աննկատ մնալ, փորձեց գիշերով փախչել, բայց մատնվելով լուսնից, քանզի լիալուսին էր, չկարողացավ խուսա-
4 փել։ Ուստի և (հռոմայեցիները) սպասեցին մինչև վրա հասնեին անլուսին գիշերները, և այդ ժամանակ էլ խավարի մեջ դուրս եկան օտար ու թշնամական երկրում և ահ ու

սարսափով համակված ցրիվ եկան. և սրանցից ոմանք, երբ արդեն օրը բացվեց, բռնվեցին ու կործանվեցին, իսկ մյուսները քվեստոր[141] Կասսիոս Լոնգինոսի հետ ապահով հասան
5 Սիրիա. ուրիշներ էլ իրեն՝ Կրասոսի հետ միասին ապաստանեցին լեռները, որպեսզի դրանց վրայով փախչեն Հայաստան:

26, 1 Իսկ Սուրենն իմանալով այս, վախեցավ, որ չլինի թե ինչ-որ մի տեղ սրանք հավաքվելով դարձյալ իր դեմ պատերազմ սկսեն. բայց և չուզեց նրանց վրա հարձակվել բարձրադիր վայրերում, որոնք անմատչելի էին հեծելազորի համար. քանի որ հռոմայեցիները ծանրազեն էին[142] և առավել բարձրից էին կռվում և միաժամանակ հուսահատությունից կատաղությամբ էին լցված, ուստի և հեշտ չէր նրանց հետ
կռվի բռնվելը: Այս պատճառով նա (բանագնաց) ուղարկեց նրանց մոտ, իբր հաշտություն կնքելու, պայմանով, որ նրանք լքեն Եփրատից արևելք գտնվող ամբողջ երկիրը:
2 Եվ Կրասոսը նրան հավատաց առանց վարանելու. քանզի նրա վախը հետզհետե աճում էր, և նա խիստ հուսահատված էր անձամբ իր և պետության վրա ընկած աղետի հարվածներից, միաժամանակ տեսնելով նաև, որ զինվորները ծուլանում են ճանապարհին, այն համարելով երկար և դժվարին, և որ նրանք վախենում են Օրոդեսից, անկարող եղավ
3 իրեն անհրաժեշտ եղող որևէ բան նախատեսել: Երբ նա արդեն պատրաստ էր հաշտության, Սուրենը չուզեց այլոց միջոցով հաշտություն կնքել, այլ որպեսզի նրան փոքրաթիվ ուղեկիցների հետ հանդիպելով ձերբակալի, ասաց, որ ինքը
4 ցանկանում է բանակցել անձամբ նրա հետ: Ուստի և նրանք որոշեցին իրար հանդիպել երկու բանակները բաժանող տարածության մեջտեղում, յուրաքանչյուր կողմից հավասար թվով զինվորներով: Ուստի և Կրասոսը իջավ հարթավայր, իսկ Սուրենը նրան ձի ուղարկեց նվեր, որպեսզի նա ավելի
27, 1 շուտ հասնի իր մոտ: Ու քանի դեռ Կրասոսը դանդաղում էր և մտածում անելիքի մասին, բարբարոսները նրան խլելով բռնի նստեցրին ձիու վրա: Այդ միջոցին հռոմայեցիները նույնպես ետ խլեցին նրան և ձեռնամարտի բռնվեցին նրանց հետ և որոշ ժամանակ հավասարապես դիմադրեցին, իսկ հետո, երբ ուրիշներ օգնության հասան (բարբարոսներին),
2 սրանք գերազանցեցին: Քանզի բարբարոսները, որոնք դաշ-

տում էին և նախապատրաստված սպասում էին, ավելի շուտ հասան յուրայիններին օգնության, քան բարձրում գտնվող հռոմայեցիները: Եվ ընկան ուրիշները, (ընկավ) նաև Կրասոսը, սպանված կա՛մ իր իսկ յուրայիններից մեկի ձեռքով, որպեսզի կենդանի չգերվի, կամ էլ թշնամու ձեռքով,
3 որովհետև ծանր վիրավորված էր: Այսպիսին եղավ նրա վախճանը: Եվ պարթևները, ինչպես ոմանք ասում են[143], նրա բերանը հալած ոսկի լցրին իբրև ծանակ: Քանզի լինելով մեծահարուստ, այնքան շատ փող էր կուտակել, որ կարեկցում էր այն մարդկանց, որոնք իրենց միջոցներով չէին կարողանում հավաքագրված լեգեոն պահել, նրանց հա-
4 մարելով աղքատներ: Նրա զինվորների մեծ մասը կարողացավ լեռների վրայով բարեկամական (երկիր) ապաստանել, բայց մի մասն էլ ընկավ թշնամու ձեռքը:

28, 1 Այդ ժամանակ պարթևները Եփրատից այս կողմ չառաջացան, բայց դրանից այն կողմ ընկած ամբողջ երկիրը վերանվաճեցին: Այնուհետև, թեկուզև ոչ մեծ բազմությամբ, նրանք ներխուժեցին նաև Սիրիա, որը ո՛չ զորավար ուներ, ո՛չ իսկ զորք: Այդ պատճառով էլ Կասսիոսը նրանց հեշտությամբ դուրս քշեց, քանի որ նրանք մեծաթիվ չէին:
2 Քանզի երբ կարրայում զինվորները, Կրասոսի հանդեպ ատելությամբ (լցված), նրան էին հանձնում գերագույն հրամանատարությունը իրենց վրա, իսկ Կրասոսը ինքը ևս, աղետի ահագնության պատճառով, կամովին թույլատրեց այդ, Կասսիոսը չընդունեց (հրամանատարությունը). այժմ, սակայն, նա ստիպված ստանձնեց Սիրիայի կառավարումը
3 ներկայի և ապագայի համար: Քանզի բարբարոսները չէին հրաժարվում Սիրիայից, այլ ավելի բազմաթիվ ձեռքերով նորից արշավեցին Օրոդեսի Պակորոս[144] անունով որդու, բայց իրականում, քանի որ սա դեռ տղա էր, Օսակեսի[145] գլխավորությամբ. և նրանք հասան մինչև Անտիոք[146], իրենց ոտքերի տակ ավերելով ամբողջ երկիրը: Նրանք հույս ունեին
4 իրենց ենթարկել նաև մնացած երկիրը, քանի որ այնտեղ իրենց դեմ կռվելու համար հռոմեական բավականաչափ ուժեր չկային, և երկիրն էլ դժգոհ էր հռոմայեցիների գերիշխանությունից և պատրաստ էր հարելու (պարթևներին), որոնք թե՛ հարևաններ էին և թե՛ սովորույթներով մոտիկ:

29, 1 Բայց երբ նրանց չհաջողվեց (վերցնել) Անտիոքը, քանզի

Կասսիոսը նրանց ուժդին դիմադրեց, և նրանք անզոր էին քաղաքը պաշարել, այնժամ շուռ եկան դեպի Անտիգոնիա։
2 Ու քանի որ այս քաղաքի մերձակայքը անտառախիտ էր, և նրանք չհամարձակվեցին և չկարողացան հեծելազորով ներխուժել քաղաք, ապա մտածեցին կտրատել ծառերը և ամբողջ վայրը մերկացնել, որպեսզի վստահորեն և ապահովությամբ մոտենան քաղաքին։ Բայց այդ անել չկարողացան—քանի որ դժվարությունը մեծ էր և ժամանակն իզուր էր անցնում, իսկ Կասսիոսն էլ վնասում էր նրանց, ովքեր
3 գրվել էին երկրում—նրանք նոր քաշվեցին մի ուրիշ վայր արշավելու մտադրությամբ։ Սակայն մինչ այդ Կասսիոսը դարանակալեց այն ճանապարհին, որով նրանք պետք է հեռանային և այնտեղ փոքրաթիվ մարդկանցով նրանց վրա հարձակվելով, ստիպեց փախուստի դիմել և շրջապատելով նրանց, սպանեց ոմանց, որոնց թվում նաև Օսակեսին։ Սրա մահանալուց հետո Պակորոսը լքեց ամբողջ Սիրիան և այնուհետև երբեք չներխուժեց այնտեղ։

30, 1 Սա հազիվ էր մեկնել, երբ Բիբուլոսը ժամանեց իբրև Սիրիայի կառավարիչ, թեպետև որոշված էր, որ ոչ պրետորը, ոչ էլ կոնսուլը ոչ անմիջապես, ոչ էլ մինչև հինգ տարի չպետք է մեկնի արտաքին տիրույթների կառավարման համար, որպեսզի այդ պատճառով իրար հետ չթշնամանան
2 ու չկռվեն։ Եվ նա խաղաղությամբ կառավարեց իրեն ննջակա երկիրը, իսկ պարթևներին հանեց իրար դեմ։ Այսպես, Օրնոդապատեսին, ոմն սատրապի, որը թշնամություն ուներ Օրոդեսի դեմ, սիրաշահեց և բանագնացների միջոցով համոզեց թագավոր հռչակել Պակորոսին և սրա հետ միասին արշավել մյուսի դեմ։

3 Այսպիսով, այս պատերազմը հռոմայեցիների ու պարթևների միջև վերջացավ իր սկսելուց հետո չորրորդ տարում, երբ հյուպատոս էին Մարկոս Մարկելլոսը և Սուլպիկիոս Հռուֆոսը։

ԳԻՐՔ ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

55,3 Այսպիսով բացի Փառնակեսից և Օրոդեսից—քանզի սրան նույնպես փորձեց իր կողմը գրավել, թեպետև Կրասոսններին սպանելուց հետո սա թշնամի էր դարձել—բոլոր մնացածները, որոնք երբևիցե մտերմացել էին նրա հետ[147],

թե՛ դրամ տվեցին և թե՛ օգնություն ոմանք ուղարկեցին, ոմանք էլ անձամբ բերեցին։ Իրականում պարթևը[148] նրան խոստացել էր, որ եթե ստանա Սիրիան, ապա կդաշնակցի
4 նրա հետ. բայց քանի որ չստացավ այն, ուստի և մերժեց նրան օգնել։ Այսպիսով, եթե Պոմպեոսը գերազանցում էր զորքերի բազմությամբ, ապա Կեսարի կողմնակիցները նրանց հավասարվում էին իրենց ուժով...

56, 1 Ահա այս պայմաններում... ամենանշանակալից պայքարը տեղի ունեցավ։ Քանզի Հռոմ քաղաքը և նրա ամբողջ տերությունը, որն արդեն հզոր էր ու մեծ, ընկած էր նրանց առաջ իբրև մրցանակ. որովհետև բոլորի համար պարզ էր, որ այն[149] պետք է ծառայի այդ կռվում հաղթողին։ Ուստի նրանք մտածելով այս մասին և վերհիշելով նախկինում իրենց կատարածները—Պոմպեոսը՝ Աֆրիկայի և Սերտորիոսի և Միհրդատի և Տիգրանի (հպատակեցումը) և ծովային[150]
2 (գործողությունները), իսկ Կեսարը՝ Գալլիայի և Իբերիայի[151]
3 և Հռենոսի և Բրիտանիայի—և ենթադրելով, որ այդ ամենը կարող են վտանգել ու նախանձախնդիր լինելով միմյանց փառքը խլելու, գործի անցան։

* * *

63, 3 Քանզի Հայաստանի մի մասը[152], որը պատկանել էր Դեյոտարոսին[153], (Կեսարը) տվեց Արիոբարզանեսին՝ Կապպադովկիայի թագավորին, բայց այս դեպքում էլ Դեյոտարոսին բոլորովին չվնասեց, այլ նույնիսկ առավել բարեգործություն կատարեց. քանզի նա նրա երկիրը չէ, որ մասնատեց, այլ երբ նվաճել էր Փառնակեսի կողմից նվաճված ամբողջ Հայաստանը, դրա մի մասը պարգևել էր Արիոբարզանեսին, իսկ մյուս մասը՝ Դեյոտարոսին։ Սրանց նա օգտա-
4 գործեց այս կերպ. իսկ Փառնակեսին, որը փորձում էր արդարանալ, թե չի օժանդակել Պոմպեոսին, ուստի և իր այդ վերաբերմունքի համար ներողամտություն էր հայցում, (Կեսարը) նրա հանդեպ ոչ մի բարյացակամություն չցուցաբերեց, այլ մինչև իսկ հանդիմանեց նրան, իրեն բարեգործություն անողի հանդեպ վատ և անարգ գտնվելու համար։

ԳԻՐՔ ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

9, 2 ...եգիպտոսը ապստամբեց, իսկ Փառնակեսը, երբ լսեց, որ Պոմպեոսը և Կեսարը թշնամացել են իրար, իս-

կույն ձգտեց վերստին ձեռք բերել իր հայրենի տիրույթները. քանզի նա հույս ուներ, որ նրանք որոշ ժամանակ կզբաղվեն իրենց թշնամանքով և հռոմեական ուժերը կօգտագործեն իրար դեմ: Ուստի նա առաջ շարժվեց իր ծրագրերը իրականացնելու համար, մասամբ այն պատճառով, որ նա արդեն մեկ անգամ սկսել էր, մասամբ էլ այն պատճառով, որ իմացել էր, թե Կեսարը հեռու է գտնվում. այսպիսով նա շատ վայրեր արդեն գրավեց:

* * *

45, 1 Եվ Կլեոպատրան Կեսարին դեռ շատ կպահեր Եգիպտոսում և կամ ինքը իսկույն նրա հետ կմեկներ Հռոմ, եթե Փառնակեսը Կեսարին, սրա կամքին հույժ հակառակ, դուրս չբերեր (Եգիպտոսից) և չխանգարեր նրան Իտալիա շտապելուց: Սա Միհրդատի որդին էր և տիրում էր, ինչպես ասվել է, Կիմմերյան Բոսպորին. նա ցանկանալով վերանվաճել իր հայրենի թագավորությունը, ապստամբեց ճիշտ Կեսարի և Պոմպեոսի հակամարտության ժամանակ. և քանի որ հռոմայեցիները այնժամ խանգարում էին մեկը մյուսին, և այնուհետև զբաղված էին Եգիպտոսում, ապա նա առանց դժվարության տիրացավ Կոլխիսին և Դեյոտարոսի բացակայության պայմաններում իրեն ենթարկեց ամբողջ Հայաստանը[154], Կապպադովկիայի (մի մասը) և Պոնտոսի մի քանի քաղաքներ, որոնք հատկացվել էին Բյութանիայի նա-
46, 1 հանգին: Մինչ նա այս գործերն էր կատարում, ինքը Կեսարը չշարժվեց, քանի որ Եգիպտոսը դեռևս չէր խաղաղվել, և ինքը ինչ-որ հույս ուներ ուրիշների միջոցով հաղթահարել նրան. բայց նա ուղարկեց Գնայոս Դոմիտիոս Կալվինոսին,
2 նրան հատկացնելով Ասիա և...[155] լեգեոնները: Եվ նա իր հետ վերցնելով Դեյոտարոսին և Արիոբարզանեսին, իսկույն արշավեց Փառնակեսի դեմ. սա Նիկոպոլիսում էր, որն արդեն մինչ այդ գրավել էր. և արհամարհելով Փառնակեսին, քանի որ վերջինս վախենալով իր ժամանումից, պատրաստ էր դեսպանության միջոցով զինադադար կնքելու,
3 հաշտություն չկնքեց և կռվի բռնվելով, պարտվեց: Դրա հետևանքով վերադարձավ Ասիա[156], քանի որ նա չէր կարող կռվել իր հակառակորդի հետ, ու ձմեռն էլ վրա էր հասնում: Փառնակեսը մեծապես զոռոզացավ և Պոնտոսի մնա-

ցած մասերը ևս նվաճելուց հետո, գրավեց նաև Ամիսոսը[157], Թեպետև (այս քաղաքը) երկար ժամանակ դիմադրեց իրեն, և կողոպուտի ենթարկելով այն, տպանեց բոլոր երիտասարդներին. այնուհետև շտապեց Բյութանիա և Ասիա, փայփա-
4 յելով նույն հույսերը, ինչ իր հայրը[158]։ Այդ ժամանակ նա տեղեկանալով, որ Ասանդրոսը, որին կարգել էր Բոսպորի[159] կառավարիչ, դավաճանել է, այլևս առաջ չգնաց։ Քանզի Ասանդրոսը, երբ նրան հաղորդեցին, թե Փառնակեսը արագորեն շարժվում է իրենից հեռու, և նրան թվում էր, որ Թեպետև Փառնակեսը ներկայումս առավելագույն բարօրության մեջ է, այդուհանդերձ նա հետագայում հաջողության մեջ չի մնալու, նրա դեմ ապստամբեց, որպեսզի հռոմայեցիներին սիրաշահելով, նրանց միջոցով ստանա Բոսպորոսի թագավորությունը։

47, 1 Այս ամենը լսելով է, որ Փառնակեսը արշավեց նրա դեմ, բայց իզուր. քանզի տեղեկանալով, որ Կեսարը ճանապարհին է և շտապում է Հայաստան, ետ դարձավ ու հանդիպեց նրան այնտեղ, Զելայի մոտակայքում[160]։ Որովհետև, քանի որ Պտղոմեոսը[161] մահացել էր և Դոմիտիոսը պարտվել, Կեսարը մտածեց, որ Եգիպտոսում իր մնալը ո՛չ արժանավայել է, ո՛չ իսկ ձեռնտու, ուստի մեկնեց այնտեղից
2 և արագ ընթացքով հասավ Հայաստան։ Եվ այսպես, բարբարոսը[162] ահաբեկվելով և ավելի վախենալով Կեսարի արագ թափից, քան թե նրա զորքերից, բանագնացներ ուղարկեց նրա մոտ նախքան նա կմոտենար, բազում առաջարկներ անելով, որպեսզի հաշտության այս կամ այն պայ-
3 մանով կարողանար ներկա վտանգից խուսափել։ Իմիջիայլոց, նա առավելապես փորձում էր արդարանալ նրանով, որ չի աջակցել Պոմպեոսին, և հույս ուներ, որ կհամոզի Կեսարին իր հետ հաշտություն կնքելու, քանի որ վերջինս անհամբեր շտապում էր Իտալիա և Աֆրիկա, իսկ նրա հեռանալուց հետո կկարողանա նորից հեշտությամբ պատերազմել։
4 Կեսարը կասկածելով այդ, առաջին և երկրորդ դեսպանություններին սիրալիր ընդունեց, որպեսզի նրան խաղաղության հույս (ներշնչի) և դրանով իսկ առավել անսպասելի հարձակվի նրա վրա։ Իսկ երբ երրորդ դեսպանությունը ժամանեց, նա այլ մեղադրանքների հետ միասին նրան հանդիմանեց նաև այն բանում, որ լքել է Պոմպեոսին՝ իր բարե-

5 կամին։ Եվ Կեսարը չհապաղեց, այլ նույն օրն իսկ անմիջապես երբ դեռ նոր էր ճանապարհից եկել, ճակատամարտ տվեց. և որոշ ժամանակ (թշնամու) հեծելազորից ու մանգաղակիր (ռազմակառքերից) երերաց, բայց հետո իր հոպլիտներով հաղթանակ տարավ։ Փառնակեսին, որը փախավ դեպի ծով և հետո փորձեց հասնել Բոսպորոս, Ասանդրոսը
48, 1 ձերբակալեց և սպանեց։ Կեսարը այդ հաղթանակի վրա, թեպետև այդ այնքան էլ շատ փայլուն չէր, մեծապես պարծեցավ, ինչքան ոչ մեկ այլ դեպքում, քանի որ նույն օրն ու նույն ժամին եկավ թշնամու վրա և՛ տեսավ նրան, և՛ հաղ-
2 թեց[163]։ Ամբողջ ռազմաավարը, թեպետև մեծաքանակ էր, պարզևեց զինվորներին և հաղթանակի հակակշիռ կոթող կանգնեցրեց այն տեղին մոտիկ, ուր Միհրդատը կանգնեցրել էր Տրիարիոսին (հաղթելու) առթիվ[164]. քանզի նա չհամարձակվեց կործանել բարբարոսի (կանգնեցրած կոթողը), որովհետև այն ձոնված էր ռազմի աստվածներին, բայց առավելապես այն պատճառով, որ նրա մոտ իր բարձրացրած (կոթողով) տվերեց նախկինը և մի տեսակ կործանեց
3 այն։ Այս բանից հետո նա գրավեց այն ամբողջ երկիրը, որ հռոմայեցիներից և նրանց դաշնակիցներից վերցրել էր Փառնակեսը և տվեց նրանց, ովքեր կորցրել էին այն, բացի Հայաստանի մի մասից, որը պարգևեց Արիոբարզա-
4 նեսին։ Ամխոսցիներին ազատություն շնորհեց և Միհրդատ Պներգամացուն[165] չորրորդապետություն[166] տվեց, և թագավորի տիտղոս շնորհեց, և թույլ տվեց նրան պատերազմել Ասանդրոսի դեմ, որպեսզի նրան հաղթելով, ստանա Բոսպորոսը ևս, քանի որ (Ասանդրոսը) դավաճանել էր իր բարեկամին։

ԳԻՐՔ ՔԱՌԱՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ

45, 3 Եվ Կեսարը այնքան մեծ մարդասիրություն դրսևորեց, որ գովաբանեց Պոմպեոսին հարած մարդկանց ու թույլատրեց նրանց պահել այն ամենը, ինչ (Պոմպեոսը) պարգևել էր իրենց, իսկ Փառնակեսին և Օրոդեսին ատեց, քանզի չօգնեցին (Պոմպեոսին), նրա բարեկամը լինելով հանդերձ....

* * *

46, 1 Թե ինչպե՞ս այս բոլորից հետո հպատակեցրեց Եգիպտոսը և այնտեղից ինչքա՞ն հարստություն բերեց Հռոմ, ավե-

լորդ կլինի ասել։ Եվ երբ արշավեց Փառնակեսի դեմ, որն արդեն Պոնտոսի և Հայաստանի ոչ քիչ մասերին էր տիրում, և նույն օրն իսկ, երբ (Փառնակեսին) հաղորդեցին, թե նա մոտենում էր, (Կեսարը իրոք) հայտնվեց նրա առաջ և մարտի բռնվեց ու հաղթեց[167]։

ԳԻՐՔ ՔԱՌԱՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ

24, 1 Նույն այս տարիներին, Փիլիպպեում տեղի ունեցած ճակատամարտից հետո, Մարկոս Անտոնիոսը[168] եկավ Ասիայի մայր ցամաքը և երկրներից մի մասը ինքը շրջագայելով, մյուսները (իր մարզկանց) ուղարկելով, քաղաքների վրա հարկ էր դնում և վաճառում էր իշխանությունները։
2 Այդ ժամանակ էլ Կիլիկիայում տեսնելով Կլեոպատրային[169], սիրահարվեց նրան և այնուհետև երբեք չհոգաց իր արժանապատվության մասին, այլ ստրկացավ եգիպտուհուն և իր ժամանակը նվիրում էր նրա կրքին։ Այս պատճառով շատ ուրիշ անտեղի բաներ ևս կատարեց և նրա եղբայրներին Փիսոսի Արտեմիսյան տաճարից[170] պոկել-բերելով սպանեց։
3 Եվ վերջապես Պլանկոսին Ասիա պրովինցիայում, իսկ Սաքսային Սիրիայում թողնելով, մեկնեց Եգիպտոս։ Եվ դրանից էլ իսկապես ծագեցին բազում խոովահույզ դեպքեր. այսպես, կղզիաբնակ արտոսցինները ոչ մի ուշադրություն չդարձրին նրա կողմից իրենց մոտ դրամի համար ուղարկված (պաշտոնյաներին), և նույնիսկ սպանեցին նրանցից ոմանց, իսկ պարթևները, որոնք նախկինում էլ հանգիստ չէին, այժմ առավել ևս սկսեցին հարձակվել հռոմայեցիների
4 վրա։ Պարթևներին առաջնորդում էին Լաբիենոսը և Պակորոսը. վերջինս Օրոդես թագավորի, իսկ առաջինը՝ Տիտոս Լաբիենոսի որդին էր։ Սա պարթևների մոտ եկավ հետևյալ
5 կերպ և Պակորոսի հետ այսպիսի գործեր կատարեց։ Նա Կասսիոսի և Բրուտոսի[171] զինակիցն էր և ճակատամարտից[172] առաջ ուղարկվելով Օրոդեսի մոտ որևէ օգնություն ստանալու, սրա կողմից երկար ժամանակ զբաղեցվեց, և քանի որ (Օրոդեսը) սպասողական դիրք էր բռնում և դանդաղում էր նրանց հետ զինակցել, սա վախեցավ մերժվե-
6 լուց։ Եվ այնուհետև, երբ պարտության[173] լուրը հասավ ու թվում էր, թե հաղթողները չեն խնայելու իրենց դեմ կռվի ելածներից որևէ մեկին, նա մնաց բարբարոսների մոտ,

գերագասելով ապրել նրանց հետ, քան թե իր տանը կործանվել։ Ուրեմն այս Լաբիենոսը լսելով Անտոնիոսի բարոյալքումը, նրա կիրքը և նրա մնկնումը Եգիպտոս, համոզեց պարթևին հարձակվել Հռոմայեցիների վրա։ Քանզի նա
7 հայտնեց, որ նրանց զորքերը մասամբ քայքայվել են, մասամբ վատացել, իսկ մնացածներն էլ խռովության մեջ են և դեմ են նորից պատերազմելու։ Ուստի և խորհուրդ տվեց նրան թե՛ Սիրիան և թե՛ նրան սահմանակից երկրները հպատակեցնել, քանի դեռ Կեսարը[174] Իտալիայում զբաղված էր Սեքստոսի հետ, իսկ Անտոնիոսը սիրահարված էր Եգիպ-
8 տոսում։ Եվ նա խոստանում էր պատերազմում հրամանատար դառնալ և հավաստիացնում (Օրոդեսին), որ այդպիսով ինքը ապստամբության կմղի ժողովուրդներին[175], քանի որ սրանք թշնամացած էին Հռոմայեցիներին, վերջիններիս կողմից մշտապես վատ վերաբերմունքի հանդիպելու պատճառով։

25, 1 Այսպիսի բաներ ասելով, Լաբիենոսը համոզեց Օրոդեսին պատերազմելու. ուստի և նրան մեծ ուժեր տրամադրվեցին, թագավորի որդու՝ Պակորոսի հետ։ Սրանց հետ նա ներխուժեց Փյունիկիա և շարժվելով դեպի Ապամեա[176] (քաղաքը), նա ետ մղվեց (քաղաքի) պարիսպներից, բայց երկրում գտնվող կայազորայինները կամավոր կերպով միացան
2 իրեն։ Քանզի սրանք Կասսիոսի և Բրուտոսի հետ արշաված զինվորներից էին և Անտոնիոսը նրանց միացրել էր իր զորքերին և այդ ժամանակ նրանց հանձնարարել էր Սիրիայի պահպանումը, քանի որ նրանք գիտեին երկիրը։ Ուստի սրանց նույնպես, իբրև լավ ծանոթների, Լաբիենոսը հեշտությամբ միացրեց իրեն, բացի Սաքսայից, որն այդ ժամանակ նրանց առաջնորդն էր—քանզի միայն սա, լինելով զորապետի եղբայրը, միաժամանակ նաև քվեստոր, չանցավ
3 նրա կողմը—. արքունի[177] Սաքսային նա ճակատամարտում հաղթեց իր հեծյալների գերազանց թվի և քաջության պատճառով. և երբ (Սաքսան) դիշեր ժամանակ խրամատից դուրս փախավ, ինքը հալածեց նրան. քանզի Սաքսան վախենալով, որ իր հետ եղողները նույնպես կհետևեն Լաբիենոսին, որը փորձում էր նրանց գրավել իր կողմը ինչ-որ թերթիկներով[178], որ նա (աղեղներով) նետում էր ռազմական ճամ-
4 բարից ներս, փախավ։ Ուստի և Լաբիենոսը վրա հասնելով,

նրանցից շատերին կործանեց, և երբ Սաքսան փախավ Անտիոք, նա գրավեց Ապամեան, որը այլևս չդիմադրեց, քանի որ (բնակիչները) կարծում էին, թե (Սաքսան) մեռել էր. այնուհետև գրավեց նաև Անտիոքը, որը լքվել էր Սաքսայի կողմից և, ի վերջո, սրան ևս, որը փախել էր Կիլիկիա, հա-
26, 1 լածեց ու բռնելով սպանեց: Սաքսայի մեռնելուց հետո Պակորոսը տիրացավ Սիրիային և ամբողջ երկիրը ավերեց, բացի Տյուրոսից: Քանզի թե՛ փրկված հռոմայեցիները և թե՛ սրանց համակրող տեղաբնակները արդեն գրավել էին այդ (քաղաքը) և հնարավոր չեղավ ոչ համոզել նրանց, ոչ իսկ բռնանալ նրանց վրա, որովհետև (Պակորոսը) նավատորմ
2 չուներ: Այսպիսով, նրանք աննվաճ մնացին. իսկ Պակորոսը մնացած երկիրը գրավելով, ներխուժեց Պաղեստին և Հյուրկանոսին, որն այդ ժամանակ հռոմայեցիների կարգադրությամբ կառավարում էր այդ երկիրը, հեռացրեց և նրա փոխարեն արքունի կարգեց նրա եղբորը՝ Արիստոբուլոսին, նրանց միջև եղած թշնամության պատճառով[179]:
41, 1 Այնուհետև Վենտիդիոսը վերստացավ Կիլիկիան և ինքը հաստատվեց իբրև այդ երկրի կառավարիչ, իսկ Պուպե-
2 դիոս Սիլոնին հեծյալներով ուղարկեց դեպի Ամանոս: Այս լեռը գտնվում է Կիլիկիայի և Սիրիայի սահմանում և այնքան նեղ մի անցում ունի, որ մի ժամանակ դարպասներով պարիսպներ են կառուցել այնտեղ և վայրը դրանից ստա-
3 ցել է իր անունը[180]: Սակայն Սիլոնը ոչ միայն չկարողացավ գրավել այն, այլև կործանվելու վտանգին ենթարկվեց Պակորոսի տեղակալ Փրանապատեսի կողմից, որը պահպանում էր անցումը: Նվ այդպես էլ կկատարվեր, եթե Վենտիդիոսը բախտի բերմամբ նրա կռվելու ժամանակ վրա չհաս-
4 ներ ու չօժանդակեր նրան: Քանզի (Վենտիդիոսը) բարբարոսների վրա նետվեց, երբ նրանք այդ չէին սպասում և առանց այդ էլ փոքրաթիվ էին, և սպանեց Փրանապատեսին ու շատ ուրիշների. և դրանով իսկ Սիրիան, որը լքել էին պարթևները, վերագրավեց առանց մարտի, բացի Արադոս (քաղաքից), և դրանից հետո առանց դժվարության գրավեց Պաղեստինը, ահաբեկելով այնտեղ թագավորող Անտիգո-
5 նոսին[181]: Այս ամենը կատարելուց հետո, նա մյուս բոլոր մնացածներից յուրաքանչյուրից շատ դրամ գանձեց. շատ դրամ գանձեց նաև Անտիգոնոսից, Անտիոքոսից[182] և Մալքոս

Նաբատեացուց այն պատճառով, որ նրանք օգնել էին Պա-
կորոսին։

ԳԻՐՔ ՔԱՌԱՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ

19, 1 *Պուպլիոս Վենտիդիոսը երբ տեղեկացավ, թե Պակորոսը*
զորք է հավաքում և պատրաստվում է արշավել Սիրիա, ա-
հաբեկվեց. և քանի որ քաղաքները դեռևս չէին հպատակվել,
և լեգեոնները դեռևս ցրված էին իրենց ձմեռային կայան-
ներում, այսպիսի մի հնար մտածեց Թշնամուն զբաղեցնելու
2 *և իր զորքերի ուշացումը կանխելու համար։ Իմանալով հան-*
դերձ, որ ոմն իշխանավոր[183] *Քաննայոս, որին ինքը ևս ծա-*
նոթ էր, առավել հակված էր պարթևների կողմը, նա ամեն
տեսակ պատիվ մատուցեց նրան, ասես թե հավատարմա-
գույն անձ էր իր համար, և նրան խորհրդատու դարձրեց իր
այն գործերին, որոնցից ինքը ոչ մեկ վնաս չէր կրելու, իսկ
Քաննայոսին պետք է հավատ ներշնչեր, թե իբր նրան հա-
3 *ղորդակից է դարձնելու իր ամենագաղտնի գործերին։ Երբ*
նա արդեն այդտեղ հասավ, ձևացրեց, թե իբր վախենում է,
որ բարբարոսները Թողնելով Եփրատի սովորական գետանցը,
որի մոտ Զևգմա քաղաքն է գտնվում, կօգտագործեն մեկ այլ
ճանապարհ գետի ստորին մասում. որովհետև, նրա ասելով,
այս վայրը դաշտային էր և Թշնամիներին հարմար, իսկ ա-
ռաջինը բլրաշատ էր և առավել պիտանի իր զորքերի հա-
4 *մար։ Այս բանում նա կարողացավ համոզել Քաննայոսին և*
նրա միջոցով մոլորեցրեց Պակորոսին. քանզի (վերջինս) ըն-
թացավ դաշտավայրով, որի մասին Վենտիդիոսը ձևացնում
էր, թե իբր Թշնամին չի նախընտրելու, այն առավել երկար
լինելու պատճառով. դրանով իսկ Պակորոսը ժամանակ տը-
վեց (Վենտիդիոսի) զորքերին հավաքվելու։

20, 1 *Եվ այս կերպ նա, հանդիպելով Պակորոսին Սիրիայի*
կյուրեստիկայում, հաղթեց։ Քանզի նա ոչ խանգարեց նրանց
դեռ անցնելիս, ոչ իսկ գետն անցնելուց հետո իսկույն հար-
ձակվեց նրանց վրա, որով և անհոգություն ու Թուլություն
պատճառեցին հռոմայեցիներին, ու դրանից հետո (պարթև-
ներն) ընթացան դեպի (հռոմայեցիների) ռազմական ճամ-
բարը, որը Թեպետև բարձրադիր էր, այն առաջին իսկ հարձա-
2 *կումով գրավելու հույսով։ Բայց երբ արտելք կատարվեց,*
(հարձակվողները), որոնք հեծյալ էին, առանց դժվարության
ետ մղվեցին դեպի ստորոտ և այնտեղ, Թեև արիաբար պաշտ-

պանվեցին—քանի որ նրանց մեծ մասը զրահապատ էր—
բայց շփոթվելով անակնկալ (հարձակումից) և իրարանցու-
մից, հաղթվեցին հոպլիտներից և, հատկապես, պարսատի-
կավորներից. քանզի սրանք հեռվից կատարած իրենց նե-
3 տումներով մեծապես վնասեցին նրանց: Եվ այս կռվում էլ
Պակորոսը երբ ընկավ, նրանց աղետն առավել մեծ եղավ:
Քանզի երբ նրանք քիչ անց իմացան իրենց արքոնտի
կործանումը, ոմանք ոգևորությամբ սկսեցին կռվել նրա
մարմնի շուրջը. բայց երբ սրանք կոտորվեցին, մնացած բո-
լորը նահանջեցին, և նրանց մի մասը ցանկացավ կամուր-
ջի վրայով փախչել դեպի տուն, բայց չկարողացավ. այլ
նրանք սպանվեցին նախքան (կամուրջին) կհասնեին. իսկ
մյուսները ապաստանեցին Կոմմագենե, Անտիոքոսի մոտ:
4 Վենտիդիոսը Սիրիայի մնացած մասերը ևս, որոնք տա-
տանվում էին, (սպասելով) պատերազմի վախճանին, հեշ-
տությամբ հպատակեցրեց, ուղարկելով Պակորոսի գլուխը
քաղաքներում ցուցադրելու համար. քանզի Պակորոսի հան-
դեպ արտակարգ սեր էին տածում, ինչպես մի ժամանակ ի-
րենց վրա իշխած լավագույն թագավորների հանդեպ, նրա
5 արդարամտության և համեստության համար: Իսկ Վենտի-
դիոսը արշավեց Անտիոքոսի վրա, պատճառ բռնելով այն,
որ վերջինս իրեն չէր հանձնել փախստականներին, բայց իրա-
կանում՝ նրա ունեցած մեծ հարստության համար:

21, 1 Երբ նա արդեն այստեղ էր հասել, Անտոնիոսը հան-
կարծակի քայլեց նրա վրա, ոչ միայն այն պատճառով, որ
(այդ ամենը) իրեն հաճելի չէր, այլև (այն պատճառով), որ
նախանձեց նրան, քանզի նա ինքնուրույնաբար քաջագոր-
ծություն կատարած մարդու համբավ ձեռք բերեց. ուստի և
զրկեց նրան իշխանությունից ու այլևս ոչ այդ ժամանակ, ոչ
իսկ հետագայում երբեք չօգտվեց նրա ծառայություններից,
թեպետև այս երկու գործերի համար[184] էլ նա իր համար ստա-
2 ցավ զոհաբերությունների և հաղթահանդեսի իրավունք: Եվ
իսկապես, հռոմայեցիները (մայրաքաղաքում) մի կողմից
այդ պատիվները Անտոնիոսին շնորհելու օգտին ձայն տվե-
ցին նրա երևելիության պատճառով և ըստ օրինի, քան-
զի նրան էր պատկանում զորավարությունը, մյուս կողմից
էլ ձայն տվեցին նաև Վենտիդիոսի օգտին, քանի որ նրանք
կարծում էին, թե Կրասոսի ժամանակ հռոմայեցիների կրած

աղետը Պակորոսի սպանությամբ լրիվ կերպով փոխհատուցված էր պարթևներին, հատկապես այն նկատառումով, որ այդ երկու իրադարձություններն էլ կատարվել էին յուրաքանչյուր տարվա միևնույն օրը: Իրականում այնպես պատահեց, որ Վենտիդիոսն ինքը միայն հաղթահանդես տոնեց, ինչպես որ հաղթանակը միայն ինքն էր նվաճել—քանզի Անտոնիոսը մինչ այդ կորել էր—և դրանով իսկ, ինչպես նաև բախտի քմահաճույքով, նա առավել մեծ փառքի արժանացավ. չէ՞ որ մի ժամանակ Պոմպեոս Ստրաբոնի[185] հաղթահանդեսին նա քայլել է մյուս գերվածների շարքերում, մինչդեռ այժմ հռոմայեցիներից առաջինը ինքն էր պարթևների դեմ հաղթահանդես տոնում:

22, 1 Այս բոլորը, սակայն, տեղի ունեցան որոշ ժամանակ հետո, իսկ այնժամ Անտոնիոսը հարձակվեց Անտիոքոսի վրա և փակելով նրան Սամոսատում[186], պաշարեց: Եվ քանի որ ոչ մի հաջողություն չունեցավ ու ժամանակն էլ իզուր կորչում էր, իսկ ինքն էլ կասկածեց, որ զինվորներն իրենից օտարանում են Վենտիդիոսին պատվազրկած լինելու պատճառով, գաղտնի բանակցություններ սկսեց Անտիոքոսի հետ և շինծու հաշտություն հաստատեց, որպեսզի արժանավայել ձևով հեռանա: Եվ, իհարկե, նա ոչ պատանդներ վերցրեց, բացի երկու հոգուց, այն էլ ոչ երևելիներից, ոչ իսկ իր պահանջած փողերն ստացավ. իսկ Անտիոքոսին նա շնորհեց ոմն Ալեքսանդրի մահը, որը նախապես նրա մո-
3 տից փախել էր հռոմայեցիների մոտ: Այս բաները անելուց հետո (Անտոնիոսը) մեկնեց Իտալիա, իսկ Գայոս Սոսսիոսը նրա ձեռքից ստացավ Սիրիայի և Կիլիկիայի իշխանությունը և Արադոս (քաղաքը), որը մինչ այդ պաշարվել էր և սովից ու համաճարակից մեծապես տուժել, հպատակեցրեց և Անտիգոնոսին[187], որն իր երկրում եղած հռոմեական կայազորներին ոչնչացրել էր, պատերազմում հաղթեց, և երբ սա
4 փախավ Երուսաղեմ, շրջապատեց նրան ու կործանեց: Հիրավի հրեաները մեծ վնաս էին պատճառել հռոմայեցիներին—քանզի նրանց ցեղը զայրանալիս շատ էր դաժան—բայց իրենք շատ ավելի տառապեցին: Որովհետև սկզբում գերի վերցվեցին նրանք, ովքեր կռվում էին, պաշտպանելով աստծու տաճարը, հետո նաև մյուսները գերվեցին, այսպես կոչված, Սաբաթնի օրը[188]: Եվ այնքան մեծ է նրանց նվիրվա-

5 ծուխյունը կրոնին, որ այն առաջիններըը, որոնք գերվել էին տաճարի հետ միասին, կենդանի թողնվեցին Սոսսիոսի կողմից, քանի որ երբ Սաաուռնի օրը վրա հասավ, նրանք մըտնելով տաճար, այնտեղ էլ մնացյալների հետ կատարեցին
6 ընդունված բոլոր ծեսերը։ Ուստի և սրանց Անտոնիոսը հանձնեց ոմն Հերովդեսի կառավարմանը, իսկ Անտիգոնոսին, խաչին կապելով, մտրակահարեց—(պատիժ), որին ոչ մի այլ թագավոր չէր ենթարկվել հռոմայեցիների կողմից—և դրանից հետո սպանեց նրան։

23, 1 Այս դեպքերը տեղի ունեցան Կլավդիոսի և Նորբանոսի կոնսուլության ժամանակ. իսկ հաջորդ տարին հռոմայեցիները Սիրիայում հիշատակության արժանի ոչինչ չկատարեցին։ Քանզի Անտոնիոսը ամբողջ տարին վատնեց
2 Իտալիա գալով և նորից (պրովինցիա) վերադառնալով. իսկ Սոսսիոսը (ենթադրելով), որ իր արածը ավելի շուտ կլինի Անտոնիոսի օգտին, քան թե իր, և դրանով իսկ վախենալով նրա նախանձից ու զայրույթից, իր ժամանակն անցկացնում էր միջոցներ մտածելով ոչ թե ինչ-որ հաջողություններ ունենալ և դրանով իսկ թշնամացնել նրան, այլ հանգիստ մըննալով հաճոյանալ նրան։ Պարթևների տերությունը, հիրավի, ուժեղ ներքին ցնցումներ ապրեց այսպիսի մի պատճա-
3 ռով։ Քանի որ նրանց թագավոր Օրոդեսը ծերության և Պակորոսի սգի պատճառով հոգնել էր, դեռևս իր կենդանության օրոք իշխանությունը հանձնեց իր մնացած որդիներից ավագագույնին՝ Փրաատեսին[189], որը և իշխանությունը վերցնելուց հե-
4 տո դարձավ մարդկանցից ամենաանաստվածը. քանզի նա ննջգաբար սպանեց Անտիոքոսի[190] դստրից ծնված իր եղբայրներին, որովհետև իրենց արիության և մայրական գըծով իրենց ծագումով գերազանցում էին իրեն. ու երբ սա[191] դժգոհեց այդ ամենից, սրան նույնպես սպանեց և այնուհետև ոչնչացրեց նաև (երկրի) ազնվագույն մարդկանց և այլ դա-
5 ժան գործեր կատարեց. այնպես, որ առաջնագույն մարդկանցից շատերը լքելով նրան, հեռացան տարբեր վայրեր, ոմանք էլ, որոնց թվում նաև Մոնեսեսը, գնացին Անտոնիոսի մոտ։

24, 1 Այս դեպքը կատարվեց Ագրիպպասի և Գալլոսի կոնսուլության ժամանակ։ Եվ ահա ձմեռվան մնացած կեսին, Գելլիոսի և Ներվայի իշխանության ժամանակ, Պուպլիոս

817—12

Կանիդիոս Կրասսոսը[192], արշավելով իբերների դեմ, այդ կռվում հաղթեց նրանց թագավոր Փառնաբազոսին, ստիպեց նրան դաշնակից դառնալ[193] և նրա հետ միասին ներխուժելով Հարևան Ալբանիա[194] և հաղթելով սրանց ևս ու սրանց թագավոր Զոբերոսին, սրանց նույնպես իր կողմը գրավեց։
2 Անտոնիոսն այս ամենից մեծամտացել էր և, բացի այդ, Մոնեսեսի հետ մեծ հույսեր էր կապում—քանզի սա իրեն խոստացել էր առաջնորդել իր զորքերը և Պարթիայի մեծ մասն առանց դժվարության հանձնել իր ձեռքը—ուստի և պատերազմ ձեռնարկեց սրանց դեմ և Մոնեսեսին, այլ պարգևների հետ, հռոմեական երեք քաղաք հանձնեց իշխելու համար, մինչև վերջացներ պատերազմը (պարթևների դեմ) և խոստացավ նույնիսկ պարթևների թագավորութ-
3 յու։ Մինչ նրանք այսպես էին գործում և պարթևներն էլ Մոնեսեսի փախուստը հիվանդագին ընդունեցին, Փրաատեսը տագնապահար եղավ և բանակցություններ սկսեց նրա հետ, հնարավոր ամեն ինչ խոստանալով, և համոզեց նրան վե-
4 րադառնալ։ Այս մասին իմանալով Անտոնիոսը, բնական է, զայրացավ, բայց և այնպես չսպանեց Մոնեսեսին, թեպետև սա դեռ իր իշխանության տակ էր. քանզի այդպիսի բան անելուց հետո նա չէր կարող հույս ունենալ, թե այսուհետև որևէ մեկ ուրիշ բարբարոսի կգրավի իր կողմը, և ինչ-որ
5 խաբեություն պատրաստեց նրանց դեմ։ Նա ազատ արձակեց Մոնեսեսին, ասես պետք է իր կողմը գրավեր պարթևներին և նույնիսկ նրա հետ միասին դեսպաններ ուղարկեց Փրաատեսի մոտ։ Եվ նա խոսքով խաղաղություն էր առաջարկում, Կրասսոսի աղետի ընթացքում գերված զրոշներն ու գերիներին ետ վերցնելու պայմանով, որպեսզի թագավորին անպատրաստ թողնի, համաձայնության հույս ներշնչելով նրան, մինչդեռ գործնականում նա ամեն կերպ պատրաստվում էր պատերազմի։

25, 1 Եվ նա առաջացավ մինչև Եփրատ, կարծելով, թե այն զուրկ էր պահակազորներից։ Իսկ երբ նա համոզվեց, թե գետի ամբողջ շրջանը խստորեն պահպանվում է, ետ դարձավ. բայց նա որոշեց արշավանք ձեռնարկել մեդացիների թագավոր Արտավազդի դեմ, որը թշնամի էր Մեծ Հայքի[195] իրեն անվանակից թագավորին. ուստի և այդ վիճակում նա իսկույն շարժվեց դեպի Հայաստան և այնտեղ իմանալով, որ

2 Մեդացին շատ էր հեռացել իր հայրենի երկրից, դաշնակից պարթև (թագավորին) օժանդակելու համար, իր գումակը և զորքի մի մասը թողնց Օպպիոս Ստատիանոսի հետ, պատվիրելով նրանց հետևել իրեն, մինչդեռ ինքը, վերցնելով հեծելազորը և հետևակի հզորագույն մասը, շտապեց առաջ, համոզված, որ առանց դիմադրության կգրավի թշնամու
3 (ամրությունները). և նա նետվելով նրանց արքայանիստ Փրաաստա[193] (քաղաքի) վրա, սկսեց հողաթմբեր պատրաստել և հարձակումներ գործել։ Այդ բլուրի մասին տեղեկանալով, Պարթևն ու Մեդացին թույլ տվեցին, որ նա իզուր շարշարվի—քանզի պարիսպները հզոր էին և նրանց կողմից
4 լավ էին պաշտպանվում—բայց և այնպես անսպասելի հարձակվեցին Ստատիանոսի վրա, երբ սա ճանապարհին էր ու հոգնած, և բլուրին սպանեցին, բացի Պոնտոսի թագավոր Պոլեմոնից, որն այդ ժամանակ միացել էր (Ստատիանոսի) արշավանքին. միայն սրան կենդանի գերեցին և փրկագին
5 ստանալով ազատ արձակեցին։ Նրանք կարողացան այս անել, քանի որ Արմենը[197] ներկա չեղավ կռվին, բայց և, ինչպես ասում են ոմանք[198], նա կարող էր օգնել հռոմայեցիներին, սակայն ոչ այդ արեց, ոչ էլ եկավ Անտոնիոսի մոտ,
26, 1 այլ մեկնեց տուն. իսկ Անտոնիոսը, թեպետև Ստատիանոսի մոտից ուղարկված առաջին իսկ հաղորդումից հետո իսկույն շտապեց նրան օգնելու, բայց ուշացավ. քանզի սպանվածներից բացի ոչինչ չգտավ։ Սկզբում նա այս բանից վախեցավ, բայց քանի որ բարբարոսներից ոչ մեկին չպատահեց, ինքը ենթադրեց, որ նրանք մի բանից ահաբեկված հեռացել են ինչ-որ տեղ. դրանով իսկ նա վերագտավ իր
2 կորովը։ Ուստի և երբ ոչ շատ ժամանակ անց նրանց հանդիպեց, նա փախուստի մատնեց նրանց. քանզի նրա պարտատիկավորները թե՛ շատ էին և թե՛ կարողանում էին աղեղնավորներից ավելի հեռու նետել. նրանք բլուրին, նույնիսկ զրահավորվածներին, մեծ վնաս պատճառեցին. այսուհանդերձ նա չկարողացավ նշանակալից թվով (թշնամիներ) սպանել. քանզի բարբարոսները արագ ձիավարում էին։

3 Այսպիսով, նա նորից մոտեցավ Փրաաստային և պաշարեց այն. այսուհանդերձ մեծ վնաս չպատճառեց թշնամիներին—քանզի (պարսպից) ներս եղողները ուժգնորեն նրան ետ էին մղում, իսկ դրսում գտնվողները հեշտությամբ

կովի չէին բռնվում—մինչդեռ յուրայիններից շատերին նա կորցրեց պարեն ճարելու և այն փոխադրելու գործի վրա, շատերին էլ իր իսկ (սահմանած) պատիժներով։ Որովհետև սկզբում, քանի դեռ այնտեղ մոտակայքից նրանք ճարում էին իրենց պարենը, ապա կարողանում էին թե՛ պաշարումը շարունակել և թե՛ ապահովել իրենց պարենավորումը։ Բայց երբ արդեն մոտակայքում ամեն ինչ սպառվել էր, և զինվորները ստիպված էին լինում հեռու գնալ, այնպես էր ստացվում, որ եթե փոքր թվով ուղարկվեին, ոչ միայն ոչինչ չէին կարողանալու բերել, այլև կոչնչանային. իսկ եթե մեծ թվով, ապա կմնային առանց պաշարողների և, դրանով իսկ, բարբարոսների արտելքի դեպքում կկորցնեին շատ մարդկանց
27,1 և (պաշարողական) մեքենաներ։ Այս ամենի պատճառով էլ Անտոնիոսը նրանց բոլորին գարի բաժանեց ցորենի փոխարեն և տասից մեկին պատժեց[199], այսպիսով, թեպետ ինքը կարծում էր, թե պաշարողն է, իրականում սակայն
2 պաշարվողի զրկանքները ինքն էր կրում։ Որովհետև պարիսպներից ներս գտնվողները ճշտորեն օգտվում էին արտելք կատարելու ամեն մի առիթից, մինչդեռ դրսում եղողները խստորեն նեղում էին պաշարողներին, երբ սրանք երկու մասի էին բաժանվում, հանկարծակի հարձակվելով և քիչ անց ետ քաշվելով. իսկ պարենամթերք հայթայթելու համար գյուղերը գնացողներին չէին անհանգստացնում, բայց վերադարձի ճանապարհին անսպասելի հարձակվում
3 էին նրանց վրա։ Երբ այս պայմաններում իսկ (Անտոնիոսը) շարունակում էր քաղաքի պաշարումը, Փրաատեսը, վախենալով, որ ժամանակի ընթացքում (Պշնամին) կարող էր (քաղաքին) ինչ-որ վնաս հասցնել՝ կամ հենց ինքը որևէ ձևով, կամ էլ ինչ-որ դաշնակից գտնելով, ուստի Անտոնիոսի մոտ թաքուն կերպով բանագնացներ ուղարկեց և համոզեց նրան բանակցություններ սկսել, խոստանալով հեշտու-
4 թյամբ հաշտության հասնել։ Եվ այս առթիվ Անտոնիոսի կողմից իր մոտ ուղարկվածներին նա ընդունեց ոսկե գահավորակին նստած, կամթելով աղեղի լարը, նախապես շատ հարձակվեց նրանց վրա, բայց վերջում խոստացավ խաղաղություն շնորհել, եթե անհապաղ տեղափոխեն իրենց ճամբա-
5 րը։ Այս բանը լսելով Անտոնիոսը վախեցավ նրա զորությունից և միաժամանակ կարծեց, որ եթե մեկ ուրիշ վայր

տեղափոխվի, ապա կարող է փրկվել. ուստի և հեռացավ, առանց քանդելու պաշարման կառույցները, ասես բարեկամ երկրում էր գտնվում:

28, 1 Մինչ նա այսպես էր գործում, սպասելով հաշտության, մեդացիները թե՛ (պաշարողական) մեքենաները այրեցին և թե՛ հողաթմբերը քանդեցին, իսկ պարթևներն էլ նրան ոչ մեկ առաջարկ չարեցին խաղաղության մասին, այլ հար-
2 ձակվելով շատ և ծանր վնասներ հասցրին: Եվ ահա իմանալով, թե խաբված է, այլևս չհամարձակվեց որևէ դեսպանություն ուղարկել, քանի որ արդեն հույս չուներ, թե նրանք ինչ-որ չափավոր պայմաններով հաշտություն կկնքեն, առավել ևս նա չցանկացավ վհատության ներշնչել զինվորներին հաշտության ձախողման պատճառով. և քանի որ մի-
անգամ տեղից շարժվել էր, որոշեց շտապել դեպի Հայաս-
3 տան: Եվ նրանք վերադարձան մեկ այլ ուղիով[200]—քանզի ենթադրում էին, թե իրենց եկած ճանապարհը ամբողջովին փակված է իրենց առաջ[201]— և կրեցին բազում և անսովոր դժվարություններ: Նրանք անծանոթ վայրեր ընկնելով, կորցնում էին իրենց ճանապարհը, և դրա հետ մեկտեղ բարբարոսները նախապես գրավելով իրենց անցավայրերը, դրանք խրամատապատում կամ պատնեշապատում էին և ամենուրեք դժվարացնում ջրի մատակարարումը և ոչնչաց-
4 նում արոտավայրերը: Եվ եթե նրանք նույնիսկ ինչ-որ տեղ բախտի բերմամբ պետք է ընթանային առավել նպաստավոր վայրերով, թշնամին նրանց ետ էր դարձնում, այդ վայրերն արդեն գրավված լինելու մասին կեղծ հաղորդումներով և սպիտում նրանց ընթանալ ուրիշ ճանապարհներով, որտեղ նախապես դարանակալել էին. ուստի և շատերն այս եղա-
29, 1 նակով էին ոչնչանում, շատերն էլ սովահարությունից: Դրա հետևանքով էլ ինչ-որ չափով դասալքություն նկատվեց: Եվ բոլորը կփախչեին, եթե բարբարոսները այդպիսի բան անել համարձակվողներին մյուսների աչքի առաջ նետահարե-
2 լով չսպաներին: Այս եղանակով (բնաջնջվելուց) ազատվածները բախտի բերմամբ այսպիսի մի հնար գտան: Մի անգամ, երբ նրանք դարանն էին ընկել և նետերի խիտ հարվածներ էին ընդունում, անմիջապես իրենց վահանները իրար միացնելով կրիա կազմեցին[202] և իրենց ձախ ծնկները հենեցին
3 գետնին: Բարբարոսներն ահա—քանի որ նման բան երբևիցե

չէին տեսել—կարծելով, որ սրանք ընկել են ստացած վերքերից և հարկավոր է մի վերջնական հարված, դեն շպրտեցին իրենց աղեղները և ցած նետվեցին ձիերից ու մերկացնելով ակինակեները[203], ընդհուպ մոտեցան նրանց (վեջ-
4 նականապես) սպանելու համար։ Այդ պահին էլ հռոմայեցիները ոտքի կանգնեցին և, տրված հրահանգի համաձայն, ձգեցին իրենց փաղանգի շարքերը և, դեմ առ դեմ կանգնելով մոտեցած թշնամուն, նետվեցին յուրաքանչյուրը մեկի վրա և շատ շատերին կոտորեցին, քանի որ անզեններից[204] դեմ իրենք սպառազինված էին, անպատրաստների դեմ՝ պատրաստ կանգնած, աղեղնավորների դեմ՝ հոպլիտներ, բարբարոսների դեմ՝ հռոմայեցիներ. այնպես որ բոլոր (կենդանի) մնացածները անմիջապես հեռացան և այլևս ոչ ոք նրանց չհետապնդեց։

30,1 Իսկ այդ կրիան ահա թե ինչ է և ինչպես է կազմվում։ Բեռնատարները և թեթևազեններն ու հեծելազորը դասավորված են լինում զորաբանակի կենտրոնում. հոպլիտներից նրանք, ովքեր զինված են երկարավուն, սնամեջ և գլանաձև վահաններով, դասավորվում են արտաքին եզրերին, քառանկյունու ձևով ու երեսները դեպի դուրս և զենքերը պար-
2 զած, շրջափակում են մնացածներին. իսկ (հոպլիտներից) մյուսները, որոնք տափակ վահաններ ունեն, համախմբվում են կենտրոնում ու վահանները բարձրացնում թե՛ իրենց և թե՛ մնացած բոլորի գլուխների վրա, այնպես որ վահաններից բացի ուրիշ ոչինչ չի երևում հավասարապես փաղանգի բոլոր մասերում, և նրանք բոլորը, դասավորության խտության հետևանքով, գոնվում են նետերից պաշտ-
3 պանող ծածկի տակ։ Այս ձևով, ահա, դա այնքան ուժեղ է լինում, որ մարդիկ կարող են քայլել դրա վրա և ամեն անդամ որևէ խոր ու նեղ տեղանք հասնելիս նույնիսկ ձիերին ու կառքերը կարող են քշել դրա վրայով։ Այսպիսին է, ահա, դասավորության այն եղանակը, որի պատճառով էլ ստացել է կրիա անվանումը թե՛ իր հզորության և թե՛ իր ամուր
4 ծածկույթի համար։ Այն օգտագործում են երկակի. կամ հարձակում գործելու համար որևէ բերդի մոտենալիս, երբ հաճախ նույնիսկ ոմանց բարձրացնում են պարսպի վրա, կամ էլ երբևիցե աղեղնավորների կողմից պաշարված լինելու դեպքում. բոլորը կռանում են միասին—քանի որ ձիերը

ևս վարժեցվում են ծունկ չոքելու և պառկելու—այնպես որ թշնամին կարծում է, թե ուժասպառ են եղել. և երբ թշնամին մոտենում է ընդհուպ, ապա միանգամից ոտքի են կանգնում և թշնամուն անակնկալի բերում:

31, 1 *Կրիան, ահա, այսպիսի կազմություն ունի: Մինչ Անտոնիոսը, ճիշտ է, այսուհետև թշնամուց ոչ մի վնաս չկրեց, բայց, իրականում, սառնամանիքը նրան մեծ դժվարություն պատճառեց. քանզի արդեն ձմեռ էր և Հայաստանի լեռնային մասերը, որոնց միջով էլ նա հոժարաբար ընթացավ, միշտ սառցապատ են: Եվ (զինվորների) վերքերը, որոնք շատ էին, այստեղ, բնական է, ավելի տառապանք էին պատ-*
2 *ճառում: Ու քանի որ դրանից էլ շատերը կործանվում էին, շատերն էլ դառնում անմարտունակ, նա չէր հանդուրժում նրանցից յուրաքանչյուրի անձնական դիմումը և արգելեց որևէ մեկին իրեն այդպիսի լուրեր հաղորդելը: Ինչ վերաբերում է Արմենին[205], թեպետև (Անտոնիոսը) նրա վրա զայրացած էր, որովհետև նա իրենց լքել էր, ու թեև ցանկանում էր պատժել նրան, այնուամենայնիվ սիրաշահեց նրան և հարգանք մատուցեց, որպեսզի նրանից կենսամթերք և դրամ*
3 *ստանա և, վերջապես, քանի որ զինվորները չէին կարող դիմանալ ավելի երկար ճանապարհի և այն էլ ձմռանը, մյուս կողմից էլ պետք է իզուր տանջվեին—քանզի նա մտադիր էր կարճ ժամանակ անց վերադառնալ Հայաստան—նրան մեծապես շողոքորթեց, միաժամանակ բազում խոստումներ տվեց, որպեսզի (թագավորը) թույլ տա իրենց ձմեռել (իր) երկրում, ասելով, որ գարնանը նա նորից պետք է արշավի*
4 *պարթևների դեմ: Ու նրան դրամ բերվեց նաև Կլեոպատրայից, այնպես որ հոպլիտներին հարյուրական դրաքմա[206], իսկ մյուսներին ևս հասանելիքը տրվեր: Եվ քանի որ ուղարկված (դրամը) նրանց համար չբավականացրեց, ապա մնացածներին վճարեց իր իսկ միջոցներից, ծախսը վերցնելով իր վրա, իսկ շնորհապարտության պատիվը թողնելով Կլեոպատրային. քանզի ինքը բարեկամներից մեծ գումարներ էր վերցրել, իսկ դաշնակիցներից մեծաքանակ արծաթ էր գանձել:*

32, 1 *Եվ նա այս բոլորը անելուց հետո մեկնեց Եգիպտոս. մինչդեռ տանը հռոմայեցիներին ոչ մի իրադարձություն անհայտ չմնաց ոչ թե այն պատճառով, որ նա ճշմարտությունը*

հաղորդել էր նրանց—քանզի իրականում նա (իր) անհաջողությունները թաքցնում էր և դրանց մասին հայտնում ուղիղ հակառակը, պատկերելով այնպես, թե իբր հաջողություն է ունեցել—այլ որովհետև համբավը հաղորդեց ճըշմարտությունը, և Կեսարն ու մյուսները, որոնք նրա հետ էին եղել, մանրամասն հետամտում էին այդ ամենը և տարածում: Ճիշտ է, նրանք դեռևս այդ չէին քննարկում հատարակության առաջ, բայց և այնպես զոհաբերություններ էին կատարում և տոնախմբություններ անում: Եվ քանի որ Կեսարը
3 դեռ այդ ժամանակ էլ պարտություն էր կրել Սեքստոսից, ապա այդ ամենի բացահայտումը ոչ հարմար կլիներ, ոչ էլ օգտավետ: Անտոնիոսը, ուրեմն, այս ամենը այսպես կատարեց. նա իշխանություններ պարգևեց՝ Ամյունտասին, որը թեպետև եղել էր Դեյոտարոսի գրագիրը, տվեց Գալատիան[207], դրան կցելով Լյուկաոնիան և Պամփյուլիայի[208] որոշ մասեր, Արքելաոսին տվեց Կապպադովկիայի իշխանությունը, հեռացնելով Արիարաթեսին: Իսկ այս Արքելաոսը հոր կողմից այն Արքելաոսների սերնդից էր, որոնք կռվել էին հռո-
4 մայեցիների դեմ, իսկ մոր կողմից հետերա Գլափյուրայի որդին էր: Այսուհանդերձ Անտոնիոսը այս արարքի համար—չէ՞ որ նա մեծահոգություն էր ցուցաբերում այլոց ինչքի նկատմամբ—պակաս կշտամբանքի խոսքեր էր լսում քաղաքացիներից[209]. մինչդեռ Կլեոպատրայի հարցում նա խըստորեն մեղադրվեց այն պատճառով, որ նրա զավակներից որդեգրել էր ավագներին՝ Ալեքսանդրին և Կլեոպատրային—
5 սրանք երկվորյակ էին ծնվել—և կրտսերին՝ Պտղոմեոսին, որը և կոչվեց Փիլադելփոս. նաև այն պատճառով, որ նրանց պարգևել էր Մալքոսի և Իտուրյանների Արաբիայից ընդարձակ երկրներ—քանզի Լյուսանիասին, որին ինքն իսկ նրանց վրա թագավոր էր կարգել, սպանեց՝ Պակորոսին օժանդակած լինելու մեղադրանքով— ինչպես նաև ընդարձակ մասեր Փյունիկիայից և Պաղեստինից, մասեր Կրետեից, նաև Կյուրենեն[210] և Կիպրոսը:

33, 1 Այդ ժամանակ նա այսպես վարվեց. իսկ հաջորդ տարին, երբ կոնսուլներ էին Պոմպեոսը և Կոռնուտիֆիկիոսը, (Անտոնիոսը) արշավանք ձեռնարկեց (Արտավազդ) Արմենի դեմ, մեծապես հույս դնելով Մեդացու[211] վրա, որը զայրացած էր Փրաատեսի դեմ, որովհետև սա ավարից իրեն շատ

բաժին չէր տվել և ոչ իսկ որևէ այլ ձևով պատվել, և միաժամանակ նա կամենում էր (Արտավազդ) Արմենին պատժել հռոմայեցիներին (իր երկրի դեմ) բերած լինելու համար. ուստի և նա Պոլեմոնին ուղարկեց Անտոնիոսի մոտ, բարե-
2 կամություն և դինակցություն հայցելու: (Անտոնիոսը), իհարկե, այնպես ուրախացավ այս առիթից, որ ոչ միայն նրա հետ դաշինք կնքեց, այլև փոքր-ինչ ուշ Պոլեմոնին, որպես վարձատրություն նրա միջնորդության, տվեց Փոքր Հայքը[212]: Արդ՝ (Արտավազդ) Արմենին նա նախ հրավիրեց Եգիպտոս իբրև բարեկամի, որպեսզի նրան առանց դժվարության ձեռք գցելով, այնտեղ ոչնչացնի. բայց քանի որ սա կռահելով այդ ամենը, հրավերին չպատասխանեց, նա մտա-
3 ծեց մի այլ ձևով խաբել նրան: Ուստի և (Անտոնիոսն) իր գայրույթը նրա հանդեպ բացահայտ ցույց չէր տալիս, որպեսզի չթշնամանա իր հետ. բայց նրան անպատրաստ գրտնելու նպատակով նա շարժվեց Եգիպտոսից, իբրև թե արշավում էր պարթևների դեմ: Ճանապարհին, սակայն, տեղեկանալով, որ Օկտավիան[213] Հռոմից ժամանում է, այլևս առաջ չշարժվեց, այլ ետ վերադարձավ:

* * *

39, Մինչ այդ Անտոնիոսը նույն օրն իսկ հրաժարվեց իշխանությունից, իր փոխարեն կարգելով Լուկիոս Սեմպրոնիոս Ատրատինոսին. այստեղից էլ, ահա, ոմանք կոնսուլներին թվարկելիս ոչ թե Անտոնիոսի, այլ Սեմպրոնիոսի անունն են
2 տալիս: Որպեսզի կարողանա (Արտավազդ) Արմենից առանց դժվարության վրեժ լուծել, (Անտոնիոսը) նրա մոտ ուղարկեց ոմն Կվինտոս Դելլիոսին, որը մի ժամանակ իր սիրելին էր եղել, խնդրելով նրա աղջկան[214] կնության տալ իր Ալեքսանդր որդուն և խոստանում է նրան շատ պարգևներ
3 շնորհել: Եվ, ի վերջո, գարնանամուտին նա հանկարծ եկավ Նիկոպոլիս, որը հիմնել էր Պոմպեոսը, և նրան հրավիրեց այնտեղ, իբրև թե նրա հետ խորհրդակցելու և պարթևների դեմ համագործակցելու նպատակով: Ու քանի որ (Արտավազդը), կասկածելով դավադրության մասին, նրա մոտ չժամանեց, ապա նա նորից Դելլիոսին ուղարկեց բանակցություններ վարելու համար և ինքն էլ ոչ պակաս շտապողա-
4 կանությամբ առաջացավ դեպի Արտաշատ: Այս կերպ,

վերջապես, երկար ժամանակ հետո, թե՛ բարեկամների միջոցով նրան համոզելով, թե՛ իր զորքերով երկյուղ պատճառելով և թե՛, ընդհանրապես, իբրև բարեկամի նամակ գրելով և ամեն միջոց գործադրելով, նրան հարկադրեց գալ
5 իր ռազմական ճամբարը։ Եվ այստեղ ձերբակալելով նրան, սկզբում պահում էր առանց կապանքների և շրջագայում նրա հետ այն ամրոցները, որտեղ գտնվում էին գանձերը, որպեսզի կարողանա դրանք ստանալ առանց պատերազմի, արդարանալով, որ իբր նրան ձերբակալել է միայն այն պատճառով, որպեսզի հայերին հարկադրի տուրք վճարել նրա անձի
6 և նրա թագավորության փրկության համար։ Իսկ երբ գանձերի պահապանները[215] ուշադրություն չդարձրին նրան և ղենք կրողներն էլ (Արտավազդի) փոխարեն թագավոր ընտրեցին նրա որդիներից ավագագույնին՝ Արտաշեսին[216], (Անտոնիոսը) Արտավազդին կապեց արծաթե շղթաներով. քանզի թվում էր, թե ամոթալի կլիներ նրան, որը թագավոր էր եղել, կապել երկաթե շղթաներով։ Եվ այնուհետև (Ան-
40, 1 տոնիոսը) տիրացավ ամբողջ Հայաստանին, ոմանց հոժարակամ, ուրիշներին բռնությամբ նվաճելով. իսկ Արտաշեսը, քանի որ պատերազմի բռնվեց, բայց պարտվեց, փախավ Պարթևի մոտ։ Այս բոլորն անելուց հետո (Անտոնիոսը) իր
2 որդուն նշանեց Մեդացու աղջկա հետ, որպեսզի նրա հետ առավել սերտ բարեկամություն հաստատի. և ապա իր լեգեոնները թողեց Հայաստանում ու վերադարձավ Եգիպտոս, իր հետ տանելով թե՛ այլ առատ ավար և թե՛ Արմենին իր կնոջ
3 ու որդիների հետ։ Եվ մյուս գերիների հետ սրանց ևս իր առջևից Ալեքսանդրիա ուղարկելով իբր հաղթահանդեսի շքերթի համար, ինքը քաղաք մտավ մարտակառքի վրա. և բացի այլ ամենից, որ շնորհեց Կլեոպատրային, նրան բերեց ընտանյոք հանդերձ նաև Արմենին, որը ոսկե կապանքների մեջ էր։ Իսկ (Կլեոպատրան) նստած էր բազմության մեջտեղ, արծաթապատ բեմում, ոսկեզօծ գահավորակի վրա։ Սակայն բարբարոսները[217] ոչ աղերսեցին նրան, ոչ իսկ երկրպագեցին, թեպետև նրանց շատ էին ստիպում և շատ էին հուսադրում ազատություն խոստանալով. ու որովհետև նրան պարզապես իր անունով կոչեցին, նրանք վեհամիտ մարդկանց համբավ շահեցին, բայց և նույն այդ պատճառով ենթարկվեցին խիստ չարչարանքների։

41,1 Այս բանից հետո Անտոնիոսը խնջույքով պատվեց ալեքսանդրիացիներին և հավաքույթի ժամանակ իր կողքին բազմեցրեց Կլեոպատրային ու նրա որդիներին և դիմելով ժողովրդին, կարգադրեց, որպեսզի նրան կոչեն արքայից թագուհի, իսկ Պտղոմեոսին, որին Կեսարիոն անունն էին
2 տվել, կոչեն արքայից արքա։ Այնժամ (պրովինցիաների) մի նոր բաժանում կատարելով, նրանց պարգևեց Եգիպտոսը, ինչպես նաև Կիպրոսը. քանզի նա հայտարարեց, թե հիրավի Կլեոպատրան նախորդ Կեսարի[218] կինն է եղել, իսկ Կեսարիոնը՝ նրա իսկ որդին, և խոստանում էր, որ այս ամենը ինքը կատարում է նրա սիրուն, որպեսզի դրանով մեղադրի Կեսար Օկտավիանոսին իբրև նրա որդեգիրը, այլ ոչ թե իբրև
3 հարազատ որդու։ Նրանց, ուրեմն, այս երկրները տվեց, իսկ Կլեոպատրայից ծնված իր որդիներին խոստացավ տալ (հետևյալ երկրները). Պտղոմեոսին՝ Սիրիան ու Եփրատից այս կողմ գտնվող բոլոր երկրները՝ մինչև Հելլեսպոնտոս, Կլեոպատրային՝[219] Կյուրենե երկիրը Լիբիայում, իսկ նրանց եղբայր Ալեքսանդրին՝ Հայաստանը ու Եփրատից այն կողմ ընկած բոլոր երկրները՝ մինչև Հնդկաստան. և այս ամենը նա
4 պարգևում էր, կարծես արդեն նվաճած լիներ։ Այս ամենը նա ոչ միայն հայտարարեց Ալեքսանդրիայում, այլև հաղորդում ուղարկեց Հռոմ, որպեսզի նրանց համաձայնությունը ևս ստանա. բայց նրա կարգադրություններից և ոչ մեկը չընթերցվեց հրապարակավ. քանի որ Դոմիտիոսը և Սոսսիոսը, որոնք արդեն այդ ժամանակ կոնսուլներ էին և առավելագույնս նվիրված էին նրան, չուզեցին այդ ամենը բոլորին հրապարակել, թեպետև (Օկտավիանոս) Կեսարը ստիպում
5 էր նրանց։ Թեև այս հարցում նրանք հաղթեցին, այտուհանդերձ (Օկտավիանոս) Կեսարին հաջողվեց այն, որ հայոց թագավորին վերաբերող գրվածքներից ոչինչ չհրապարակվի. քանզի սրան կարեկցում էր, քանի որ գաղտնաբար կապեր էր հաստատել նրա հետ Անտոնիոսի դեմ և միաժամանակ նախանձում էր Անտոնիոսին նրա հաղթահանդեսի համար։

* * *

44,1 Անտոնիոսն այդ ժամանակ առաջ ընթացավ մինչև Արաքս գետը, իբր թե պարթևների վրա արշավելու համար, բայց բավարարվեց միայն Մեդացու հետ կնքած համաձայ-

նությամբ: Պայմանավորվեցին իրար օգնել, մեկը՝ պարթևների
2 դեմ, իսկ մյուսը՝ (Օկտավիանոս) Կեսարի դեմ, և այդ առնչությամբ էլ իրար փոխադարձաբար որոշ թվով զինվորներ տվեցին. և (Մեդացին) ստացավ նորանվաճ Հայաստանից որոշ մասեր[220]. իսկ (Անտոնիոսը) տարավ նրա Յոտապե աղջկան (իր որդի) Ալեքսանդրի հետ ամուսնացնելու համար, ինչպես նաև զինվորական դրոշները, որոնք գրավված
3 էին Ստատիանոսի դեմ մղված ճակատամարտում: Այնուհանդերձ Անտոնիոսը, ինչպես ասել եմ[221], Պոլեմոնին պարգևեց Փոքր Հայքը, միաժամանակ Լուկիոս Փլավիոսին[222], որն իր հետ էր, կոնսուլ նշանակելով և այնտեղ թողնելով, ինքը շտապեց գնալ Հոնիա և Հունաստան պատերազմելու
4 (Օկտավիանոս) Կեսարի դեմ: Եվ Մեդացին սկզբում, օգտվելով դաշնակից հռոմայեցիներից, իր վրա հարձակում գործած պարթևներին և Արտաշեսին հաղթեց. բայց երբ Անտոնիոսը ետ կանչեց իր զորքերը և միաժամանակ իր մոտ պահեց նրա զորքերը, նա պարտվեց և գերի ընկավ. այսպիսով Հայաստանը Մեդիայի հետ միասին կորավեց:

ԳԻՐՔ ՀԻՍՈՒՆԵՐՈՐԴ

1, 4 (Օկտավիանոս) Կեսարը մեղադրում էր (Անտոնիոսին) այն բանի համար, որ վերջինս ստացել էր Եգիպտոսը և այլ երկրներ, առանց վիճակի, սպանել էր Սեքստոսին..... և Արմեն (Արտավազդին) խաբելով, ձերբակալելով ու շղթայելով, մեծապես վարկաբեկել էր հռոմեական ժողովրդի հեղինակությունը:

ԳԻՐՔ ՀԻՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

2,1 ...(Օկտավիանոս Կեսարը) բոլոր տիրակալներին և թագավորներին, բացի Ամյունտասից և Արքելաոսից[223], զրկեց այն բոլոր տիրույթներից, որ ստացել էին Անտոնիոսից,
2 իսկ Փիլոպատորին՝ Տարկոնդիմոտոսի[224] որդուն, և Լյուկոմեդեսին, որը թագավորում էր Կապպադովկյան Պոնտոսի մի մասի վրա, և Ալեքսանդրին՝ Յամբլիքոսի[225] եղբորը, զրկեց իրենց թագավորություններից: Քանի որ վերջինս իր թագավորությունն ստացել էր իբրև վարձատրություն Կեսարին մեղադրելու համար, ուստի և նրան քարշ տվեց իր հաղթահանդեսում և հետագայում սպանեց:

5, 3 Այսպիսով, երբ (Անտոնիոսը և Կլեոպատրան) խուսափեցին նավամարտից[226], մինչև Պելոպոննես միասին նավեցին. իսկ այստեղից, իրենց հետ եղողներից ոմանց, ում կասկածում էին, արձակելուց հետո —մինչդեռ շատերն արդեն, հակառակ իրենց ցանկության, հեռացել էին— Կլեոպատրան շտապեց Եգիպտոս, չլինի թե իրենց պարտության մասին այնտեղ իրենց ժամանելուց առաջ լսելով ապստամ-
4 բեն. և որպեսզի իր ժամանումը ևս դարձնի ապահով, նավերի քթերը պսակազարդեց, ասես իրոք հաղթանակ էր տարել, և սրնգահարների նվագակցությամբ հաղթերգեր էր երգում. բայց երբ արդեն ինքն ապահով տեղ հասավ, առաջիններից[227] շատերին, որոնք միշտ էլ դժգոհ էին եղել իրենից և այժմ էլ իրեն պատահած աղետի պատճառով հոխորտում
5 էին, սպանեց. և նրանց պատկանող, ինչպես նաև այլ աշխարհիկ և հոգևոր տիրույթներից սկսեց մեծ հարստություն կուտակել, չխնայելով նույնիսկ ամենասրբազան տաճարները և միաժամանակ զինում էր իր բանակը և փնտրում դաշնակիցներ. և նա, սպանելով հայոց թագավորին, նրա գլուխն ուղարկեց Մեդացուն, իբրև թե այդ եղանակով նրանից օգնություն ստանալու հույսով:

* * *

16, 1 Ինչ վերաբերում է մինչ այդ Անտոնիոսի հետ գործակցած մյուս մարդկանց, (Օկտավիանոս Կեսարը) ոմանց պատժեց, մյուսներին՝ ներեց, կամ անձնական նկատառումներից ելնելով, կամ ընկերներին սիրաշահելու համար: Եվ քանի որ նրա մոտ գտնվում էին տիրակալների և թագավորների շատ որդիներ, որոնցից ոմանք պահվում էին իբրև պատանդ, իսկ ուրիշները՝ մեծամտության պատճառով, դրանց մի մասին ևս ուղարկեց իրենց երկրները, մյուսներին էլ ամուսնացրեց իրար հետ, ոմանց էլ պահեց իր մոտ:
2 Մնացած բոլորին ես զանց կառնեմ, բայց հանվանե կհիշատակեմ միայն երկուսին: Նա Յոտապեին[228] վերադարձրեց Մեդացուն, որը պարտվելուց հետո ապաստան էր փընտրել իր մոտ. իսկ Արտաշեսին[229], որը խնդրել էր իր (պատանդ) եղբայրներին վերադարձնել, մերժեց ընդառաջել այն պատճառով, որ սա սպանել էր Հայաստանում թողնված հռոմայեցիներին:

* * *

18,1 ...Այնուհետև (Կեսարը Եգիպտոսից) Սիրիայի վրայով եկավ պրովինցիա Ասիա և այստեղ էլ անցկացրից ձմեռը, վարգավորելով իրեն հպատակ առանձին երկրներին, ինչպես նաև պարթևներին վերաբերող գործերը: Քանզի այդ ժամանակ խռովություն էր նրանց մոտ և ոմն Տիրիդատես[230] ապստամբել էր Փրաատեսի դեմ. իսկ (Կեսարը) թե՛ նախկինում, երբ շարունակվում էր Անտոնիոսի պայքարը և թե՛ նավամարտից[231] հետո ոչ միայն կողմերից որևէ մեկին չօգնեց, թեպետև նրանք իր զինակցությունն էին խնդրում, այլև չէր պատասխանում նրանց ոչինչ, բացի այն, որ իբր թե կմտածի այդ մասին. նա (իր վերաբերմունքը) պատճառաբանում էր նրանով, որ իբր զբաղված է Եգիպտոսով, մինչդեռ իրականում նա ցանկանում էր, որ նրանք իրար միջև
3 կռվելով ուժասպառ լինեն: Իսկ այժմ, երբ արդեն Անտոնիոսը մահացել էր, և նրանցից էլ Տիրիդատեսը պարտվելով ապաստանել էր Սիրիայում, իսկ Փրաատեսն էլ հաղթանակած լինելով դեսպաններ էր ուղարկել, (Կեսարը) նրանց բարեկամաբար ընդունեց և, առանց օժանդակություն խոստանալու Տիրիդատեսին, թույլատրեց նրան ապրել Սիրիայում. իսկ Փրաատեսից ստանալով նրա որդիներց մեկին, նրան հովանավորելու նպատակով, իր հետ տարավ Հռոմ, որտեղ և նրան պահեց իբրև պատանդ:

ԳԻՐՔ ՀԻՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

43, 1 Եվ (Կեսարը) պահանջեց Անտիոքոս Կոմմագենացուց[232] գալ իր մոտ, որովհետև սա դավադրաբար սպանել էր այն դեսպանին, որին Հռոմ էր ուղարկել նրա եղբայրը, որի հետ թշնամություն ուներ, (Կեսարը) նրան կանգնեցրեց սենատի առաջ և, քանի որ (սենատը) նրան դատապարտեց, մահվան ենթարկեց:

ԳԻՐՔ ՀԻՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

25, 1 Եվ այդ նույն տարին Պոլեմոնը, որը թագավորում էր Պոնտոսում[233], մտցվեց (հռոմեական) ժողովրդի բարեկամների և դաշնակիցների ցուցակի մեջ[234], և միաժամանակ սենատորներին իրավունք շնորհվեց նրա թագավորության մեջ եղած բոլոր թատրոններում նստել առաջին շարքում[235]:

* * *

33, 1 Այսպիսով, քանի որ Տիրիդատեսը անձամբ և Փրաատեսի կողմից ուղարկված դեսպանները ժամանել էին փոխադարձաբար իրար դեմ մեղադրանքները շարադրելու համար, նրանց առաջնորդեց սենատի առաջ, որից հետո, երբ սե-
2 նատը թույլ տվեց իրեն որոշել հարցը, նա Տիրիդատեսին չհանձնեց Փրաատեսի ձեռքը, բայց սրա որդուն, որին նախապես վերցրել էր նրանից ու պահում էր իր մոտ[236], եւ ուղարկեց նրան պայմանով, որ այն ռազմիկները և զինվորական այն դրոշները, որ գերվել էին Կրասոսի և Անտոնիոսի կրած աղետների ընթացքում, եւ վերադարձվեն։

ԳԻՐՔ ՀԻՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ

8, 1 Եվ մինչ այդ Փրաատեսը վախենալով, որ (Օգոստոս Կեսարը) արշավանքի կելնի իր դեմ, քանի որ համաձայնության պայմաններից և ոչ մեկը չէր կատարել, եւ ուղարկեց նրան թե՛ դրոշները և թե՛ գերված մարդկանց, բացի այն քչերից, որոնք ամոթից իրենք իրենց ոչնչացրել էին, կամ էլ փախչելով, կարողացել էին թաքնվել երկրում։ Եվ սրանց (Օգոստոսն) ստացավ, ասես պատերազմում Պարթևին հաղթած լիներ։

* * *

9, 1 (Հռոմ) քաղաքում այսպիսի գործեր էին կատարվում. և Օգոստոսը հպատակ երկրները կառավարում էր հռոմեական սովորույթի համաձայն, մինչդեռ դաշնակից (երկրներին) թույլ էր տալիս կառավարվել իրենց հայրենի ավանդություններին համաձայն։ Եվ նա նպատակահարմար չէր
2 գտնում ոչ այս մեկին որևէ բան ավելացնել, ոչ իսկ թույլ տալ որևէ նոր բանի տիրանալու, այլ ճշտորեն բավարարվել եղած. իր այս կարծիքն էլ նա հաղորդեց սենատին։ Այսպիսով, նա այդ ժամանակ ոչ մի պատերազմ չձեռնարկեց, բայց իրականում նա Յամբլիքոսի որդի Յամբլիքոսին տվեց նրա հայրենական իշխանությունը արաբների վրա և Տարկոնդիմոտոսի որդի Տարկոնդիմոտոսին հանձնեց Կիլիկիայի թագավորությունը, որը պատկանել էր նրա հորը, բացի ծովափնյա որոշ մասերից։ Քանզի սրանք նա, Փոքր Հայքի

հետ միասին, պարգևել էր Արքելաոսին, քանի որ Միդացին,
3 որը նախապես սիրում էր այնտեղ, մահացել էր: Իսկ Հերովդեսին նա հանձնեց ոմն Ջենոդորոսի չորրորդապետությունը և ոմն Միհրդատի, որը թեպետև դեռևս փոքր տղա էր, Կոմմագենեն, որովհետև այդ երկրի թագավորը
4 սպանել էր նրա հորը: Իսկ քանի որ մյուս հայերը մեղադրում էին Արտաշեսին[237] և (դեսպանություն ուղարկելով) խնդրում էին Հռոմում գտնվող նրա Տիգրան եղբորը[238], ապա (Օգոստոսն) ուղարկեց Տիբերիոսին[239], որպեսզի (Արտաշեսին) հեռացնի թագավորությունից և (Տիգրանին) հաստատի
5 գահի վրա: Սակայն (Տիբերիոսն) այս պատրաստություններին համապատասխան ոչինչ չկատարեց, քանզի հայերն իրենք արդեն սպանել էին Արտաշեսին[240]: Իսկ Տիբերիոսը խիստ մեծարվեց, մանավանդ, որ այս բոլորի առթիվ որոշվեց զոհաբերություններ կատարել, կարծես թե քաջարիություն էր ցուցաբերել:

* * *

24, 4 Եվ Կիմմերյան Բոսպորում ծագած ապստամբությունը ճնշվեց: Քանզի ոմն Սկրիբոնիոս, որը հայտարարում էր, թե ինքը Միհրդատի[241] թոռն է և թագավորությունն ընտացել է Օգոստոսի ձեռքից, քանի որ Ասանդրոսը մահացել էր, ամուսնացավ վերջինիս Դյունամիս անունով կնոջ հետ, որին ամուսինը հանձնել էր թագավորությունը: Սա, հիրավի, Փառնակեսի դուստրն էր և Միհրդատի թոռը,
5 ուստի և Բոսպորը պահում էր իր ձեռքում: Այս մասին իմանալով Ագրիպպասը[242] նրա դեմ ուղարկեց Պոլեմոնին, որը թագավորում էր Կապպադովկիային հարող Պոնտոսում: Բայց սա չհասցրեց Սկրիբոնիոսին կենդանի բռնել, քանի որ Բոսպորի բնակիչներն իմանալով նրա դիտավորության մասին, արդեն սպանել էին նրան. իսկ երբ սրանք դիմադրեցին (Պոլեմոնին), վախենալով, որ իրենց վրա թագավորելու իրավունքը նրան կտրվի, (Պոլեմոնը) պատերազմ
6 սկսեց նրանց դեմ: Ու թեև հաղթեց, բայց չկարողացավ նրանց հպատակեցնել, մինչև որ Ագրիպպասը չժամանեց Սինոպե նրանց դեմ արշավանք ձեռնարկելու համար: Այնժամ նրանք զենքերը ցած դրեցին և հանձնվեցին Պոլեմոնին, իսկ այդ կինը՝ Դյունամիսը, ամուսնացավ նրա հետ, իհարկե, Օգոստոսի համաձայնությամբ:

9, 4 *Եվ (Օգոստոս Կեսարը) ցանկանալով որևէ կերպ նրանց*[243] *առավել ողջամիտ դարձնել, Տիբերիոսին տվեց հինգ տարվա տրիբունական պաշտոն և հանձնարարեց նրան Հայաստանի իշխանությունը, որը օտարացել էր Տիգրանի*[241] *մահից հետո:*

* * *

10, 18 *Երբ հայերն ապստամբեցին և պարթևներն էլ գործակցում էին նրանց, Օգոստոսը այս ամենից խիստ նեղացավ և չէր իմանում ինչպե՞ս վարվել: Քանզի ինքը ծերության պատճառով արդեն չէր վստահում անձամբ արշավելու և Տիբերիոսն էլ, ինչպես ասվեց, արդեն հրաժարվել էր, իսկ հղորներից որևէ մեկին ուղարկել նա չէր համարձակվում, մինչդեռ Գայոսն ու Լուկիոսը*[245] *դեռևս երիտասարդ էին և անփորձ պետական գործերի մեջ: Այսուհանդերձ, հանգամանքների ստիպման տակ նա ընտրեց Գայոսին և նրան փոխկոնսուլի պաշտոն և կին տվեց, որպեսզի այդ պատճառով ևս բարձր պատվի արժանանա և միաժամանակ նրան*
19 *խորհրդատուներ նշանակեց: Ուստի (Գայոսը) ճանապարհ ընկավ և բոլորի կողմից բարձր ընդունելություն էր գտնում, իբրև իմպերատորի թոռը և նրան դիտում էին իբրև նրա որդին. նույնիսկ Տիբերիոսը եկավ Քիոս*[246] *և սպասարկեց նրան, որպեսզի այդպիսով փարատի իր վրա եղած կասկածները. նա ինքն իրեն ստորացնում էր և ծնկի գալիս ոչ միայն հանուն Գայոսի, այլև բոլոր նրա մերձավորների: Եվ (Գայոսը) Սիրիա գնալուց հետո որևէ մեծ հաջողություն չունեցավ ու վիրավորվեց:*

20 *Երբ բարբարոսներն իմացան Գայոսի արշավանքի մասին, Փրաատակեսը*[247] *բանագնաց ուղարկեց Օգոստոսի մոտ. բացատրություն տալով տեղի ունեցած դեպքերի մասին, միաժամանակ պահանջելով (վերադարձնել) իր եղբայրներին, (փոխարենը) խաղաղություն խոստանալով: Եվ նրան Օգոստոսը պատասխան ուղարկեց առանց նրան «արքա» կոչելու, այլ պարզապես «Փրաատակես» անվանելով ու կարգադրելով նրան հրաժարվել թագավորական կոչումից*

և հեռանալ Հայաստանից։ Ահա դրանից հետո Պարթևը ոչ միայն չվախեցավ, այլև պատասխան գրեց նրան մեծամիտ շեշտով և ինքն իրեն «արքայից արքա», իսկ նրան միայն «կեսար» անվանելով։ Իսկ Տիգրանը[248] անմիջապես չէ, որ դեսպաններ ուղարկեց, այլ երբ հետագայում Արտավազդը[249] հիվանդացավ ու մահացավ, նվերներ ուղարկեց Օգոստոսին այն կապակցությամբ, որ իր հակառակորդը վերացել է աստիճից, նամակում առանց իրեն թագավոր անվանելու,
21 իբրև թե թագավորությունը նրա ձեռքից խնդրելով։ Ազդված այս ամենից և միաժամանակ վախենալով պարթևների հետ պատերազմ սկսվելուց, նա նվերներն ընդունեց և բարի հույսեր ներշնչելով, պատվիրեց նրան գնալ Սիրիա, Գայոսի մոտ։

* * *

10a,4 Այսուհանդերձ պարթևների դեմ ևս պատերազմ չսկըսվեց։ Քանզի Փրաատակեսը լսելով, որ Գայոսը Սիրիայում է գտնվում իբրև կոնսուլ, միաժամանակ կասկածելով, որ իր երկրում ևս իրավիճակը առաջվա պես դարձյալ անբարենպաստ է, շտապեց համաձայնության գալ (հռոմայեցիների հետ) այն պայմանով, որ ինքը կհեռանա Հայաստանից, և
5 իր եղբայրները կմնան ծովից այն կողմ[250]։ Սակայն հայերը, քանի որ Տիգրանը բարբարոսների դեմ մղած ինչ-որ պատերազմի ժամանակ սպանվել էր, իսկ էրատոն էլ հրաժարվել էր իշխանությունից, պատերազմի ելան հռոմայեցիների դեմ, որովհետև նրանց (վրա իշխանությունը) հանձնել էին ոմն մեդացի Արիոբարզանեսի, որը մի ժամանակ Տիրիդատեսի[251] հետ եկել էր հռոմայեցիների մոտ. այս դեպքերը կատարվեցին հաջորդ տարին, երբ կոնսուլներ էին Պուբլիոս
6 Վինիկիոսը և Պուբլիոս Վարոսը։ Ու թեպետ հայերը նշանակալից որևէ գործ չկատարեցին, բայց ոմն Ադոն, որը տիրում էր Արտագերսին[252], համոզեց Գայոսին ընդհուպ մոտենալ պարիսպներին և խոցեց նրան. այս պատճառով էլ
7 (Արտագերսը) պաշարման ենթարկվեց ու երկար դիմադրեց։ Բայց երբ վերջապես այն վերցվեց, ոչ միայն Օգոստոսը, այլև Գայոսը նույնպես ստացել էր իմպերատորի տիտղոս և Հայաստանն այնժամ Օգոստոսի և սենատի կողմից ստացավ Արիոբարզանեսը և ոչ շատ ժամանակ անց նրա մահից հետո՝ նրա որդի Արտավազդը[253]։ Այսպես, Գայոսը վերքի

պատճառով թուլացավ և քանի որ ոչ մի կերպ չէր առողջանում, սկսեց բանականությունը կորցնել և առավել ևս բթամըտացավ։

ԳԻՐՔ ՀԻՍՈՒՆՅՈԹԵՐՈՐԴ

17,3 Ինչևէ, նա[254] խիստ զայրացել էր Կապպադովկիայի թագավոր Արքելաոսի վրա, որովհետև սա նախկինում ծնկի գալով աղերսել էր իր բարեխոս պաշտպանությունը, երբ Օգոստոսի ժամանակ մեղադրվել էր իր հայրենակիցների
4 կողմից, իսկ երբ հետագայում ինքը մեկնել էր Հռոդոս[255], սա արհամարհեց իրեն և արդեն իր ծառայությունը մատուցեց Ասիա ժամանած Գայոսին։ Ուստի (Տիբերիոսը) պահանջեց նրանից գալ իր մոտ, մեղադրելով ապստամբություն նյութելու մեջ և նրա բախտը թողեց սենատի վճռին, թեպետև մարդը ոչ միայն խորը ծերության հասակում էր, այլև խիստ տառապում էր հոդատապից ու միաժամանակ թվում
5 էր, թե խելագրկվել է։ Եվ իրոք նա մի անգամ այնպես էր հիվանդացել, որ Օգոստոսը նրա երկրում ինչ-որ խնամակալ[256] կարգեց։ Այսուհանդերձ, նա այս անգամ արդեն նոպա չուներ, բայց ձևացնում էր (հիվանդ), այդ եղանակով փրկվելու հույսով։ Եվ նա մահվան կենթարկվեր, եթե այնտեղ վկաներից մեկը չհայտներ, թե լսել է նրան ասելիս այսպես. «Եթե տուն վերադառնամ, ապա ցույց կտամ նրան, թե ի՞նչ ջղեր ունեմ»։ Այս խոսքերի վրա այնքան բարձր ծիծաղ պայթեց, քանզի այս մարդը ոչ միայն կանգնել, այլև անգամ նստել չէր կարողանում. ուստի և Տիբերիոսը հրա-
6 ժարվեց նրան սպանելուց։ Մինչդեռ Արքելաոսի վիճակը այնքան վատ էր, որ նրան ծածկված մահճի վրա բերեցին սենատ—քանզի ընդունված սովորություն էր նույնիսկ տղամարդուն, եթե նա հիվանդ էր, պառկած բերել (սենատ). մի անգամ Տիբերիոսը ևս այդպես էր վարվել— և նա մի քանի խոսք ասաց մահճից թեքվելով առաջ։ Ահա այդ ժամանակ
7 Արքելաոսը այս ձևով փրկվեց, բայց ոչ շատ ժամանակ անց նա մահացավ, որից հետո Կապպադովկիան ևս դարձավ հռոմեական (տիրույթ) և հանձնվեց հեծյալի[257] կառավարմանը։

26, 1 Այդ տարիներին էր, որ պարթև Արտաբանոսը[258], քանի որ Արտաշեսը[259] մահացել էր, Հայաստանը տվեց իր որդի Արտակեսին[260] և քանի որ այդ առնչությամբ Տիբերիոսի կողմից որևէ վրեժխնդրություն չեղավ, մի փորձ էլ Կապպադովկիայի վրա կատարեց ու մինչև իսկ սկսեց
2 պարթևներին գոռոզաբար վերաբերվել։ Ուստի և ոմանք ապստամբելով Արտաբանոսի դեմ, դեսպանություն ուղարկեցին Տիբերիոսին, իրենց համար թագավոր խընդրելով պատանդության մեջ գտնվողներից որևէ մեկին։ Եվ (Տիբերիոսը) այնժամ նրանց ուղարկեց Փրաատեսի որդի Փրաատեսին, բայց քանի որ սա ճա-
նապարհին մահացավ, (ուղարկեց) Տիրիդատեսին, որը նույնպես սերում էր թագավորական ընտանիքից։
3 Եվ որպեսզի առավել հեշտությամբ ստանար թագավորությունը, նամակ գրեց Միհրդատ Իբերացուն, պատվիրելով ներխուժել Հայաստան, որպեսզի Արտաբանոսը էր որդուն օգնելու նպատակով հեռանա իր երկրից։ Եվ այդպես էլ կատարվեց. այսուհանդերձ, Տիրիդատեսը երկար չթագավորեց, քանզի Արտաբանոսը սկյութներին օգնության
4 կանչելով, նրան առանց դժվարության դուրս քշեց։ Պարթևական դեպքերն ահա այսպիսի ընթացք ստացան. իսկ Հայաստանն անցավ Միհրդատին[261], որն, ինչպես հայտնի է, Միհրդատ Իբերացու որդին էր և Փարասմանի եղբայրը, որը (Միհրդատ Իբարեցուց) հետո դարձավ իբերների թագավոր։

8, 2 Եվ նա[262] Անտիոքոսի որդի Անտիոքոսին տվեց Կոմմագենեն, որը պատկանում էր նրա հորը և դրան զումարած նաև Կիլիկիայի առափնյա մասերը, միաժամանակ և Ագրիպպասին՝ Հերովդեսի[263] թոռանը, որը գերվել էր Տիբերիոսի կողմից, ազատ արձակեց և նրան հանձնեց պապի տիրությունը և նրա եղբորը, կամ, ավելի ճիշտ, որդուն[264] ոչ միայն զրկեց հայրենի ժառանգությունից, այլև մահվան ենթարկեց. և այդ մասին ոչինչ չհաղորդեց սենատին։

* * *

12, 2 Այդ ժամանակ էլ նա [265] Սոեմոսին[266] Իտուրիական աբաբների երկիրը[267], Կոտյուսին՝[268] Փոքր Հայքը, իսկ ավելի ուշ՝ Արաբիայի որոշ մասերը, Ռյումետալկեսին՝[269] Կոտյուսի տիրույթները, և Պոլեմոնին՝ Պոլեմոնի որդուն՝ հայրենի իշխանությունը պարգևեց, և այս բոլորը, հիրավի, սենատի վճռի համաձայն, իսկ ինքը նստած է եղել ֆորումում բեմի վրա դրված գահավորակին, կոնսուլների միջև, ինչպես ոմանք ասում են, մետաքսե վարագույրներով քողարկված։

* * *

17, 5 Եվ նրա ետևից տարվում էր բազում շատ բան, որը ավար էր համարվում, ինչպես նաև Դարեհը, Արշակունիներից մի այր, որն այդ ժամանակ Հռոմում իբրև պատանդ գտնվող պարթևներից մեկն էր։

* * *

27, 2 Եվ ահա Լուկիոս Վիտելլիոսը, որը ոչ ստոր ծագում ուներ, ոչ էլ անմիտ էր, այլ, ընդհակառակը, որպես Սիրիայի կառավարիչ, անվանի էր դարձել—քանզի այդ ժամանակ ամեն ինչ լավ վարելուց բացի, նաև Արտաբանոսին, որը
3 մտադիր էր արշավել Սիրիա, քանի որ Հայաստան կատարած իր արշավանքի համար նա անպատիժ էր մնացել, ահաբեկեց, հանկարծակի դեմ դուրս գալով նրան, երբ սա արդեն հասել էր Եփրատին, և բանակցություններ սկսելով նրա հետ, ստիպեց նրան զոհ մատուցել Օգոստոսի և Գայոսի պատկերներին և իր հետ կնքել հաշտություն, որը շահավետ էր հռոմայեցիներին, ու դրա հետ միասին նրա որդիներին ևս պատանդ վերցրեց—ահա այս Վիտելլիոսին Գա-
4 յոսն իր մոտ կանչեց նրան ոչնչացնելու մտադրությամբ։ Նրա դեմ նույն դժգոհությունն էր, ինչ պարթևներինը՝ իրենց թագավորի դեմ, երբ նրան վտարեցին երկրից[270]. (Կալիգուլայի) նախանձը ծնեց ատելություն, իսկ վախը՝ դավադրություն։

ԳԻՐՔ ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ

8, 1 Եվ այնուհետև նա[271] Կոմմագենեն վերադարձրեց Անտիոքոսին—քանզի Գայոսը, թեպետև ինքն իսկ տվել էր այդ երկիրը, բայց նորից ետ էր վերցրել—և Միհրդատ Իբե-

րացուն, որին Գայոսը կանչել էր իր մոտ և կալանավորել, ետ ուղարկեց իր երկիրը, որպեսզի նորից վերցնի իշխա-
2 նությունը: Մեկ ուրիշ Միհրդատի ևս, որն ուղղակի նրա[272] սերնդից էր, պարգևեց Բոսպորոսը և Պոլեմոնին դրա փոխարեն տվեց Կիլիկիայից որոշ մասեր:

* * *

28, 7 Իբերների թագավոր Միհրդատը[273] ապստամբեց և պատրաստվում էր հռոմայեցիների դեմ պատերազմել: Նրա մայրը, սակայն, դեմ լինելով այդ ամենին և չկարողանալով համոզել նրան, որոշեց փախչել: Այնժամ Միհրդատը, ցանկանալով թաքցնել իր ծրագրերը, քանի որ ինքը պատրաստություններ էր տեսնում, իր եղբորը՝ Կոտյուսին, որպես դեսպան ուղարկեց Կլավդիոսի մոտ բարեկամական ուղերձով: Բայց Կոտյուսը, դավելով դեսպանությանը, ամեն ինչ հայտնեց նրան և Միհրդատի փոխարեն դարձավ իբերների թագավոր:

ԴԻՐՔ ՎԱԹՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

32, 4ա Միհրդատը՝ իբերների թագավորը, երբ կռվեց հռոմեական զորքերի դեմ և պարտվեց, կյանքում հուսահատության մատնվեց և (հռոմայեցիներից) խնդրեց իրեն խոստանալ, որ ոչ բռնի կերպով պետք է սպանվի, ոչ էլ հաղթահանդեսի տարվի. երբ իրոք այդ խոստացան, Կլավդիոսը Հռոմում նրան ընդունեց բեմի վրա և սպառնագին խոսեց նրա հետ. իսկ նա համարձակ պատասխանեց նրան ու վերջացրեց ասելով, թե՝ «Ես ոչ թե բերվեցի քեզ մոտ, այլ ժամանեցի. եթե կասկածում ես, ազատ արձակիր ինձ և փորձիր փնտրել»:

* * *

Լելիանոսը, որը Պոլիոնի փոխարեն ուղարկվել էր Հայաստան, նախկինում եղել էր դիշերապահների հրամանատար և ոչնչով ավելի լավ չէր Պոլիոնից, այլ ինչքան իր պաշտոնով ավելի բարձր էր նրանից, այնքան անհագուրդ շահամոլ էր:

ԴԻՐՔ ՎԱԹՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

19, 1 Մինչ նա[274] այս գործերով էր զբաղված, լուր ստացվեց Հայաստանից և միաժամանակ հաղթության դափնի: Քան-

զի Կորբուլոնը[275] (հռոմեական) ցրված զորամասերը միավորելուց և լքվածներին վարժեցնելուց հետո, թե՛ Վոլոգեսոսին[276], պարթևների թագավորին, թե՛ Տիրիդատեսին[277], Հայաստանի առաջնորդին, ահաբեկեց սոսկ իր մոտիկ գա-
2 լու հաղորդումով իսկ։ Քանզի նա նման էր առաջին հռոմայեցիներին ոչ միայն իր պայծառ ծագումով և ուժեղ մարմնով, այլև ուներ խորաթափանց միտք. և նա մեծ քաջություն, մեծ արդարություն և խորը հավատարմություն էր ցուցաբերում բոլորի՝ թե՛ յուրայինների և թե՛ թշնամիների հան-
3 դեպ։ Այդ իսկ պատճառով Ներոնը պատերազմը վարելու համար իր փոխարեն ուղարկեց նրան, տրամադրելով այնքան զորք, ինչքան չէր տվել ոչ մեկ ուրիշի, հավատարակս վստահ լինելով, որ սա կկարողանա թե՛ հաղթել բար-
4 բարոսներին և թե՛ իր դեմ չապստամբել։ Եվ նա այս երկու հարցում էլ նրան հուսախաբ չարեց, թեպետև Կորբուլոնը շատ մարդկանց վշտացրեց հենց այս անգամ, քանի որ հավատարիմ մնաց Ներոնին. որովհետև նրանք այնքան ցանկանում էին նրան իմպերատոր տեսնել Ներոնի փոխարեն, որ նրա այս վարմունքը համարում էին նրա միակ թերությունը[278]։

* * *

20, 1 Ահա այս Կորբուլոնը առանց դժվարության վերցրեց Արտաշատը և քաղաքը հիմնահատակ կործանեց։ Այս ա-
նելուց հետո նա շարժվեց դեպի Տիգրանակերտ, խնայելով բոլոր իրեն հանձնվողների երկիրը, բայց ավերելով դիմադրողների երկիրը, իսկ Տիգրանակերտը նրան հանձնվեց կամովին։ Նա այլ պայծառ ու փառավոր գործեր ևս
կատարեց, որոնց պատճառով էլ նույնիսկ Վոլոգեսոսին, որը թեպետև ահեղ էր, ստիպեց հռոմայեցիների պատվին արժանի հաշտություն կնքել։

2 Եվ Վոլոգեսոսը տեղեկանալով, որ Ներոնը Հայաստանը պարգևել է ուրիշներին, իսկ Ադիաբենե երկիրն էլ ավերվում է Տիգրանի[279] կողմից, ինքը պատրաստվեց արշավելու Սիրիա՝ Կորբուլոնի վրա, իսկ Ադիաբենեի թագավոր Մոնոբազոսին և պարթև Մոնեսեսին[280] ուղարկեց Հայաստան։
3 Սրանք Տիգրանին պաշարեցին Տիգրանակերտում։ Ու քանի որ իրենց պաշարումով սրանք ոչ մեկ վնաս չէին կարողա-

նում հասցնել (Տիգրանին) և ամեն անգամ հարձակվելիս
ետ էին մղվում թե՛ նրա և թե՛ նրա զորքում գտնվող հռո-
մայեցիների կողմից, իսկ Կորբուլոնն էլ մեծ ճշտությամբ
4 պահպանում էր Սիրիան, ապա (Վոլոգեսոսը) հրաժարվեց
իր մտադրությունից ու Թողեց պատրաստությունը և Կոր-
բուլոնի մոտ (բանագնաց) ուղարկելով, կարողացավ դին-
ադադար կնքել այն պայմանով, որ պետք է մի նոր դեսպա-
նություն ուղարկի Ներոնի մոտ, վերացնի (Տիգրանակեր-
տի) պաշարումը և իր զինվորներին Հայաստանից դուրս
բերի: Իսկ Ներոնը նույնիսկ այդ ժամանակ նրան ոչ ի-
կույն, ոչ էլ հստակ պատասխան չտվեց, իսկ Լուկիոս Կե-
սեննիոս Պետոսին ուղարկեց Կապպադովկիա, հետևելու
համար, որ Հայաստանում ոչ մի ապստամբություն չբարձ-
րանա:

21,1 Վոլոգեսոսը հարձակվեց Տիգրանակերտի վրա և Պե-
տոսին, որը եկել էր նրանց օգնելու, ետ շպրտեց. և երբ
վերջինս դիմեց փախուստի, հալածեց նրան. կոտորեց նրա
կողմից Տավրոսի վրա հաստատված պահակաղորը և նրան
պաշարեց Հռանդեայում[281], որը գտնվում էր Արսանիաս[282]
2 գետի մոտ: Եվ նա ետ էր վերադառնալու ոչինչ չարած—
քանզի որևէ կետում ամրության մոտենալ չէր կարողա-
նում, քանի որ նա չուներ հոպլիտներ, ու թեև զորքի մեծ
բազմությամբ, բայց առանց անհրաժեշտ պատրաստության
եկած լինելով, զրկված էր պարենամթերքից— եթե Պե-
տոսը չվախեներ մինչև ռազմական ճամբարը հասնող նե-
տահարումներից, ինչպես նաև ամեն տեղ հայտնվող նրա
հեծյալներից և հաշտության համար լուր չուղարկեր նրան
ու չընդուներ նրա պայմանները. նա երդվեց, որ կթողնի
ամբողջ Հայաստանը, և որ Ներոնը այն կպարգևի Տիրի-
3 դատեսին: Պարթևն ուրախացավ այս ամենից, որովհետև
կարծում էր, թե առանց դժվարության կգրավի երկիրը և
հռոմայեցիներին իր ողորմածությամբ կդնի մեծ պարտքի
տակ. մյուս կողմից էլ նա տեղեկացել էր, որ Կորբուլոնը,
որի մոտ Պետոսը, նախքան պաշարվելը, մարդ էր ուղարկել
4 օգնություն խնդրելով, արդեն մոտենում է, ուստի Թողեց
պաշարվածներին, նախապես պարտադրելով նրանց իր հա-
մար կամուրջ կապել Արսանիաս գետի վրա, ոչ այն պատ-
ճառով, որ ինքը կամուրջի կարիքն ուներ—քանզի ինքը

հետիոտն էր գետն անցել—այլ ցույց տալու համար նրանց իր գերազանցությունը[283]։ Բայց այս դեպքում ևս ինքը կամուրջի վրայով չհեռացավ, այլ մեկնեց փղի վրա նստած, իսկ մնացածները՝ ինչպես և առաջ։

22, 1 Երբ դեռ նոր էր կապիտուլյացիան կատարվել, ահա և Կորբուլոնը անհնարին արագությամբ մոտեցավ Եփրատին և այնտեղ սպասեց։ Երբ երկու զորքերը[284] հանդիպեցին իրար, ամեն ոք կարող էր նկատել լեգեոնների և նրանց զորավարների միջև եղած մեծագույն տարբերությունը. սրանք ուրախանում և հրճվում էին իրենց արագության համար, իսկ
2 նրանք վշտացած և ամոթահար՝ հաշտության համար։ Իսկ Վոլոգեսոսը Մոնեսեսին ուղարկելով Կորբուլոնի մոտ, պահանջեց նրանից լքել Միջագետքի ամրությունը. ու նրանք երկար բանակցեցին իրար հետ Եփրատի վրա գցած նույն այդ կամուրջի վրա, նախապես քանդելով դրա միջին մասը։
3 Քանի որ Կորբուլոնը խոստացավ հեռանալ երկրից, եթե Պարթևը թողնի Հայաստանը, ապա այդ երկուսն էլ կատարվեց, մինչև որ Ներոնը, իմանալով տեղի ունեցածների մասին և ընդունելով Վոլոգեսոսի իսկույն ևեթ ուղարկած դեսպաններին, պատասխանեց նրանց, թե Հայաստանը կտա
4 Տիրիդատեսին, եթե սա Հռոմ գա. իսկ Պետոսին իշխանությունից զրկելով և նրա հետ եղած զինվորներին այլ վայրեր ուղարկելով, Կորբուլոնին դարձյալ կարգադրեց պատերազմել նրանց դեմ։ Թեև ինքն անձամբ ուզում էր մասնակցել այդ արշավանքին, սակայն զոհ մատուցելիս ընկել էր. ուստի և չհամարձակվեց արշավանքի դուրս գալ, այլ մնաց երկրում։

23, 1 Կորբուլոնը թեպետև բացահայտ պատերազմի էր պատրաստվում Վոլոգեսոսի դեմ, հարյուրապետի[285] ուղարկելով, պատվիրեց Վոլոգեսոսին հեռանալ երկրից. հատկապես խորհուրդ տվեց իր եղբորն ուղարկել Հռոմ և համոզեց նրան,
2 քանզի թվում էր, թե ինքը նրանից առավել ուժեղ է։ Այսպիսով, նրանք գումարվեցին այդ նույն Հռանդեայում, թե՛ Կորբուլոնը, թե՛ Տիրիդատեսը. քանզի այս վայրը հաճելի էր երկուսին էլ. մեկին՝ որովհետև այստեղ պաշարելով հռոմայեցիններին, կապիտուլյացիայի ենթարկեցին ու բաց թողեցին, իբրև ապացույց ողորմած վերաբերմունքի, իսկ մյուսին՝ այդ վայրը նախկինում յուրայինների կրած ան-

3 պատվությունը ջնջելու հնարավորություն էր տալիս։ Այս-
տեղ բարձր բեմ պատրաստվեց, և դրա վրա կանգնեցվե-
ցին Ներոնի պատկերքը[286], և Տիրիդատեսը հայերի, պար-
թևների ու հռոմայեցիների բազմության առաջ մոտեցավ
դրանց ու խոնարհվեց, այնուհետև զոհ մատուցելով դրանց
և հանդիսավոր կոչելով, իր գլխից խույրը[287] վերցրեց ու
4 դրեց դրանց վրա. և Մոնոբազոսն ու Վոլոգեսոսը ևս եկան
Կորբուլոնի մոտ ու պատանդներ տվեցին նրան։ Եվ այդ
դեպքերի առթիվ Ներոնը մի շարք անգամ իմպերատոր հրա-
շակվեց և, հակառակ ընդունված կարգի, հաղթահանդես
կատարեց։

5 Եվ ահա Կորբուլոնը, թեպետ ուներ և՛ մեծ ուժ, և՛ ոչ
պակաս փառք, և կարող էր հեշտությամբ դառնալ նույնիսկ
իմպերատոր—քանի որ մարդիկ խստագույնս ատում էին
Ներոնին, իսկ իրենով ամեն կերպ հիանում—բայց ինքը ոչ
որևէ խռովություն բարձրացրեց, ոչ էլ մեղադրվեց նման
6 բանում։ Նա այժմ իրեն ավելի խոհեմ էր պահում. նա Ան-
նիոսին՝ իր փեսային, որն իր փոխհրամանատարն էր, Հռոմ
ուղարկեց, Տիրիդատեսին ուղեկցելու պատրվակով, բայց
իրականում նրան դիտավորյալ կերպով ուղարկեց Ներոնի
մոտ պատանդության։ (Ներոնը) այնքան վստահ էր, թե նա
չի ապստամբելու, որ նրա փեսային, որը թեև նախկինում
պրետոր[288] էր եղել, թույլատրեց վերցնել իրեն տեղակալ։

ԳԻՐՔ ՎԱԹՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

1, 1 Երբ (Հռոմում) կոնսուլներ էին Գայոս Տելեսինոսը և
Սուետոնիոս Պավլինոսը, տեղի ունեցավ ամենափառահեղ
մի բան, միաժամանակ նաև մեկ ուրիշ ամենաամոթալի
դեպք։ (Մի կողմից) Ներոնը մասնակցեց կիթառահարների
մրցությանը, և երբ Մենեկրատեսը, կիթառահարության
ուսուցիչը, ձիարշավարանում նրա պատվին հաղթահանդես
2 կազմակերպեց, ինքը հանդես եկավ իբրև կառավար։ (Մյուս
կողմից) Տիրիդատեսը ներկայացավ Հռոմ, իր հետ բե-
րելով ոչ միայն իր, այլև Վոլոգեսոսի և Պակորոսի[289] և
Մոնոբազոսի որդիներին. ու նրանց ամբողջ երթը Եփրատի
մոտից սկսած նմանվում էր հաղթահանդեսի։ Քանզի ին-
քը՝ Տիրիդատեսը թե՛ տարիքով, թե՛ դեղեցկությամբ և թե՛

2, 1 ծագումով ու խելքով ծաղկուն վիճակում էր. և նրա ամբողջ
շքախումբն ու արքունի հանդերձանքը ուղեկցում էր նրան.
ու երեք հազար պարթևական, ինչպես նաև մեծ թվով հոո-
2 մայեցի հեծյալները հետևում էին նրան: Նրանց թե՛ քա-
ղաքներն էին դիմավորում տոնազարդ և թե՛ ժողովուրդը՝
բարձրագոչ և հրճվագին. և ամբողջ պարենը նրանք ստա-
նում էին անվճար, այնպես որ նրանց ամենօրյա ծախսը
հանրային գանձարանից հաշվվում էր քսան բյուր (դրաք-
մե)[290]: Եվ այս նույն ձևով կատարվում էր շարունակ ինն
ամիս տևած նրանց ամբողջ ուղևորության ընթացքում:
3 (Տիրիդատեսը) ամբողջ ճանապարհը, մինչև Իտալիա հեծ-
յալ անցավ և նրա կողքին հեծյալ գնում էր նրա կինը, գլե-
խին քողի փոխարեն ոսկե սաղավարտ դրած, որպեսզի ոտ-
նահարած չլինի (մարդկանց) չերևալու իր հայրենի սովո-
րույթը: Իսկ Իտալիայում նա փոխադրվեց Ներոնի կողմից
ուղարկված երկձի (կառքով) ու Պիկենումի ճանապարհով
4 եկավ Նեապոլիս, (Ներոնի) մոտ: Նա Ներոնին մոտենա-
լիս հրաժարվեց մինչև իսկ իր ակինակեն մեկ կողմ դնել.
թեպետև իրեն պատվիրել էին, այլ գամերով այն ամրաց-
րեց պատյանին. հետո նա ծնկի եկավ ու ձեռները խաչաձևեց
3, 1 և նրան կոչելով իր վեհապետը[291], երկրպագեց: Ներոնն ահա
այս բանի համար ևս նրա վրա հիացավ և նրան ամեն կերպ
հյուրասիրելուց բացի, Պուտեոլիում (գլադիատորական)
մենամարտեր կազմակերպեց: Ագոնոթետեսն էր[292] Պատ-
րոբիոսը՝ ազատ արձակված իր ստրուկը, որն այնքան շքե-
ղություն և ծախս էր ներդրել, որ ամբողջ օրը ուրիշ ոչ ոք,
բացի եթովպացիներից—այրեր, կանայք և երեխաներ—
2 չերևաց թատրոնում: Այս ամենի համար Պատրոբիոսին
ինչ-որ պատիվ պետք էր մատուցել, ուստի Տիրիդատեսը իր
բարձրադիր աթոռից նետահարեց գազաններին և մեկ նե-
տումով—եթե կարելի է հավատալ—միանգամից երկու ցուլի
վարսեց և սպանեց:

4, 1 Սրանից հետո Ներոնը նրան Հռոմ առաջնորդեց և խույրը
դրեց նրա գլխին: Ամբողջ քաղաքը զարդարված էր լույսերով
և պսակներով և ամենուրեք երևում էին մարդկանց հոծ
բազմություններ. առանձնապես բազմամարդ էր ֆորումը:
2 Կենտրոնում, իրենց աստիճանների համեմատ, կանգնած
էին քաղաքացիները, սպիտակազգեստ և դափնեզարդ. իսկ

մնացած բոլոր տեղերում՝ պայծառորեն հանդերձավորված
զինվորներ, որոնց զենքերն ու դրոշները վայելատակում էին։
Եվ նույնիսկ շրջակա բոլոր շենքերի կղմինդրե կտուրներն
անգամ չէին երևում (այնտեղ) բարձրացած բազմությունից։
3 Այս ամենն այսպես պատրաստվել էր գիշերվա ընթացքում,
իսկ լուսաբացին Ներոնը մտավ ֆորում, հագած հաղթահան-
դեսի զգեստը, սենատի և պրետորականների[293] հետ ու բարձ-
րանալով բեմ, նստեց արքունի գահավորակի վրա։ Դրանից
հետո Տիրիդատեսը և նրա ուղեկիցներն անցան երկուստեք
կանգնած հոպլիտների շարքերի միջով ու մոտենալով բե-
5, 1 մին, երկրպագեցին նրան, ինչպես նախկինում։ Երբ այս
առթիվ աղաղակ առաջացավ, Տիրիդատեսը ահաբեկվեց և
որոշ ժամանակ մնաց անխոս, վախենալով, թե արդեն
կորստի է մատնված։ Այնուհետև, երբ լռություն ազդարար-
վեց, նա վերագտավ իր կորովը, և բռնադատելով իր հպար-
տությունը, պատեհության և անհրաժեշտության առաջ դար-
ձավ ծառայամիտ, առանց ուշադրություն դարձնելու, թե
ստորացուցիչ ինչ խոսք էր բարբառելու իր ստանալիք պար-
2 գևի հույսով։ Նա խոսեց այսպես. «Ես, ո՛վ վեհապետ, Արսա-
կեսի հետնորդն եմ, Վոլոգեսոս և Պակորոս թագավորների եղ-
բայրը, իսկ քո ծառան։ Ու եկել եմ ես դեպի քեզ, իմ աստծուն,
երկրպագելու քեզ, ինչպես Միթրային, և թող ինձ համար
կատարվի այն, ինչ դու ինքդ կամենաս. քանզի դու ես իմ
3 վիճակը և իմ բախտը»։ Իսկ Ներոնը նրան այսպես պա-
տասխանեց. «Եվ դու լավ արեցիր անձամբ գալով այստեղ,
որպեսզի քո ներկայությամբ իմ ներկայությունը վայելես. և
այն ամենը, ինչ ոչ քո հայրը քեզ ժառանգություն թողեց,
ոչ ևս քո եղբայրները քեզ տալուց հետո պահպանեցին, ես
բոլորը քեզ պարգևում եմ և դարձնում Հայաստանի թագա-
վոր, որպեսզի թե՛ դու և թե՛ նրանք հասկանաք, թե ես կա-
րող եմ թագավորությունները և՛ վերցնել, և՛ պարգևել»։ Այս
ասելով նա պատվիրեց բեմի առաջ հատկապես այդ առթիվ
պատրաստված աստիճանի վրա բարձրանալ. և երբ (Տիրի-
դատեսին) նստեցրին նրա ոտքերի առաջ, նա խույրը դրեց
նրա գլխին։ Այնժամ մեծ և բազմապիսի աղաղակ բարձրա-
6, 1 ցավ։ Այնուհետև, (սենատի) հատուկ որոշման համաձայն,
թատերական հանդիսություն տեղի ունեցավ։ Եվ թատրոնը,
ոչ միայն նրա բեմը, այլև նրա ամբողջ շրջագիծը ներսից

ոսկեպատած էր, և այնտեղ եղած ամեն ինչ ոսկով էր զար-
2 դարված. ուստի և այդ օրը կոչեցին «ոսկե»: Արևից պաշտպանվելու համար գլխավերևում պարզած վարագույրները ծիրանեգույն էին, և դրանց մեջտեղում աստղնագործած էր Ներոնը՝ ռազմակառք վարելիս, իսկ նրա շուրջը փայլփլում էին ոսկե աստղեր:

3 Ամեն ինչ ահա այսպես կատարվեց. և պարզ է, որ նրանք շքեղ խրախճանք ևս ունեցան: Եվ Ներոնն այս ամենից հետո հրապարակով կիթառահարեց և ռազմակառք վարեց, հագած կանաչ համազգեստ և գլխին դրած կառապանի
4 սաղավարտ: Այս բոլորից Տիրիդատեսը զզվանք զգաց նրա հանդեպ, բայց գովաբանեց Կորբուլոնին, որին միայն մեկ բանում մեղադրեց. այն, որ այսպիսի վեհապետ ունենալով համբերում էր: Իսկապես նա իր այս խոսքերը չթաքցրեց նույնիսկ Ներոնից, այլ մի անգամ ասաց նրան. «Ո՛վ վե-
5 հապետ, հանձին Կորբուլոնի լավ ստրուկ ունես». Բայց այս ամենն ասաց նրան առանց հասկացվելու. իսկ բոլոր մյուս դեպքերում նա շողոքորթեց և շատ վարպետորեն փորձեց հաճոյանալ նրան, որի համար էլ նա բազմապիսի նվերներ ստացավ, ինչպես ասում են, հինգ հազար բյուր (դրաքմե)[294] արժողությամբ և Արտաշատը վերաշինելու թույլտո-
6 վություն[295]: Այս ամենից բացի նա բազմաթիվ վարպետներ վերցրեց իր հետ, մի մասին ստանալով Ներոնի կողմից, մյուս մասին համոզելով փողի միջոցով: Այսուհանդերձ Կորբուլոնը այդ բոլորին չթույլատրեց անցնել Հայաստան, այլ միայն նրանց, ում պարգևել էր Ներոնը: Դրա համար էլ
7, 1 Տիրիդատեսը (Կորբուլոնի վրա) առավել հիացավ, իսկ Ներոնին՝ արհամարհեց: Ու նա վերադարձավ ոչ իր եկած ճանապարհով—իլլիրիական երկրով՝ Հոնիական ծովի հյուսիսով—այլ Բրենդեսիումից նավեց մինչև Դյուրրաքիոն: Նա տեսավ նաև Ասիայի քաղաքները, որի հետևանքով էլ նա զարմացել էր հռոմեական տերության հզորությունից և գեղեցկությունից:

10 Մի անգամ Տիրիդատեսը պանկրատիոն (մրցություն)[296] դիտելիս, տեսնելով, որ մենամարտողներից մեկը վայր ընկնելուց հետո ծեծվում էր հակառակորդի կողմից, բացականչեց. «Մարտն անարդար է, քանզի արդարացի չէ ընկնողին ծեծելը»:

2 Տիրիդատեան ահա վերաշինելով Արտաշատը, այն անվանեց Ներոնեյա. բայց Վոլոգեսոսը չցանկացավ իտկ գալ Ներոնի մոտ, թեպետև բազում անգամներ հրավիրել էր. և, ի վերջո, երբ (այդ հրավերները) ձանձրալի դարձան, պատասխան ուղարկեց նրան, թե՝ «Ավելի քեզ համար է հեշտ, քան թե ինձ համար, այսքան ծովեր անցնելը. ուստի և եթե դու գաս Ասիա, այնժամ մենք կպայմանավորվենք, թե որտե՞ղ հանդիպենք իրար»: Վերջում այսպիսի հաղորդում հղեց Պարթևը (Ներոնին):

8, 1 · Ներոնը, թեպետև զայրացել էր նրա վրա, չնավեց նրա դեմ, ոչ էլ եթովպացիների կամ Կասպյան դռների կողմը,
2 ինչպես նախկինում ծրագրել էր: Այսուհանդերձ նա ուրիշ գործերի հետ միասին, այս երկու կողմերն էլ լրտեսներ ուղարկեց, բայց տեսնելով, որ այդ երկրների հպատակեցումը կարոտ է ժամանակի և ջանքերի, հույս էր տածում, որ դրանք ինքնաբերաբար կմիանան իրեն:

ԳԻՐՔ ՎԱԹՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ

11, 3 Երբ Վոլոգեսոսը նրան[297] նամակ ուղարկեց այսպիսի ողջույնով՝ «Արքայից արքա Արսակեսը Փլավիոս Վեսպասիանոսին ողջույն», կայսրը բոլորովին չմեղադրեց նրան և փոխադարձաբար պատասխանեց նույն եղանակով, առանց ավելացնելու իր կայսերական տիտղոսներից և ոչ մեկը:

ԳԻՐՔ ՎԱԹՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ

19, 3b Նրա[298] օրոք հայտնվեց նաև կեղծ-Ներոնը, որը ասիացի էր, Տերենտիոս Մաքսիմոս անունով. նա նման էր Ներոնին թե՛ իր տեսքով և թե՛ իր ձայնով, քանզի նա կիթառահարում էր նաև: Եվ Ասիայում նա ոմանց իր կողմը գրավեց ու դեպի Եփրատ առաջանալիս, շատ շատերին ևս գրավեց իր կողմը և վերջապես ապաստան գտավ Արտաբանոսի՝ պարթևների առաջնորդի մոտ, որը Տիտոսի հանդեպ ունեցած թշնամանքի պատճառով, ընդունեց սրան և պատրաստություն էր տեսնում նրան Հռոմում հաստատելու համար:

ԳԻՐՔ ՎԱԹՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ

17, 1 Այնուհետև նա[299] ռազմերթի ելավ հայերի և պարթևների դեմ այն պատրվակով, որ հայոց թագավորը[300] թագը

ոչ թե իրենից էր ստացել, այլ պարթևների թագավորից. մինչդեռ իրականում նա տոգորված էր խիստ փառամոլությամբ։

2 Երբ Տրայանոսը պարթևների դեմ արշավելիս հասել էր Աթենք, այնտեղ նրա մոտ ժամանեցին Օսրոեսի[301] ուղարկած դեսպանները, որոնք եկել էին խաղաղություն հայցելու և բերել էին ընծաներ։ Եվ որովհետև (Պարթևին) հայտնի էր, թե նա հարձակվելու է և դրանով իսկ պատրաստ է իրագործելու իր սպառնալիքները, խիստ վախեցավ և մեղմելով իր գոռոզությունը, (դեսպաններ) ուղարկեց, աղերսելով նրան չպատերազմել իր դեմ. միաժամանակ խնդրում էր նրան, որ Հայաստանը տրվի Պարթամասիրիսին, որը նույնպես Պակորոսի որդին էր, և թախանձում, որ թագն ուղարկ-

3 վի սրան։ Քանզի, ասում էր նա, Եքսեդարեսին[302], որը հարմար չէր ոչ հռոմայեցիների, ոչ էլ պարթևների համար, ինքը գահընկեց էր արել։ Իսկ (Տրայանոսը) ոչ ընծաներն ընդունեց, ոչ էլ որևէ բանավոր պատասխան տվեց կամ նամակ ուղարկեց. այլ հայտնեց միայն, որ բարեկամությունը որոշվում է գործերով և ոչ թե խոսքերով. հետևաբար, երբ ինքը ժամանի Սիրիա, պատշաճ ամեն ինչ կանի։ Եվ այսպիսի մտադրությամբ նա Ասիայի, Կյուկիայի և սահմա-

18. 1 նակից երկրների վրայով գնաց Սելևկիա։ Եվ երբ նա հասավ Անտիոք, Ավգարոս Օսրոենացին[303], թեև ինքը անձամբ չհայտնվեց, սակայն ընծաներ և բարեկամական խոսքեր ուղարկեց. քանզի նա նույնքան վախենում էր թե՛ Տրայանոսից և թե՛ պարթևներից, ուստի և չցանկացավ հանդիպել նրա հետ։

* * *

19. 1 Պարթամասիրիսը կամայական մի բան կատարեց։ Տրայանոսին ուղարկած իր առաջին նամակը նա հղել էր իբրև «Հայաստանի թագավոր». բայց քանի որ պատասխան չստացավ, ապա նորից նամակ ուղարկեց, բայց այդ տիտղոսը հանած և խնդրեց իր մոտ ուղարկել Մարկոս Յունիոսին՝ Կապպադովկիայի կառավարչին, որպեսզի նրա մի-

2 ջոցով իր խնդրանքը հաղորդի։ Սակայն Տրայանոսը նրա մոտ ուղարկեց Յունիոսի որդուն, մինչդեռ ինքը առաջ ընթացավ մինչև Արսամոսատա[304] և այն առանց կռվի վերցնելով, եկավ Սատալա[305] և Անքիալոսին՝ հենիոքների ու

մաքեդոնների թագավորին, ընծաներ ուղարկեց։ Նա Հայաստանի Ելեգեայում[306] ընդունեց Պարթամասիրիսին։ (Կայսրը) նստած էր պատնեշի եզրին կանգնեցրած բեմի վրա։ Եվ (Պարթամասիրիսը) ողջունելով նրան, գլխից թագը հանեց ու դրեց նրա ոտքերի մոտ, լուռ կանգնեց, սպասելով, որ նա կվերցնի այն։ Երբ այս բանի վրա զինվորները մեծ աղաղակ բարձրացրին և Տրայանոսին, որպես ինչ-որ հաղթություն տանելու համար կոչեցին իմպերատոր—քանզի նրանք առանց կարոսի[307] և անարյուն հաղթանակ էին համարում այս, երբ տեսան, որ Արշակունի թագավորը՝ Պակորոսի որդին՝ Օսրոեսի եղբորորդին, կանգնած է (կայսեր) առաջ առանց թագի, որպես գերեվարված—(Պարթամասիրիսը), ահաբեկվեց և կարծեց, թե ինքը ծանակվում է և մատնվելու է կորստի։ Նա շուռ եկավ և ուզեց փախչել, բայց, տեսնելով, որ ինքը շրջապատված է, խնդրեց շնորհ անել, որ ամբոխի առաջ չխոսի։ Եվ այսպիսով, նա ներս տարվեց վրանը, սակայն դարձյալ չկարողացավ անել այն, ինչ ցանկանում էր։ Եվ երբ նա զայրացած դուրս եկավ զորաճամբարից, Տրայանոսը ետ կանչել տվեց նրան և նորից բարձրանալով բեմ, հրամայեց, որ նա ի լուր բոլորի ասի այն ամենը, ինչ կամենում է, որպեսզի մարդիկ, անգետ լինելով իրենց երկուսի միջև առանձին խոսվածներին, այդ մասին չտան զանազան հնարովի տեղեկություններ։ Այս լսելով, Պարթամասիրիսն այլևս չկարողացավ լռել, այլ խոսեց մեծ համարձակությամբ և, իմիջիայլոց, ասաց, որ ինքը ոչ (պատերազմում) պարտվել է, ոչ իսկ գերի է վերցվել, այլ եկել է կամավոր կերպով, հավատացած լինելով, որ ինքը ոչ մի վիրավորանք չի կրի և կստանա թագավորությունը, ինչպես որ Տիրիդատեսն ստացել էր Ներոնից։ Տրայանոսը նրա բոլոր ասածներին պատշաճ կերպով պատասխան տվեց և ասաց, որ Հայաստանը ոչ ոքի չի տալու—քանզի այդ երկիրը պատկանում է հռոմայեցիներին և ունենալու է հռոմայեցի կառավարիչ—իսկ իրեն թույլ կտա գնալ ուր որ կամենում է։ Այսպես Պարթամասիրիսին և նրան ընկերակցող պարթևներին նա բաց թողեց, տալով նրանց հեծյալ ուղեկիցներ, որպեսզի ոչ մեկի հետ չբանակցեն և որևէ խռովություն չբարձրացնեն։ Իսկ նրա հետ եկած բոլոր հայե-

րին հրամայեց մնալ իրենց գտնված երկրում, քանի որ նրանք այժմ իր հպատակներն էին:

21, 1 Տրայանոսը, բոլոր հարմար վայրերում պահակազորներ թողնելով, եկավ Եդեսսա և այնտեղ առաջին անգամ տեսավ Ավգարոսին: Քանզի նախապես նա թեպետև շատ անգամ էր դեսպաններ և ընծաներ ուղարկել արքային[308], բայց անձամբ ինքը այս կամ այն պատճառաբանությամբ երբեք չէր եկել նրա մոտ. այսպես նաև Մաննոսը՝ սահմանամերձ Արաբիայի տիրակալը, ինչպես և Սպորակեսը՝ Ան-
2 թեմուսիայի[309] ցեղապետը: Ինչևիցե, Ավգարոսը այս առթիվ մասամբ համոզվելով իր որդու՝ Արբանդեսի[310] պընդումներից, որը գեղեցիկ էր և երիտասարդ և դրանով իսկ շնորհ էր գտել Տրայանոսի մոտ, մասամբ էլ ահաբեկված նրա ներկայությունից, դիմավորեց նրան ճանապարհին, սկսեց արդարանալ և ներման արժանացավ. քանզի որդին
3 նրա համար պայծառ միջնորդություն էր: Այս պատճառով էլ նա դարձավ Տրայանոսի բարեկամը և խրախճանք տվեց նրա պատվին և ընթրիքի ընթացքում բերեց իր որդուն բարբարոսական եղանակով պարելու համար:

22, 1 Երբ Տրայանոսը եկել էր Միջագետք, Մաննոսը նրա մոտ պատգամաբեր ուղարկեց, և Մանիսարոսը[311] դեսպաններ ուղարկեց խաղաղության ի խնդիր. քանզի Օսրոեսը արշավանք էր սկսել իր դեմ, պատրաստվելով իրենից խլելու Հայաստանի և Միջագետքի այն մասերը, որ ինքը նվաճել էր. (Տրայանոսը) պատասխանեց, թե ինքը չի հավատալու նրան, մինչև տրված խոստման համաձայն չգա իր
2 մոտ և իր գործերով չհաստատի իր խոստումները: Միևնույն ժամանակ նա կասկածներ ուներ Մաննոսի հանդեպ, այն բանի համար, որ նա Մեբարսապեսին՝ Ադիաբենեի թագավորին, զինական ուժ էր ուղարկել, որը և ամբողջությամբ կորստի էր մատնվել հռոմայեցիների կողմից: Ուստի և (Տրայանոսը) այդ ժամանակ չսպասեց նրանց գալուն, այլ ինքը շարժվեց դեպի Ադիաբենե՝ նրանց դեմ. և այսպիսով Սինգարան[312] և մի քանի այլ վայրեր առանց պատերազմի նվաճվեցին Լուսիոսի[313] ձեռքով:

3 Ադենյուստրեն պարսպապատ ամրություն էր, որտեղ ոմն հարյուրապետ Սենտիոս ուղարկվեց իբրև դեսպան Մեբարսապեսի մոտ և այնտեղ կապանքի տակ դրվեց:

817—14

Բայց հետագայում, երբ հռոմայեցիները մոտեցան ամրությանը, նա իր հետ գերվածներից ոմանց կազմակերպեց և նրանց հետ ազատվելով իր կապանքներից, բերդապահների հրամանատարին սպանեց և դարպասները բաց արեց իր հայրենակիցների առաջ:

* * *

26, 1 Տրայանոսը գարնանամուտին ներխուժեց Բշնամու երկիրը: Եվ քանի որ Տիգրիսին մերձակա երկիրը զուրկ էր նավաշինության համար պիտանի անտառանյութից, նա սայլերի վրա դեպի գետը բերեց այն նավերը, որ պատրաստվել էին Նիսիբիսի անտառներում. քանզի դրանք այնպես էին պատրաստված, որ հնարավոր էր ամբողջովին քանդել
2 և ապա միակցել: Նա մեծագույն դժվարությամբ կամրջեց գետը Կարդյուենե լեռան դիմաց. քանզի բարբարոսները հակադիր ափին կանգնած խանգարում էին: Բայց Տրայանոսը բազմաթիվ նավեր ու զինվորներ ուներ իր տրամադրության տակ. այնպես որ նավերի մի մասը հապճեպ միացվում էր իրար, դրանց առջևում շարված նավերի վրա կանգնած էին հոպլիտներ և աղեղնավորներ, մինչդեռ մյուս-
3 ները փորձում էին գետն անցնել այս կամ այն կետում: Այս բոլորի հետևանքով, ինչպես նաև անտառազուրկ երկրում այսքան մեծ թվով նավերի հայտնվելուց շփոթահար,
4[1] բարբարոսները տեղի տվեցին: Եվ հռոմայեցիներն անցան մյուս ափը և գրավեցին ամբողջ Ադիաբենեն, իսկ այս երկիրը Նինվեին սահմանակից Ասսյուրիայի մի մասն է, և Արբելան ու Գավգամելան, որտեղ Ալեքսանդրը հաղթեց Դարեհին[314], գտնվում են այս երկրում. այս երկիրը բարբարոսների լեզվով կոչվել է նաև Ատյուրիա, զույգ սիգմա (տառերը) տաու (տառով) փոխարինելու հետևանքով[315]:
4[2] Ու դրանից հետո նրանք առաջացան մինչև Բաբելոն, մեծապես ազատ մնալով որևէ խոչընդոտից, քանի որ պարթևների ուժերը քայքայվել էին ներքին երկպառակություններից, մի բան, որը այդ ժամանակ ևս շարունակվում էր:

* * *

28, 1 Տրայանոսը մտադիր էր Եփրատը ջրանցքով բերել Տիգրիս, որպեսզի այդ ջրանցքով կարողանա իր նավերը տանել և դրանցով հնարավորություն ունենա կամուրջ պատ-

բաստելու. բայց տեղեկանալով, որ (Եփրատը) ավելի բարձրր է Տիգրիսից. այդ բանը չկատարեց, վախենալով, որ Եփրատը հորդառատ հունով կհոսի դեպի ցած և դրանով
2 իսկ կդառնա աննավարկելի: Ուստի և նա ձգափոկերով նավերը քաշեց ու փոխադրեց երկու գետերի միջև եղած նվազագույն տարածության վրայով—քանի որ Եփրատի ամբողջ հոսանքը թափվում է ճահճի մեջ և այնտեղից ինչ-որ կերպ խառնվում Տիգրիսին—անցավ Տիգրիսը և մտավ Կտեսիփոն. այն նվաճելուց հետո նրան ողջունեցին իբրև
3 իմպերատոր և նա իրավունք ստացավ Պարթիկոս[316] կոչվելու: Այլ պատիվներից բացի, սենատի որոշմամբ նրան իրավունք շնորհվեց հաղթահանդեսներ տոնել ինչքան ինքը ցանկանա:

Կտեսիփոնը գրավելուց հետո նա ցանկացավ նավել Էրյութրեյան ծովով[317]: Այս ծովը օվկիանոսի[318] մի մասն է և այդպես է կոչվում մի ժամանակ այստեղ տիրապետած
4 իշխանավորի անունով[319]: (Տրայանոսը) հեշտությամբ իր կողմը գրավեց Տիգրիս գետում գտնվող Մեսենե կղզին, որտեղ թագավորում էր Աբգամբելոսը. սակայն նա վտանգի ենթարկվեց մեծ փոթորկի պատճառով, որն առաջացել էր Տիգրիսի սրընթաց հոսանքից և օվկիանոսի տեղատվությունից:

Աբգամբելոսը՝ Տիգրիս գետում գտնվող կղզու տիրակալը, հավատարիմ մնաց Տրայանոսին, թեպետև հարկադրվել էր տուրք վճարել, և այսպես կոչված Քարակս Սպասսինուի[320] բնակիչները ևս, որոնք Աբգամբելոսի տիրապետության տակ էին, նրան բարեկամաբար ընդունեցին:

29, 1 Այստեղից էլ նա եկավ մինչև օվկիանոս և երբ իմացավ դրա բնույթը և տեսավ դեպի Հնդկաստան ընթացող մի նավ, ասաց. «Ես հաստատ կարշավեի հնդիկների վրա, եթե դեռևս երիտասարդ լինեի»: Քանի որ նա մտածում էր հնդիկների մասին և հետաքրքրվում էր նրանց գործերով, ապա երանի էր տալիս Ալեքսանդրին: Նա ասում էր, թե նրանից ավելի հեռու կգնա և այդ մասին էլ կհաղորդի սենատին, բայց իր նվաճածն իսկ արդեն ի վիճակի չէր պահ-
2 պանել: Իր բոլոր գործերի համար նա այլ պարգևներ ևս ստացավ և իրեն իրավունք տվեց իր ցանկությամբ հաղթահանդես տոնելու իր կողմից նվաճված ամեն մի երկրի

համար: Քանզի (Հռոմ) ուղարկած իր զեկուցագրերում մըշտապես այնքան շատ ժողովուրդների անուններ էր հաղորդում, որ (սենատորները) երբեմն չէին կարողանում պատկերացնել նրանց և նույնիսկ չէին կարողանում ճիշտ ան-
3 վաննել: Եվ (ժողովուրդը Հռոմում) նրա համար այլ պատիվներից բացի քաղաքի ֆորումում իսկ հաղթության կամար կանգնեցրեց և պատրաստվում էր նրա վերադարձին առավել հեռու գնալով, դիմավորել նրան: Բայց նրան վիճակված չէր այլևս ոչ Հռոմ ժամանել, ոչ իսկ իր նախկին սխրանքներին արժանի որևէ գործ կատարել և մինչև իսկ կորցնելու
4 էր իր նախորդ նվաճումները: Քանզի այն ժամանակամիջոցում, երբ նա նավարկում էր օվկիանոսում և այնտեղից վերադառնում, նվաճված բոլոր երկրները ապստամբեցին, և այդ երկրներում տեղադրված (հռոմեական) պահակազորները կամ դուրս քշվեցին, կամ կոտորվեցին:

30, 1 Այս ամենի մասին Տրայանոսն իմացավ Բաբելոնում[321]: Քանզի նա եկավ այստեղ թե՛ նրա համբավի պատճառով, թեպետև նշանակալից ոչինչ չտեսավ, այլ միայն հողաթմբեր ու քարեր, ավերակներ, և թե՛ Ալեքսանդրի պատճառով, որին էլ նրա վախճանված տանը զոհաբերություն կատարեց: Ահա իմանալով այդ ամենի մասին, Լուսիոսին և Մաքսիմոսին ուղարկեց ապստամբների դեմ:
2 Վերջինս մարտում պարտվելով, սպանվեց. մինչդեռ Լուսիոսը, այլ հաջողություններից բացի, վերանվաճեց նաև Նիսիբիսը, իսկ Եդեսսան պաշարեց, գրավեց և հրի մատնեց: Սելևկիան նույնպես գրավվեց փոխհրամանատարներ Երյուկիոս Կլարոսի և Հուլիոս Ալեքսանդրի կողմից և հրկիզվեց: Տրայանոսը վախենալով, որ պարթևները ևս կարող են խռովություն բարձրացնել, ցանկացավ նրանց թագավոր տալ հենց իրենցից: Ուստի և գալով Կտեսիփոն, մի մեծ հրապարակում ի մի կանչեց բոլոր հռոմայեցիներին և բոլոր պարթևներին, որոնք այն ժամանակ այնտեղ էին ու ելնելով բարձր բեմ և պարծենալով իր կատարած գործերի համար, Պարթամասպատեսին[322] պարթևների թագավոր կարգեց, թագը նրա գլխին դնելով:

ՀԱՏՎԱԾ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՐՔԻՑ

9, 6 Երբ Վոլոգեսոսը[323], Սանատրուկեսի[324] որդին, պատրաստվել էր Սևերոսի[325] զորքի դեմ ճակատամարտելու և

ընդհարումից առաջ զինադադար էր խնդրել և կնքել, (Տրայանոսը) նրա մոտ դեսպաններ ուղարկեց և Հայաստանի մի մասը շնորհեց նրան խաղաղության առթիվ։

ԳԻՐՔ ՎԱԹՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ

31, 1 Այնուհետև (Տրայանոսը) եկավ Արաբիա[326] և գործողություններ ձեռնարկեց Հատրայի[327] բնակիչների դեմ, քանի որ սրանք ևս ապստամբել էին։ Այս քաղաքը ոչ խոշոր է, ոչ էլ բարգավաճ. շրջակա երկիրն էլ մեծ մասամբ անապատ է և ոչ ջուր ունի—բացի փոքր մի քանակից, այն էլ
2 վատ—ոչ անտառ, ոչ իսկ խոտ։ Եվ այս պատճառով էլ անհնարին է դառնում մեծ ուժերով այն երկար պաշարման ենթարկել. նրանց փրկում է նաև Հելիոսը[328], որին էլ քաղաքը ձոնված է. ուստի և ոչ այդ ժամանակ Տրայանոսի կողմից նվաճվեց, ոչ ևս հետագայում՝ Սևերոսի կողմից, թեպետև քաղաքի պարիսպների որոշ մասեր նրանք տապալեցին։
3 Տրայանոսն իր հեծյալներին ուղարկեց առաջ, դեպի պարիսպները, բայց ձախողվեց, ուստի և նրանք ետ շպրտվեցին իրենց ճամբարը, իսկ ինքը՝ Տրայանոսը, հեծյալ անցնելիս, քիչ էր մնացել վիրավորվեր, թեպետև չճանաչվելու համար հանել էր արքայական հանդերձը։ Բայց թշնամիները նկատելով նրա ալեխառն հպարտ գլուխը և դեմքի վեհությունը, կռահեցին նրա ով լինելը, նետեր արձակեցին նրա վրա և սպանեցին նրա հեծյալ ուղեկիցներից
4 մեկին։ Ու որտ էր լինում, և ծիածան երևում, փայլակներ էին շողում, և տեղատարափ թափվում, ու կարկուտ տեղում, և կայծակները էին զարկում հռոմայեցիներին, երբ սրանք փորձում էին հարձակվել։ Երբ ուզում էին ճաշել, ճանճեր էին նստում նրանց ուտելիքի և ըմպելիքի վրա, ամեն ինչ տհաճությամբ համակելով։ Տրայանոսը այդտեղից հեռացավ այդ վիճակում և ոչ շատ ժամանակ անց սկսեց հիվանդանալ։

* * *

33, 1 Տրայանոսը պատրաստվում էր նորից արշավել Միջագետք, բայց քանի որ հիվանդությունից ճնշվում էր, ապա նավով ճանապարհվեց Իտալիա, Պուբլիոս Էլիոս Հադրիանոսին զորքի հետ մեկտեղ թողնելով Սիրիայում։ Եվ այս-

պիսով հռոմայեցիները Հայաստանի և Միջագետքի մեծ մասը գրավելով և պարթևներին հաղթելով իզուր վտանգ-
2 վեցին և իզուր տանջվեցին։ Քանզի պարթևները ևս Պարթամասպատեսին գահազրկելով, նորից սկսեցին կառավարվել իրենց սեփական եղանակով։ Իսկ Տրայանոսն էլ հիվանդացավ, ինչպես ինքը կասկածում էր, իրեն տրված թույնի հետևանքով. մինչդեռ ուրիշները ասում են, թե պատճառը արյունն էր, որն ամեն տարի խուժում էր նրա մարմնի ստորին մասերը, իսկ այս դեպքում կանգ էր առել։
3 Նա նաև կաթվածահար եղավ, ու նրա մարմնի մի մասը անդամալույծ դարձավ, իսկ ամբողջ մարմինը քրտինք պատեց։ Եվ նա գալով Կիլիկիայի Սելինուս քաղաքը, որը մենք անվանում ենք նաև Տրայանուպոլիս, հանկարծ հոգին փչեց, իշխելով տասնինը տարի վեց ամիս և տասնհինգ օր։

ԳԻՐՔ ՎԱԹՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ

15, 1 Հրեաների պատերազմն այսպես ավարտվեց. մի երկրորդ պատերազմ սկսեցին ալանները—սրանք մասսագետներ են—Փարասմանեսի դրդմամբ։ Այն մեծապես վնասեց Ալբանիային և Մեդիային, շոշափեց նաև Հայաստանն ու Կապպադովկիան, որից հետո ալանները մասամբ համոզվեցին Վոլոգեսոսի ընծաներից, մասամբ էլ վախեցան Կապպադովկիայի կառավարիչ Փլավիոս Արրիանոսից և դադարեցրին (պատերազմը)։

15, 3 Երբ Փարասմանես Իբերացին իր կնոջ հետ եկավ Հռոմ, (Անտոնինոսը)[329] ընդարձակեց նրա իշխանությունը և թույլատրեց նրան զոհ մատուցել Կապիտոլիոնում, ձի նստած մի արձան կանգնեցրեց էնիևսի[330] տաճարում ու դիտեց նրա և նրա որդու և մյուս երևելի իբերների վարժանքը զենքերով։

ԳԻՐՔ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

1, 1 Մարկոս Անտոնինոսը[331], փիլիսոփան, երբ իրեն որդեգրած Անտոնինոսը մահանալուց հետո իշխանությունն ստացավ, անմիջապես իրեն իշխանակից դարձրեց Լուկիոս Կոմոդոսի որդուն՝ Լուկիոս Վերոսին[332]; Քանզի ինքը մարմ-
2 նապես թույլ էր և, բացի այդ, շատ էր զբաղվում ճառեր գրելով—և ասում են, թե նա կայսր լինելով հանդերձ, ոչ ամաչում էր, ոչ էլ ծուլանում ուսուցչի մոտ հաճախելու, այլև

աշակերտեց բեռվոիացի փիլիսոփա Սեքստոսին[333] և չվա-
3 րանեց հաճախելու և լսելու Հերմոգենեսի հռետորական ճառերը. բայց ինքը առավելապես հակված էր ստոիկյան-ների ուսմունքին—մինչդեռ Լուկիոսը ուժեղ էր և առավել երիտասարդ, իսկ ռազմական գործերի համար առավել հարմար. ուստի և Մարկոս (Ավրելիոսը) նրան ամուսնացրեց իր դստեր՝ Լուկիլլայի հետ և ուղարկեց պարթևների դեմ պատերազմի:

2, 1 Մինչ այդ Վոլոգեսոս[334] արդեն պատերազմն սկսել էր և նա, բոլոր կողմերից շրջապատելով Սևերիանոսի հրամանատարության տակ եղած հռոմեական լեգեոնը, որը գտնվում էր Ելեգեայում, Հայաստանի մի ինչ-որ վայրում, բոլորին նետահար էր արել և ոչնչացրել, հրամանատարնե-
2 րի հետ միասին. այժմ էլ նա ուժեղ հարձակվում էր Սիրիայի քաղաքների վրա և ահաբեկում: Լուկիոսն, ահա, եկավ Անտիոք և մեծ քանակությամբ զորք հավաքելով և իր հրամանատարության տակ լավագույն զորավարներ ունենալով, ինքը հաստատվեց քաղաքում, կարգավորեց ամեն ինչ, հոգալով պատերազմի կարիքները, իսկ զորքերը հանձնեց
3 Կասսիոսին: Սա քաջաբար դիմադրեց Վոլոգեսոսի ներխուժմանը և ի վերջո, որովհետև դաշնակիցները լքել էին նրան՝ նահանջելու ժամանակ հալածեց և ետ վանեց մինչև Սելևկիա և Կտեսիփոն. նա հրդեհելով կործանեց Սելևկիան և Կտեսիփոնում գտնվող Վոլոգեսոսի պալատները հիմնա-
4 հատակ քանդեց. իսկ վերադարձի ճանապարհին Թեպետ նա կորցրեց իր զինվորների մեծագույն մասին սովի և հիվանդության պատճառով, սակայն զորքի մնացորդների հետ
3, 1 նա ետ վերադարձավ Սիրիա: Այս հաջողությունները Լուկիոսին փառավորեցին, և նա մեծապես գոռոզացավ. բայց իր ծայրագույն բարեբախտությունը իրեն բարիք չբերեց: Քանզի ասում են, որ այս դեպքերից հետո նա դավեր նյութեց իր աներհոր՝ Մարկոսի դեմ և նախքան կկարողանար որևէ բան ձեռնարկել, Թունավորման միջոցով մահվեց կրստի:

Մարտիոս Վերոսն ուղարկել էր Թուկիդիդեսին, որպեսզի նա Սոեմոսին[335] վերստին բերի Հայաստան: Սա գենքի սպառնալիքով, ինչպես և իրեն հանդիպողների նկատմամբ բոլոր դեպքերում ցուցաբերած բարեմտության շնորհիվ,

արագ թափով առաջ էր ընթանում։ Այս Մարտիոսն ընդունակություն ուներ ոչ միայն զենքերով զսպել իր հակառակորդներին, կամ արագ գործողությամբ կանխել վտանգը, կամ էլ խաբել խորամանկությամբ. մի բան, որ զորավարների ուժն է, այլև համոզիչ խոսքերով հանգստացնել նրանց և բարեկամություն շահել վեհապանծ պարգևներով կամ հրապուրել՝ բարի հույսեր տալով։ ...Արդ՝ (Մարտիոսը) գալով Նոր քաղաք[336], որն իր ձեռքում պահում էր Պրիսկոսի դրած հռոմեական կայազորը, ապստամբության փորձ անողներին թե՛ խոսքով և թե՛ գործով հնազանդեցնելուց հետո հայտարարեց, որ (այդ քաղաքը) կլինի գլխավորը Հայաստանում։

ԳԻՐՔ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

14,2 Նույնպես և Տիրիդատես սատրապին, որը Հայաստանում խռովություններ էր բարձրացրել և սպանել էր Հենիոքների[337] թագավորին և իր սուրը թափահարել էր (Մարտիոս) Վերոսի վրա, երբ վերջինս հանդիմանել էր նրան այդ բանների համար, (Մարկոս Ավրելիոսը) չսպանեց, այլ ուղարկեց Բրետանիա։

ԳԻՐՔ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ

1,1 Մինչ շարունակվում էր (Բյուզանդիոն քաղաքի) պաշարումը, Սևերոսը[338], փառքի տենչով արշավեց բարբարոսների՝ օսրոենցիների, ադիաբենցիների և արաբների դեմ։

2 Օսրոենցիները և ադիաբենցիները ապստամբելով պաշարեցին Նիսիբիսը, բայց պարտվեցին Սևերոսից. բայց ահա Նիգերի[339] մահից հետո նրանք դեսպանություն ուղարկեցին նրա մոտ, ոչ թե իրենց գործած որևէ սխալի առիթով ներողություն խնդրելու, այլ նույնիսկ նրանից բարեգործություն պահանջելով, քանի որ, իբր իրենք ևս նրա օգտին գործ են կատարել. նրանք ասում էին, թե Նիգերի կողմնակից զինվորներին իրենք ոչնչացրել են հանուն նրա։

3 Նրանք նույնպես մի շարք ընծաներ ուղարկեցին նրան և խոստացան ետ վերադարձնել գերվածներին և իրենց ձեռքըն ընկած ամբողջ ավարը։ Բայց նրանք չէին կամենում իրենց գրաված ամրությունները թողնել և կամ կայազորներ ընդունել, այլև պահանջում էին եղածներն իսկ դուրս

բերել երկրից։ Այդ էր պատճառը, որ այս պատերազմը տեղի ունեցավ։

2,1 Երբ Եփրատն անցնելով մտավ Բշնամու տիրույթները, որտեղ երկիրը միշտ էլ ջրազուրկ է, իսկ այնժամ ամառվա պատճառով դարձել էր առավել չորային, նա իր զորքերի
2 մեծագույն մասը կորցնելու վտանգի առաջ կանգնեց։ Քանզի նրանք արդեն հոգնած էին ռազմարշավից և արևի տապից, երբ հողմափոթորիկ բարձրացավ և նրանց մեծապես սանջեց, այնպես որ ոչ կարողանում էին քայլել, ոչ էլ նույնիսկ խոսել, այլ միայն ձայնել՝ «Ջո՜ւր, ջո՜ւր»։ Ու երբ (ջուր) երևաց, դրա անսովոր լինելու պատճառով թվաց, որ նույնն է, թե բոլորովին չեն գտել. մինչև որ Սևերոսը գավաթ պահանջեց և այն ջրով լցնելով, բոլորին ի տես
3 խմեց։ Այսպիսով, ոմանք ևս խմեցին ու կազդուրվեցին։ Այնուհետև Սևերոսը գալով Նիսիբիս, ինքն այնտեղ մնաց, իսկ Լատերանոսին, Կանիդոսին և Լետոսին ուղարկեց վերոհիշյալ բարբարոսների մոտ, տարբեր ուղղություններով. և նրանք տեղ հասնելով, ավերում էին բարբարոսների երկիրը և գրավում քաղաքները։

3,1 Այդ ժամանակ, Թեպետև սկյութները ձգտում էին պատերազմելու, բայց քանի որ հավաքվել էին խորհրդի, սկսեց որոտալ և փայլատակել, և տեղատարափ սկսվեց, ու կայծակներ ընկան նրանց վրա, և ավագներից երեքն սպանվեցին, ապա նրանք ետ կանգնեցին։

2 Սևերոսը դարձյալ իր բանակը բաժանեց երեք մասի և մի մասը Լետոսին, մյուսը՝ Անյուլլիոսին և երրորդը Պրոբոսին տալով, ուղարկեց Արքե[340]։ Նրանք երեք հատվածով ներխուժեցին և նվաճեցին երկիրը, Թեպետև ոչ առանց դժվարության. իսկ Սևերոսը շնորհ արեց Նիսիբիս քաղաքին և այն հանձնեց հեծյալի կառավարմանը։ Նա ասում էր, որ ընդարձակ մի երկիր է միացրել (կայսրությանը) և այն
3 դարձրել է պատվար Սիրիայի համար։ Բայց գործնականում բոլորովին էլ այդպես չէր, քանի որ փաստորեն այն պատճառ էր դառնում մշտական պատերազմների և խոշոր ծախսերի, մինչդեռ քիչ եկամուտ տալով, խոշոր (գումարներ) էր վատնում. իսկ այսպիսով մենք առավել մոտենալով մեդացիներին և պարթևներին, մշտապես կարծես Թե նրանց համար պատերազմում ենք նրանց հարևանների դեմ։

9, 1 Այնուհետև (Սևերոսը) արշավեց պարթևների դեմ. որովհետև, մինչդեռ ինքը զբաղված էր քաղաքացիական պատերազմով, նրանք (գործողությունների) ազատություն ստանալով գրավել էին Միջագետքը, մեծ բազմությամբ արշավելով այնտեղ. դույզն ինչ և նրանք կգրավեին նաև Նիսիբիսը, եթե Լետոսը, որն այնտեղ պաշարման էր ենթարկ-
2 վել, չփրկեր քաղաքը: Այս պատճառով էլ (Լետոսը) առավել ևս հռչակվեց, թեև նա գերազանց էր նաև այլ գործերում՝ թե՛ մասնավոր և թե՛ հասարակական, ինչպես պատերազմների ընթացքում, նույնպես և խաղաղ ժամանակ: Սևերոսը, ժամանելով վերոհիշյալ Նիսիբիս, այնտեղ պատահեց մի շատ խոշոր վարազի: Այն սպանել էր մի հեծյալի, որն ապավինելով իր սեփական ուժին, փորձել էր տապալել նրան. այն դժվարությամբ բռնվեց մի մեծ խումբ զինվորների օգնությամբ և մորթվեց. նրան բռնած զինվորների թիվը ե-
3 րեսուն էր. ահա (այս վարազը) բերեցին Սևերոսին: Իսկ պարթևները չմնացին մինչև Սևերոսի գալը, այլ մեկնեցին իրենց երկիրը: Նրանց առաջնորդը Վոլոգեսոսն[341] էր, որի եղբայրը[342] ուղեկցում էր Սևերոսին: Արդ, Սևերոսը Եփրատի վրա նավակներ պատրաստելով, մասամբ նավակներով, մասամբ էլ հետիոտն իջավ նրա երկարությամբ: Պատրաստված նավակները շատ սրընթաց էին և արագասահ և ամրակառույց—քանզի Եփրատի երկայնքով և շրջակա վայրերում անտառները առատ նյութ էին մատակարարում—ուստի և նա արագ կերպով գրավեց Սելևկիան և Բաբելո-
4 նը, որոնք նախապես լքված էին: Այնուհետև, գրավելով նաև Կտեսիփոնը, նա թույլ տվեց, որ զինվորները թալանեն ամբողջ քաղաքը և մեծ թվով մարդկանց կոտորեց և մոտ տասը բյուր կենդանի վերցրեց: Բայց և այնպես ոչ Վոլոգեսոսին հետապնդեց, ոչ էլ Կտեսիփոնում հաստատվեց. այլ, ասես թե այդ արշավանքը կատարվել էր միայն այդ քաղաքը թալանելու նպատակով, նա ետ եկավ, որովհետև մի կողմից երկիրն անծանոթ էր և մյուս կողմից՝ պարենի պա-
5 կաս էր զգում: Նա վերադարձավ այլ ճանապարհով, որովհետև նախորդ արշավանքի ընթացքում պատահած անտառանյութը և խոտը սպառվել էր. զինվորների մի մասը վերադարձավ հետիոտն Տիգրիսի ափն ի վեր, մյուս մասն էլ նավակներով:

10, 1 Այնուհետև Սևերոսը անցնելով Միջագետք, մի փորձ կատարեց նաև Հատրայի դեմ, որը հեռու չէր գտնվում, բայց ոչ մի հաջողություն չունեցավ. այլ, ընդհակառակը, նրա պաշարողական մեքենաները այրվեցին, և շատ զինվորներ կործանվեցին, իսկ շատ շատերն էլ վիրավորվեցին: Այս պատճառով էլ Սևերոսը հեռացավ այնտեղից և
2 վերադարձավ: Այս պատերազմի ընթացքում էլ նա մահվան ենթարկեց երևելի այրերից երկուսին. պրետորյանների տրիբուն Հուլիոս Կրիսպոսին, որովհետև սա դժգոհելով պատերազմի աղետներից, պոետ Մարոնի մի խոսքն ասաց, որտեղ Տուրնոսի հետ էնեասի դեմ կռվող զինվորներից մեկը ողբալով ասում է. «Որպեսզի Տուրնոսը ամուսնանա Լավինիայի հետ, մենք, առանց որևէ մեղքի, կործանվում ենք»[343]: Ու Վալերիոսին՝ նրան մեղադրող զինվորին, Սևե-
3 րոսը նրա փոխարեն կարգեց տրիբուն: Նա սպանեց նաև Լետոսին, որը խելամիտ էր և սիրված էր զինվորներից, որոնք ասում էին, թե չեն գնա արշավանքի, եթե իրենց Լետոսը չառաջնորդի: Եվ քանի որ ինքը ոչ մի ակնառու պատճառ չուներ, բացի նախանձից, ապա փորձում էր նրա սպանության մղեքը գցել զինվորների վրա, որ իբր այդ բոլորը նրանք կատարել են հակառակ իր ցանկության:

11, 1 Ինքը նորից արշավեց Հատրայի վրա, նախապես ամբարելով մեծ քանակությամբ պարեն և պատրաստելով բազմաթիվ պաշարողական մեքենաներ: Քանզի նրան թվում էր, թե անպատվաբեր է, որ երբ մնացած բոլոր վայրերը նվաճվել են, այս մեկը, գտնվելով այդ բոլորի մեջտեղում, դեռևս դիմադրում է: Սակայն նա թե՛ մեծ քանակությամբ փող վատնեց և թե՛ իր (պաշարողական) մեքենաների մեծ մասը, բացի Պրիսկոսի[344] պատրաստածներից, ինչպես ասել ենք վերևում, կորցրեց. և այդ բոլորից բացի
2 նաև մեծ թվով զինվորներ: Քանզի շատերը կործանվեցին անասնակեր հայթայթելու համար կատարված արշավանքների ընթացքում, քանի որ բարբարոսների հեծելազորը —ես նկատի ունեմ արաբականը— ամենուրեք ուժգին և մեծ արագությամբ հարձակվում էր նրանց վրա. հատրացիներն էլ իրենց նետահարումներով շատ հեռու էին հասնում—քանզի նրանք իրենց նետերի մի մասն արձակում էին մեքենաների միջոցով, այնպես որ նրանք հարվածեցին նույնիսկ

3 Սևերոսի թիկնապահներից շատերին. նրանք երկու նետ միանգամից էին արձակում և բազում ձեռքեր ու բազում աղեղներ միանգամից էին նետում—բայց հռոմայեցիները ամենամեծ կորուստը կրեցին, երբ մոտեցան պարիսպներին և առավել ևս, երբ պարիսպների մի (փոքր) մասը քան-
4 դեցին. քանզի նրանց վրա, այլ բաներից բացի, թափեցին նաև կուպրալից այն նավթը, որի մասին գրել եմ վերևում[345], և հրկիզեցին (պաշարողական) մեքենաները և բոլոր զինվորներին, ում վրա այն թափվեց: Այս ամենը Սևերոսը
12, 1 դիտում էր բարձր բնմի վրա նստած: Երբ արտաքին պարսպի մի մասը քանդվեց, և բոլոր զինվորները ձգտում էին բռնությամբ ներխուժել մնացած մասը, Սևերոսը արգելեց նրանց այդ անել, հրամայելով ամեն կողմից հստակորեն
2 շեփորել վերադարձի ազդանշանը: Քանզի այդ վայրը մեծապես հռչակված էր այն բանով, որ իբր դրամական մեծ հարստությունից բացի, այնտեղ կային նաև Հելիոսին ձոնված բազմաբազում ընծաներ. և Սևերոսը հույս ուներ, որ արաբները կամովին կգան համաձայնության, որպեսզի բռնու-
3 թյամբ չնվաճվեն ու գերեվարվեն: Եվ այսպես, մի օր բաց թողնելուց հետո, քանի որ ոչ ոք նրա մոտ չեկավ բանակցություն վարելու, նա զինվորներին հրամայեց դարձյալ գրոհել պարիսպները, թեպետև դրանք գիշերվա ընթացքում վերակառուցվել էին: Բայց եվրոպացիներից[346], որոնք և միայն ի վիճակի էին ինչ-որ բան կատարել, ոչ մեկը չհնազանդվեց նրան նրա հանդեպ ունեցած զայրույթի պատճառով, ոչ իսկ մյուսները՝ սիրիացիները, որոնք նրանց փո-
4 խարեն ստիպված էին գրոհել, չարաշար կործանվեցին: Եվ այսպիսով, աստված, որը փրկել էր քաղաքը, նախ զինվորներին, որոնք կարող էին ներխուժել (քաղաք), ետ կանչեց Սևերոսի միջոցով, ապա երբ Սևերոսը հետագայում ցանկացավ գրավել այն, զինվորների միջոցով խանգարեց
5 նրան: Ահա այս պատճառով էլ Սևերոսը այնքան շփոթվեց, որ երբ նրա մերձավորներից ինչ-որ մեկը խոստացավ, որ եթե իրեն տրամադրի եվրոպացի զինվորներից միայն հինգ հարյուր հիսուն մարդ, ապա ինքը առանց մյուս զորքերը վտանգի ենթարկելու, կգրավի քաղաքը, ի լուր բոլորի՝ պատասխանեց. «Իսկ որտեղի՞ց ես այդքան զինվոր գտնեմ».

այդ ասում էր զինվորների անհնազանդությունն ակնարկելով։

13, 1 Այսպես, քսան օր (քաղաքը) պաշարելուց հետո մեկնեց Պաղեստին և զոհեր մատուցեց Պոմպեոսի պատվին։

ԳԻՐՔ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ[347]

12, 1a Ավգարոսը[348], Օսրոենեի թագավորը, երբ մի անգամ արդեն տիրել էր իր ցեղակիցներին, ոչ մի դաժան միջոց չթողեց, որ չկիրառեր նրանց երևելիների դեմ։ Նա խոսքով հորդորում էր նրանց հրաժարվել հռոմեական բարքերից, մինչդեռ գործնականում իր անսահման իշխանությունն էր կիրառում նրանց վրա։

1[2] Արդ՝ (Անտոնինոսը)[349] խաբելով Օսրոենեի Ավգարոս թագավորին, համոզեց նրան իբրև բարեկամի գալ իր մոտ, որից հետո նրան ձերբակալելով կալանավորեց և այդպիսով Օսրոենեն, որը մնացել էր առանց թագավորի, հպատակեցրեց։

Իսկ հայոց թագավորին[350], որը վեճի մեջ էր իր որդիների հետ, բարեկամական նամակներով նույնպես կանչեց, իբր նրանց հաշտեցնելու պատրվակով, բայց սրանց հետ ևս
2 վարվեց այնպես, ինչպես Ավգարոսի հետ։ Սակայն հայերը չհանդուրժեցին նրան, այլ դիմեցին զենքի, ու այլևս նրանցից ոչ ոք երբևիցե ոչ մի բանում նրան չէր հավատում, այնպես որ նա գործով սովորեց, թե որքան վնասաբեր է կայսեր համար խաբեությամբ վերաբերվել բարեկամներին[351]։

2a Նա մեծապես պարծենում էր, որ պարթևների թագավոր Վոլոգեսոսի[352] մահից հետո նրա որդիները կռվում էին գահի համար, պատահաբար կատարվող այդ դեպքերը վերագրելով իր կատարած նախապատրաստական աշխատանքին։

* * *

18, 1 Այսպիսի գործեր կատարեց (Անտոնինոսը) Նիկոմեդիայում ձմեռելու ժամանակ. նա մարզեց նաև մակեդոնական փաղանգը և երկու շատ խոշոր մեքենաներ կառուցեց հայկական և պարթևական պատերազմների համար այնպես, որ դրանք քանդած վիճակում նավերի վրա կարողանար փոխադրել Սիրիա...

* * *

19, 1 Երբ նա արշավեց պարթևների դեմ, այդ պատերազմը պատճառաբանեց նրանով, որ Վոլոգեսոսը, երբ ինքը նրանից պահանջեց Տիրիդատեսին[353] և նրա հետ ոմն Անտիոքոսի, նրանց չհանձնեց։ Այս Անտիոքոսը կիլիկեցի էր և սկզբում իբրև թե կիլիկյան փիլիսոփա էր և դրանով պատե-
2 րազմում մեծապես օգնել էր զինվորներին. քանզի երբ զինվորները ցրտաշունչ ձմռան պատճառով հուսահատվել էին, նա կարողանում էր սրտապնդել նրանց՝ իրեն նետելով ձյան մեջ և թավալվելով դրա վրա։ Ուստի և նա շատ դրամ և պատիվներ ստացավ թե՛ Սևհրոսից և թե՛ Անտոնինոսից։ Այս ամենից նա այնքան գոռոզացավ, որ հարեց Տիրիդատեսին և սրա հետ միասին փախավ պարթև (թագավորի) մոտ։

* * *

21, 1 Երբ պարթև (թագավորը) վախեցավ և Տիրիդատեսին ու Անտիոքոսին հանձնեց (կայսեր), սա իսկույն ևեթ հրաժարվեց արշավանքից. բայց Թեոկրիտոսը, որին զորքով նա ուղարկել էր հայերի դեմ, նրանց կողմից պարտության մատնվեց և ծանր դժբախտության մեջ ընկավ։

ԳԻՐՔ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ[354]

1, 1 Այնուհետև (Անտոնինոսը) արշավեց պարթևների դեմ այն պատրվակով, որ Արտաբանոսը[355] չէր ցանկացել իր դստերը ամուսնության տալ իրեն—քանզի (Արտաբանոսը) լավ էր հասկանում, որ նա խոսքով իբր ուզում էր իր աղջկա հետ ամուսնանալ, բայց իրականում ցանկանում էր սեփա-
2 կանել պարթևների թագավորությունը— ուստի (Անտոնինոսը) հանկարծակի հարձակվելով, մեծ տարածության վրա երկիրը ավերեց Մեդիայի շուրջը, մեծ թվով բերդեր նվաճեց, գրավեց Արբելան[356] և բաց անելով պարթևների արքունի դամբարանները, ցրիվ տվեց ոսկորները, քանի որ
3 պարթևները նույնիսկ չկռվեցին նրա դեմ։ Հետևաբար և ես այդ ժամանակ կատարվածների մասին ոչ մի բացառիկ բան չունեմ գրելու, բացի այն, որ երկու զինվորներ, գինով լիքը մի տիկ հափշտակած, դիմեցին նրան, յուրաքանչյու-

րը իր համար պահանջելով ամբողջ այդ ավարը։ Երբ (կայսրը) նրանց հրամայեց գինին հավասարապես բաժանել իրար միջև, ապա նրանք մերկացրին իրենց թրերը և տիկը կխեցին, այն գինու հետ կես առ կես ստանալու համար։
4 Նրանք այնքան էին հարգում իրենց կայսեր, որ նույնիսկ նման հարցերով էին նրան անհանգստացնում և այնքան խելք ունեին, որ կորցրին թե՛ տիկը և թե՛ գինին։ Ահա և բարբարոսներն ապաստանեցին լեռներում, Տիգրիսից այն կողմ, որպեսզի պատրաստություն տեսնեն, իսկ Անտոնինոսը թաքցնում էր այս, ասես ինքը վերջնականապես հաղթել էր նրանց, որոնց նույնիսկ չէր էլ տեսել. և հատկապես պարծենում էր, որ ինչպես ինքը հաղորդել էր, հանկարծ լեռից իջած մի առյուծ կովում օգնել էր իրեն։

* * *

26, 2 Մակրինոսը[357] տեսնելով, որ Արտաբանոսը խիստ պայրացած է իր կրած այս չարիքների պատճառով և մեծ զորքով ներխուժել է Միջագետք, նախ ինքնակամ նրան ուղարկեց գերիներին և բարեկամական ուղերձ, խաղաղություն հաստատելու առաջարկով, տեղի ունեցածների պատճառը
3 համարելով Տարավտասին[358]։ Բայց (Արտաբանոսը) չընդունելով այդ, միաժամանակ հրամայեց, որ (Մակրինոսը) վերաշինի քանդված բերդերն ու քաղաքները և ամբողջովին հեռանա Միջագետքից և հատուցում տա ինչպես մյուս բոլորի, այնպես էլ Թագավորական գերեզմանների պղծման
4 համար. քանզի նա հույսը դրել էր իր հավաքած մեծաքանակ զորքի վրա և արհամարհելով Մակրինոսին որպես անարժան ինքնակալի, անհագ զայրույթով էր լցված նրա դեմ և հույս ուներ, որ առանց նրա համաձայնության իսկ ինքը
5 կկատարի իր կամեցած ամեն ինչը. Մակրինոսը նույնիսկ ժամանակ չունեցավ խորհրդակցելու, այլ հանդիպելով նրան դեպի Նիսիբիս առաջանալիս, պարտվեց, երբ ճամբարած իր զինվորները ջրի համար կռվի բռնվեցին Բշնամու հետ։ Քիչ էր մնացել, որ նա նույնիսկ ռազմական ճամբարը կորցներ. բայց այնտեղ գտնվող վահանակիրները և գումակայինները փրկեցին այն. քանզի սրանք քաջալերվելով դուրս եկան ճամբարից և հարձակվեցին բարբարոսների վրա. այս հանկարծակի հարձակումը օգնեց նրանց և թվում

էր, թե նրանք ոչ թե սպասավորներ են, այլ զինված մարտիկներ[359]...

8 ...Այնժամ ահա այս դեպքերը կատարվեցին. իսկ աշնանն ու ձմռանը, երբ կոնսուլներ էին Մակրինոսը և Ադվենտոսը, նրանք այլևս իրար հետ կռվի չբռնվեցին, այլ դեսպանություններ և բանագնացներ փոխանակելով, իրար
27, 1 հետ համաձայնության եկան: Քանզի Մակրինոսը բնածին երկչոտությունից —նա, որպես մավր, շատ էր վախկոտ— ինչպես նաև զինվորների անկարգության պատճառով, չհամարձակվեց պատերազմել, այլ խաղաղության համար շատ առատ ընծաներ պարգևեց ու դրամ ուղարկեց թե՛ Արտաբանոսին և թե՛ նրա հզորագույն մերձավորներին, այնքան, որ ամբողջ ծախսը կազմեց հինգ հազար բյուր (դրաք-
2 մե)[360]: Իսկ (Պարթևը) նույնպես դեմ չէր հաշտության թե՛ այս (նվերների) պատճառով, և թե՛ քանի որ նրա զինվորները անհանգստանում էին, որովհետև երկար ժամանակ է, ինչ տնից հեռացել էին —իսկ այդ բանին նրանք սովոր չէին— որով և պարենի պակաս էին զգում. քանզի նրանք այդպիսի պատրաստություն չեն տեսնում, իսկ տեղում էլ չէին կարողանում պարեն ձեռք բերել, քանի որ այն կամ
3 ոչնչացված էր, կամ էլ գտնվում էր բերդերում: Այսուհանդերձ Մակրինոսը բոլոր կատարվածների մասին ճշգրիտ զեկույց չէր ուղարկել սենատին, ուստի և որոշվեց նրա պատվին հաղթանակի զոհեր մատուցել և միաժամանակ նրան շնորհվեց «պարթևական» տիտղոսը: Բայց նա մերժեց այդ, ամաչելով, իհարկե, վերցնել տիտղոսն այն թշնամու համար, որից ինքը պարտվել էր:

4 Այսուհանդերձ հայոց (թագավորի) դեմ նրա մղած պատերազմը ևս, ինչպես ասել եմ, դադարեց, երբ Տիրիդատեսը[361] ընդունեց Մակրինոսի կողմից իրեն ուղարկված թագը, ինչպես նաև մորը, որին Տարավտասը տասնմեկ ամիս պահել էր բանտում, ինչպես նաև ստացավ այն ամբողջ ավարը, որ տարված էր Հայաստանից և բոլոր այն երկրները, որ նրա հայրը ձեռք էր բերել Կապպադովկիայում. նա հույս ուներ նաև ստանալու այն փողը, որ ամեն տարի ուղարկում էին հռոմայեցիները[362]:

* * *

39, 1 Արդ՝ պարտվելով հունիսի ութին, (Մակրինոսը) իր որդուն Եպագաթոսի և մի քանի այլոց միջոցով ուղարկեց

Արտաբանոսին, իսկ ինքը մտավ Անտիոք իբրև հաղթանա-
2 կած, որպեսզի ընդունեն իրեն. բայց երբ նրա պարտու-
թյունը հայտնի դարձավ, ու շատերը սպանվեցին ճանա-
պարհներին և քաղաքում, այս կամ այն կողմին համակրե-
լու պատճառով, նա այստեղից ևս ձիով փախավ գիշերով.
գլուխն ու ամբողջ մորուքը սափրած, ծիրանի (թիկնոցի)
վրայից գորշագույն արտազգեստ հագած, որպեսզի առավե-
3 լագույն չափով նմանվի սովորական քաղաքացու: Այս ձևով
նա փոքր խմբի հետ հասավ Կիլիկիայի Այգե քաղաքը, որ-
տեղ ներկայացավ իբրև սուրհանդակ զինվորներից մեկը և
ստանալով մի կառք, դրանով անցավ Կապպադովկիան, Գա-
լատիան և Բյութանիան, մինչև Երիբոլոն նավահանգիստը,
որը գտնվում է Նիկոմեդիա քաղաքի դիմաց. նա մտադիր
էր վերադառնալ Հռոմ, որտեղ հույս ուներ սենատի և ժո-
4 ղովրդի օգնությունն ստանալ: Եթե նա իրոք խուսափեր, ա-
պա գուցե կարողանար ինչ-որ հաջողության հասնել. քանզի
ժողովուրդը առավելապես համակրում էր նրան, սիրիացի-
ների հանդգնության, կեղծ Անտոնինոսի դեռատի տարիքի
և Գաննյուսի ու Կոմազոնի ինքնագլուխ վարվեցողության
պատճառով. այնպես, որ զինվորներն իսկ կամ սիրահո-
ժար պետք է փոխեին իրենց վերաբերմունքը, կամ էլ, հա-
5 կառակ դեպքում, պետք է ենթարկվեին: Արդ՝ իր անցած
(երկրներում) ժողովրդի միջից և ոչ մեկը, եթե նույնիսկ
նրան ճանաչած լիներ, նրա վրա ձեռք չէր բարձրացնում: Իսկ
Երիբոլոնից Քաղկեդոն նավելիս —քանզի նա չհամարձակ-
վեց մտնել Նիկոմեդիա, վախենալով Բյութանիայի կառա-
վարիչ Կեկիլիոս Արիստոնից—պրոկուրատորներից մեկի
մոտ մարդ ուղարկեց դրամ պահանջելով և դրանով իսկ
ճանաչվեց և ձերբակալվեց Քաղկեդոնում[363]... Հարյուրա-
պետ Ավրելիոս Կելսոսի կողմից և մինչև Կապպադովկիա
40, 1 բերվեց իբրև ամենաանարգված մարդկանցից մեկը: Այս-
տեղ էլ իմանալով, որ իր որդին ևս բռնվել է—նրան ձեռք էր
գցել Կլավդիոս Պուլխոնը՝ լեգեոնի հարյուրապետը, Զևգման
անցնելիս, որտեղ նախորդ անգամ կեսար էր հռչակվել—
իրեն կառքից ցած նետեց—քանի որ կապված չէր—և իր
ուժը միայն ջարդեց. բայց քիչ հետո, երբ արդեն որոշվել էր
նրան մահվան ենթարկել Անտիոք չմտած, սպանվեց հար-
յուրապետ Մարկիանոս Տավրոսի կողմից...

817—15

3, 1 Շատ երկրներում շատ ապստամբություններ ծագեցին, և դրանցից մի քանիսը թեև խիստ ահեղ էին, սակայն ճնշվեցին։

Իսկ Միջագետքում կատարված դեպքերը առավել ահավոր էին և իրականում սարսափ էին գցել բոլորի վրա, ոչ միայն Հռոմի բնակիչների, այլև մյուս վայրերի։ Քանզի ոմն
2 Արտաքսերքսես[364], պարթևներին երեք ճակատամարտում հաղթելուց և նրանց թագավոր Արտաբանոսին սպանելուց հետո, ռազմի ելավ Հատրայի դեմ, այն (գրավելով) հռոմայեցիների դեմ իր համար հենարան դարձնելու նպատակով։ Նա թեև կործանեց պարիսպը, բայց կորցնելով իր զին-
վորներից շատերին, որոնք դարանի մեջ էին ընկել, ետ նա-
3 հանջեց Մեդիա և, այս երկրում, ինչպես նաև Պարթիայում, մասամբ բռնությամբ, մասամբ էլ ահաբեկմամբ, գրավելով մի շարք շրջաններ, շարժվեց դեպի Հայաստան։ Այստեղ նրան դիմադրեցին տեղի բնակիչները և մեդացիներից ոմանք, ինչպես նաև Արտաբանոսի որդիները և նա, ինչպես ոմանք ասում են, փախավ. իսկ ուրիշները ասում են, թե նա ետ քաշվեց, ավելի մեծ զորք պատրաստելու հա-
4 մար։ Այսպիսով, նա մեզ համար ահավոր եղավ. քանզի նա մի խոշոր բանակով պատրաստ նստել էր, սպառնալով ոչ միայն Միջագետքին, այլև Սիրիային։ Նա սպառնում էր, որ վերստին կնվաճի այդ ամենը, որպես նախնիներից իրեն հասնող ժառանգություն, (ինչպես և) այն բոլոր (երկրները), ինչ հնում պարսիկները ունեին մինչև հելլենական ծովը[365]։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Այստեղ Դիոն Կասսիոսն ընդհանրապես նկատի է ունեցել հռոմայեցիներին։*

2 *Լրիվ անունը՝* Titus Quinctius Flamininus: *Հռոմայեցի զորավար. ծնվել է մ. թ. ա. 225 թ.։ Կոնսուլ է ընտրվել 198 թ.։ Արշավելով Հունաստան և Մակեդոնիա, 197 թ. հաղթեց Փիլիպպոս V-ին և ազատ հռչակեց հունական քաղաքները։ 195 թ. հրահրեց հունական քաղաքների պատերազմը Նաբիսի դեմ։ 189 թ. ուղարկվեց Բյութանիա և տեղի Պրուսիաս թագավորից պահանջեց Հաննիբալին հանձնել։ Վերջինս ստիպված դիմեց ինքնասպանության։*

3 *Նաբիսը 207 թ. Սպարտայում անցնելով իշխանության գլուխ, ձեռնամուխ եղավ հին կարգերն ու հարաբերությունները վերացնելու և նորերը հաստատելու գործին։ Պատմագրության մեջ Հիրավի Նաբիսի ձեռնարկած բարենորոգումների բնույթը դիտվում է իբրև հեղափոխիչ։ Սկզբնական շրջանում Նաբիսին հաջողվեց իր կողմը գրավել շահագործվող և իրավազուրկ խավերին, բայց ի վերջո Հռոմին հաջողվեց հունական պոլիսները ոտքի հանել Նաբիսի դեմ, որը և 192 թ. սպանվեց։*

4 *Էտոլիա կոչվում էր Կենտրոնական Հելլադայի արևմտյան մասը։ Մ. թ. ա. III—II դդ. այստեղ կազմվել էր հունական պոլիսների բավական հզոր մի ֆեդերացիա։*

5 *Խոսքը վերաբերում է Մակեդոնիայի թագավոր Փիլիպպոս V-ին (221—179 թթ.)։*

6 *Սա Սելևկյան Անտիոքոս III թագավորն է (224—187 թթ.)։*

7 *Հելլենիստական Եգիպտոսի թագավորները կրել են միևնույն՝ Պտղոմեոս անունը։ Սա Պտղոմեոս V Եպիփանեսն է (205—181 թթ.)։*

8 *Կապպադովկիայի թագավորներից շատերը կրել են Արիարաթես անունը, քանի որ այդ եղել է թագավորության հիմնադրի անունը։ Այստեղ հիշատակվածը Արիարաթես IV-ն է, որը ժամանակակից է եղել հայոց Արտաշես I թագավորին։*

9 *Եվմենես II-ը (197—159 թթ.) Պերգամոնի ամենաեռանդուն թագավորներից է եղել, Սելևկյանների մրցակիցը Փոքր Ասիայում. ոտքի և մեծապես օգնել է հռոմայեցիներին՝ Սելևկյանների տերության դեմ նրանց պատերազմներում։ Եվմենեսը, ինչպես հետևում է Պոլիբիոսի կարևոր մի հաղորդումից*

(Polyb., XXV, 2, 1—12), քաղաքական հարաբերությունների մեջ է եղել Արտաշես I-ի հետ։

10 Սելևկյան Դեմետրիոս I Սոտերը թագավորել է 162—149 թթ.։

11 Հռոմի արտաքին քաղաքականության մեջ կարևոր տեղ էր գրավում այս կամ այն երկրի տիրակալին «Հռոմի բարեկամ և դաշնակից» հայտարարելը։ Դա, փաստորեն, նշանակում էր այդ երկրի որոշակի կախվածությունը Հռոմից։

12 Սա Ատտալոս II-ն է (159—138 թթ.), որը իր եղբոր՝ Եվմենեսի մահից հետո գահ բարձրացավ Պերգամոնում։

13 Բնագրում՝ Միթրիդատես։ Խոսքը Պոնտոսի թագավոր Միհրդատ VI Եվպատորի մասին է (111—63 թթ.)։

14 Բյութանիայի Նիկոմեդես III թագավորը (91—74 թթ.) երկու անգամ իր երկրից հեռացվեց Միհրդատ Եվպատորի արշավանքներից հետո, բայց երկու անգամ էլ վերադարձավ հռոմայեցիների օգնությամբ։ 74 թ. անզավակ մեռնելիս նա իր երկիրը կտակեց Հռոմին. այս էլ առիթ ծառայեց Միհրդատյան երրորդ պատերազմին։

15 Կապպադովկիայի թագավոր Արիոբարզանես I-ին (99—63 թթ.) երկրից վտարել էր Միհրդատ Եվպատորը Տիգրան Մեծի հետ դաշնակցած։ Միհրդատյան պատերազմների ժամանակ Կապպադովկիան դարձել էր կռվախնձոր Հռոմի և Միհրդատ-Տիգրան Մեծ կոալիցիայի միջև։ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 30 և հաջ.։

16 Տրալլես—հնագույն քաղաք Լյուդիայում, որն արդեն վաղուց է ինչ լրիվ հելլենականացել էր։

17 Դոդոնե—գեղատեսիլ ձոր Եպիրոսում, նույնանուն քաղաքով, որտեղ կար Զևսին նվիրված տաճար-պատգամատուն։

18 Այս գրքի սկիզբը Դիոն Կասսիոսի ձեռագրերում չի պահպանվել։ Կորած մասերի բովանդակությունը պարունակում է Քսիփիլինոսի կոնսպեկտի այս հատվածը։

19 Բարբարոսներ ասելով հեղինակն այստեղ նկատի ունի Տիգրանակերտի պաշտպաններին։

19ա Դիոն Կասսիոսի այս վկայությունը՝ Հայաստանում հրկիզող նավթի օգտագործման մասին իր պերճախոս հաստատումը գտավ վերջերս պատմական Արտաշատի միջնաբերդի տարածքի վրա կատարված հնագիտական պեղումների ժամանակ, որտեղ պարիսպների մոտ հայտնաբերվեց մեծ քանակությամբ նավթ, որն արդեն ստացել էր սև, չորացած կուպրի տեսք։

20 Նույնպիսի վկայություն կա նաև Պլուտարքոսի (Lucull., 27) և Մեմնոնի (գլ. 57) մոտ։

21 Այս միջադեպը տարբեր ձևերով պատմում են նաև Պլուտարքոսը, Մեմնոնը և Փրոնտինոսը։ Ահա նրանց վկայությունները.

«Իսկ Տիգրանը դեռ սկզբում դուրս գալով քչերի հետ՝ փախավ. և տեսնելով, որ իր որդին ևս հաղորդակից է նույն բախտին, վերցրեց գլխից խույրը և արտասվելով այն հանձնեց նրան ու հրամայեց, որ նա ինքն իրեն փրկի մի այլ ճանապարհով, ինչպես կարող է։ Իսկ պատանին չհամարձակվեց խույրը դնել իր գլխին, այլ տվեց այն պահելու իր ամենահավատարիմ ծառային։ Սա պատահմամբ գերի ընկավ և տարվեց Լուկուլլոսի մոտ ու այսպիսով մյուս ավարի հետ վերջին նաև Տիգրանի խույրը» (Plutarch, Lucull., 28, 8—9)։

«Իսկ Տիգրանն իր արքայական խույրը և ապարոշը տվեց որդուն և ինքը փախավ իր ամրոցներից մեկը» (Memn., 57)։

*«(Լուկուլլոսը) հարձակվեց նրա դեռևս չկարգավորված մարտաշարքերի վրա և իսկույն ևեթ այնպես ցրիվ տվեց, որ նույնիսկ իրենք թագավորները, դեն նետելով պատվանշանները՝ փախան» (Frontin., Strateg., II, I, 14)։ Նույն միջադեպի մասին վերոհիշյալ հեղինակների հաղորդումներում նկատվող էական տարբերությունները, ինչպես նաև այդ տվյալների բացակայությունը Ապպիանոսի մոտ հիմք են տվել Մոմզենին (*Римская история, т. III, *էջ 57) և Մանանդյանին (Տիգրան երկրորդը և Հռոմը, էջ 130) պնդելու, որ այդ բոլորը հնարովի են։*

22 *Դիոնի ձեռագրի այս մասի հատվածայնության պատճառով դժվար է երաշխավորել այս նախադասության թարգմանության ճշտությունը։*

23 *Սա Պարթևական Հրահատ III թագավորն է (մ. թ. ա. 70—57 թթ.)։*

24 *Այս երկրամասը, հավանաբար, ընդգրկել է Տիգրանի՝ պարթևներից գրաված Միջագետքը, Ադիաբենեն և «յոթանասուն հովիտները» (Հ. Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդը և Հռոմը, էջ 141)։*

25 *Այս նախադասությունը կրկնակի կարևորություն ունի Տիգրանակերտի պատմության համար. նախ այն, որ* συνοικούντων *դերբայը ցույց է տալիս, թե Տիգրանի քաղաքը ևս, Մերձավոր Արևելքի հելլենիստական մի շարք քաղաքների նման, հիմնվել և բնակեցվել էր սինոյկիսմոսի միջոցով (այս երևույթի մասին մանրամասն տե՛ս Ս. Մ. Կրկյաշարյան, Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում, ՊԲՀ, 1964, № 1, էջ 107—118։ Նույնի՝ Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 169—192)։ Այնուհետև, պարզվում է, որ Լուկուլլոսը քաղաքը գրավել է ոչ այնքան ռազմական ուժի միջոցով, որքան քաղաքում ապրող օտարերկրացիների ապստամբության հետևանքով։ Նույնը որոշ տարբերակներով պատմում են նաև Պլուտարքոսը, Մեմնոնը և Ապպիանոսը։ Ահա նրանց վկայությունները.*

«Իսկ Տիգրանակերտում հելլեններն ապստամբեցին բարբարոսների դեմ և մատնեցին քաղաքը Լուկուլլոսին. ուստի և սա հարձակվեց ու վերցրեց այն» (Plut., Lucull., 29)։

«Բայց Լուկուլլոսը, վերադառնալով Տիգրանակերտ՝ պաշարեց քաղաքը ավելի համարձակորեն։ Իսկ քաղաքում գտնվող Միհրդատի զորավարները, որ բոլորովին հուսահատվել էին, իրենց փրկելու համար քաղաքը հանձնեցին Լուկուլլոսին» (Memnon., 57)։

«Մանկայոսը, որը Տիգրանակերտից տեսել էր տեղի ունեցած պարտությունը, կասկածելով հելլենների վրա, որոնք նրա մոտ վարձկաններ էին, բոլորին դինաթափ արեց։ Սրանք, վախենալով, որ կկալանավորվեն, բրերով զինված գնացին և բանակ դրին բացօթյա։ Իսկ երբ Մանկայոսը նրանց դեմ զինված բարբարոսներ ուղարկեց, նրանք, վերնազգեստները վահանների փոխարեն կապկպելով ձախ ձեռքերին, խիզախաբար հարձակվեցին դրանց վրա։ Եվ ում որ սպանում էին, իսկույն նրա զենքերը բաժանում էին իրար մեջ։ Իսկ երբ նրանք իրենց, որքան կարող էին, բավարարեցին, գրավեցին երկու աշտարակների միջև եղած պարսպի տարածությունը, դրսից կանչեցին հռոմայեցիներին և ներս թողեցին վեր եկողներին։ Այսպես առնվեց Տիգրանակերտը, և նրա մեծ հարստությունները մատնվեցին կողոպուտի» (Appian., Mithr., 86)։

26 Դժվար է գերագնահատել Դիոնի այս հաղորդման նշանակությունը Արաժանիի ճակատամարտի ընթացքը պարզելու համար։ Բանն այն է, որ այս ճակատամարտի մասին աղբյուրներում մենք չունենք այլ վկայություն, բացի վերոհիշյալից և Պլուտարքոսի հաղորդումից (Plut., Lucull., 31)։ Այդ երկու հաղորդումները հիմնովին հակասում են իրար։ Պլուտարքոսի համաձայն, որին հետևում են արևմտաեվրոպական պատմաբանները, Արաժանիի ճակատամարտում Լուկուլլոսը հաղթանակ էր տարել, և Տիգրանն ու Միհրդատը ծանր պարտություն էին կրել։ Մինչդեռ, ինչպես իրավացի նկատում է Հ. Մանանդյանը (Տիգրան Երկրորդը և Հռոմը, էջ 153—154), Դիոնի այս վկայությունից հետևում է, որ Տիգրանը ոչ միայն պարտություն չէր կրել, այլ, ընդհակառակը, ինքն էր ծանր հարված հասցրել հակառակորդին։

27 Նիսիբիս քաղաքը հայկական աղբյուրների Մծբինն է։

28 Նույն այս դեպքերի մասին պատմող Պլուտարքոսը (Lucull., 32) Տիգրանի եղբորը տալիս է Գուրաս (Γούρας) անունը։

29 Այստեղ նկատի է առնված Փոքր Հայքը, որն այդպես էլ երբեք չմիացվեց Մեծ Հայքի թագավորությանը, քանի որ դեռ մինչև Տիգրան Մեծը, դեռևս 115 թ., Միհրդատ Եվպատորը այն միացրել էր իր թագավորությանը։ Տիգրանն, անկասկած, հարաբերությունները չսրելու համար իր դաշնակից Միհրդատի հետ, ստիպված էր հանդուրժել Փոքր Հայքի միացումը Պոնտական թագավորությանը։ Միհրդատի պարտությունից հետո այդ երկիրն անցավ Հռոմի տիրապետության տակ։

30 Դիոնն այստեղ նկատի ունի Միհրդատ Պոնտացուն։

31 Այս հատվածում Դիոնի ձեռագիրը աղավաղված է։

32 Կաբիրա—բերդաքաղաք Պոնտոսի կենտրոնական շրջանում (այժմ՝ Նիկսար կամ Նեոկեսարիա, Գայլ-գետի մոտ)։

33 Տրիարիոս—Հռոմայեցի հրամանատար Լուկուլլոսի բանակում, որը վերջինիս կողմից ուղարկվեց Փաբիոսին օգնելու, որին էլ փրկելուց հետո պաշտոնանկ արեց ու փոխարինեց։

34 Կոմանա անունով հայտնի են կապպադովկիական երկու քաղաք, որոնք առևտրի և պաշտամունքային խոշոր կենտրոններ էին. դրանցից մեկը գտնվում էր բուն Կապպադովկիայում, մյուսը՝ Պոնտական Կապպադովկիայում։ Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Պոնտական Կոմանային, որի մասին, որպես տաճարական կենտրոնի, հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ստրաբոնը (XII, 3, 32)։

35 Ձեռագրի այս մասում նկատելի է ինչ-որ բացթողում։

36 Ագամեմնոնը տրոյական ասքի հերոսներից է։ Նա աքայական զորքերի ընդհանուր զորահրամանատարն էր։ Տրոյայի դեմ նավարկելուց առաջ, պատգամախոսի գուշակության համաձայն, նա պետք է իր դստերը՝ Իփիգենիային, զոհաբերեր Արտեմիս դիցուհուն, որպեսզի վերջինս մեղմեր իր զայրույթը և նպաստավոր հողմ բարձրացներ։ Վերջին պահին, սակայն, երբ պետք է կատարվեր զոհաբերությունը, Արտեմիսը փախցրեց Իփիգենիային և տարավ Տավրիկյան երկիր, որպես իր տաճարի քրմուհի։ Տրոյան նվաճելով տուն վերադառնալուց անմիջապես հետո, Ագամեմնոնը սպանվեց իր կնոջ կողմից։ Ագամեմնոնի որդին՝ Օրեստեսը, սպանելով մորը, լուծեց հոր վրեժը, սակայն վրիժառության ոգիները հալածում են մայրասպանին և նրան նետում Տավրիկյան երկիր, որտեղ ափ դուրս եկող օտարերկրացիներին զոհաբերում էին աստվածնե-

րին. զոհաբերությունը կատարում էր քրմուհի Իփիգենիան՝ Օրեստեսի քույրը։ Այստեղ քույր ու եղբայր իրար ճանաչում են և միասին փախչում Փոքր Ասիա։

37 Ըստ ավանդության, այդ Բրով է Իփիգենիան կտրել սրբավայրին ձոնած իր վարսերը։

38 Կոմանայի մասին համապատասխան մի ավանդություն պահպանել է նաև Ստրաբոնը (XII, 2, 3)։ Նա պատմում է. «Թվում է, թե Արտեմիս Տավրոպոլոսի պաշտամունքը Տավրիկյան Սկյութիայից այստեղ բերել է Օրեստեսն իր Իփիգենիա քրոջ հետ։ Պատմում են, թե նա այստեղ թողել է իր սգո վարսերը, որից էլ քաղաքն ստացել է իր անունը»։

39 Գազիուրա—Միհրդատի բերդաքաղաքներից, որը գտնվում էր Կոմանայից ոչ հեռու։

40 Պոնտական Տալավրա բերդաքաղաքի տեղադրությունը, ինչպես նշում է Հ. Մանանդյանը (Տիգրան Երկրորդը և Հռոմը, էջ 82), դեռևս բավարար չափով լուսաբանված չէ։ Ըստ երևույթին, այն գտնվում էր Հայաստանի սահմաններից ոչ հեռու, քանի որ մ. թ. ա. 71 թ. Լուկուլլոսից հալածական Միհրդատը Տալավրայի վրայով անցել էր Հայաստան։

41 Սա Ատրպատականի թագավոր Միհրդատն էր, Տիգրանի փեսան և մինչև վերջ հավատարիմ վասալը։

42 Հռոմեական լեգեոնները ունեին իրենց համարները և անունները, Վալերիական (valeria) կոչվում էր հռոմեական XX լեգեոնը (Tit. Liv., VI, 9)։

43 Այստեղ Դիոն Կասսիոսը նկատի ունի Տիգրան II-ին և Միհրդատ Պոնտացուն։

44 Հոպլիտներ կոչվում էին հունական և հռոմեական բանակի ծանրազեն հետևակայինները։

45 Սոլին այն հելլենական 12 քաղաքներից էր, որ Տիգրանը նվաճելով, բնակիչներին բռնի տեղափոխել էր Հայաստան։ Պոմպեոպոլիս բառացի նշանակում է Պոմպեոսի քաղաք։

46 Բնագրում՝ Μάλλιος—Մալլիոս։

47 Մարկոս Լիկինիոս Կրասոսը հարստացել էր Սուլլայի կոնսուլության ժամանակ. նա անփառունակ վախճան ունեցավ խառանում պարթևական հեծելազորի դեմ ճակատամարտելիս։

48 Մետրոփանեսը նախկինում Միհրդատի դեսպանն էր, որը դասալքել էր հռոմայեցիների մոտ։

49 Սա Հրահատ III-ն է, Արշակ XI-ի՝ Սանատրուկի (?) որդին։ Այստեղ, ըևևի, Դիոնը շփոթել է Արշակի մահվան ժամանակը. այն տեղի է ունեցել ոչ թե 66 թ., այլ ավելի շուտ, հավանաբար 70 թ.։

50 Հայաստան (բնագրում՝ Ἀρμενία) ասելով, Դիոնը այստեղ նկատի ունի Փոքր Հայքը, որը միացված էր Միհրդատի Պոնտական թագավորությանը (համմտ. Հ. Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը և Հռոմը, էջ 176)։

51 Բնագրում՝ τὴν Ἀναΐτιν χώραν. «Անահտական երկիրը» հիշատակվում է նաև Պլուտարքոսի (Lucull, XXIV, 2—8) մոտ։ Այդպես է կոչվել պատմական Հայաստանում եկեղյաց գավառի մի ամբողջ շրջան, որը հայտնի էր Անահիտ դիցուհու պատվին կառուցված տաճարով և այնտեղ կատարվող տոնախմբություններով (համմտ. Strabo, XI, 14, 16 և XII, 3, 37)։

52 Մարկիոս Ռեքսին վստահելով հռոմեական երեք լեգեոն, Պոմպեոսը հանձնարարել էր պաշտպանել Կիլիկիան և Կապպադովկիան։ Սակայն, ըստ

երևույթին, Պոմպեոսն այդ զորամասերի կարիքն զգալով՝ Մարկիոսին կանչել էր օգնության։

53 *Այս հատվածի առաջին մասը բոլորովին սխալ է թարգմանել Հ. Մանանդյանը, Պոմպեոսի գործունեությունը և հաջողությունը վերագրելով Միհրդատին։ Ահա այդ հատվածը նրա թարգմանությամբ. «Արդ՝ Միհրդատը, երբ այդ ամենը աջող անցավ՝ գրավեց առժամանակ Արմենիայի Անահիտյան երկիրը, որը նվիրված էր մի ինչ-որ համանուն աստվածության, և այնուհետև այստեղ նրան հարեցին ուրիշ շատերը։ Իսկ երբ Պոմպեոսին ևս միացան Մարկիոսի զինվորները՝ նա վախեցավ և այլևս չմնաց այդ երկրում...» (Տիգրան երկրորդը և Հռոմը, էջ 180)։*

54 *Մայոտիս (Μαιῶτις) կոչվում էր Ազովի ծովը և նրա շրջակա երկիրը։*

55 *Սա Կիմմերյան Բոսպորն է (այժմ՝ Կերչի նեղուց)։*

56 *Փասիս—գետ Կոլխիդայում (այժմ՝ Ռիոնի)։ Հ. Մանանդյանը Փասիսի տակ հասկացել է Փոթի քաղաքը (Տիգրան երկրորդը..., էջ 185)։*

57 *Այսինքն՝ Նիկոպոլիսի քաղաքացիներ։ Նիկոպոլիս նշանակում է «հաղթանակի քաղաք»։ Այս քաղաքի տեղադրության մասին տարակարծություններ են եղել, որոնք ի վերջո պարզեցին Ն. Ադոնցը (*Армения в эпоху Юстиниана, СПб., *1908, էջ 54) և Հ. Մանանդյանը (Տիգրան երկրորդը..., էջ 181—182)։ Նրանք, համադրելով բոլոր տվյալները, եկել են այն ճիշտ եզրակացության, թե Նիկոպոլիսը գտնվում էր Փոքր Հայքում, Գայլ-գետի ափին, Պյուրկ գյուղի մոտ։ Այդ մասին ունենք նաև Ապպիանոսի հետևյալ վկայությունը. «Պոմպեոսը... այն վայրում, որտեղ հաղթեց Միհրդատին, հիմնեց քաղաք, որն ի նշանավորումն իր հաղթության կոչվեց Նիկոպոլիս։ Քաղաքն այդ գտնվում է այսպես կոչված Փոքր Հայքում» (*Appian., Mithr., 105)։

58 *Բնագրում՝* τῶν πρώτων. *նշանակում է՝ առաջիններից։*

59 *Բնագրում՝* Ἀρτάξατα. *չեզոք սեռի հոգնակի ձևով։*

60 *Բնագրում՝* μισόλευκον. *բառացի նշանակում է՝ կիսասպիտակ։ Հ. Մանանդյանը այն թարգմանել է՝ «մեջընդմեջ սպիտակ» (Տիգրան երկրորդը..., էջ 191)։*

61 *Բնագրում՝* χιτών—*խիտոն. սա գոտիով մեջքին կապվող հագուստն էր։*

62 *Բնագրում՝* κάνδυς—*կանդիս. սա թևեր ունեցող արևելյան վերնազգեստ էր։*

63 *Խուլրը (բնագրում՝* τιάρα—*տիարա) և ապարոշը (բնագրում՝* ἀνάδημα—*անադեմա) լավագույնս պատկերված են Տիգրան Մեծից մեզ հասած դրամների վրա դրոշմված հայոց արքայի դիմանկարում։ Դրանք արքայի թագավորական իշխանության տարբերանշաններն էին։*

64 *Բնագրում՝* ῥαβδοῦχος—*ռաբդուխոս (հունարեն* ῥάβδος *«մականե բառից). Համապատասխանում է լատինական* lictor*-ին։ Հռոմայեցիների մոտ այդպես էին կոչվում բարձրաստիճան պաշտոնյաների առջևից գնացող հատուկ պաշտոնատար անձինք, որոնք իբրև իշխանության տարբերանշան, տանում էին ձողիկների (*ῥάβδοι*) մի կապոց, ծայրին կացին ամրացրած։ Այդ ձողիկների թվով էլ որոշվում էր պաշտոնը։ Այսպես, հռոմեական կոնսուլների իշխանության տարբերանշանն ուներ 12 ձողիկ, դիկտատորներինը՝ 24, քաղաքային պրետորներինը՝ 2, իսկ պրովինցիաների կառավարիչներինը՝ 6։ Մանանդյանը* ῥάβδοῦχος *բառը թարգմանել է՝ «թիկնապահ» (Տիգրան երկրորդը..., էջ 191)։*

65 *Բնագրում՝* διάδημα—*դիադեմա։ Հ. Մանանդյանը այն թարգմանել է՝*

խույր (Տիգրան Երկրորդը..., էջ 191), որը Դիոնի նույն հատվածում արտահայտված է τιάρα—տիարա բառով։

66 Բնագրում՝ Συρία—Սյուրիա, որը համապատասխանում է հայկական աղբյուրների Ասորիքին։

67 Բնագրում՝ Σωφανηνή—Սոփաննե. անտիկ մյուս հեղինակների մոտ՝ Σωφηνή—Սոփենե։

68 Բնագրում՝ Κύρνος—Քուռ գետի անվան հունական ձևերից մեկը. այլ հեղինակների մոտ հանդիպում է ընդհանրապես Κύρος ձևով։

69 Բնագրում՝ ἀλβανῶν. սրանք հայ մատենագրության մեջ հայտնի աղվաններն են։

70 Բնագրում՝ Ἀλβανίδα (ուղղ. = Ἀλβανίς). հայ մատենագրության Աղվանքը։

71 Բնագրում՝ Κρόνια, այսինքն՝ Կրոնոս աստծուն նվիրված տոն։ Հույների պատկերացմամբ Կրոնոսը ավագ սերնդի աստվածների ներկայացուցիչն է՝ Զևսի հայրը, որը աստվածների միջև գերիշխանության համար մղված պայքարում պարտվեց իր որդուց։ Հունական Կրոնոսը, որը նույնացված էր լատինական Սատուռն աստվածության հետ, սկզբնապես եղել է հողագործությունը հովանավորող աստվածություն։ Սատուռնալիայի տոնախմբությունները Հռոմում կատարվում էին ամեն տարի բերքահավաքից հետո, դեկտեմբերի 17-ին, և տևում 7 օր։

72 Սա պետք է լինի վրացական Արմաստիկա (Արմազի բերդ) քաղաքը (տե՛ս Dio's Roman History, transl. by E. Cary. Loeb Classical Library. vol. III էջ 99, ծան. 1)։

73 Անկյունավոր փակագծերի մեջ առնված այս բառերը բացակայում են շատ հրատարակություններում։

74 Պելորոս գետը Քուռի ձախ վտակներից էր (այժմ՝ Արագվի)։

75 Բնագրում՝ ἐθνῶν—ազգերի։ Դիոնը այդ ցեղերին համարում է բշնամական, որովհետև չէին հպատակվում հռոմայեցիներին։

76 Սա կամբեճ գետն է Աղվանքում (այժմ՝ Յորա)։ Նկատելի է, որ Կյուրոս և Կամբյուսես գետերի անունները համընկնում են պարսկական արքաներ Կյուրոսի և նրա որդի Կամբյուսեսի անուններին։

77 Արաս գետն այժմ կոչվում է Ալազանի։

78 Բնագրում՝ „ἰώ, Κρόνια" (տե՛ս ծանոթ. 71)։

79 Բնագրում՝ ὑποστράτηγοι—բառացի նշանակում է՝ ենթազորավարներ։

80 Գաբինիոս. խորենացու մոտ (Բ, ժզ)՝ Գաբիանոս։ Մ. թ. ա. 66 թ. տրիբուն, հետագայում՝ հռոմեական զորավար, որին Պոմպեոսը թողեց որպես իր փոխանորդը Արևելքում։

81 Խոսքը 68 թ. Պոմպեոսի և Հրահատ III-ի միջև Միհրդատի և Տիգրան Մեծի դեմ կնքված հաշտության մասին է, որի համաձայն, ամբողջ Միջագետքը, մինչև Եփրատ, պետք է ստանար պարթև թագավորը (տե՛ս Dio Cass., XXXVI, 45, 3)։

82 Սրանք, հավանաբար, Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ այդ վայրերում հաստատված հունամակեդոնական գաղութարարների սերունդներն էին։ Հովսեպոս Փլավիոսը (Հրեական հնախոսություն, XX, 24) հիշատակում է Կարրոն, այսինքն՝ կարրացիների, երկիրը Ասորիքում։

83 Տիգրան Կրտսերի գերեվարման մասին տե՛ս վերևը (Dio, XXXVI, 53, 1—4)։

84 Պլուտարքոսի հաղորդման համաձայն, նույն այս միջոցին մի քանի տարի առաջ դիմել էր նաև Լուկուլլոսը, որն իր կնոջ եղբոր՝ Ապպիոս Կլավդիոսի միջոցով Տիգրանին ուղարկած իր նամակում նրան անվանել էր սոսկ «արքա» և ոչ «արքայից արքա», մի բան, որ շատ էր վշտացրել Տիգրանին (Plut., Lucull., XXI, 8)։ Ճշմարիտն այն է, որ Տիգրանը դեռևս շատ առաջ կրում էր «արքայից արքա» տիտղոսը։ Այդ բխում է ոչ միայն Պլուտարքոսի վերոհիշյալ վկայությունից, այլև հետևում է Տիգրանի հատած դրամների վրա դրոշմված արձանագրություններից, որտեղ կարդում ենք՝ ΒΑΣΙΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ—արքայից արքա։ Ուրեմն ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում Տիգրանը կարողացել էր սեփականել այդ տիտղոսը։ Ըստ Հ. Մանանդյանի, դա կատարվել էր այն բանից հետո, երբ «պարտված պարթևները.... ստիպված եղան Տիգրանին տալ ամբողջ Միջագետքը և նրա մեջ գտնվող Միգդոնիան և Օսրոյենը։ Միևնույն ժամանակ... նրանք կնքեցին նրա հետ դաշնակցության հատուկ պայմանագիր և հրաժարվեցին «թագավորների թագավոր» տիտղոսից, որը կրելու էր այնուհետև Տիգրան Բ-ն» (Տիգրան երկրորդը..., էջ 49)։

Բոլորից հավանականն այն է, որ Տիգրանն «արքայից արքա» տիտղոսն սկսեց կրել այն բանից հետո, երբ նվաճել էր մի շարք երկրներ, ուստի և այս նոր տիտղոսը ոչ այնքան հետևանք էր պարթևների դեմ նրա տարած հաղթանակի, որքան փաստական այն դրության, ըստ որի Տիգրանի գերիշխանության տակ էին գտնվում արդեն մի շարք երկրների թագավորներ (տե՛ս Ս. Մ. Կրկյաշարյան, Բդեշխությունների առաջացումը Հայաստանում, ՊԲՀ, 1966, № 4, էջ 259—260)։

85 Ակնհայտ է, որ Դիոնի այս հաղորդման մեջ շփոթություն կա։ Հայտնի է, որ Տիգրանի որդին արդեն 66 թ. Պոմպեոսի հրամանով կալանավորվել էր և այնուհետև տարվել Հռոմ, հռոմայեցի զորավարի հաղթահանդեսին շուք հաղորդելու համար։ Հետևաբար, 64 թ., երբ կատարվել են այս հատվածում նկարագրվող դեպքերը, Տիգրան Կրտսերը չէր կարող Հրահատի մոտ եղած լինել։ Դիոնի մոտ նկատվող այս շփոթությունը, հավանաբար, գալիս է նրա կողմից օգտագործված մի երկրորդ աղբյուրից։

86 Բնագիրն այստեղ պակասավոր է. փակագծերի մեջ առնված բառերը վերցրել ենք „Loeb Classical Library" հրատարակությամբ լույս տեսած Դիոնի անգլերեն թարգմանությունից. տե՛ս Dio's Roman History, transl. by E. Cary, vol. III, էջ 111։

87 Բարբարոս ասելով Դիոնն այստեղ նկատի ունի պարսից արքա Հրահատին։

88 Բնագրում՝ ἐν τῇ Ἀσπίδι։ Ասպիս տեղանունը այլ ադիթով հայտնի չէ։ Հավանաբար, ճիշտ կլինի ենթադրել, որ ձեռագիրը այս մասում աղավաղված է և սկզբնական բնագիրը պետք է եղած լիներ ἐν τῇ Ἀναίτιδι—Անահիտի երկրում։ Այս ենթադրությանը մղում է ոչ միայն Ἀσπίδι և Ἀναίτιδι անունների դրության մոտիկությունը, այլև բնագրի «Պոմպեոսը այդ ժամանակ դարձյալ ձմեռեց» արտահայտությունը, եթե հիշենք, որ Պոմպեոսը նախորդ տարին ձմեռել էր Անահտական երկրում։

89 Սիմփորիոնը նույն Սինորիա բերդն է։

90 Այստեղ Դիոն Կասսիոսի բնագիրը դարձյալ ընդհատվում է։

91 Սա Անտիոքոս XIII Ասիացին է, վերջինը Սելևկյան թագավորներից, որի թագավորությանը 84 թ. վերջ դրեց Տիգրան II-ը։ Լուկուլլոսի արշավանքի պատ-

Ճառով Տիգրանը հեռացավ Ասորիքից, որից հետո վերադարձած Անտիոքոսին Հռոմի ծերակույտը և Լուկուլլոսը ճանաչեցին Ասորիքի օրինական թագավոր։ Սակայն քիչ անց, 64 թ. Պոմպեոսը Սելևկյանների իշխանությունը Ասորիքում հայտարարեց վերացված, և երկիրը վերածվեց հռոմեական նահանգի՝ «պրովինցիա Սիրիա»։ Ասորիքի փոխարեն հիշյալ Անտիոքոսը, որպես հատուցում, ստացավ Հայաստանի սահմանակից Կոմմագենեի փոքր թագավորությունը, դառնալով Հռոմի վասալը (տե՛ս Հ. Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը..., էջ 137 և 209)։

92 Պրոսկրիպցիան (proscripti°) քաղաքական ակտ էր, որով մ. թ. ա. I դարում Հռոմում իշխանության գլուխ անցած կոնսուլը ձգտում էր ոչնչացնել կամ վնասազերծել իր քաղաքական հակառակորդներին։ Պրոսկրիպցիայի էությունն այն էր, որ հատուկ ցուցակներով առանձին հարուստ և անվանի մարդիկ հայտարարվում էին շնորհազրկված։ Այդ ցուցակները հրապարակով ցուցադրվում էին և այստեղ նշված անձինք զրկվում էին հռոմեական օրենքների պաշտպանությունից, նրանց հետնորդները զրկվում էին ունեցվածքից և առանձնաշնորհումներից, նրանց ինչքը բռնագրավվում էր հօգուտ պետության։ Առաջին անգամ պրոսկրիպցիաները մտցրեց Սուլլան. երկրորդ անգամ այդ քայլին դիմեցին triումվիրներ Անտոնիոսը, Օկտավիանոսը և Լեպիդոսը։

93 Գայոս Հուլիոս Կեսարը եղել է հանրապետական Հռոմի վերջին տարիների խոշորագույն քաղաքական ու ռազմական դեմքը։ Ծնվել է մ. թ. ա. 100 թվին։ Դեռ պատանի հասակից մասնակցում է Հռոմի քաղաքական կյանքին։ Փոթորկալից քաղաքական գործունեությունից հետո, 59 թ. ընտրվում է կոնսուլ, որից հետո Պոմպեոսի և Կրասոսի հետ կազմում է այսպես կոչված առաջին triումվիրատը՝ եռապետությունը։ Մ. թ. ա. 49-ին սկսված քաղաքացիական պատերազմում Կեսարը հաղթեց իր հակառակորդներին և դարձավ ամբողջ հանրապետության միանձնյա կառավարիչ։ Կեսարի անվան հետ է կապված հռոմեական տերության սահմանների նշանակալից ընդարձակումը Եվրոպայում և Մերձավոր Արևելքում։ Քաղաքական գործիչ լինելուց բացի Կեսարը նաև տաղանդավոր մատենագիր էր, փայլուն ճաշաբան և պերճախոս հռետոր։ Նրանից մեզ հասել են «Նոթեր Գալլական պատերազմի մասին» և «Նոթեր քաղաքացիական պատերազմի մասին» գործերը, որոնք ոչ միայն կարևորագույն պատմական սկզբնաղբյուր են իրենց բովանդակությամբ, այլև լեզվի օրինակելի նրբագեղությամբ մինչև օրս օգտագործվում են իբրև լատիներենի ընթերցանության դասագիրք։ Սպանվեց Կեսարը դավադիրների ձեռքով 44 թ. մարտի 15-ին։ Նրա անունը հետագայում դարձավ Հռոմի կայսրերի տիտղոսը։

94 Կատիլինան Հռոմի հանրապետության քաղաքական դեմքերից էր՝ հայտնի իր անսկզբունքայնությամբ, անբարոյականությամբ և դավադիր նկարագրով։ Սուլլայի կողմնակիցն էր և գործն մասնակցություն է ունեցել վերջինիս պրոսկրիպցիաները իրագործելու ժամանակ։ Իր նպատակին հասնելու համար խտրություն չի դրել միջոցների մեջ, կանգ չառնելով նույնիսկ ոճրի առաջ։ Կատիլինայի սկզբունքային հակառակորդներից էր հռետոր Կիկերոնը, որն ի վերջո բացահայտեց նրա դավադրությունը պետության դեմ։ Կատիլինայի դավադրության պատմությունը շարադրել է նրա կրտսեր ժամանակակից Գայոս Սալլուստիոս Կրիսպոսը։

95 Կիկերոնը մ. թ. ա. I դարում հռոմեական հանրապետության ականավոր

պետական գործիչներից էր, հայտնի մատենագիր և խոշորագույն ատենաբան։

96 Գայոս Անտոնիոս Հիբրիդա. ապագա տրիումվիր Մարկոս Անտոնիոսի հորեղբայրը, հայտնի իր գիշատիչ և ընչաքաղց նկարագրով։ Եղել է Կիկերոնի կատաղի հակառակորդը և Սուլլայի պրոսկրիպցիաների ժամանակ մեծ թվով մարդկանց է ոչնչացրել։

97 Իստրոս—հնում այսպես է կոչվել Դանուբ գետը։

98 Այստեղ խոսքը Միհրդատ Պոնտացու մասին է։

99 Պանտիկապեյոն—հունական գաղութ Ղրիմի թերակղզում, այժմյան Կերչ քաղաքի վայրում։

100 Այլ աղբյուրների համաձայն, Միհրդատը ոչ թե սպանվել է Փառնակեսի ձեռքով, այլ պաշարված լինելով Պանտիկապեյոնի ամրոցում, չի ուզեցել անձնատուր լինել ապստամբներին և իր կյանքին վերջ է տվել ինքնասպանությամբ 63 թ. գարնանը։

101 Տե՛ս ծանոթ. 96։

102 Նախորդող հատվածներում (XXXVII, 17—29) Դիոն Կասսիոսը պատմում է, թե Կիկերոնը, արտաքսվելով Հռոմից, ստիպված եղավ ապաստանել Մակեդոնիա, որտեղ և ապրում էր հուսահատ վիճակում, ողբալով իր դրությունը։ Այնտեղ հանդիպում է հելլեն փիլիսոփա Փիլիսկոսին, որը երկար զրույցի բռնվելով Կիկերոնի հետ, ամեն կերպ քաջալերում է նրան և հուսադրում։

103 Կլոդիոսը Հռոմի տրիբուն էր ընտրվել 58 թ.։ Նա մեծ դեր էր խաղացել Հռոմից Կիկերոնի արտաքսման գործում, հրկիզել էր նրա տունը և բռնագրավել ունեցվածքը։

104 Տե՛ս ծանոթ. 64։

105 Այս հատվածը մեջբերում է այն ճառից, որ արտասանել է Հուլիոս Կեսարը իր ստորադրյալների առաջ, Արիովիստոսի գլխավորած գերմանական ցեղերի դեմ իր ձեռնարկած արշավանքի ժամանակ, բանակի մարտական ոգին բարձրացնելու համար։

106 Կեսարն այստեղ նկատի ունի Հռոմի առաջին բնակիչներին։

107 Բնագրում Τυρσηνούς—*տյուրսեններին*։

108 Բնագրում՝ Ὀπικούς—*օպիկներին*։

109 Խոսքը հիմնականում կարթագենացիների արշավանքի մասին է։

110 Բնագրում՝ τὴν Ἀσίαν τὴν περὶ τὴν Ἰωνίαν—*Հոնիայի շուրջ գտնվող Ասիան*։

111 Սա Մակեդոնիայի Փիլիպպոս V թագավորն է (221—179 թթ.), որը երկարատև պայքար մղեց Հռոմի դեմ Հունաստանի տիրապետության համար, սակայն բոլոր դեպքերում անհաջող։

112 Պերսևսը (179—168/6 թթ.) Մակեդոնիայի վերջին թագավորն էր, Փիլիպպոս V-ի որդին, որի վերջնական պարտությունից հետո Մակեդոնիան ընկավ Հռոմի տիրապետության տակ։

113 Խոսքը Սելևկյան թագավոր Անտիոքոս III-ի մասին է (224—187 թթ), որը հորջորջվում էր «Մեծ»։

114 Ասիական Իբերիան պատմական վիրքն է։

115 Խոսքը Աղվանքի մասին է։

116 Խոսքը Եփրատ գետից այն կողմ գտնվող Փոքր Հայքի և Եփրատից այս կողմ գտնվող Մեծ Հայքի մասին է

117 Տե՛ս ծանոթ. 80։

118 Օրոդեսը (Արշակ XIV) պարթևների հզորագույն թագավորներից էր, որը գահին տիրացավ իր հորը՝ Հրահատ III-ին սպանելուց հետո։ Կարճ ժամանակով (56—55 թթ.) գահընկեց արվեց իր եղբոր՝ Միհրդատի կողմից, բայց նորից գրավեց իշխանությունը և թագավորեց մինչև 37 թիվը։

119 Սա եգիպտոսի թագավոր Պտղոմեոս XI Ավլետեսն է (80—52 թթ.), հայտնի Կլեոպատրա թագուհու հայրը, որին մի անգամ, 58—55 թթ., ժողովուրդը արտաքսել էր երկրից, բայց հռոմայեցիների օգնությամբ վերահաստատվեց եգիպտական գահի վրա։

120 Մարկոս Լիկինիոս Կրասոսը Պոմպեոսի և Հուլիոս Կեսարի հետ Հռոմում կազմեց I եռապետությունը՝ տրիումվիրատը (տե՛ս ծանոթ. 93)։ Եռապետները հռոմեական տիրույթները բաժանեցին իրար միջև։ Իր ընչաքաղցությամբ հայտնի Կրասոսին բաժին ընկավ Ասորիքը։ Նա ցանկացավ իր կատարելիք նվաճումներով չափվել Ալեքսանդր Մակեդոնացու հետ և արշավեց պարթևների վրա։ Սակայն իր տաղանդով չփայլող այս զորապետը Կարրայի (Խառան) մոտ 53 թ. չարաշար ջախջախվեց պարթևների զորավար Սուրենի կողմից և գլխատվեց։ Պլուտարքոսն իր «Զուգակշիռք»-ում մանրամասն շարադրել է Կրասոսի կենսագրությունը։ Այն կարևոր սկզբնաղբյուր է հայոց Արտավազդ II թագավորի գահակալության առաջին տարիների պատմության համար։

121 Տե՛ս ծանոթ. 118։

122 Նիկեփորիոն—հելլենական քաղաք Միջագետքում (Նիփրկե՞րտ)։

123 Փակագծերի մեջ առնված բառերը չկան բնագրում. դրանք ավելացնում է Բեքերը (տե՛ս „Loeb Classical Library". Dio's Roman History, vol. III, էջ 422, ծան. 5)։

124 Զենոդոտիոն—հելլենական ոչ մեծ քաղաք Միջագետքում։

125 Կտեսիփոն (Κτησιφών)—պարսկական թագավորանիստ քաղաք, որն առանձնապես բարձրացավ հետագա դարերում, Սասանյանների թագավորության ժամանակ։ Հայկական աղբյուրներում՝ Տիզբոն։

126 Այստեղ խոսքը Աքեմենյանների թագավորության մասին է։

127 Բնագրում 'Αρσάκης (Արսակես)։ Սա մ. թ. ա. III դ. կեսերին ապստամբեց Սելևկյանների տիրապետության դեմ և իրեն հռչակելով անկախ, հիմք դրեց պարթև Արշակունիների թագավորությանը։

128 Բնագրում՝ 'Αρσακίδαι։

129 Խոսքը վերաբերում է Տիգրան II-ին։

130 Բնագրում 'Αρταβάζης—Արտաբազես։

131 Սելևկյան թագավորների հիմնադրած բազմաթիվ քաղաքներից մի քանիսը կոչվել են Սելևկիա։ Այստեղ հիշատակված Սելևկիա քաղաքը գտնվում էր Միջագետքում, Տիգրիսի արևմտյան ափին, ուղիղ Տիգրոնի դիմաց և այդ ժամանակ վերջինիս հետ հանդիսանում էր պարսից թագավորների ձմեռային նստավայրը։

132 Հունարեն՝ ὕπατος, նույնն է՝ ինչ լատիներեն consul-ը։ Կոնսուլ կոչվում էին հանրապետական Հռոմի երկու բարձրագույն աստիճանավորները։ Նրանք ընտրվում էին ամեն տարի, մեկ տարի ժամանակով և իրենց պարտականությունների կատարմանն անցնում էին ձմռանը՝ հունվարի 1-ից։

133 Հունա-հռոմեական աշխարհում մեծ նշանակություն էր տրվում բնության տարբեր երևույթների, նշանների և հավքերի թռիչքի հիման վրա գուշակի-

լու արվեստին։ Կարծում էին, թե այդ նշաններն ուղարկվում են աստվածների կողմից, կյանքում մարդկանց առաջնորդելու համար։

134 Զևգմայի գետանցը գտնվում էր վերին Եփրատի ալ ափին, Կոմմագենեի Սամոսատ քաղաքի մոտ. իր անունը ստացել է գետի վրա գտնվող նավակների կապովի կամրջից։

135 Բնագրում՝ στρατηγὸς αὐτοκράτωρ—բառացի նշանակում է՝ զորավար իմպերատոր, զորավար ինքնակալ։ Հռոմում պատերազմի ժամանակ այդպիսի կոչում շնորհվում էր ռազմական հրամանատարին, որն այդպիսով ստանում էր գործողությունների բացարձակ ազատություն, մինչև ռազմական կամպանիայի ավարտը։

136 Բարբարոս ասելով Դիոն Կասսիոսն այստեղ նկատի ունի պարթևների թագավոր Օրոդեսին։

137 Սա Օսրոենե (Եդեսսա) ոչ մեծ թագավորության տիրակալ Աբգար II-ն է։

138 Այստեղ խոսքը Սելևկիա քաղաքի հելլեն բնակիչներին է վերաբերում։

139 Ֆալանգը (հայ մատենագրության մեջ՝ փաղանգ) հին աշխարհում ծանր հետևակի որոշակի դասավորությամբ առաջացած ռազմական միավոր էր։

140 Կարրա—քաղաք Միջագետքում (այժմ Խառան)։

141 Քվեստորը (բնագրում՝ ταμίας—գանձապահ) հռոմեական պետության մեջ այն պաշտոնյան էր, որն ուղեկցում էր կոնսուլ զորավարին, վարելով նրա բանակի տնտեսական գործերը։

142 Բնագրում՝ ὁπλῖται—հոպլիտներ։ Անտիկ բանակներում հոպլիտները զորքի հարվածային ուժն էին։

143 Դիոն Կասսիոսն այստեղ, հավանաբար, նկատի ունի Պլուտարքոսին, որը մանրամասն գրել է Կրասոսի կենսագրությունը։

144 Բնագրում՝ Πάκορος—Պակորոս. այդպես է նաև հունական մյուս աղբյուրներում (Հովսեպոս Փլավիոս, Պլուտարքոս և այլն). Մովսես Խորենացու մոտ՝ Բակուր։

145 Այս Օսականին Գր. Խալաթյանցը (Очерк истории Армении, М., 1910, էջ 230) ենթադրարար համարում է հայ, նրա անունը նույնացնելով Վասակ անվանը։ Նրան համամիտ է նաև Հ. Մանանդյանը (Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, Երևան, 1944, էջ 254)։

146 Անտիոքը Սելևկյան թագավորների մայրաքաղաքն էր, որը կարճ ժամանակով դարձավ նաև Տիգրան Մեծի գահանիստը։

147 Խոսքը Գնայոս Պոմպեոսի մասին է։

148 Դիոնն այստեղ նկատի ունի պարթև արքա Օրոդեսին։

149 Այստեղ ենթադրվում է Հռոմը և նրա տերությունը։

150 Այստեղ վերջին ակնարկությունը Միջերկրականի ծովահենների դեմ Պոմպեոսի մղած հաղթական գործողությունների մասին է։

151 Անտիկ հեղինակների մոտ Իբերիա կոչվում են թե՛ Վրաստանը և թե՛ Իսպանիան։ Այստեղ խոսքը Իսպանիայի մասին է։

152 Անտիկ հեղինակները հաճախ Հայաստան ասելով հասկանում են Փոքր Հայքը։ Դիոն Կասսիոսի այս հատվածում ևս Հայաստան անվան տակ պետք է հասկանալ Փոքր Հայքը, քանի որ դրա մի մասն էր, որ միացված էր Պոնտական

թագավորության։ Մեծ Հայքը այդ ժամանակ անկախ թագավորություն էր, որտեղ գահակալվում էր Տիգրան II-ի որդին՝ Արտավազդ II թագավորը

153 *Դեյոտարոսը Փոքր Ասիայի կենտրոնական մասում կազմավորված Գալատիայի հելլենիստական պետության թագավորն էր։*

154 *Տե՛ս ծանոթ. 152։*

155 *Բնագրի այս հատվածում նկատելի է ինչ-որ աղավաղում։*

156 *Հռոմայեցիները Ասիա ասելով հաճախ հասկանում էին Փոքր Ասիա թերակղզու արևմտյան հատվածը, որը կազմակերպվել էր որպես պրովինցիա Ասիա։*

157 *Հունական քաղաք Սև ծովի պոնտական ափին (այժմ Սամսուն)։*

158 *Խոսքը Միհրդատ Պոնտացու նվաճողական ձգտումների մասին է։*

159 *Սա Կիմմերյան Բոսպորն է (այժմ՝ Կերչ)։*

160 *Զելա—ոչ մեծ քաղաք, որը գտնվում էր պոնտական Ամասիա քաղաքի մոտ. այնտեղ կառուցվել էր տաճար՝ նվիրված Անահիտ դիցուհուն, որին պաշտում էին նաև հայերը։ Հնում այն եղել է պարսկական աստվածների սրբավայր (Strabo, XII, 3, 37, C. 559)։*

161 *Սա Պտղոմեոս XII Դիոնիսոսն է (52—48 թթ.), Կլեոպատրայի ամուսինը։*

162 *Այստեղ խոսքը Փառնակեսի մասին է։*

163 *Այստեղ հունարեն թարգմանաբար մեջ է բերված Կեսարի լատիներեն հայտնի արտահայտությունը՝* (veni, vidi, vici) *(վենի, վիդի, վիկի—եկա, տեսա, հաղթեցի)։*

164 *Համմա. Դիոն Կասսիոս, XXXVI, 12—13։*

165 *Այս Միհրդատին չշփոթել Միհրդատ Պոնտացու հետ։*

166 *Բնագրում՝* τετραρχία։

167 *Այս տողերը հատված են այն ճառից, որ, Դիոն Կասսիոսի պատմելով, արտասանել է Կեսարի դիակի առաջ Անտոնիոսը, գովաբանելով նրա գործունեությունը։*

168 *Մարկոս Անտոնիոս—հռոմեական հայտնի քաղաքական գործիչ, Հուլիոս Կեսարի հետևորդներից։ Մ. թ. ա. 44 թ. Օկտավիանոսի և Լեպիդոսի հետ կազմեց այսպես կոչված երկրորդ եռապետությունը՝ տրիումվիրատը։ Հանրահայտ է նրա կրքոտ սերը եգիպտական թագուհի Կլեոպատրայի հանդեպ, որը և դարձավ նրա կործանման հիմնական պատճառներից մեկը։ Մահացավ մ. թ. ա. 30 թ.։*

169 *Կլեոպատրա—եգիպտական թագուհի, հայտնի իր արտակարգ գեղեցկությամբ և սանձարձակ կրքոտությամբ (տե՛ս նախորդ ծանոթ.)։*

170 *Եփեսոսում գտնվող Արտեմիսի տաճարը, որը կառուցվել էր մ. թ. ա. VI դ., համարվել է հին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը։*

171 *Սենատորներ Գայոս Կասսիոսը և, հատկապես, Դեկիմոս Բրուտոսը նախկինում եղել են Հուլիոս Կեսարի կողմնակիցները, բայց հետագայում, տեսնելով, որ նա ձգտում է վերացնել ռեսպուբլիկան և հաստատել իր միանձնյա իշխանությունը, դավադրաբար սպանեցին նրան։ Հուլիոս Կեսարը, տեսնելով մերկացրած դաշույնով իր վրա հարձակվող Բրուտոսին, որին իր ամենամերձավոր ընկերն էր համարում, բացականչում է. «Եվ դո՛ւ, Բրուտոս»։ Այս արտահայտությունը անցել է թևավոր խոսքերի շարքը։*

172 *Խոսքը Փիլիպպեի (Հյուսիսային Հունաստան) ճակատամարտի մասին*

է, որը տեղի ունեցավ մ. թ. ա. 42 թ. մի կողմից Հուլիոս Կեսարի ժառանգներից Օկտավիանոս Կեսարի (հետագայում՝ Օգոստոս կայսր) և մյուս կողմից Հուլիոս Կեսարին սպանած Գայոս Կասսիոսի և Դեկիմոս Բրուտոսի (տե՛ս նախորդ ծանոթ.) միջև։ Ճակատամարտը վերջացավ վերջիններիս ջախջախմամբ։

173 Խոսքը Կասսիոսի և Բրուտոսի պարտության մասին է։

174 Սա Օկտավիանոս Կեսարն է (հետագայում՝ Օգոստոս կայսր)։ Այսուհետև բոլոր հատվածներում Կեսար ասելով պետք է հասկանալ այս Օկտավիանոսին։

175 Բնագրում՝ ἔθνη. բառացի նշանակում է՝ էթնոսներ, ազգեր։ Խոսքը Հռոմին ենթակա պրովինցիաներում բնակվող ժողովուրդների մասին է։

176 Ապամեան եղել էր Սելևկյանների տերության խոշորագույն քաղաքներից մեկը, այդ պետության հիմնական ռազմական կենտրոնը։

177 Այստեղ բնագրի արքոնտ բառը, որը հիմնականում նշանակում է «իշխանավոր», պիտի հասկանալ իբրև «զորավար»։

178 Բնագրում՝ βιβλία (բիբլիա—գրքեր, նամակներ)։ Այստեղ խոսքը ակնհայտորեն վերաբերում է խոռվարարական թերթիկների։

179 Այս հաղորդումը պիտի համարել Դիոն Կասսիոսի կամ ինչ-որ արտագրողի վրիպումը, քանի որ այլ հավաստի աղբյուրների, ինչպես նաև իր իսկ Դիոնի հետագա վկայությունների համաձայն, այդ ժամանակ հրեաների թագավոր նշանակվածը ոչ թե Արիստոբուլոսն էր, այլ նրա որդին՝ Անտիգոնոսը (տե՛ս Jos. Flav., Antiq., XIV, 13, 9—10 և նույնի Bell. Jud., I, 13, 9—11. Dio Cass., XLVIII և XLIX, 22)։

180 Կիլիկիայից Սիրիա տանող Կիլիկյան դարպասի մասին հիշատակում են նաև Քսենոփոնը (Anabasis, I, 4, 4. հայերեն թարգմ., էջ 17) և Ստրաբոնը (XIV, 5, 18 և XVI 2, 8)։ Այդ դարպասը գտնվում էր այն վայրում, որտեղ Ամանոս լեռը ճյուղավորվում է Տավրոսից ու ձգվում Կիլիկիայի արևելյան սահմանով մինչև ծով։ Այս լեռնանցքը կոչվում էր նաև Ամանոսյան դարպաս։

181 Տե՛ս ծանոթ. 179։

182 Սա Կոմմագենեի Անտիոքոս I թագավորն է (մ. թ. ա. 69—34), որը Երվանդյաններից էր։

183 Բնագրում՝ ξυνάστης—դինաստ։

184 Խոսքը Պակորոսի դեմ տարված հաղթանակի և Անտիոքոս Կոմմագենացու հպատակեցման մասին է։

185 Պոմպեոս Ստրաբոնին չպետք է շփոթել հայտնի հույն մատենագիր Ստրաբոնի հետ. նա եղել է հռոմեական հայտնի քաղաքական գործիչ, հռապետ Պոմպեոս Մեծի հայրը։

186 Սամոսատա—Կոմմագենե երկրի մայրաքաղաքը։

187 Տե՛ս ծանոթ. 179։

188 Բնագրում՝ Կրոնոսի օր. տե՛ս ծանոթ. 71։

189 Φραάτης—հայ մատենագրության մեջ Հրահատ։

190 Տե՛ս ծանոթ. 182։

191 Այս հատվածի շարահյուսությունից դժվար է որոշել, թե խոսքը ո՞ւմ է վերաբերում, պարսից Օրոդես թագավորի՞ն, թե՞ Անտիոքոս Կոմմագենացուն։

192 Պուպլիոս Կանիդիոս Կրասսոսը Անտոնիոսի նշանակած կուսակալն էր Արևելքում։

193 Հռոմայեցիները Արևելքում իրենց հպատակեցրած տիրակալներին հրուշակում էին «Հռոմեական ժողովրդի բարեկամ ու դաշնակից». սա նշանակում էր ընդունել Հռոմի հովանավորությունը։

194 Ալբանիան հայ մատենագրության Աղվանքն է։

195 Բնագրում՝ μείζονος Ἀρμενίας — բառացի նշանակում է՝ առավել մեծ Հայաստանի։

196 Բնագրում՝ Πραάσπα—Պրաասպա։ Հ. Մանանդյանը նշում է, որ այս Փրաասպա—Գանձակ մայրաքաղաքի տեղադրությունը ենթադրում են այժմյան Թախտ-ի-Սուլեյմանի մոտ, Ուրմիա լճի հարավ-արևելյան կողմում (Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, էջ 263—264)։

197 Խոսքը հայոց Արտավազդ II թագավորի մասին է (55—31 ԹԹ.)։ Ճատկանշական է, որ անտիկ հեղինակները (Ստրաբոն, Պլուտարքոս, Դիոն Կասսիոս) խոսելով Տիգրան Մեծի կամ նրա որդի Արտավազդի մասին, հաճախ չեն հիշատակում նրանց անունը, այլ բավարարվում են նրանց անվանելով Արմեն։

198 Այստեղ Դիոն Կասսիոսը հավանաբար նկատի ունի Պլուտարքոսին, որի պատմած այս հատվածը հիմնված է «Անտոնիոսի բարեկամ ու զինակից Դելֆոսի կասկածելի հաղորդագրության վրա» (Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, էջ 266)։

199 Հռոմեական բանակում՝ բարոյալքվող լեգեոնների կարգապահությունը բարձրացնելու նպատակով, հաճախ կիրառվում էին պատժիչ միջոցներ, որոնցից մեկն էլ «դեցիմացիան» էր, որի ժամանակ յուրաքանչյուր տասներորդին պատժի էին ենթարկում։

200 Հ. Մանանդյանը Անտոնիոսի զորքերի վերադարձի ճանապարհը ենթադրում է այժմյան Թավրիզի ու Մարանդի շրջաններով դեպի այժմյան Ջուլֆա (Քննական տեսություն..., հ. 1, էջ 265)։

201 Մեզ թվում է, թե Դիոն Կասսիոսի վկայության այս կետը ճիշտ չէ։ Անտոնիոսն ընտրում է վերադարձի այլ ճանապարհ, հավանաբար, այն պատճառով, որ իր լեգեոնները դեպի Փրաասպա առաջանալիս ճանապարհին արդեն ամայացրել էին երկիրը, ուստի և նույն տեղերով նահանջելիս, նրանք կարող էին սովահարվել։

202 Կրիա (բնագրում՝ χελώνη—քելոնե)—հին աշխարհի ռազմական արվեստում ընդունված հատուկ պաշտպանական միջոց։ Հաջորդ հատվածում (XLIX, 30) Դիոն Կասսիոսը մանրամասն նկարագրում է կրիա կոչված ռազմական դասավորությունը։

203 Ակինակե—կարճ թուր, որը տղամարդիկ դաշույնի նման կրում էին իրենց գոտկատեղում։

204 Բնագրում՝ γυμνοί, նշանակում է՝ մերկեր։

205 Տե՛ս ծանոթ. 197։

206 Դրաքմա—հունական դրամի միավոր, որը հավասար էր հռոմեական 4 սեստերցի։

207 Գալատիան գտնվում էր Փոքր Ասիա թերակղզու կենտրոնական մասում։ Այս թագավորությունը կազմվել էր մ. թ. ա. III դարում, Եվրոպայից Փոքր Ասիա անցած կելտական ցեղերի այս վայրում բնակություն հաստատելուց հետո։

208 Լյուկաոնիան և Պամփյուլիան Փոքր Ասիա թերակղզու մասերն էին. ա-

ռաջինը գտնվում էր Կիլիկիայից հյուսիս, իսկ երկրորդը տարածվում էր Կիլիկիայից արևմուտք՝ Միջերկրական ծովի ափին։

209 Այստեղ նկատի են առնված Հռոմի քաղաքացիները։

210 Կյուրենե կոչվում էր Եգիպտոսից արևմուտք ընկած և Եգիպտական թագավորությանը ննթակա երկրամասը (այժմ՝ Լիբիա)։

211 Այստեղ խոսքը մեդական թագավոր Արտավազդի մասին է։

212 Բնագրում՝ τὴν μικροτέραν Ἀρμενίαν—առավել փոքր Հայաստանը։

213 Օկտավիան Օկտավիանոս Կեսարի քույրն էր, որին կնության էր առել Անտոնիոսը՝ Օկտավիանոսի հետ իր կապերը ամրացնելու համար։

214 Խոսքը հայոց Արտավազդ թագավորի աղջկա մասին է։

215 Բնագրում՝ χρυσοφύλακες—բառացի նշանակում է ոսկու պահապաններ։

216 Բնագրում՝ Ἀρτάξης—Արտաքսես։ Հույն այլ հեղինակների մոտ (Պոլիբիոս, Ստրաբոն) նույն Արտաշես անունը հաղորդվում է քիչ այլ՝ Ἀρτάξιας—Արտաքսիաս ձևով։

217 Բարբարոսներ ասելով Դիոն Կասսիոսն այստեղ նկատի ունի հայոց Արտավազդ թագավորին ընտանյոք հանդերձ։

218 Խոսքը Հուլիոս Կեսարի մասին է։

219 Սա թագուհի Կլեոպատրայի դուստր Կլեոպատրան է։

220 Այս նախադասությունը Հ. Մանանդյանը ճիշտ չի հասկացել. նա թարգմանել է՝ «Մեդացին վերցրեց նորանվաճ Հայաստանի զորքի մի մասը» (Քննական տեսություն..., հ. 1, էջ 278)։ Այստեղ խոսքը ոչ թե Հայաստանի զորքի, այլ հայոց երկրի մասին է։

221 Տե՛ս Dio Cass., XLIX, 33, 2։

222 Այլ հրատարակություններում Փլավիոսի փոխարեն՝ Կլուվիոս. Հ. Մանանդյանի մոտ՝ Կլուսյոս (Քննական տեսություն..., հ. 1, էջ 278)։

223 Ամյունտասը Գալատիայի թագավորն էր, իսկ Արքելաոսը՝ Կապպադովկիայի թագավորը։

224 Տարկոնդիմոտոսը Կիլիկիայի թագավորն է եղել։

225 Այս Յամբլիքոսը արաբների առաջնորդն էր։

226 Խոսքը մ. թ. ա. 31 թ. մի կողմից Օկտավիանոս Կեսարի և մյուս կողմից Անտոնիոսի ու Կլեոպատրայի ուժերի միջև Հունաստանի Ակտիոն հրվանդանի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին է, որի ընթացքում Անտոնիոսի և Կլեոպատրայի նավատորմը ջախջախվեց։

227 Անտիկ աղբյուրներում երկրի երևելիները և պետության բարձրաստիճան պաշտոնյաները հաճախ կոչվում են οἱ πρῶτοι—առաջիններ։

228 Վերևում (XLIX, 44, 2) հիշատակված է, որ Յոտապեն Մեդեայի թագավոր Արտավազդի դուստրն էր, որին Անտոնիոսը տարել էր իր վեց տարեկան որդի Ալեքսանդրի հետ ամուսնացնելու համար։

229 Սա Արտավազդի որդի Արտաշես II-ն է, որին հայերը, ի հեճուկս հռոմայեցիների, հռչակել էին Հայաստանի թագավոր ննդգաբար սպանված Արտավազդի փոխարեն։ Արտաշես II-ը իր հոր եղեռնական սպանության վրեժը լուծում է սրի քաշելով Հայաստանում մնացած բոլոր հռոմայեցիներին։ Նա թագավորեց 30—20 թթ.։

230 Տիրիդատես— Τιριδάτης անունը հայտնի Տրդատ անվան հունականացված ձևն է։ Տիրիդատես գրելաձևը հանդիպում է ոչ միայն անտիկ պատ-

միչների մոտ, այլև նույնությամբ պահպանված է նաև Գառնիի և Ապարանի հունարեն արձանագրություններում։

231 *Խոսքը Ակտիոնի նավամարտի մասին է (տե՛ս ծանոթ. 226), որից հետո պարտված Անտոնիոսը կործանվեց և քաղաքական ասպարեզը մնաց Օկտավիանոս Կեսարին։*

232 *Սա Կոմմագենե երկրի Անտիոքոս II թագավորն է (34—29 թթ.)՝ Անտիոքոս I Կոմմագենացու (63—34 թթ.) որդին։*

233 *Պոլեմոնը, ինչպես նախապես նշել էր Դիոն Կասսիոսը* (XLIX, 44, 3), *բացի Պոնտոսի թագավորությունից, Անտոնիոսից իբրև պարգև ստացել էր նաև Փոքր Հայքը։*

234 *Հռոմայեցիների արտաքին քաղաքականության բնորոշ գծերից մեկն է՝ այն էր, որ նրանք հաճախ պարտված երկրի տիրակալին հայտարարում էին «հռոմեական ժողովրդի բարեկամը և դաշնակիցը». սա նշանակում էր, որ տվյալ տիրակալը կախման մեջ էր Հռոմից։*

235 *Բնագրում՝* προεδρία *—բառացի նշանակում է՝ նախագահություն, առաջին աթոռին նստել։*

236 *Տե՛ս* **Դիոն Կասսիոս**, LI, *18, 3։*

237 *Հ. Մանանդյանը ճիշտ կերպով նշում է, թե Արտաշես II-ի դեմ բողոքողները եղել են հռոմեասեր հոսանքի ներկայացուցիչները և ոչ թե ժողովուրդը, քանի որ նա հետևողականորեն վարում էր ինքնուրույն ազգային քաղաքականություն (Քննական տեսություն..., հ. 1, էջ 290—291)։*

238 *Սա դարձավ Հայոց Տիգրան III թագավորը (20—8 թթ.)։*

239 *Տիբերիոս Կլավդիոս Ներոնը Օգոստոսի որդեգիրն էր։*

240 *Հ. Մանանդյանը (նույն տեղում) հավանական է համարում, որ Արտաշեսն ապանվել էր հռոմայեցիների դրդմամբ։*

241 *Խոսքը Միհրդատ Եվպատոր Պոնտացու մասին է։*

242 *Ագրիպպաս Մարկոս Վիպսանիոս. Օգոստոս Կեսարի ամենամտերիմ խորհրդատուն. դարձավ նրա փեսան և նույնիսկ պետք է ժառանգեր Օգոստոսի իշխանությունը, սակայն մահացավ մ. թ. ա. 12 թ.։ Սրա անվան հետ է կապված Հռոմի հայտնի Պանթեոնի հիմնադրումը.*

243 *Խոսքը Օգոստոսի Ներոններ Գայոսի և Լուկիոսի մասին է։*

244 *Նկատի է առնված Տիգրան III-ը։*

245 *Տե՛ս ծանոթ. 243։*

246 *Քիոսը Էգեյան ծովի հունական կղզիներից է, որը գտնվում է Փոքր Ասիայի արևմտյան ափերին մոտիկ։*

247 *Փրաատակեսը (Հրահատ V կամ Հրահատակ) պարթև Հրահատ IV-ի և իտալուհի Թեա Ուրանիայի որդին էր. իր հորը սպանելով թագավորել է մ. թ. ա. 2—մ. թ. 4 թթ.։*

248 *Սա Տիգրան IV-ն է, որը իր քրոջ՝ Էրատոյի հետ թագավորել է երկու անգամ՝ մ. թ. ա. 8—5 թթ. և մ. թ. ա. 2—մ. թ. 1 թթ.։*

249 *Արտավազդ III-ը թագավորել է մ. թ. ա. շուրջ 5—2 թթ.։*

250 *«Ծովից այն կողմ» ասելով Փրաատակեսը նկատի ուներ Հռոմը։ Իր հզբայրներին Հռոմում պատանդ թողնելով, նա ոչ այնքան կախման մեջ էր մնալու Հռոմից, որքան իրեն ապահովելու էր գահի մերձավորների կողմից թագավորական իշխանության նկատմամբ հնարավոր ոտնձգություններից։*

251 Տե՛ս Դիոն Կասսիոս, LI, 18, և ծանոթ. 230։

252 Բնագրում՝ Ἀρτάγειρα—Արտագեյրա։ Հին Հայաստանի ամրագույն բերդերից մեկը, որտեղ գտնվում էր արքունի գանձարանի մի մասը։ Գտնվում էր Արշարունյաց գավառում, այժմյան Կաղզվանից հյուսիս-արևմուտք։

253 Ատրպատականի Արտավազդ թագավորի որդի Արիոբարզանեսը Հայաստանում թագավորել է մ. թ. 2—4 թթ., իսկ նրա որդին՝ Արտավազդ IV-ը՝ շուրջ 4—6 թթ.։

254 Խոսքը Օգոստոսի մահից հետո կայսերական աթոռին նրան հաջորդած Տիբերիոս կայսեր մասին է (14—37 թթ.)։

255 Հոռոմոս—էգեյան ծովում գտնվող Դոդեկաննսոս (Տասներկու կղզիներ) կոչվող կղզեխմբի ամենախոշոր կղզին, Փոքր Ասիայի հարավ-արևմտյան ափին մոտիկ. եղել է անտիկ աշխարհի տնտեսական ու մշակութային խոշորագույն կենտրոններից մեկը։

256 Բնագրում՝ ἐπίτροπος. նշանակում է՝ կառավարիչ, տեղապահ, պահապան. հաճախ համապատասխանում է հայկական աղբյուրներում հանդիպող «գործակալ» և հատկապես «հազարապետ» տերմիններին։

257 Հեծյալները Հռոմում առաջացած արտոնյալ նոր դասն էր, որն աստիճանաբար ներգրավվում էր պետության կառավարման գործերի մեջ։

258 Հայ պատմագրության մեջ՝ Արտավան III (11—40 թթ.)։

259 Սա Հայաստանի Արտաշես III կամ Զենոն (18—34 թթ.) թագավորն է, որին գահ էր բարձրացրել Տիբերիոս կայսեր որդեգիր Գերմանիկոսը։ Այս Զենոն-Արտաշեսը Պոնտոսի Պոլեմոն թագավորի և նրա երկրորդ կնոջ, հռոմեական կայսերական տան ազգակից Պիթոդորիսի որդին էր, որը փոքր հասակից մեծացել էր հայկական միջավայրում և ընտելացել էր հայկական սովորություններին (տե՛ս Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. 1, էջ 309)։

260 Այս Արսակեսը (հայկական Արշակը) Արտավանի ավագ որդին էր և Հայաստանում թագավորել է 34—35 թթ.։

261 Այս Միհրդատը (Միթրիդատես) Հայաստանում թագավորել է երկու անգամ՝ 35—37 թթ. և 43—51 թթ., երբ վերջնականապես դուրս քշվեց Տրդատ Արշակունու կողմից։

262 Խոսքը Գայոս Կեսար Գերմանիկոս Կալիգուլայի մասին է (37—41 թթ.)։

263 Սա Հրեաստանի թագավոր Հերովդես Մեծն է։

264 Տիբերիոսի թոռը այստեղ կոչված է Գայոսի «եղբայրը», որովհետև նրա հետ միասին հանդիսանում էր Տիբերիոսի ժառանգը. իսկ «որդին»՝ քանի որ որդեգրված էր Գայոսի կողմից։

265 Տե՛ս ծանոթ. 262։

266 Այս Սոեմոսը Եմեսայի իշխանների տոհմից էր և հետագայում (շուրջ 54 թ.) ստացավ Ծոփքի թագավորությունը։

267 Իտուրիան գտնվում էր Պաղեստինից հյուսիս-արևելք, Փյունիկիայից արևելք։

268 Այս Կոտյուսը Պոնտոսի թագավոր Պոլեմոնի թոռն էր, սրա Անտոնիա Տրիփոնա դստեր (Զենոն-Արտաշեսի քույր) և Թրակիայի Կոտյուս թագավորի որդին։

269 Ռյումետալկեսը թրակիական ցեղերի առաջնորդներից էր։

270 Խոսքը պարթևների թագավոր Արտավան III-ի մասին է, որը պարթև

Մեծամեծների դժգոհությունից վախեցած, ստիպված փախել էր Վրկանաց աշխարհ։

271 Այստեղ արդին խոսքը վերաբերում է Կալիգուլայի սպանությունից հետո սրան հաջորդած Կլավդիոս կեսարին (41—54 թթ.)։

272 Այստեղ նկատի է առնված Միհրդատ եվպատոր Պոնտացին։

273 Ոմանք կարծում են, թե հետագա արտագրողների կողմից սխալ է թույլ տրվել և անունների նույնությունից առաջացել է շփոթ. ուստի այս հատվածում խոսքը ոչ թե իբերների թագավոր Միհրդատի մասին է, այլ Բոսպորոսի թագավոր Միհրդատի (տե՛ս Dio's Roman History, transl. by E. Cary, vol. VII, London, 1955, p. 441, note 1)։

274 Խոսքը Ներոն կայսեր (54—68 թթ.) մասին է։

275 Գնայոս Դոմիտիոս Կորբուլոնը եղել է Հռոմի ամենահայտնի և ամենատաղանդավոր զորավարներից մեկը։

276 Բնագրում՝ Οὐολόγαισος։ Սա հայ պատմագրության մեջ շատ հայտնի Վաղարշ Ա-ն է՝ Հայաստանի Արշակունյաց թագավորության հիմնադիր Տրդատ Ա-ի ավագ եղբայրը և հովանավորը, որը պարթևական գահին նստեց 51—75 թթ.։ Նա պարթևական ամենաընդունակ և ամենաուժեղ թագավորներից մեկն էր։

277 Սա Հայաստանում Արշակունյաց թագավորության հիմնադիր Տրդատ Ա-ն է (52/66—շուրջ 80 թթ.)։

278 Այս և հաջորդ մի քանի հատվածներում նկարագրված դեպքերը իրականում կատարվել են 58—62 թթ., մինչդեռ E. Cary-ն (Dio's Roman History, vol. VIII, pp. 118—127) դրանք սխալմամբ դնում է 64—65 թթ. տակ։

279 Այստեղ խոսքը Տիգրան VI-ի մասին է, որը Հայաստանի Տիգրան V թագավորի Ալեքսանդր եղբոր որդին էր. սա երկար ժամանակ պատանդ էր եղել Հռոմում և ստրկահոգի վերաբերմունք ուներ Հռոմի նկատմամբ. թագավորել է կարճ 60—61 թթ.։

280 Ադիաբենեի թագավոր Մոնոբազոսը մինչև վերջ դաշնակից մնաց Վաղարշին և Տրդատին. նրա կողքին հիշատակված Մոնեսեսը պարթևական պահնորդական հեծելազորի հրամանատարն էր։

281 Հովհաննան Ն. Ադոնցը ճիշտ նույնացնում է Փավստոսի մոտ հիշատակված Եռանդ տեղանվան հետ (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, стр. 36—37)։

282 Բնագրում՝ Ἀρσανιας. սա Արածանի գետն է։

283 Տակիտոսի մոտ ավելի վառ ու պատկերավոր է հռոմայեցիներին անարգելու նպատակով Հռանդեայում ձեռնարկվածը։ Հռոմայեցի պատմիչը գրում է. «Լուր էր պտտվում, որ լեգեոններն անց էին կացրել լծի տակով» (Tacit., Annal., XV, 15)։ Այս արարողությունը կատարվում էր հետևյալ կերպ. գետնին խրված երկու նիզակների վրա դրվում էր երրորդը և պարտվածներն անցնում էին դրանց միջով, դեն գցելով իրենց զենքերն ու վերնազգեստը։

284 Խոսքը Պետոսի ջարդված զորաբանակի մնացորդների և նրան օգնության շտապած Կորբուլոնի զորքերի մասին է։

285 Բնագրում՝ ἑκατοντάρχης —հեկատոնտարքես (հեկատոն՝ հարյուր), որը համապատասխանում է լատինական ցենտուրիոնին։

286 «Պատկերք» արտահայտությունը հաճախ է օգտագործում Մովսես Խորենացին (Բ, ժբ), երբ խոսում է Հայաստանում կռապաշտության, ինչպես նաև

թագավորի և նրա նախնիների պաշտամունքի մասին։ Գ. Խ. Սարգսյանը (Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 44) գտնում է, որ «պատկերք» ասելով պետք է հասկանալ Հայաստանում կանգնեցված աստվածների կուռքերը։ Հ. Մանանդյանի կարծիքով (Քննական տեսություն..., հ. 1, էջ 248), այս դեպքում եղել է «Ներոնի անդրի-պատկերը»։

287 *Բնագրում՝* διάδημα—***դիադեմա։***

288 *Բնագրում՝* ὕπαρχος—***հյուպարքոս։***

289 *Սա Տրդատի մյուս եղբայր Բակուրն էր, որին ավագ եղբայրը՝ պարթևների վաղարշ Ա թագավորը տվել էր Ատրպատականի թագավորությունը։*

290 *200,000 հունական դրաքմե=800,000 հռոմեական սեստերց=մոտ 200,000 ոսկի ֆրանկ։*

291 *Բնագրում՝* δεσπότης—***դեսպոտես։*** *Այս բառի մեկնաբանման մասին տե՛ս Ս. Մ. Կրկյաշարյան, Թագավորական իշխանությունը Արշակունյաց Հայաստանում, ՊԲՀ, 1971, № 1, էջ 198։*

292 *Ագոնոթետես (ἀγωνοθέτης) անտիկ աշխարհում կոչվում էին մրցումների կազմակերպիչները, ֆինանսավորողներն ու դատավորները։*

293 *Բնագրում՝* διερμηνεῖς, ***նշանակում է՝ նիզակակիրներ։***

294 *Հինգ հազար բյուր=50 միլիոն դրաքմե=200 միլիոն հռոմեական սեստերց=մոտ 50 միլիոն ոսկի ֆրանկ։*

295 *Ինչպես հայտնի է, հռոմեական զորքերը, կորրուլոնի ղեկավարությամբ, հիմնահատակ կործանել էին Արտաշատը 59 թ.։*

296 ***Պանկրատիոնը***—Παγκράτιον *(խառնամարտ) մենամարտի մի տարատեսակն է, որի ժամանակ մենամարտող կողմերն օգտվում են ըմբշամարտի և բռնցքամարտի տարրերից։*

297 *Խոսքը Ներոնին հաջորդած Վեսպասիանոս Փլավիոս կայսեր մասին է (69—79 թթ.)։*

298 *Խոսքը Վեսպասիանոսի որդի և հաջորդ Տիտոս Փլավիոս կայսեր մասին է (79—81 թթ.)։*

299 *Այսինքն՝ Տրայանոս կայսրը (98—117 թթ.)։*

300 *Այստեղ խոսքը հայոց Աշխադար (Դիոն Կասսիոսի մոտ՝* Ἐξηδάρης—*Եքսեդարես) թագավորի մասին է (110—113 թթ.). սա պարթևական թագավոր Բակուր II-ի (77—110 թթ.) որդին էր։*

301 *Սա պարթևների թագավոր Խոսրովն է (110—130 թթ.)։*

302 *Տե՛ս ծանոթ. 300։*

303 *Սա Եդեսիայի (Օսրոենե) Աբգար VII թագավորն է (109—116 թթ.)։*

304 *Սա նախկինում Ծոփքի հայկական թագավորության մայրաքաղաքն է եղել, որը, Պոլիբիոսի վկայությամբ (VIII, 25), գտնվել է Եփրատի և Տիգրիսի միջև, այսպես կոչված Գեղեցիկ դաշտում։*

305 *Սա Փոքր Հայքի Սատաղ* (Σάταλα) *քաղաքն է, ուր տեղակայված էին հռոմեական լեգեոնները. ուներ ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն։*

306 *Ելեգեան գտնվում էր Էրզրումի մոտ (այժմ՝ Իլիջա)։*

307 *Հին Հունաստանում Իսթմական և Պյութիական խաղերում հաղթողներին զարդարում էին կարոսից հյուսած պսակով։*

308 *Արքա ասելով Դիոնը նկատի ունի Տրայանոսին։*

309 *Անթեմուսիան գտնվում էր Միջագետքում, Եդեսիայից ոչ հեռու, Ապամեայից արևելք։*

310 *Գ. Խալաթյանցը* (Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, М., 1896, *էջ 219 և 226) և Հ. Մանանդյանը (Քննական տեսություն..., հ. 1, էջ 126—127) գտնում են, որ այս Արքանդեսը Խորենացու մոտ շփոթվել է Օրոնտաս-Երվանդի հետ։*

311 *Մանիսարոսը այդ ժամանակ Կորդուքի իշխանն էր, որը Հայաստանի Պարթամասիրիս թագավորի մահից հետո, օգտվելով բարենպաստ իրադրությունից, տիրապետել էր Հայաստանի և Միջագետքի որոշ մասերին (Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, մ. Ա, Երևան, 1957, էջ 27)։*

312 *Սինգարա—քաղաք Միջագետքում, Մծբինից հարավ-արևելք։*

313 *Քվետոս Լուսիոս Մավրոսը մավրերի հեծելազորի առաջնորդն էր, որը ծառայում էր Տրայանոսին։*

314 *Խոսքը Ալեքսանդր Մակեդոնացու և Աքեմենյան վերջին թագավոր Դարեհ III Կոդոմանոսի մասին է։*

315 *Ըստ Դիոնի, ստացվել է 'Ασσυρία>'Ατυρία ձևը։*

316 *Պարթիկոս* (Παρθικός) *բառացի նշանակում է՝ պարթևական։ Դիոն Կասիոսի այս հաղորդումը մեզ համար մեծապես արժեքավորվեց վերջերս պատմական Արտաշատի տարածքի վրա հայտնաբերված լատիներեն արձանագրությամբ, որի մեջ Տրայանոսի բազում տիտղոսների շարքում կա նաև Պարթիկոս* (Parthicus) *տիտղոսը, որով և ճշտորեն որոշվում է այդ արձանագրության թվականը՝ 116 թ. (տե՛ս Բ. Առաքելյան, Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից, ՊԲՀ, 1967, № 4, էջ 302—311)։*

317 *Բառացի նշանակում է՝ Կարմիր ծով։ Այս անվան տակ անտիկ հեղինակները նկատի են ունեցել ոչ թե այժմյան Կարմիր ծովը, այլ, նախապես, Հնդկական օվկիանոսը և հետագայում՝ Պարսից ծոցը։*

318 *Խոսքը Հնդկական օվկիանոսի մասին է։*

319 *Խոսքը վերաբերում է Էրյութրաս անունը կրած առասպելական մի տիրակալի, որն, իբր, նետված է եղել այս ծովը։*

320 *Քարակս Սպասինուն առևտրական խոշոր քաղաք էր Տիգրիսի դեպերանում, Պարսից ծոցի ափին։*

321 *Այլ ձեռագրերում՝ «նավի վրա»։*

322 *Հ. Մանանդյանը (Քննական տեսություն..., հ. 2, մ. Ա, էջ 29) Պարթամասպատեսին համարում է պարսից Խոսրով թագավորի որդին, մինչդեռ, ինչպես նշում է Հ. Մանանդյանը (նույն տեղում, ծան. 1), «Անգլիական պատմաբան Լոնգդենը (տե՛ս* Cambridge Ancient History, XI, *էջ 248), հիմնվելով Մաղաղասի ժամանակագրության խառնաշփոթ վկայությունների վրա* (Malalas, XI, *էջ 270—274, հրատ. Դինդորֆի), ենթադրում է, որ Պարթամասպատը որդին էր ոչ թե Խոսրովի, այլ Սանատրուկի, որը, նրա կարծիքով, հավանորեն, հայոց Թագավոր Պարթամասիրի եղբայրն էր։ Իսկ Գաթրճյանը (Տիեզ. պատմ., Բ, էջ 174) և Գարագաշյանը (Քննակ. պատմ., Բ, էջ 258) կարծում են, որ Պարթամասպատը եղբայրն էր հայոց Աշխադար թագավորի։ Մեջ բերված այս կռահումները համարվում են անհավանական»։*

323 Այս Վոլոգեսոսը Հայաստանի Վաղարշ Ա թագավորն է, որը իշխել է 117—140/3 թթ.։ Այս թագավորի անվան հետ է կապված Վաղարշապատ քաղաքի կառուցումը։

324 Սանատրուկը հաջորդել է Տրդատ Ա-ին։

325 Այս հատվածում հիշատակված Սևերոսին չպետք է շփոթել կայսր Սեպտիմիոս Սևերոսի հետ (193—211 թթ.)։ Սա Կատիլիոս Սևերոսն է, որը 114 թ. Տրայանոսի կողմից նշանակված էր Կապպադովկիայի, Փոքր Հայքի և Մեծ Հայքի կառավարիչ։ Այսպիսի շփոթի հետևանքով Դիոնի առաջին հրատարակիչները (օրինակ՝ Ursinus-ը) այս հատվածը սխալմամբ տեղադրել են LXXV գրքից մեղ հասած հատվածների մեջ, որտեղ խոսվում է կայսր Սեպտիմիոս Սևերոսի մասին։ Այս տեսակը ուղղեց Boissevain-ը (տե՛ս „Hermes, XXV, էջ 329), որի ուղղումն ընդունվեց։

326 Արաբիա անվան տակ պիտի հասկանալ ոչ թե այժմյան Արաբիան, այլ այն երկրները, որտեղ այդ ժամանակ բնակվում էին արաբական ցեղերը։ Սրանց, հավանաբար, այստեղ բնակեցրել էր Տիգրան Մեծը։

327 Հատրա քաղաքը Հատրենե ոչ մեծ թագավորության մայրաքաղաքն էր։ Այս թագավորությունը գտնվում էր Օսրոենեի և Ադիաբենեի միջև և իր ժամանակին, նվաճվելով Տիգրան Մեծի կողմից, մտել էր հայկական թագավորության սահմանների մեջ։

328 Հելիոս (Ἥλιος) բառացի նշանակում է՝ «արև». այստեղ նկատի է առնված Արևի աստվածությունը։

329 Սա Անտոնինոս Պիոս կայսրն է (138—161 թթ.)։

330 Էնիևս—ռազմի Արես աստծու մակդիրներից մեկը։

331 Սա Մարկոս Ավրելիոս Անտոնինոս կայսրն է (161—180 թթ.)։

332 Բնագրում՝ Βῆρος—Բերոս։ Դիոնի սկզբնական ձեռագրում պետք է լիներ Οὔῆρος—Վերոս. այս փոփոխությունը, հավանաբար, կատարվել է XI դ. Դիոնին համառոտագրած բյուզանդական պատմիչ Քսիփիլինոսի կողմից, որ միջին հունարենում B տառը արդեն կորցրել էր իր «բ» հնչումը և կարդացվում էր «վ»։

333 Սեքստոս Քերոնեացին եղել է հայտնի մատենագիր Պլուտարքոսի եղբորորդին։

334 Սա պարթևական վաղարշ III թագավորն է (148—191 թթ.)։

335 Այս Սոեմոսը, որին հետագայում տրվել է նաև Տիգրան անունը, Հայաստանում թագավորել է երկու անգամ՝ 140/3—161 և 164—185 թթ.։ Հ. Մանանդյանը (Ընտիական տեսություն..., հ. 2, մ. Ա, էջ 38) նշում է, որ «սա Եմեսայի (այժմ Հոմս) իշխանական տոհմից էր և, ըստ երևույթին, իր երակների մեջ ուներ Արշակունյաց արյուն և ազգական էր նաև Կոմմագենեի թագավորների... Նա միևնույն ժամանակ հռոմեական հպատակ էր և հռոմեական ծերակույտի անդամ»։

336 Բնագրում՝ Καινὴ πόλις (Նոր քաղաք)։ Սա Վաղարշապատ քաղաքն է։ Խորենացու մոտ (Բ, կե) կարդում ենք՝ «Վաղարշապատ, որ և Նոր քաղաք»։ Հռոմայեցիները Վաղարշապատը հայտարարում են Հայաստանի մայրաքաղաք, հավանաբար, հին մայրաքաղաք Արտաշատի ապստամբած բնակչությանը պատժելու նպատակով (տե՛ս К. В. Тревер, Очерки истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 228—230, Ս. Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 120—121)։

337 Հենիոքները ապրում էին Սև ծովի հյուսիս-արևելյան ափին՝ ասիական Սարմատիայում, և սկսած մ. թ. I դարից, նրանք, որպես Հռոմին «դաշնակից» ցեղեր, գործիք էին դարձել հռոմեական դիվանագիտության ձեռքին և վերջինիս դրդմամբ հաճախ ավերիչ արշավանքներ էին գործում Հայաստանի և Պարսկաստանի վրա։

338 Սա Սեպտիմիոս Սևերոս կայսրն է (193—211 թթ.)։

339 Գայոս Պետրոնիոս Նիգեր. հռոմեական հայտնի զորավար և քաղաքական գործիչ։ 192 թ. նշանակվեց Սիրիայի կառավարիչ և Պերտինաքս կայսեր մահից հետո Արևելքում հռչակվեց կայսր, բայց 193 թ. պարտվեց Սեպտիմիոս Սևերոսից։

340 Այստեղ ձեռագիրը վնասված է և ենթադրվում է, որ Արքե (Ἀρχή) անվան փոխարեն պետք է լինի Հատրենե (Ἀτρηνή) կամ Ադիաբենե (Ἀδιαβηνή) կամ Արբելիտիս (Ἀρβηλῖτις). տե՛ս Dio's Roman History, transl. by E. Cary, vol. IX, London, 1955, էջ 198—199։

341 Սա պարթևների Վաղարշ IV թագավորն է (191—208 թթ.)։

342 Հ. Մանանդյանի ենթադրությամբ (Քննական տեսություն..., հ. 2, մ. Ա, էջ 54 և 59) Վաղարշի այս եղբոր անունը Տրդատ է։

343 Այս հատվածում հիշատակված պոետը հռոմեական խոշորագույն դյուցազներգակ Վերգիլիոս Մարոնն է (մ. թ. ա. 70—19 թթ.), իսկ վկայակոչված տողերը՝ նրա «Էնեական» պոեմից (XI, 371—373)։

344 Պրիսկոսը եղել է ռազմական մեքենաների հայտնի գյուտարար։

345 Տե՛ս Դիոն Կասսիոս, XXXVI, 1, 1—2։

346 Նկատի են առնված բուն հռոմայեցի լեգեոնականները։

347 Այստեղ բերված 78-րդ գրքի հատվածները այլ հրատարակություններում (Dionis Cassii Cocceani, Historia Romana, ed. Dindorf, vol. I—V, Lipsiae, 1863—1865) համարվում են 77-րդ գրքի մասեր։

348 Բնագրում՝ Ἄγβαρος (Ագբարոս), փոխանակ Αὔγαρος կամ Ἄβγαρος ձևի։ Սա Օսրոենեի Աբգար Ժ թագավորն է։

349 Սա Հռոմի Անտոնինոս Կարակալլա կայսրն է (211—217 թթ.)։

350 Հ. Մանանդյանի կարծիքով (Քննական տեսություն..., հ. 2, մ. Ա, էջ 59—60), սա պետք է լինի հայոց խոսրով Ա թագավորը։

351 Այս դեպքերը Հ. Մանանդյանը (նույն տեղում) թվագրում է 215—216 թթ.։

352 Սա պարթևների Վաղարշ V թագավորն է (208—215 թթ.)։

353 Այս Տրդատին Հ. Մանանդյանը (նույն տեղում) համարում է պարթևների Վաղարշ թագավորի հղբայր. մինչդեռ Թ. Մոմզենը (Römische Geschichte, V, Berlin, 1886, էջ 418), Գ. Խալաթյանցը (Очерк истории Арменин, М., 1910, էջ 323—324) և ուրիշներ, ինչպես նշում է Հ. Մանանդյանը, առանց ապացույցի սրան նույնացրել են հայոց խոսրով Ա թագավորի որդու՝ Տրդատ Բ-ի հետ։

354 Այստեղ բերված 79-րդ գրքի հատվածները այլ հրատարակություններում (տե՛ս ծանոթ. 347) համարվում են 78-րդ գրքի մասեր։

355 Սա պարթև Արշակունիների վերջին գահակալ Արտավան V-ն է (215—224 թթ.)։

356 Արբելա քաղաքը գտնվում էր հին Նինվեի ավերակների մոտ։ Պատմության մեջ հայտնի է նրանով, որ այստեղ մ. թ. ա. 331 թ. Ալեքսանդր Մակե-

դոնացին վերջնականապես ջախջախեց աքեմենյան ղորքերին և Դարեհ III Կոդոմանոս թագավորին։

357 *Մակրինոս—Հռոմի կայսր 217—218 թթ.։*

358 *Տարավտաս—Անտոնինոս Կարակալլա կայսեր մակդիրը։*

359 *Այս մասում ձեռագիրը մեծապես վնասված է. բայց պահպանված հատուկենտ բառերից կարելի է եզրակացնել, որ Մակրինոս կայսրը պարտվելով լքում է Միջագետքը։*

360 *Տե՛ս ծանոթ. 294։*

361 *Սա Հայոց Տրդատ Բ թագավորն է (216—252 թթ.)՝ Խոսրով Ա-ի որդին և հաջորդը։*

362 *Ուսումնասիրողները ենթադրում են, որ հռոմայեցիները այս ամենամյա գումարը վճարում էին Հայաստանին, հյուսիսային սահմանների ապահովության համար (Th. Mommsen,* Römische Geschichte, V, Berlin, 1885, *էջ 411 և հաջ.; J. Marquart,* Eranšahr, Berlin, 1901, *էջ 95 և 102, ծան. 4; К. В. Тревер,* Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, *էջ 199)։*

363 *Այս հատվածում ձեռագիրը զգալիորեն վնասված է։*

364 *Բնագրում՝* Ἀρταξέρξης. *սա Արտաշիր Պապականն է (224—241 թթ.), որը Պարսկաստանում տապալելով պարթև Արշակունիների իշխանությունը, հաստատեց Քուշանական նոր դինաստիա՝ Սասանյանների դինաստիան։*

365 *Հելլենական ծով կոչվում էր Էգեյան ծովը։*

ՅԱՆԿԵՐ

ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՅԱՆԿ

Աբբարոս 32
Աբդելիմոս 32
Աբդեոս 32
Աբեներիգոս 81
Աբիաս (արաբների թագավոր) 86
Ագաթարքիդես 33
Ագրիպպաս (Արիստոբուլոսի որդի) 43
Ագրիպպաս (Քալկիսի թագավոր) 43, 80
Ադիզոս (Եմեսայի դինաստ) 89
Ալեքսանդր (Արիստոբուլոսի որդի) 36, 37
Ալեքսանդր (Կլավդիոսի ընկերը) 80
Ալեքսանդր (Հերովդեսի որդի) 42, 43, 46, 79
Ալեքսանդր (Մակեդոնացի) 52, 63—65
Ալեքսանդր (Տիգրան VI-ի որդի) 79
Ալեքսանդր (Ալեքսանդրի և Գլափյուրայի որդի, Տիգրան V-ի եղբայր) 42, 79
Ալեքսանդրիա 35
Անանիա 82, 83
Անաքարսիս 33
Անդրոմաքոս 57
Անտիգոնոս 37—42, 68—71, 74, 89
Անտիոքոս (ոմն Հրեա) 47, 48
Անտիոքոս I (Սոտեր) 46
Անտիոքոս IV Եպիփաներս (Սելևկյան) 64—66
Անտիոքոս I Կոմմագենացի 42, 73
Անտիոքոս IV Եպիփաներս (Կոմմագենացի) 45, 46, 50—52, 77, 79, 80, 88
Անտիոքոս V Եվպատոր 66
Անտիոքոս VII (Սիդետես) 66
Անտիպատրոս 35—37, 43
Անտոնիա 80
Անտոնիոս 41, 42, 73—75, 89
Ապիոն 27
Ապոլլոնիոս 33
Ասարախոդաս 57
Ասսուրաս 56
Աստե (Թագուհի) 60, 61
Ասուերոս 60
Ասքանաքսես 56
Արամոս 56
Արետաս 35
Արիստոբուլոս 35—37, 42, 43, 68
Արիստոբուլոս (Արիստոբուլոսի որդի) 43
Արիստոբուլոս (Հերովդեսի որդի) 43, 50, 89
Արշակ VI 66
Արտաբազես 42
Արտաբանոս (Արտաբանես) 77—79, 83—85
Արտաշես II (Թագավոր Հայոց) 75
Արտավազդ 75
Արտաքսերքսես 27, 60
Արտեմիս 65
Արքելաոս 42, 43, 75, 79
Արփաքսադես 56

Բաալ 31
Բալատորոս 32
Բասլեքոս 32
Բարզափռանես 37, 68—71, 73, 89

Բել 29
Բենիամին 62
Բեռնիկե 42, 43
Բեռնիկիանոս 43
Բերոսոս 28, 30, 55, 57

Գաբինիոս 36
Գայոս (տես Գերմանիկոս)
Գեթերես 56
Գերաստրատոս 32
Գերմանիկոս 78, 80
Գլափյուրա 42, 43
Գնայոս Կոլլեգաս 48
Գոմար 55, 56
Գոտարզես 85

Դարեհ I 31, 58—60
Դարեհ III Կոդոմանոս 63, 64
Դարեհ (Արդաբանոսի որդի) 79
Դեմետրիոս (Մակեդոնիայի թագավոր) 33
Դեմետրիոս (Սելևկյան թագավոր) 66

Ելիմոս 56
Եկնիբալոս 32
Եղիազար 79
Եպիփանես (տես Անտիոքոս IV Եպիփանես)
Եսթեր 62
Եվիլմարադուքոս 30

Զորոբաբել 58—60

Թարսոս 56
Թեորելոս 55
Թեսմուսա 75, 76
Թիրես 56
Թյուգրամես 56

Իզատես 80—88
Իթոբալոս 31

Լաբորոսարդոքոս 30
Լյուդաս 56
Լյուսանիաս 37, 68
Լյուսիաս 64, 65
Լոլլիոս 35
Լուկուլլոս 35, 67

Խոյրիլոս 32

Կալլինիկոս 51
Կամբյուսես 58
Կասսիոս 36, 37, 68
Կեսեննիոս Պետոս 48, 50, 51
Կիննամոս (պարթև թագավոր) 84
Կիպրոս (արաբ իշխանի դուստր) 37
Կլավդիոս կայսր 80, 83
Կլեոպատրա (Եգիպտոսի թագուհի) 42, 74, 75
Կլեոպատրա (Սելեննե) 35, 67, 68
Կյուրոս 28, 30—32, 58
Կոտիս 80
Կտեսիոս 46
Կրասսոս 36, 68

Հալիսաս 56
Հելեննե 80—83, 88
Հեկատեոս 33
Հեյրոմոս 32
Հերակլես 30
Հերոդոտոս 32
Հերովդես 37—42, 69—75, 79
Հերովդես (Արիստոբուլոսի որդի) 43
Հերովդես (Քաղկիսի թագավոր) 43, 80, 89
Հերովդիաս 43
Հիերոնիմոս եգիպտացի 55
Հյուստասպես 58
Հյուրկանոս 35—41, 63, 70, 71, 73, 74, 89
Հյուրկանոս (Հերովդեսի որդի) 43
Հովակիմ 57, 58
Հովսեպոս 37, 41
Հոափսակես 57
Հոիփաթես 56
Հուլիոս Կեսար 75

Մագոգես 55
Մադես 55
Մանասսե 63
Մարդոքեոս 62
Մարիամե 39, 43
Մաքայրաս 41
Մեգաբեննես 30
Մեննայոս 37, 68
Մեսաս 56

Մեսքես 55
Մետելլոս 35
Մերբալոս 32
Միհրդատ (Պարթև) 36
Միհրդատ (Պոնտացի) 35, 67, 68
Մյուտյունոս 32
Մնասեաս 55
Մոնոբազոս 81, 82, 85, 88
Մոնոբազոս (Բազեոս) 80
Մովսես 27, 28, 55
Մուքեոս 61

Յավանոս 55, 56
Յափեթ 55, 56
Յոտապե 43, 79

Նաբոնիդոս 31
Նաբուպալասար 28, 29
Նաբուքոդոնոսոր 28—32, 57, 58
Ներիգլիսարոս 30
Ներոն 34, 43, 79, 89
Ներոն (Տիբերիոս Կլավդիոս) 75
Նեքաո Բագավոր 57, 58
Նիկողայոս Դամասկոսցի 55
Նինոս 56, 57
Նոքոս 28, 54, 56, 81

Պակորոս (արքայորդի) 37, 39, 68—71, 73, 89
Պակորոս (Մեդիա-Ատրպատականի Բագավոր) 52, 85
Պակորոս (տակառապետ) 38
Պեյթոլաոս 37
Պետոս (տես Կեսեննիոս Պետոս)
Պիսոն 78
Պոլեմոն 80
Պոլիբիոս 65
Պոմպեոս 35, 36, 67
Պտղոմեոս 36
Պտղոմեոս (Մեննայոսի որդի) 35, 37, 38

Սալոմե 37, 42
Սամաքո 81
Սամպսիգերամոս 80
Սանաբալլետես 63
Սարամալլա 39, 71, 74
Սելեննե (տես Կլեոպատրա)
Սելևկարոս 57
Սելևկոս 33
Սեմ 56
Սեմիրամիս 30
Սեննաքերիմ 57
Սիլոն 41
Սկավրոս 35, 67
Սոեմոս 50
Սոսսիոս 42, 73, 89
Ստրաբոն 68
Ստրատոնիկե 33

Վարդանես 85
Վեսպասիանոս 47—49, 51, 79
Վիտելիոս 78, 79
Վոլոգեսես (նաև Վոլոգեսոս) 49, 51, 52, 85, 86, 88
Վոնոնես 76, 77

Տիբերիոս 77—79
Տիգրան II 35, 42, 67, 75
Տիգրան III 75
Տիգրան (V) 42, 79
Տիգրան VI 79
Տիտոս 45, 48, 49
Տիրիդատես (նաև Տրտատ, Հայոց Բագավոր) 52, 53, 85
Տրյուփոն 66

Ուսես 56
Ուրոս 56

Փառնակես 67
Փասայելոս 37—40, 69—71, 73
Փելիքս 43
Փերորա 37
Փիլիպպոս (Անտիոքոս IV-ի ընկեր) 66
Փիլիպպոս (Մակեդոնացու հայր) 65
Փիլոստրատոս 30
Փրաատես III 73—76
Փրաատակես 75, 76

Քելբես 32
Քսերքսես 27, 33, 60

Օրոդես 76
Օրոդես (Արդաբանոսի որդի) 77
Օրսաննես 36
Օփելլիոս 39, 71

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ադիաբենե 45, 80, 82, 83, 86, 88
Ալեքսանդրիա 68
Ամանոս լեռ 55
Անտիոք 33, 46—49, 72, 89
Անտիոք Պիսիդիոնիա 85
Ասիա 28, 30, 44, 55—57, 63, 64, 68
Ասորեստան 36
Արաբիա 28, 34, 37, 75
Արասկես տաճար 57
Արբելա 43
Արսամոն բերդ 86

Բաբելոն 28—33, 58, 62, 65, 66, 73
Բաբելոնիա 29, 31
Բակտրիա 87
Բարիս լեռ 55
Բերիտոս քաղաք 80
Բյութանիա 44
Բոսփոր 44
Բորսիպա 31

Գադեյրա 44, 55
Գալիլեա 38, 43, 70, 80
Գրանիկոն գետ 63

Դամասկոս 35, 56, 58, 63

Եգիպտոս 28, 29, 36, 42, 49, 57, 58, 64, 73, 75
Եթովպիա 59, 60
Եկդիպոն 38, 70
Եմեսա 50, 80, 88
Եվրոպա 55, 68
Երիքով 35, 75
Երուսաղեմ 28, 30, 35, 36, 38, 40, 41, 46, 57, 58, 64, 65, 69, 70, 88
Եփրատ գետ 34, 36, 37, 41, 43, 45, 46, 49—51, 56—58, 63, 64, 72, 73, 75, 79, 87, 89

Զևգմա 49

Էլիմայիս քաղաք 65

Թերմոդոնտ 32

Իբերիա 30
Իդումեա 40
Իսոս 63
Իստրոս 43
Իտաբյուրիոն 36
Իտալիա 44

Լակեդեմոնիա 51, 52
Լիբիա 30, 44

Կապպադովկիա 42—44, 46, 79
Կասպյան դռներ 78
Կարմանիա 31
Կարմելոն 69
Կարրոն երկիր 81
Կարքեմիսա 58
Կելե-Սիրիա 28, 56
Կետիս 79
Կիլիկիա 51, 56, 63, 79, 80
Կոմմագենե 49, 50, 77, 79, 80, 88
Կոս կղզի 68
Կորդվաց լեռներ 55
Կտեսիփոն 77

Հայաստան 35, 46, 52, 54—57, 67, 74, 75, 77—79, 85
Հայկական լեռներ 28
Հելլեսպոնտոս 63
Հնդկաստան 30, 59, 60
Հնդկաց օվկիանոս 56
Հռափաննեա 46
Հռոմ 34, 42, 45, 51, 52, 76, 78, 79, 83
Հրեաստան 35, 37, 41, 42, 43, 58, 64, 67—69, 73—75

Հունաստան 33

Մաղակա քաղաք 56
Մակեդոնիա 33
Մասադա 40
Մարիսա 40
Մեդիա 30, 52, 59, 77, 85
Մելիտեննե 46
Մեծ Հայք 43
Մեյոտիս լիճ 44, 52
Մինիաս երկիր 55
Միջագետք 66

Յոնիա 55
Յուլիաս 43

Նինոսի քաղաք 56
Նիսիբիս երկիր 85
Նպատ լեռ 77

Պաղեստին 32, 56
Պարթենիոս 32
Պարթիա 42, 68, 73
Պարթյուենե 41
Պարսկաստան 33, 59—65
Պելուսիոն 36, 58
Պետրա 35
Պերեա 43
Պերսիս 31
Պոնտոս 44, 67, 80
Պտղոմայիս 35, 37, 67, 69

Սամոսատա 41, 42, 50, 72
Սելևկիա 33, 77
Սիդոն 37, 63, 69
Սիլանոս 77
Սիրիա 28, 30, 33, 34, 36, 37, 41, 42, 46—48, 50, 58, 63, 66—68, 73, 77
Սպասինու-Քարակս 56, 81, 82
Սուսա 60, 62

Տանայիս գետ 52, 55
Տավրոս լեռ 55, 63
Տարիքեա 37, 43
Տարսոն (նաև Տարսոս) 51, 56
Տիբերիաս 43, 80
Տյուրոս 30—32, 63, 64, 69
Տրաքոնիտիս 56

Փյունիկե 28, 30
Փոքր Հայք 43, 80, 89

Քաղկիդիկե 50
Քաղկիս 43, 80, 89

ՑԵՂԱՆԻՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ադիաբենցիներ 34
Ալաններ 52, 53, 78
Աղվաններ 78
Ասորիներ 32
Ասսուրացիներ 56, 57
Ասքանաքսյաններ 56
Արաբներ 86
Արամեացիներ 56
Արփաքսադյաններ 56

Բաբելոնացիներ 28, 30, 34, 57
Բակտրիացիներ 56
Բրիտանացիներ 44

Գալատներ 34, 55
Գալլեր 44
Գերմաններ 44
Գոմարյաններ 55

Դայեր 79, 88
Եգիպտացիներ 28, 29, 32, 57
Եթովպացիներ 32
Ելիմայեցիներ 56

Էլլյաններ 56

Թարսյաններ 56
Թեոբելյաններ 55
Թիրյաններ 56
Թյուգրամյաններ 56

817—17

Թրակիացիներ 56

Իբերներ 55, 67, 78

Լիկիացիներ 44
Լյուդիացիներ 56

Կապպադովկիացիներ 56
Կելտեր 34
Կիլիկիացիներ 44
Կոլխեր 32, 44

Հալիսեցիներ 56
Հայեր 54
Հելլեններ 44, 47, 55, 56
Հենիոքներ 44
Հյուրկաններ 52
Հոեգյաններ 56
Հորիփաթյաններ 56
Հռոմայեցիներ 34, 36, 43—45, 50, 51, 77, 85
Հրեաներ 29, 32, 34, 36, 37, 45—49, 55, 58, 60, 62—65, 67—69, 73, 74
Հույներ 27, 30, 33, 34, 61

Մագոգյաններ 55
Մարդեր 55
Մակեդոնացիներ 44—46, 63, 66
Մակրոններ 32
Մասսագետներ 58
Մեդացիներ 28, 52, 57
Մեսյաններ 56
Մեսքեններ 55

Նաբաթեացիներ 36

Պամփիլիական ազգ 44
Պարթևներ 34—38, 40, 41, 44, 49, 50, 66, 68—71, 73, 75—78, 83—87
Պարսիկներ 28, 32, 33, 56, 58, 61—63
Պափլագոններ 56
Սակեր 79, 88
Սիրիացի 29, 56
Սկյութներ 33, 52, 55

Տավրիկյան ցեղեր 44

Փյունիկեցիներ 27, 29, 32
Փռյուգներ 56

Քաղդեացիներ 28, 29, 56

ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբգար II Օսրոենացի 160—162
Ագամեմնոն 130
Ագրիպպաս 177, 192
Ագրիպպաս (Հերովդեսի թոռը) 196
Ադոն 194
Ադվենտոս 224
Աթամբելոս 211
Ալեքսանդր Մակեդոնացի 156, 158, 210—212
Ալեքսանդր (ոմն) 176
Ալեքսանդր, Կլեոպատրայի որդի 184, 185, 187, 188
Ալեքսանդր, Յամբլիքոսի եղբայր 188
Ալբավդոնիոս 160
Ակիլիոս (տես Մանիոս Ակիլիոս)
Ամյունտաս 184, 188
Անյուլլիոս 217
Աննիոս 202
Անտիգոնոս 173, 176, 177
Անտիոքոս III 122, 123, 154, 177
Անտիոքոս XIII Ասիացի 149
Անտիոքոս I Կոմմագենացի 127, 173, 175, 176
Անտիոքոս II Կոմմագենացի 190
Անտիոքոս, Անտիոքոսի որդի 196, 197
Անտիոքոս փիլիսոփա 222
Անտոնինոս Կարակալլա 221—224
Անտոնինոս Պիոս 214
Անտոնիոս (տես Մարկոս Անտոնիոս)
Անքիալոս 207
Ասանդրոս 169, 170, 192
Ավգարոս Օսրոենացի 207, 209
Ավգարոս X 221
Ավրելիոս Կելսոս 225
Ատտալոս II 124
Արբանդես 209
Արետաս 152
Արիարաթես IV 123
Արիարաթես V 123, 124, 184
Արիոբարզանես I 124
Արիոբարզանես III 167, 168, 170
Արիոբարզանես Մեդացի 194
Արիստոբուլոս 173
Արշակ Պարթև 126, 127, 135, 156
Արշակունիներ 156
Արսակես 204
Արսակես, Արտաբանոսի որդի 196
Արտաբանոս I 196, 197, 206
Արտաբանոս V 222—226
Արտաշես, Արտավազդի որդի 186, 188 189, 192
Արտաշես III 196
Արտավազդ II 158, 184—186, 188
Արտավազդ III 194
Արտավազդ IV Արիոբարզանեսի որդի 194
Արտավազդ Մեդացի 178, 184
Արտաքսերքսես (Արտաշիր Պապական) 226
Արտեմիս 130
Արտոկես 143, 144
Արքելաոս 134, 188, 192, 195
Ափրանիոս 147

Բիբուլոս 166
Բրեննոս 123
Բրուտոս 171, 172

Գաբինիոս 135, 146, 153, 154
Գալլոս 177
Գայոս Անտոնիոս 150
Գայոս Կալիգուլա 197, 198
Գայոս Մանիլիոս 135
Գայոս Պիսոն 131
Գայոս Սոսսիոս 176
Գայոս Տելեսինոս 202
Գայոս Փիգուլոս 148
Գայոս (Օգոստոսի Թոռը) 193—195
Գաննյուս 225
Գելլիոս 177
Գլափյուրա 184
Գնայոս Կալվինոս 158, 168

Դարեհ III 210
Դարեհ (ոմն Արշակունի) 197
Դեմետրիոս I Սոտեր 123, 124
Դեյոտարոս 167, 168, 184
Դյունամիս 192
Դոմիտիոս 169, 187

Եպագաթոս 224
Եվմեննես II 123, 124
Երյուկիոս Կլարոս 212
Եքսեդարես 207

Զենոդորոս 192
Զորերոս 178
Զևս 124

Էմիլիոս Լեպիդոս 135
Էնեաս 219
Էնիևս 214
Էրատո 194

Թեոկրիտոս 222
Թեոփիլոս Պաիլագոնացի 124
Թուկիդիդես 215

Իփիգենիա 131

Լաբիենոս 171, 172
Լավինիա 219
Լատերանոս 217
Լելիանոս 198
Լետոս 217—219
Լյուկոմեդես 188
Լյուսանիաս 184
Լուկիլլա 215
Լուկիոս Կեսար 148, 149
Լուկիոս Կոմոդոս 214
Լուկիոս Կոտտաս 143
Լուկիոս Մետելլոս 127
Լուկիոս Սեմպրոնիոս 185
Լուկիոս Վերոս 214, 215
Լուկիոս Վիտելլիոս 197
Լուկիոս Տորկուատոս 143
Լուկիոս Տուլլիոս 135
Լուկիոս Փաննիոս 129
Լուկիոս Փլակկոս 142
Լուկիոս Փլավիոս 153, 188
Լուկիոս (Օգոստոսի Թոռը) 193
Լուկրետիոս 149
Լուկուլլոս 125—138, 136, 148
Լուսիոս 209, 212

Կանիդոս 217
Կասսիոս 215
Կասսիոս Լոնգինոս 164—166, 171, 172
Կատիլինա 149—150
Կեկիլիոս Արիստոն 225
Կեսարիոն 187
Կիկերոն (տես Մարկոս Կիկերոն)
Կլավդիոս 177
Կլավդիոս Կեսար 198
Կլավդիոս Պուլլիոն 225
Կլեոպատրա 168, 171, 183, 184, 186, 187, 189
Կլեոպատրա, Կլեոպատրայի դուստր 184
Կլոդիոս (տես Պուպլիոս Կլոդիոս)
Կոմազոն 225
Կոռնափիկիոս 184
Կոտյուս 197, 198
Կորբուլոն Գնայոս Դոմիտիոս 199—202, 205
Կվինտոս Դելլիոս 185
Կրասսոս 135, 155, 158—160, 163—165, 175, 178, 191
Կրասսոս կրտսեր 161

Հերմոգենես 215
Հերովդես 177, 192, 196
Հյուրականոս 173
Հուլիոս Ալեքսանդր 212
Հուլիոս Կեսար 149, 167—170, 188
Հուլիոս Կրիսպոս 219

Մալքոս Նաբատեացի 173—174, 184
Մակրինոս 223, 224
Մանիոս Ակիլիոս 131, 132, 134
Մանիսարոս 209
Մանլիոս 123
Մաննոս 209
Մարկիանոս Տավրոս 225
Մարկիոս 132, 134, 137
Մարկոս 215
Մարկոս Անտոնիոս 171, 172, 175—180, 183—191
Մարկոս Ավրելիոս Անտոնինոս 214—216
Մարկոս Կիկերոն 150—153
Մարկոս Մարկելլոս 166
Մարկոս Յունիոս 207
Մարկոս Փաբիոս 129, 130
Մարոն 219
Մարտիոս Վերոս 215—216
Մաքարեա 139
Մաքսիմոս 212
Մերարսապես 209
Մեննեկրատես 202
Մեննեմաքոս 134
Մետելլոս Կելեր 142, 143
Մետրոփանես 135
Միթրա 204
Միհրդատ (Ատրպատականի թագավոր) 132, 154
Միհրդատ Իբերացի 196—198
Միհրդատ, Իբերացու որդի 196
Միհրդատ Պերգամցի 170
Միհրդատ (ոմն) 192
Միհրդատ VI Պոնտացի 124—127, 129—132, 134—137, 139, 140, 144, 145, 148—152, 167, 168, 170, 192
Միհրդատ, Պոնտացու հետնորդ 198
Մոնեսես Պարթև 199, 201
Մոնեսես Պարսիկ 177, 178
Մոնոբազոս 199, 202

Յամբլիքոս 188
Յամբլիքոս, Յամբլիքոսի որդի 191
Յոտապե 188, 189

Նաբիս 122
Ներոն 199—206, 208
Ներվա 177
Նիգեր 216
Նիկոմեդես III 124
Նորբանոս 177

Պակորոս 165, 166, 171—177, 184
Պակորոս, Տրդատի և Վաղարշի եղբայր 202, 204
Պակորոս II 207, 208
Պատրոբիոս 203
Պարթամասիրիս 207, 208
Պարթամասպատես 212, 214
Պետոս (Լուկիոս Կեսսեննիոս) 200, 201
Պերսես 154
Պլանկոս 171
Պոլեմոն, 179, 185, 188, 190, 192, 197, 198
Պոլեմոն, Պոլեմոնի որդի 197
Պոլիոն 198
Պոմպեոս 133—138, 140—150, 152—154, 160, 167—170, 185, 221
Պոմպեոս Ստրաբոն 176, 184
Պտղոմեոս V Եպիփանես 123
Պտղոմեոս XI Ավլետես 154
Պտղոմեոս XII Դիոնիսոս 169
Պտղոմեոս Փիլադելփոս 184, 187
Պրիսկոս 216, 219
Պրոբոս 127
Պուպեդիոս Սիլոն 173
Պուպլիոս Էլիոս Հադրիանոս 213
Պուպլիոս Կանիդիոս Կրասսոս 177—178
Պուպլիոս Կլոդիոս 132, 134, 153
Պուպլիոս Վարոս 194
Պուպլիոս Վինիկիոս 194

Ռյումետալկես 197
Ռոսկիոս 135

Սանատրուկես 212
Սաքսա 171—173

Սեկիլիոս 127
Սենտիոս 209
Սերտորիոս 167
Սևերիանոս 215
Սևերոս 212, 213
Սևերոս Սեպտիմիոս 216—220, 222
Սեքստոս 172, 184, 188
Սեքստոս Քերոնեացի 215
Սիլակես 155
Սկրիբոնիոս 192
Սոեմոս 197
Սոեմոս (Հայաստանի թագավոր) 215
Սոսսիոս 177, 187
Սպորակես 209
Ստատիանոս 188
Ստրատոնիկե 149
Սուետոնիոս 125, 149
Սուրեն 158, 160, 161, 164

Վալերիոս 219
Վալերիոս Մեսսալաս 158
Վաղարշ (տես Վոլոգեսոս)
Վենտիդիոս 173—176
Վոլոգեսոս I 199—202, 204, 206
Վոլոգեսոս (Հայոց թագավոր) 212, 214
Վոլոգեսոս III Պարթև 215
Վոլոգեսոս IV Պարթև 218
Վոլոգեսոս V Պարթև 221, 222

Տարավտաս (տես Անտոնինոս Կարակալլա)
Տարքոնդիմոտոս 188, 191
Տերենտիոս Մաքսիմոս 206
Տիբերիոս 192, 193, 195, 196
Տիգրան II 125—129, 132—137, 139, 140, 142, 147—149, 158, 167
Տիգրան, Տիգրան II-ի որդի 139—142, 147, 153
Տիգրան III, Արտավազդի որդի 192
Տիգրան IV 193, 194
Տիգրան VI 199
Տիտոս 206
Տիտոս Լաբիենոս 171
Տիրիդատես (Հայոց թագավոր) 199—206, 208
Տիրիդատես II 224
Տիրիդատես (ոմն Արշակունի) 190, 191, 194, 196
Տիրիդատես, սատրապ Հայաստանում 216
Տիրիդատես, Վոլոգեսոս V-ի եղբայր 222
Տրայանոս 207—214
Տրդատ I (տես Տիրիդատես)
Տրիարիոս 130, 131, 170
Տուրնոս 219

Փաբիոս (տես Մարկոս Փաբիոս)
Փառնակես 151, 152, 166—171, 192
Փառնավազոս 178
Փարասման 196, 214
Փիգուլոս 149
Փիլիպպոս V 122, 154
Փիլոպատոր 138
Փլամինիոս 122
Փլավիոս Արրիանոս 214
Փլավիոս Վեսպասիանոս 206
Փրաատես III 135, 136, 140, 146—148, 152, 154
Փրաատես IV 177, 178, 180, 184, 190, 191
Փրաատես, Փրաատեսի որդի 196
Փրանապատես 173
Փրատակես 193, 194

Քաննայոս 174
Քվինտոս Մարկիոս 127

Օգոստոս Կեսար (տես Օկտավիանոս Կեսար)
Օկտավիա 185
Օկտավիանոս Կեսար 172, 184, 187—195, 197
Օպպիոս Ստատիանոս 179
Օսակես 165, 166
Օսրոես 207—209
Օրնոդապատես 166
Օրոդես 154, 155, 158, 164—166, 170—172, 177
Օրոյսես 142, 145, 146
Օրոփեռնես 123, 124

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաս գետ 145
Ադենյուստրև 209
Ադիաբենե 199, 209, 210
Աթենք 207
Ալբանիա 142, 154, 178, 214
Ալեքսանդրիա 186, 187
Ալպյան լեռներ 153
Ակրոպոլիս (քաղաք Իբերիայում) 143
Ամանոս 173
Ամիսոս 169
Այգե քաղաք 225
Անահտական երկիր 137, 142
Անթեմուսիա 209
Անկյուրա 123
Անտիգոնիա 166
Անտիոք 134, 165, 173, 207, 215, 225
Ապամեա 172, 173
Ասիա 125, 126, 130, 168, 169, 171, 190, 195, 205—207
Ասիական Իբերիա (տես Իբերիա)
Ասորիք (տես Սիրիա)
Ասպիս 148—149
Աստյուրիա 210
Ատյուրիա 210
Արաբիա 154, 184, 196, 209, 213
Արադոս քաղաք 173, 176
Արաքս գետ 140, 187
Արբելա 210, 222
Արմենիա 154
Արսամոսատա 207
Արսանիաս գետ 200
Արտագերս 194
Արտաշատ 140, 185, 194, 205, 206
Արքե 217
Աֆրիկա 167, 169

Բաբելոն 210, 212, 218
Բյուզանդիոն 216
Բյութանիա 123, 134, 135, 168, 169, 225
Բոսպորոս 139, 144, 152, 169, 170, 198
Բրենդեսիում 205
Բրիտանիա 167, 216

Գազիուրա 131
Գալատիա 123, 136, 184, 225
Գալլիա 161, 167
Գավգամելա 210

Դադասա բերդ 131
Դյուրրաքիոն 205
Դոդոնե 124

Եգիպտոս 123, 155, 167—172, 183, 186—190
Եդեսսա 209, 212
Ելեգեա 208, 215
Եպիրոս 124
Եվրոպա 154
Երիքոլոն 225
Երուսաղեմ 176
Եփեսոսի Արտեմիսյան տաճար 171
Եփրատ գետ 127, 128, 146, 147, 155, 157, 159, 160, 164, 165, 174, 178, 187, 197, 201, 202, 206, 210, 211, 217, 218

Զելա 169
Զենոդոտիոն 155
Զևգմա 158, 174, 225

Էրյութրեյան ծով 211

Թրակիա 123

Իբերիա (Ասիական) 154
Իբերիա (Եվրոպական) 167
Իստրոս գետ 150
Իտալիա 122, 150, 168, 169, 176, 177, 203, 213
Իքնիա 155

Լիբիա 187
Լյուկաոնիա 123, 184
Լյուկիա 207

Մոփք 141

Կաբիրա 130
Կամբյուսես գետ 145
Կապիտոլիոն 214
Կապպադովկիա 123, 124, 130, 131, 133, 134, 140, 141, 167, 168, 184, 192, 195, 196, 200, 207, 214, 224, 225
Կասպից ծով 146
Կասպյան դռներ 206
Կարդյուենե լեռ 210
Կարմիր ծով 152
Կարրա քաղաք 163, 165
Կելե-Սիրիա 149
Կիլիկիա 133—135, 171, 173, 176, 191, 196, 198, 214, 225
Կիմմերյան Բոսպոր 168, 192
Կիպրոս 154, 184, 187
Կյուռնոս գետ 142—145
Կյուրենե 184, 187
Կյուրեստիկա 174
Կոլխիս 139, 144, 168
Կոմանա 130
Կոմմագենե 127, 175, 192, 196
Կովկաս լեռ 143, 146
Կորդուենե երկիր 147
Կտեսիփոն 156, 160, 211, 215, 218
Կրետե 154, 184

Հայաստան 127, 129, 136, 137, 140, 145, 146, 149, 158, 159, 164, 167—171, 173, 181, 183, 186—189, 193, 194, 196—201, 204, 205, 207—209, 213—216, 224, 226
Հատրա 213, 219, 226
Հելլադա 122, 123, 153
Հելլեսպոնտոս 187
Հնդկաստան 187, 211
Հոնիա 188
Հոնիական Ասիա 153—154
Հոնիական ծով 205
Հռանդեա 200, 201
Հռենոս գետ 167
Հռոդոս 194
Հռոմ 122, 124, 142, 147, 158, 167, 168, 185, 187, 190—192, 197, 198, 201—203, 206, 212, 214, 225, 226
Հունաստան 188

Մայոտիս 139
Մեդիա 123, 132, 154, 188, 214, 222, 226
Մեծ Հայք 178
Մեսենե կղզի 211
Միջագետք 128, 147, 155, 156, 158, 201, 209, 213, 214, 218, 219, 223, 226
Մյուսիա 123

Նեապոլիս 203
Ներոնեյա 206
Նիկեփորիոն 155
Նիկոմեդիա 221, 225
Նիկոպոլիս 168, 185
Նինվե 210
Նիսիբիս 128, 129, 132, 134, 210, 212, 216—218, 223
Նոր քաղաք 216

Պաղեստին 154, 173, 184, 221
Պամփյուլիա 123, 184
Պանտիկապեյոն 151
Պարթիա 178, 226
Պափլագոնիա 123
Պելոպոննես 189
Պելորոս գետ 144
Պիկենում 203
Պիսիդիա 123
Պոմպեոպոլիս 135
Պոնտոս 129, 146, 154, 168, 171, 179, 190, 192
Պոնտոս Կապպադովկյան 188
Պուտեոլի 203

Սամոսատ 176
Սատալա 207
Սարդինիա 153
Սելևկիա 158, 160, 207, 212, 215, 218
Սելինուս 214
Սիկիլիա 153
Սիմփորիոն 149
Սինգարա 209
Սինոփե 192
Սիրիա 123, 127, 134, 141, 147, 148,

150, 152, 154—156, 158, 164—167, 171—177, 187, 190, 193, 194, 197, 199, 200, 207, 213, 215, 217, 221, 226
Սոլի քաղաք 135

Տալավրա 132
Տավրոս լեռ 127, 133, 200
Տիգրանակերտ 125, 199, 200
Տիգրիս գետ 128, 146, 155, 156, 210, 211, 218, 223
Տյուրոս 173
Տրալլես 124
Տրայանուպոլիս 214

Փասիս գետ 140, 144
Փիլիպպե 171
Փյունիկիա 141, 149, 152, 172, 184
Փոքր Հայք 185, 188, 191, 197
Փոյուգիա 123
Փրաատպա 179

Քաղկեդոն 225
Քարակս Սպասսինու 211
Քիոս 193

Օլյումպոս 123
Օսրոենե 221

ՅԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ադիաբենցիներ 216
Ալաններ 214
Ալբաններ 142, 143, 145, 146
Արաբներ 134, 149, 152, 191, 197, 216, 220
Աֆրիկացիներ 154

Բյուքանիացիներ 154

Գալլեր 123, 158

Եթովպացիներ 203, 206

Էտոլիացիներ 122
Էտրուսկներ 153

Թրակիացիներ 153

Իբերներ 143, 154, 178, 196, 198, 214
Իլիրիացիներ 153

Լատիններ 153
Լուկաններ 153

Կարթագենացիներ 154
Կիլիկեցիներ 126
Կոլխեր 144

Հայեր 143, 192—194, 202, 206—208, 221, 222
Հատրացիներ 219
Հելլեններ 155, 160
Հենիոքներ 207, 216
Հնդիկներ 211
Հռոմայեցիներ 122—124, 126—133, 136—142, 144, 145, 147—153, 155, 156, 158, 160—166, 168, 169, 171—177, 179, 182—185, 188, 189, 194, 197—202, 207—210, 212—214, 220, 224, 226
Հրեաներ 176, 214

Մակեդոնացիներ 153, 155, 156
Մասսագետներ 214
Մաքելոններ 208
Մեդացիներ 178, 180, 217, 226

Պարքևններ 128, 135, 154—156, 158, 161—163, 165, 166, 171, 173, 174, 176, 177, 180, 183, 185, 187, 188, 190, 193, 194, 196, 197, 199, 202, 206—208, 210, 212, 214, 215, 217, 218, 221, 222, 226
Պարսիկներ 156, 226
Սաբիններ 153
Սամնիտներ 153
Սիրիացիներ 155, 220, 225
Սկյութներ 150, 196, 217
Վոլսկեր 153
Օսկեր 153
Օսրոենցիներ 161, 216

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հովսեպոս Փլավիոս 5
Հովսեպոս Փլավիոսը և նրա աշխատությունները 7
Ընդդեմ Ապիոնի (հատվածներ) 27
Հրեական պատերազմի մասին 34
Հրեական հնախոսություն 54
Ծանոթագրություններ 91
Դիոն Կասսիոս Կոկկեյանոս 113
Դիոն Կասսիոս (կյանքը և գործը) 115
«Հռոմեական պատմություն» (հատվածներ) 122
Ծանոթագրություններ 229
Յանկեր 253

Տպագրվում է հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Հ. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Նկարիչ
Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Տեխնիկական խմբագիր
Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ

Սրբագրիչ
Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

ՎՖ 06767 Պատվեր 817 Հրատ. 4230 Տպաքանակ 3000
Հանձնված է շարվածքի 18/XI 1975 թ.։ Ստորագրված է տպագրության 15/XI 1976 թ.։ Տպագրական 16,75 մամուլ, հրատ. 14,3 մամուլ, պայման. 16,75 մամուլ, թուղթ № 1, 60×90 1/16։ Գինը 1 ռ. 24 կ.։

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամություն 24 գ.
Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамутян, 24-г
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան